Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ԵՎ
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Г. Х. САРКИСЯН

АРМЕНИЯ ЭЛЛИНИСТИЧЕСКОГО ПЕРИОДА И МОВСЕС ХОРЕНАЦИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1966

9(47.925)
U-25
1393

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-ՏԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1966

19034

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի պատմության տարբեր դարաշրջանների լուսաբանման գործում վճռական նշանակություն են ստանում պատմական սկզբնաղբյուրների տարբեր խմբեր։ Այսպես, եթե հայկական միջնադարը ուսումնասիրվում է գերազանցապես տեղական աղբյուրների հիման վրա, իսկ օտար աղբյուրներն այստեղ թեև շատ կարևոր, բայց օժանդակ դեր են խաղում, ապա հին պատմության բնագավառում վիճակն այլ է։ Հայ մատենագրությունը և նրա մի մասը կազմող պատմագրությունը սկսվել են միայն V դարում՝ հայ գրերի գյուտից հետո. նախամեսրոպյան դրականության մասին շատ քիչ բան է մեզ հայտնի, իսկ նախաքրիստոնեականի մասին՝ պարզապես ոչինչ։ Ահա թե ինչու հայոց պատմության մինչև III դարը ներառյալ շրջանի մասին մեր ունեցած տեղեկությունները հիմնականում գալիս են օտար, արտաքին աղբյուրներից։ Մասնավորապես մ. թ. ա. IV դարից սկսվող ժամանակաշրջանը լուսավորված է հունա-հռոմեական մատենագրական աղբյուրներով, որոնց թվում են Պոլիբիոսի, Դիոդոր Սիկիլիացու, Ստրաբոնի, Տակիտոսի, Պլինիոս Ավագի, Հովսեփոս Փլաբիոսի, Պլուտարքոսի, Ապպիանոսի, Կասսիոս Դիոնի և այլոց երկերը։

Այս աղբյուրները, իրենց կարևորագույն նյութերով հանդերձ, հայոց պատմության համար երկու էական թերություն ունեն։

Առաջին։ Նրանք, աննշան բացառությամբ, իրենց ուշադրության կենտրոնում գլխավորապես ունեն Հռոմի, այնու-

հետև Սելևկյանների, Պտղոմյանների, փոքրասիական հելլենիստական երկրների պատմության դրվագները և միայն հարևանցիորեն են անդրադառնում Հայաստանին։ Այդ իսկ պատճառով Հայաստանի մասին նրանց տված տեղեկությունները մեծ մասամբ կցկտուր են և հետևողականորեն չեն լուսաբանում քիչ թե շատ երկար ժամանակաշրջան։ Բացի այդ, նրանց շոշափածը գրեթե ամբողջովին պատերազմների ու դիվանագիտության պատմությունն է, իսկ Հայաստանի ներքին կյանքը մնում է ստվերի տակ։

Երկրորդ։ Այդ աղբյուրները, թեև կարող են ինչ-որ չափով հարստացվել անտիկ պատմագրության էջերում հայտնաբերվելիք նոր տեղեկություններով, սակայն հազիվ թե աճեն էապես։ Այսօր էլ մենք օգտվում ենք հունա-հռոմեական աղբյուրներից քաղված տեղեկությունների գրեթե նույն այն շարանից, որը հայտնի է եղել հայագետներին դեռևս 50—100 տարի առաջ։

Ուստի և հայ ժողովրդի պատմության հին շրջանի, Հայաստանի ներքին կյանքի հետագա ուսումնասիրման հեռանկարները գծելիս, մենք առանձնապես մեծ հույսեր չպետք է կապենք օտար աղբյուրներից նոր նյութեր ձեռք բերելու հետ։ Միևնույն ժամանակ պարզ է, որ եղածը դեռ բավարար ուսումնասիրված չէ և ենթակա է առավել խոր մշակման ու մեկնաբանման։

Ի տարբերություն հունա-հռոմեական աղբյուրների՝ հին շրջանի պատմության հայկական աղբյուրները ընդունակ են աճման, ինչպես ցույց է տալիս վերջին տասնամյակների ընթացքը, ուստի և օտար աղբյուրների՝ վերը նշված գերակշռությունը վերջնական չպետք է համարել։

Հին Հայաստանի, հատկապես նրա ներքին կյանքի մասին տեղեկությունները բազմապատկելու ամենամեծ հույսերը առնչվում են հնագիտական պեղումների հետ։ Գառնիում կատարվող պեղումները տարեցտարի հետաքրքրական նյութեր են մատակարարում մեր թվականության առաջին դարերի Հայաստանի պատմության ու մշակույթի վերաբերյալ

և արդեն տվել են մի շարք առաջնակարգ կոթողներ։ Իր առաջին խոսքերն է ասում սիստեմատիկորեն պեղվել սկսած Արմավիրը, որից սպասվում է վաղ հայկական ու հելլենիստական շրջանների պատմությունը լուսաբանող նյութերի մեծ զանգված։ Հերթի են կանգնած Արտաշատը, Երվանդաշատը և մի շարք այլ քաղաքներ, բերդեր ու այլևայլ հուշարձաններ, որոնց հնագիտական ուսումնասիրությունը անսպառ նյութեր կընձեռի հայ պատմաբաններին։

Հայկական օտարաբան վիմագրական արձանագրությունների պատահական գյուտերի այն բարակ շիթը, որը մի քանի տարին մեկ մեզ որևէ նոր կոթող է պարգևում, ինչպիսին է, օրինակ, վերջերս Արտաշես Ա-ի Զանգեզուրում գտնված արամեերեն չափազանց հետաքրքիր արձանագրությունը, հույս է ներշնչում, որ համապատասխան հուշարձանների սիստեմատիկ պեղումները անպայման կհանգեցնեն նման կոթողների մասսայական հայտնաբերման, ինչպես այդ տեղի է ունեցել հելլենիստական այլ երկրների հուշարձանների պեղման ընթացքում։ Իհարկե, ամենևին չի կարելի սպառված համարել նաև առկա հնագիտական ու վիմագրական նյութերի հետազոտությունը։

Առավել ևս թերի է, կարելի է ասել նոր-նոր է սկսվում, հին Հայաստանի պատմության աղբյուրների մի այլ խմբի՝ վաղ միջնադարյան հայ հեղինակների հաղորդած համապատասխան տեղեկությունների ուսումնասիրությունը։ Այս տվյալները շատ անհավասար են բաշխված հայ պատմագիրների երկերում։ Ագաթանգեղոսը, Բուզանդի, Փարպեցու, Եղիշեի երկերը, որոնք նվիրված են IV—V դարերի պատմությանը, միայն հատուկենտ տեղեկություններ են հաղորդում IV դարից առաջ ընկած ժամանակաշրջանի մասին։ Սեբեոսի մատյանին կից մեզ հասած «Նախնական պատմությունը» պարունակում է մի քանի հին առասպելներ, տեղեկություններ Արշակունյաց դինաստիայի՝ Հայաստանում հաստատվելու մասին, հայ թագավորների ցանկը։ Մովսես Խորենացին է միայն, որ հետևողականորեն նկարագրում է այդ ժամանա-

կաշրջանը, նվիրելով նրան իր «Պատմության» երկու երրորդը՝ առաջին և երկրորդ գրքերը։ Մասնավորապես հելլենիստական շրջանին է վերաբերում երկրորդ գիրքը, որը սկըսվում է Ալեքսանդր Մակեդոնացուց։ Խորենացին մի առ մի հիշատակում է բոլոր թագավորներին, տալիս նրանց ժամանակագրությունը, նկարագրում ժամանակակից պատմական իրադարձությունները՝ երբեմն համեմատաբար թռուցիկ, հաճախ հանգամանորեն, որոշ դեպքերում՝ ամենայն մանրամասնություններով։ Նրա հաղորդած տեղեկությունները ընդգրկում են երկրի թե՛ արտաքին հարաբերությունները ու մղած պատերազմները, թե՛ ներքին իրադարձությունները ու երևույթները և թե՛ մշակութային զարգացումը։ Այսպիսով, հին Հայաստանի մասին վաղ միջնադարյան հայ պատմագրության տեղեկությունների իրացման խնդիրը փաստորեն հանգում է Մովսես Խորենացու «Պատմության» համապատասխան բաժինների օգտագործման խնդրին։

Հասկանալու համար վերջինիս էությունը, անհրաժեշտ է երկու խոսքով ընթերցողին հիշեցնել պատմա-բանասիրական գրականության մեջ Խորենացու գնահատման հանրահայտ պատմությունը[1]։ Մինչև XIX դարի կեսերը, չնչին խոտորումներով շարունակվել է Խորենացու նկատմամբ վաղ միջնադարի վերջերին (IX—X դդ.) ծայր առած այն առանձնահատուկ վերաբերմունքը, այն ակնածանքը, որը նրա «Հայոց պատմությունը» վերածել է դասագրքի, հետագայում շարադրված պատմական բոլոր երկերի հիմքի ու սկզբնաղբյուրի։ XVIII դարից սկսվեց հայ ժողովրդի հին պատմության օտար աղբյուրների օգտագործումը, որն իր հետ քննա-

[1] Ավելի հանգամանորեն տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, Երևան, 1944, էջ 254 և հաջ., Հրանդ Ք. Արմեն, Պատմություն Խորենացիի քննադատության, Երուսաղեմ, 1954։ «Խորենացու առեղծվածին» նվիրված հսկայական գրականությունից մենք այստեղ նշում ենք միայն մի քանի կարևորագույն անուններ։ Համեմատաբար լրիվ ցանկը (բացառյալ վերջին տասնամյակների աշխատությունները) տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ ԾԵ և հաջ։

կան որոշ տարր բերեց Խորենացու երկի նկատմամբ, բայց երկար ժամանակ մրցությունն ավարտվում էր Խորենացու օգտին։

XIX դարի 70-ական թվականներից վիճակը փոխվեց, և «անքննադատ հիացքը» (Թադ. Ավդալբեգյանի դիպուկ արտահայտությամբ) Խորենացու նկատմամբ հետզհետե տեղի տվեց «աչառու պարսավի»։ Այդ փոփոխման նախադրյալներն էին այն ակնառու հակասությունները, որ կային, մի կողմից՝ օտար (գլխավորապես հունա-հռոմեական) աղբյուրների արդեն այդ ժամանակ բավարար ուսումնասիրված տըվյալների և, մյուս կողմից՝ Մովսես Խորենացու հաղորդումների միջև։ Նախապատվությունը բնականաբար տրվեց անտիկ աղբյուրներին, որոնք մասամբ ժամանակակից կամ գրեթե ժամանակակից են նկարագրվող անցքերին, մասամբ էլ թեև նրանցից հեռացած, բայց այսուհանդերձ ժամանակով շատ ավելի մոտ, քան Մովսես Խորենացին։ Խորենացու տվյալները հայտարարվեցին հիմնականում անարժանահավատ[2]։

Սրան շուտով ավելացավ և կեղծիքի մեղադրանքը։ Գըտնելով Խորենացու շարադրանքում հատվածներ, որոնք, քննադատների կարծիքով, կարող էին ծագած լինել միայն V դարից հետո՝ VI, VII և հետագա դարերի աղբյուրներից, նրանք սկսեցին պնդել, թե Խորենացին, հայտարարելով իրեն V դարի հեղինակ, թաքցրել է իր ապրելու իրական ժամանակը[3]։ «Պարսավը» գնալով ավելի սաստկանում էր և

[2] A. Gutschmid, Ueber die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren, "Veröff. d. königl. Sächs. Gesellschaft der Wiss., Philos.-hist. Klasse". Bd. XXIII, 1876. Հայերեն թարգմանությունը տես «Հանդէս ամսօրեայ», 1876, էջ 45—51, 110—116, 213—222, 289—302։

[3] A. Carrière, Nouvelles sources de Moïse de Khoren, Vienne, 1893. Հայերեն թարգմանությունը՝ Ա. Կարիեր, Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ, Վիեննա, 1893։ Սրան հաջորդեցին նույն հեղինակի մի շարք աշխատություններ, որոնցում նա ավելի ու ավելի էր ծավալում Մ. Խորենացու «Հայոց պատմության» քննադատությունը։

ընդգրկելով նորանոր գերքննադատորեն տրամադրված հեղինակների՝ իր գագաթնակետին հասավ այն հայտարարությամբ, թե Խորենացու երկը ծայրեծայր մի միտումնավոր կեղծիք է[4]։

Այս մեղադրանքներն, իհարկե, չմնացին անպատասխան։ Հակահարվածը տրվեց երկու ուղղությամբ, նախ՝ Խորենացուն V դարից տեղաշարժելու հիմք ծառայած աղբյուրների նոր ու մանրամասն քննությամբ հաստատվեց, որ դրանց առնչվող նյութերը Խորենացին կարող էր ստանալ դեռևս V դարում, ուստի և հիմք չկա նրան տեղաշարժելու[5], և ապա Խորենացու կողմից աղբյուրների, հատկապես՝ ժողովրդական բանահյուսության կեղծման թեզը ծայրեծայր մերժվեց Խորենացու՝ բանահյուսությանն առնչվող հատվածների հարազատության համոզիչ ցուցադրմամբ[6]։

Սակայն վեճը հետզհետե սառեց և անցած տասնամյակների ընթացքում երևացին միայն հատուկենտ աշխատություններ, որոնց մի մասի հեղինակները ջանում էին նոր փաստարկներ գտնել Խորենացուն V դարից տեղաշարժելու և VIII կամ IX դարում տեղադրելու[7], իսկ մյուսներն ամրապնդում էին այդ տեսակետի մերժման հիմքերը[8]։

---

4 Г. Халатянц, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского. Опыт критики источников. Ч. I. Исследование. Ч. II. Материалы, М., 1896, նույնի Армянские Аршакиды в Истории Армении Моисея Хоренского. Опыт критики источников. Ч. I. Исследование. Ч. II. Материалы, М., 1903.

5 Ց. Կոնիբեր, Մովսես Խորենացու ժամանակի մասին, «Հանդէս ամսօրեայ», 1902, հունվար, մարտ, նույնի, Մովսես Խորենացվո պատմության աղբերաց խնդիրը, «Հանդէս ամսօրեայ», 1902, հուլիս, օգոստոս։

6 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899։

7 Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, հատ. Գ. Ղևոնդ երեց և Մովսես Խորենացի, Վիեննա, 1930։ Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934։

8 Ստ. Մալխասյանց, Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940, Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, էջ 254 և հաջ.։

Ներկայիս պատմագրության մեջ իրավամբ գերիշխող տեսակետն այն է, որ Խորենացին V դարի երկրորդ կեսի, մասամբ և հաջորդ դարի սկզբի հեղինակ է։ Մենք բաժանում ենք այս կարծիքը, քանի որ մինչև այժմ Խորենացու հետ կապված մեր պրպտումների ոչ մի կետ, թե մեր նախորդ և թե ներկա աշխատություններում, չի ստիպում կատարելու վերոհիշյալ տեղաշարժը։ Ասվածը չի նշանակում, իհարկե, որ Խորենացու ժամանակի խնդիրը պարզված է իր բոլոր մանրամասնություններով. դեռևս պետք է աշխատանք տանել այն անհրաժեշտ հստակությամբ ներկայացնելու համար։ Այդ հարցի հատուկ լուսաբանությունը դուրս է տվյալ աշխատության շրջանակներից։

Եթե այդպիսին է Խորենացու պրոբլեմի այս մասի լուծման վիճակը, ապա դեռ մնում է նրա մյուս՝ կարևորագույն մասը, Խորենացուն որպես պատմական աղբյուր օգտագործելու խնդիրը, որը և քննվում է ներկա աշխատության մեջ։ Հարցն այն է, որ Խորենացու և հույն-հռոմեական աղբյուրների տվյալների միջև մասնագետների նշած հակասությունները մտացածին չեն և իսկապես գոյություն ունեն. «Հայոց պատմության» մեջ իրոք կան էական անաքրոնիզմներ, Հայաստանի պատմությանը չվերաբերվող դրվագների՝ այդ պատմությանն առնչելու փորձեր, բուն նյութին խորթ աղբյուրների օգտագործման դեպքեր։ Ի՞նչ գնահատական տալ այս բոլորին։

Խորենացու նկատմամբ գերքննադատորեն տրամադրված հեղինակների մոտեցման հիմնական արատն այն է, որ նրանք իրենց ամբողջ ուշադրությունը սևեռել են միայն այդօրինակ փաստերի վրա, դրանց մեջ են տեսել Խորենացու երկի էությունը, նրա համակողմանի ուսումնասիրությունը փոխարինել են միակողմանի, մասնակի քննությամբ և դրանից բխող եզրակացությունները տարածել ողջ «Հայոց պատմության» վրա։ Նրանց կատարած աշխատանքի արտաքնապես մանրակրկիտ բնույթը չպետք է թյուրիմացության մեջ գցի

մեզ. Նրանք փաստորեն անտեսել են Խորենացու երկի կարևորագույն մասը, նրա բուն բովանդակությունը։

Միաժամանակ պարզ է, որ այդ մոտեցման դեմ պայքարը չպետք է վերածվի քննադատների բոլոր թեզերը ժխտելու ձգտման, որովհետև նրանք ունեն նաև ճիշտ դիտումներ։ Պետք է ժխտվեն միայն ծայրահեղությունները։ Խնդիրն այն է, որ բացատրվի այդ անաքրոնիզմների և այլնի իրական տեղն ու դերը «Հայոց պատմության» մեջ, պարզաբանվեն նրանց առաջացման պատճառները, վերջնական նպատակ ունենալով գտնել դրանցից Խորենացու պահպանած բուն գանձերը՝ պատմականորեն հավաստի նյութը։

Բավական է մտովի պատկերացնել «Հայոց պատմության» ստեղծման հանգամանքները, որպեսզի հասկանալի դառնա վերոհիշյալ երևույթների անխուսափելիությունն այդ երկի մեջ։ Խորենացու հանճարն արտահայտվել է նախ և առաջ նրանում, որ պատմահայրն առաջինն է հղացել հայոց ամբողջական պատմությունը շարադրելու գաղափարը։ Ընդսմին նա իր առջև նպատակ է դրել ոչ միայն հայոց պատմությունը շարադրել սկզբից, այսինքն՝ ժողովրդի ծագումից մինչև վերջ, մինչև իր դարաշրջանը, այլև շարադրել այն անընդմեջ, բաց չթողնելով ոչ մի դրվագ, չշրջանցելով որևէ փուլ։ Իսկ ի՞նչ աղբյուրներ է ունեցել նա իր ձեռքի տակ այդ փառահեղ նպատակը հետապնդելիս։ Նրա հաճախակի գանգատները՝ աղբյուրների պակասության վերաբերյալ միանգամայն հիմնավորված են երևում։

Խորենացու դարը բաժանված է հելլենիստական շրջանից (մ. թ. ա. III—I դդ.) հինգ-ութ հարյուրամյակով, հայ ժողովրդի ծագման ու կազմավորման շրջանից՝ արդեն շուրջ մեկ-մեկուկես և ավելի հազարամյակով։ Բացի այդ, նրա ժամանակը նախորդ դարաշրջանից անջրպետված է Հայաստանում քրիստոնեության հաստատմամբ՝ IV դարի սկզբներին, որն իր անվիճելի դրական արդյունքների հետ մեկտեղ ունեցավ նաև բացասական որոշ հետևանքներ։ Սրանցից կարևորագույնն էր մշակութային զարգացման հաջորդականու-

թյան խզումը, այսինքն հեթանոսական Հայաստանի մշակութային ավանդների, այդ բնագավառում ձեռք բերված նվաճումների մի շատ նշանակալից մասի կորուստը։

Հասկանալի է, թե ինչպիսի ահռելի դժվարությունների առաջ կանգնեց Խորենացին հեռու անցյալի պատկերման համար աղբյուրներ որոնելիս։ Նրանից առաջ նկարագրված են եղել հայոց պատմության սոսկ մի քանի հատվածներ, և այն էլ՝ ոչ շատ հեռու անցյալին վերաբերվող։ Խորենացին այդ բոլորն օգտագործել է։ Նա ձեռնամուխ է եղել այլ աղբյուրների որոնման ու գտել դրանք ժողովրդական բանահյուսության, ժողովրդի կենդանի հիշողության մեջ. դրա շնորհիվ էլ մեզ հասել են այնպիսի գոհարներ, ինչպիսիք են «Երկնէր երկին»-ը, «Եկաւ արի արքայն Արտաշէս»-ը և մյուսները։ Այնուհետև նա ընկղմվել է օտար ծագում ունեցող մատյանների ծովը, սկսած Աստվածաշնչից մինչև հույն հռետորների ու փիլիսոփաների երկերը և կաթիլ-կաթիլ քամել նրանցից հայոց պատմությանն առնչվող տեղեկությունները։ Նա կատարել է այնպիսի որոնումներ, որոնք մեզ համար դեռ հետագայում պիտի պարզվեն, համենայն դեպս անկասկած է, որ նա բախել է մյուս պատմիչներին անմատչելի մնացած դռներ։ Սակայն բոլոր այս ուղիներով հայթայթած նյութն, այնուամենայնիվ, բավարար չի եղել, և դա բնական է, հայոց պատմության նրա կազմած համապարփակ ծրագիրը իրագործելու, նրա հյուսած անընդմեջ հենքը լցնելու համար։ Մնացել են բաց կամ ոչ բավարար հագեցած տեղեր, որոնք լրացնելու համար Խորենացին դիմել է այնպիսի աղբյուրների, ինչպիսին է հատուկ անունների՝ տեղանունների, տոհմանունների, անձնանունների ստուգաբանությունը (որը նրա մոտ կրել է մեծ մասամբ ժողովրդական ստուգաբանության բնույթ) և սրա հիմքի վրա արել պատմական հետևություններ ու կառուցել առանձին դրվագներ։ Նա դիմել է որոշ դեպքերում նաև, ինչպես ասվեց, կողմնակի նյութերի՝ շարադրանքը ոճական տեսակետից հարստացնելու նպատակով։

Հասկանալի է, որ այս աննախընթաց, թերևս և հետագայի հայ միջնադարյան պատմագրության մեջ անզուգական մնացած, որոնումների ընթացքում հավաստի նյութի զանգվածի հետ ձեռք էր բերվել նաև անհավաստի նյութ, որը նույնպես օգտագործվեց «Հայոց պատմության» կառուցման ժամանակ ու իր անխուսափելի դրոշմը թողեց այդ հոյակապ շինության մի շարք մասերում։

Այսպիսով, Խորենացու երկի վերոհիշյալ թերությունները գալիս են նրա մտահղացման և առկա նյութերի պակասության միջև ստեղծված խզումից, ուստի և նրանք իսկ, թող հակասական չթվա, վկաներն են պատմահոր մտքի հզորության ու լայն ընդգրկման, պատմության գաղափարի նրա խորը ըմբռնման, որոնցով նա շատ առաջ էր քայլում իր դարաշրջանից ու նրա ընձեռած հնարավորություններից, լինելով հետազոտող բառիս բուն իմաստով։

Սակայն Խորենացու այս բարձր հատկությունները, թող այս ևս հակասական չթվա, դժվարացնում են նրա երկի օգտագործումը որպես պատմական աղբյուրի։ Խորենացու ձգտումը պարփակել իր հայթայթած նյութը ավարտուն շրջանների մեջ, ստեղծել վերջավորված ու ողորկ, ներքին հակասություններից զերծ համակարգեր, որը կատարյալ հմտությամբ իրականացվում է տարաբնույթ նյութերի ոչ միայն միահյուսման, այլև միաձուլման միջոցով, շատ դժվարին գործ է դարձնում այդ համակարգերի մեջ մխրճվելը և նրանց կազմող տարրերի մեջ կողմնորոշվելը՝ հավաստին ու հավաստիից զատելու առումով։

Եվ, այնուամենայնիվ, այդ պետք է արվի մինչև վերջ, հաշվի առնելով հայ ժողովրդի պատմության հին շրջանի բնագավառում աղբյուրների խիստ պակասը և այդ պակասը լրացնելու ընդունակ նյութի առկայությունը Խորենացու երկում։ Անհրաժեշտ է միայն գտնել համապատասխան եղանակներ։

Անշուշտ այս ուղղությամբ արդեն կատարված է որոշակի աշխատանք, սակայն այն կարելի է համարել միայն գործի

սկիզբը։ Առաջինը Մ. Աբեղյանն էր, որ հաջող փորձ արեց բացահայտելու Տիգրան Երվանդյանի մասին Խորենացու պատմածի իրական-պատմական հիմքը։ Վերլուծելով Խորենացու տեքստը և համադրելով նրա տվյալները անտիկ աղբյուրների տվյալների հետ, Մ. Աբեղյանը համոզիչ կերպով ցույց տվեց, որ թեև Խորենացին ենթադրել է, թե իր պատմածը սկզբից մինչև վերջ մ. թ. ա. VI դարում ապրած Կյուրոսին ժամանակակից Տիգրան հայոց թագավորի մասին է, սակայն դրվագների ճնշող մեծամասնությունը իրականում վերաբերվում է մ. թ. ա. I դարում ապրած Տիգրան Մեծին։ Աբեղյանը հանգել է նաև այն եզրակացության, որ Խորենացին այդ հատվածում օգտվել է գրավոր աղբյուրից, որն իր հերթին հիմնված է ժողովրդական երգերի վրա[9]։

Հաջորդ և առավել կարևոր քայլը պատկանում է Հ. Մանանդյանին, որը դեռ 30-ական թվականներից սկսած փորձեր է արել հաղթահարելու Խորենացու ժամանակագրական կոնցեպցիայի թերություններից բխող դժվարությունները և վեր հանելու նրա երկրորդ գրքի մի շարք դրվագների պատմական հիմքը[10]։ Այդ փորձերի մասին, որոնց մեծ մասը պետք է հաջողված համարել, մանրամասն կխոսենք բուն շարադրանքի համապատասխան տեղերում, իսկ այստեղ պետք է նշվի մի կարևոր հանգամանք։ Սովորաբար բոլոր այն հեղինակները, որոնք տեղաշարժել են Խորենացուն իր դարից ու բնակեցրել հաջորդ դարերից մեկում, դրա հետ մեկտեղ նաև կասկածի են ենթարկել նրա հաղորդած նյութի պատմագիտական արժեքը կամ պարզապես բացասել այն։ Դրանց մեջ Հ. Մանանդյանը երջանիկ բացառություն է, որովհետև, Խորենա-

[9] Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 379 և հաջ.։

[10] Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. — XV в. н. э.), Ереван, 1930, էջ 97, նույնի, Տիգրան Բ և Հռոմը, 1940, էջ 27, 45, 69, 92, նույնի, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Ա, Երևան, 1944, էջ 121 և հաջ., նույնի, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946 և այլն։

ցուն համարելով հանդերձ, ինչպես տեսանք վերը, IX դարի հեղինակ, նա շատ բարձր է դասել «Հայոց պատմությունը» որպես պատմական սկզբնաղբյուր, առիթը բաց չի թողել նրա տվյալներն օգտագործելու, և գրեթե նա չունի այնպիսի աշխատություն, որտեղ փորձ արված չլինի իրացնելու Խորենացու հաղորդած այս կամ այն տեղեկությունը։

Քննության առարկա խնդրում իր ներդրումն է արել նաև Հ. Օրբելին։ Արտաշես Ա-ի արձանագրությունների Ա. Յա. Բորիսովի ընթերցման հիման վրա նա ցույց է տվել Խորենացու համապատասխան հաղորդման հավաստիությունը։

Ս. Երեմյանը ևս, հին Հայաստանի սոցիալ-տնտեսական ու հասարակական կարգի մասին իր նոր տեսակետն առաջադրելիս ու հիմնավորելիս, մեծապես օգտվել է Խորենացու տվյալներից։ Նա կիրառել է դրանք նաև նախաքեմենյան շրջանի առաջին հայ պետական կազմավորումների պատմությունը հետազոտելիս[11]։ Խորենացու տվյալների օգնությամբ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության որոշ երևույթներ ու դրվագներ են վերհանել Բ. Առաքելյանը և Լ. Խաչիկյանը[12]։

Հետաքրքրական է Բ. Պիոտրովսկու կատարած փորձը՝ համադրել Խորենացու պատմածը առաջին հայ թագավոր Պարույրի մասին հին արևելյան սեպագիր աղբյուրների, մասնավորապես բաբելական մի տարեգրության, ինչպես և հունական պատմիչների տվյալների հետ, որից կարևոր եզրակացություններ են հանվել Ասորեստանի դեմ մղված պայ-

---

[11] С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, „Вестник древней истории" (*այսուհետև* ВДИ), *1950, № 1 և նրա մի շարք այլ աշխատությունները։*

[12] *Բ. Ն. Առաքելյան, Ճահագործման մի ձևի մասին հին Հայաստանում, «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ. Հասարակական գիտություններ» (այսուհետև «Տեղեկագիր»), 1946, № 10, էջ 61 և հաջ., Լ. Խաչիկյան, Դիտողություն Մ. Խորենացու Հայոց պատմության երկրորդ գրքի ՄԴ գլխի մասին, «Տեղեկագիր», 1948, № 11, էջ 91 և հաջ.։*

քարի ու նրա տապալման գործում հայերի մասնակցության մասին[13]։

Կ. Տրևերը հին, նախաքրիստոնեական Հայաստանի մշակույթը ուսումնասիրելիս, հատկապես Արմավիրի սրբատեղիի հետազոտման կապակցությամբ առատորեն օգտագործել է Խորենացու տվյալները։ Նա ջանացել է ցույց տալ, որ Արմավիրի հունարեն արձանագրությունների տվյալները գալիս են ապացուցելու Խորենացու հաղորդումը արմավիրյան տաճարի՝ գուշակավայր լինելու մասին[14]։

Մեր քննության առարկա հարցի շուրջը վերջերս հետաքրքրական հոդվածով հանդես եկավ Գ. Տիրացյանը[15]։ Համեմատելով Մ. Խորենացու տեղեկությունները Ստրաբոնի «Աշխարհագրության», ինչպես և այլ անտիկ հեղինակների տվյալների հետ, նա մի շարք եզրակացությունների է հանգում Հայաստանի մ. թ. ա. III—II դարերի պատմության որոշ դրվագների կապակցությամբ, որոնց մի մասն ամրապնդում է նախորդ հետազոտողների, մասնավորապես Հ. Մանանդյանի դրույթները, մյուս մասն էլ նորություն է։ Այդ խնդիրներին մենք մանրամասն անդրադառնում ենք մեր առաջիկա շարադրանքի համապատասխան տեղերում։ Անհրաժեշտ է նշել նաև Ա. Փերիխանյանի հոդվածները, նվիրված ոստանիկների դասին և Զանգեզուրում հայտնաբերված՝ Արտաշես Ա-ի արամեերեն արձանագրությանը[16]։

---

[13] Б. Б. Пиотровский, О происхождении армянского народа, Ереван, 1946.

[14] К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, *էջ 104 և հաջ.։*

[15] *Գ. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. III—II դարերի պատմության մասին, «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 7 և հաջ. և ուրիշ։*

[16] А. Г. Периханян, Древнеармянские востаники, ВДИ, 1956, № 2, *նույնի* Арамейская надпись из Зангезура, *«Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև ՊԲՀ)*, 1965, № 4, *էջ 107 և հաջ.։*

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

Հ. Բարթիկյանը վերջերս հետաքրքրական փորձ է արել Մ. Խորենացու հաղորդած համապատասխան տեղեկությունների լույսի ներքո տալ Գառնիի հունարեն արձանագրության նոր մեկնաբանությունը[17]։ Կարելի է նշել և ներկա աշխատության հեղինակի մի քանի հետազոտությունները, որոնց մեջ ցույց է տրված հելլենիստական շրջանի Հայաստանի մասին Խորենացու հաղորդած տեղեկությունների հավաստիությունը[18]։

Անշուշտ կարելի է ավելացնել այս շարքը, հիշատակելով այլ հեղինակների ևս, որոնք իրենց աշխատություններում առաջ են քաշել Խորենացու տվյալների հետ կապված խնդիրները կամ վկայակոչելով նույն հեղինակների այլ աշխատություններ, սակայն մեր նպատակից դուրս է տալ նրանց սպառիչ ցանկը. հիշատակվածն էլ բավական է հաստատելու համար այն թեզը, որ վերջին տասնամյակների ընթացքում, գլխավորապես Սովետական Հայաստանում, զարգանում է խորենացիագիտության քննական մի նոր ճյուղ, որը, ի տարբերություն նախորդ շրջանի գրականությունից, ուր խոսքը որտեղից էլ սկսվեր, ի վերջո հանգում էր Խորենացու ապրելու ժամանակի խնդրին, հիմնական նպատակ ունի բացահայտել «Հայոց պատմության» արժեքը որպես պատմական աղբյուրի, ի հայտ բերել և օգտագործել ի նպաստ հայ ժողովրդի պատմության լուսաբանման նրա մեջ պահպանված հավաստի պատմական նյութը։ Այդ ճյուղի մեթոդիկան արմատապես տարբերվում է նախաքննական շրջանում Խորենացու օգտագործման ձևերից նրանով, որ ոչ թե սոսկ հենվում է Խորենացու տվյալ-

17 *Հ. Բարթիկյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, ՊԲՀ, 1964, № 3, էջ 229 և հաջ.։*

18 Г. Саркисян, Градостроительство в Армении при Тигране II и вопрос о переселении чужестранцев, «Տեղեկագիր», 1955, № 2, էջ 43 և հաջ., նույնի Из истории городской общины в Армении (IV в.), ВДИ, 1955, № 3, նույնի, Դաստակերտները և ագարակները V դարի հայկական աղբյուրներում, ՊԲՀ, 1962, № 3, էջ 77 և հաջ. և ուրիշ.։

ների վրա, այլ, հաշվի առնելով տեղի ունեցած քննադատությունը, նախատեսում է յուրաքանչյուր դեպքում Խորենացու այս կամ այն տեղեկության օգտագործման իրավաչափության հաստատումը այլևայլ միջոցներով։ Խորենացիագիտության այս փուլն, այսպիսով, նախորդ երկու փուլերի տրամաբանական զարգացման հետևանք է, և իր մեջ է առել նրանց ընթացքում ձեռք բերված նվաճումները, ազատվելով նրանց թույլ կողմերից. մեկի՝ անքննադատ, մյուսի՝ գերքննադատ մոտեցումից։

Այս ուղղության զարգացման գործում առաջնակարգ նշանակություն է ունեցել նոր նյութերի հայտնաբերումն ու գիտական շրջանառության մեջ մտնելը, ինչպես, օրինակ, արմավիրյան հունարեն արձանագրությունները, Արտաշես Ա-ի արամեերեն արձանագրությունները, Գառնիի, Տիգրանակերտի, Ապարանի հունարեն արձանագրությունները և այլն։ Սրանց, ինչպես և անտիկ պատմագրության համապատասխան տվյալների մանրակրկիտ ուսումնասիրությունը մեծապես օժանդակել է Խորենացու հաղորդած նյութերի ըստ արժանվույն գնահատմանը։

Իհարկե այս ուղղությամբ կատարված բոլոր քայլերը հավասար արժեք չունեն, բոլորը չէ, որ հաջողված են, նրանց մեջ կան ավելի և պակաս համոզիչները, սակայն այստեղ մենք չենք քննարկի առանձին դեպքերը, թողնելով այդ կատարելու ըստ անհրաժեշտության բուն շարադրանքում։ Մեզ հետաքրքրողն այստեղ հիշյալ քայլերի ընդհանուր ուղղությունն է, նրանց ընդհանուր նկարագիրը, այն հատկանշական հանգամանքը, որ նրանք զանգվածաբար վեր են հանում հայ ժողովրդի հին պատմության մասին Խորենացու հաղորդած փաստերի հարազատությունը նույն ժամանակներին վերաբերվող այլ հավաստի աղբյուրների տեղեկություններին։

Միևնույն ժամանակ, սակայն, էական փորձեր չեն արվել որոնել ու գտնել այն թելերը, որոնք կապում են Խորենացուն հելլենիստական և ավելի վաղ շրջանների հետ, այն ուղիները, որոնցով այդ հեռու ժամանակների իրողությունների

արձագանքը եկել-հասել է Խորենացուն։ Սովորաբար, երբ ուզում են պատկերացնել, թե ինչ աղբյուրից է քաղել Խորենացին իր այս կամ այն ճշմարտացի տեղեկությունը, ապա, որպես կանոն, դրանց ծագումը վերագրվում է «ժողովրդական երգերին», «վեպին», «ավանդություններին» և նման բանավոր աղբյուրների, քանի որ դրանք չեն պարտավորեցնում ավելի հեռուն գնալ տվյալ տեղեկության պատմությունը բացահայտելիս. ժողովրդի հիշողությունը մեծ տարողություն ունի և ընդունակ է պահպանել նաև հնագույն իրադարձությունների արձագանքները։ Սակայն ժողովրդական բանահյուսությունը իր շատ դյուրաճանաչ դրոշմն է դնում իրենից ծագող նյութերի վրա, իսկ այդ դրոշմը հաճախակի բացակայում է Խորենացու հաղորդումներում։ Ուստի և, առանձին դեպքերում, երբ անհնար է լինում այս կամ այն հաղորդմանը ժողովրդական ծագում վերագրել, հետազոտողները հիշատակում են Խորենացու վկայակոչումները, ասենք Բարդածան, Խոռոհբուտ, Ողյումպ քուրմ և այլն, սակայն նման սոսկական հիշատակությունը ոչինչ չի տալիս, այլ միայն կրկնում է Խորենացու ասածը։

Խորենացին ինքը մեծ հաճույքով է հիշատակում իր աղբյուրները. միայն երկրորդ գրքում գտնում ենք շուրջ երկու տասնյակ տարբեր ազգերի մատենագրերի ու նրանց մատյանների անունները։ Սա ճիշտ է, բայց ճիշտ է նաև այն, որ Խորենացուն նվիրված տասնյակ և հարյուրավոր աշխատանքներում ամենաբծախնդիր կերպով քննության են առնվել այդ անունները, նրանց կապակցությամբ հաղորդվող տեղեկությունները, սակայն այդ ամենը շոշափելի որևէ արդյունք չի տվել։ Ինչ որ պարզ է եղել հենց առաջին մերձեցումից, այն է՝ Եվսեբիոս Կեսարացու, Հովսեփոս Փլաբիոսի և մի քանի այլ հեղինակների՝ Խորենացու կողմից օգտագործման փաստը, այդ էլ մնացել է, իսկ մյուս մեծաքանակ անուններն այդպես էլ պահպանվել են որպես սոսկ անուններ՝ մասամբ մեզ հայտնի, բայց իրենց՝ մեզ հասած գործերում համապատասխան տեղեկություններ չպարունակող, մասամբ էլ անհայտ։ Ինչ էլ որ լինի դրա պատճառը, հետևանքը նույնն է՝ մեզ անհայտ են

մնում Խորենացու բազմաթիվ կարևորագույն հաղորդումների ակունքները։

Այս պարագաներում հիշյալ հաղորդումների ճշմարտացիությունը, հավաստիությունը, որքան էլ այն համոզիչ կերպով ցուցադրվի զուգահեռ աղբյուրների հետ համադրման միջոցով, այնուամենայնիվ, հաշվի առնելով Խորենացուն նրա նկարագրած իրադարձություններից բաժանող դարերն ու հազարամյակները և միջանկյալ օղակների անհայտությունը, մնում է առեղծվածային, չբացատրված։ Բացի այդ, նման պարագաներում մենք անխուսափելիորեն կաշկանդված ենք մնում զուգահեռ աղբյուրներին, խոսեցնում ենք Խորենացուն այն չափով միայն, որ չափով մեր ձեռքի տակ կան այդ աղբյուրները։ Մինչդեռ Խորենացու արժեքը նաև այնտեղ է, ուր նա շարունակում է խոսել, երբ մնացած աղբյուրները լուռ են։ Իսկ եթե գտնվեն Խորենացու հաղորդումների բուն ակունքները, ապա, մի կողմից, նրա մատուցած մի շարք տվյալների զարմանալի հարազատությունը հավաստի զուգահեռ աղբյուրների տվյալներին կդառնա ոչ զարմանալի, միանգամայն բնական ու բացատրելի, և, մյուս կողմից, ճանապարհ կբացվի դեպի այն տեղեկությունները, որոնք հասել են նրան նույն ուղիներով, բայց չունեն իրենց զուգահեռներն այլ աղբյուրներում։ Հնարավոր կդառնա արդեն հենման կետը զուգահեռ աղբյուրներից տեղափոխել դեպի Խորենացու տեղեկությունների ակունքները։

Ներկա աշխատության մեջ մենք հրաժարվում ենք Խորենացու հիշատակած աղբյուրները մեկը մյուսի հետևից մեկ անգամ ևս քրքրելու փորձից, գտնելով, որ դրան կարելի կլինի վերադառնալ մեծ նախապատրաստական աշխատանքից հետո։ Մեր ելակետն է Խորենացու հաղորդած բուն նյութը, որի՝ հելլենիստական շրջանի Հայաստանին վերաբերող հավաստի աղբյուրների տվյալներին ցուցաբերած հարազատության զանգվածային բնույթը համոզում է, թե հայկական հողի վրա իսկապես գոյություն է ունեցել պատմագրական հաջորդականություն, որը ճեղքել-անցնելով դարերը և քրիստոնեության հա-

բուցած պատնեշները, հասել է մեզ՝ սերոպատառ գրականությանը և հատկապես Խորենացուն։ Գոյություն ունենալով, նա անպայման, թեկուզ և թույլ, հետքեր է թողել, որոնցով հնարավոր է հետապնդել և գեթ հատվածաբար ի հայտ բերել նրա ուղիները։ Ներկա աշխատությունը համարում ենք նախնական քայլ այդ բարդ պրոբլեմի լուծման ուղղությամբ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ՆԱԽՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1

Դասակարգային բոլոր հասարակություններում իշխանության գլուխ կանգնած անձնավորությունները միշտ ձգտել են իրենց իշխանությանը գերբնական, աստվածային երանգ հաղորդել, մերթ վերագրելով նրան դիցական ծագում, մերթ ներկայացնելով իրենց որպես աստվածների ու մարդկանց միջև միջնորդներ կամ աստվածորդիներ, մերթ բացեիբաց իրենց աստվածներ հայտարարելով։ Այս երևույթները հանդիպում են Հին Արևելքի շատ երկրներում և իրենց հստակ արտահայտությունն են գտել հին Եգիպտոսում. այստեղ կենդանի փարավոնը աստվածացվում էր, իսկ մեռյալ փարավոնների պաշտամունքը իրականացվում էր հարյուրամյակներ շարունակ։ Տիրակալի պաշտամունքը սովորաբար սերտ միահյուսվում էր նախնիների հետմահու պաշտամունքի հետ։ Վերջինս, սակայն, այս դեպքում նոր որակ էր ստանում, իր մասնավոր, ընտանեկան բնույթի փոխարեն ձեռք բերելով համապետական տարածում և նշանակություն։

Նախահելլենիստական հունական աշխարհում ևս արձանագրված են դեպքեր, երբ առանձին ականավոր անհատների մատուցվում էին՝ «աստվածահավասար պատիվներ» (ἰσόθεοι τιμαί)։

Սակայն տիրակալի և նրա նախնիների պաշտամունքի լայն տարածումը և ծաղկումը կապված է հելլենիստական դարաշրջանի հետ, երբ նրա առաջացման ու գոյության հիմնական նախապայմանին՝ անհատների հսկայական իշխանությանը, որին նրանք հասել էին իրենց կամ անձնական հատկությունների բերմամբ և որի շնորհիվ խոյացել էին հասարակության վրա անհասանելի բարձրության, ավելացավ ևս մի բարենպաստ հանգամանք. հին ավանդական աստվածների, նրանց ամենազոր լինելու նկատմամբ որոշակի թերահավատությունը, որը մերթ ընդ մերթ հանգում էր նույնիսկ աստվածացյալ անհատների գերադասման՝ այդ աստվածներից:

Աստվածացումը վիճակվեց արդեն Ալեքսանդր Մակեդոնացուն: Տիրանալով Եգիպտոսին, նա գնաց երկրպագելու Ամոն աստծուն և այստեղ, նրա սրբատեղիում, հայտարարվեց Ամոնի որդի, որով դարձավ փարավոնների ժառանգ: Սակայն այս արարողության նշանակությունը առավել մեծ էր. Ամոնին հույները նույնացնում էին Զևսի հետ, այնպես որ Ալեքսանդրը միաժամանակ դարձավ Զևսի որդին, և այդ նրա համար շատ ձեռնտու էր, քանի որ նրա տոհմը սերված էր համարվում Զևսի մի այլ որդուց՝ Հերակլեսից: Այս բոլորը, սակայն, սոսկ առաջին քայլերն էին: Մ. թ. ա. 324 թվականին Ալեքսանդրը, մահվանից քիչ առաջ, հայտնի չէ իր ցանկությամբ, թե միայն համաձայնությամբ, աստված հռչակվեց Աթենքում և Հունաստանի մի շարք այլ քաղաքներում, որտեղ և հաստատվեց նրա պաշտամունքը[1]:

Դիադոխները հետևեցին նրա օրինակին. Անտիգոնոսը, Լիսիմաքոսը, Սելևկոսը աստվածներ էին հայտարարվում յուրաքանչյուրն իր ազդեցության ոլորտում գտնվող քաղաքների կողմից: Հատկապես ցայտուն է Անտիգոնոսի որդու՝ Դեմետրիոս Պոլիորկետեսի օրինակը: Քաղաքների մի ամբողջ շարք, և

[1] M. P. Nilsson, Geschichte der griechischen Religion, Zweiter Band, Die hellenistische und die römische Zeit, Zweite durchgesehene und ergänzte Auflage, München, 1961 (այսուհետև՝ Nilsson), էջ 145:

առաջին հերթին Աթենքը, նրա անունը տվեցին քաղաքային ֆիլաներին, օրացույցի ամիսներին, նրան զոհասեղաններ կանգնեցրին, զոհեր մատուցեցին: Դեմետրիոսը պատգամախոս հայտարարվեց: Նրան ձոնում էին պեանոսներ (սրբազան հիմներ), կոչում միակ աստված, որովհետև «մնացյալ աստվածները կամ հեռու են, կամ ականջներ չունեն ու ամենևին հոգ չեն տանում մեր մասին: Քեզ մենք տեսնում ենք մեր իսկ աչքերով, այն էլ կենդանի վիճակում և ոչ փայտից կամ քարից շինված»[2]:

Իշխողի պաշտամունքի վերածումը կանոնավոր կրոնական հիմնարկության տեղի ունեցավ հելլենիստական պետությունների, նախ և առաջ Պտղոմյանների և Սելևկյանների պետությունների կազմավորմանը համընթաց: Ստեղծվեց այդ պաշտամունքի երկու, եթե կարելի է այսպես ասել, ուղղություն՝ քաղաքային և համապետական: Եթե առաջինում պաշտամունքի հաստատման նախաձեռնությունը, գոնե արտաքնապես, քաղաքներին էր պատկանում, իսկ միապետները միայն իրենց համաձայնությունն էին տալիս այս կամ այն քաղաքում պաշտվելու, ապա երկրորդում հիմնադիրները իրենք թագավորներն էին, և պաշտամունքը ստանում էր պաշտոնական, ամբողջ պետության համար պարտադիր բնույթ:

Ի տարբերություն այն պաշտամունքի, որն իրականացվում էր քաղաքներում, և որը ծայր առավ այստեղ ու այնտեղ դեռևս Ալեքսանդրի և դիադոխների ժամանակ, համապետական պաշտամունքը առաջին անգամ երևան եկավ հելլենիստական պետություններում, ըստ որում սկզբնապես՝ իշխող թագավորի ծնողների պաշտամունքի ձևով: Այսպես, Պտղոմեոս Ա-ի (որի քաղաքային պաշտամունքը իրականացվում էր դեռևս նրա կենդանի ժամանակ) և նրա կնոջ Բերենիկեի մահվանից անմիջապես հետո Պտղոմեոս Բ Փիլադելփոսը նրանց հայտարարեց «փրկիչ աստվածներ» θεοὶ σωτῆρες, և ի պատիվ նրանց հիմնադրեց պարբերաբար անց-

[2] Nilsson, էջ 151:

կացվող մարմնամարզական խաղեր, որոնք իրենց նշանակությամբ մրցում էին օլիմպիական խաղերի հետ[3]։

Սակայն արդեն ինքը Պտղոմեոս Փիլադելփոսը դիմեց հաջորդ քայլին, դեռևս կենդանության ժամանակ աստվածներ հայտարարելով իրեն և իր կնոջը՝ Արսինոյեին որպես θεοὶ ἀδελφοί, և նրանք իսկապես քույր ու եղբայր էին[4]։ Բացի այդ, ստեղծվեց Աֆրոդիտե-Արսինոյեի, այսինքն Աֆրոդիտե դիցուհու հետ նույնացված Արսինոյեի պաշտամունքը[5]։ Ընդհանրապես բնորոշ երևույթ էր անհատի աստվածացմանը հաճախակի ուղեկցող նրա նույնացումը որևէ հին ավանդական աստծու հետ։ Պտղոմեոս Ա-ը և Պտղոմեոս Բ-ը հավակնություն ունեին Հերակլեսներ լինելու[6], Կլեոպատրա Բ-ը (մ. թ. ա. II դարի երկրորդ կես)՝ Իսիս դիցուհի[7]։ Հայտնի են մի շարք այլ փաստեր, երբ Պտղոմյանները նույնացվել կամ համեմատվել են Դիոնիսոս, Ապոլլոն-Հելիոս, Էրոս, Հերմես, Պոսեյդոն, Զևս և այլ աստվածների հետ[8]։

Պտղոմյանների մշտական ախոյաններ Սելևկյանները այս հարցում ևս մրցում էին նրանց հետ. Սելևկոս Ա Նիկատորին Զևս-Նիկատոր անվան տակ աստվածացրեց իր որդի Անտիոքոս Ա Սոտերը։ Նրա պաշտամունքի կենտրոնն էր Պիերիայի Սելևկիայում գտնվող սրբատեղին[9]։ Ինքը Անտիոքոս Ա-ն աստվածացվեց Անտիոքոս-Ապոլլոն-Սոտեր անվան տակ։ Անտիոքոս Դ Էպիփանեսը իրեն հայտարարել էր Զևս Օլիմպիոս, Անտիոքոս Զ-ը և Անտիոքոս ԺԲ-ը՝ Դիոնիսոսներ և այլն[10]։

---

3 Nilsson, էջ 159։

4 Անդ։

5 Strab., XVII, 1, 16.

6 L. Cerfaux et J. Tondriau, Un concurent de christianisme. Le culte des souverains, „Bibliothèque de théologie", Série III, Vol. 5, Paris, 1957 (այսուհետև՝ Cerfaux-Tondriau), էջ 241։

7 Nilsson, էջ 164։

8 J. Tondriau, Rois Lagides comparés ou identifiés à de divinité, „Chronique d'Egypte", 45—46, 1948, էջ 127—146։

9 App., Syr., 63.

10 Cerfaux-Tondriau, էջ 240 և հաջ.։

Հայտնի է Անտիոքոս Գ-ի (223—187) հրահանգը իր պետության սատրապներից մեկին՝ բոլոր այն սրբատեղիներում, որտեղ քրմեր են կարգված իրեն՝ Անտիոքոսին և իր նախնիներին, քրմուհիներ նշանակել նաև իր կնոջ Լաոդիկեի համար։ Ի տարբերություն քաղաքային պաշտամունքի քրմերի՝ ἱερεῖς, համապետական պաշտամունքի քրմերը կոչվում էին ἀρχιερεῖς։ Սրանց ղեկավարած սրբատեղիները գոյություն ունեին, ըստ երևույթին, տերության յուրաքանչյուր սատրապության մեջ[11]։

Սելևկյան պետությունում ծաղկում էին տիրակալի ու նրա նախնիների պաշտամունքին նվիրված նաև քաղաքային սրբատեղիները[12]։

Բնական է, որ խոշոր հելլենիստական տերությունների օրինակին էին ջանում հետևել ըստ հնարավորության նաև փոքր պետությունները։ Պերգամոնի թագավորները՝ Ատտալյանները, աստվածացվում էին միայն մահվանից հետո, սակայն դեռևս կյանքի ժամանակ նրանց հատկացվում էին քրմեր, իսկ թագուհիներին՝ քրմուհիներ։ Հատուկ ճոխությամբ էր իրականացվում դինաստիայի իգական ներկայացուցիչների պաշտամունքը[13]։ Հետ չէին մնում և մնացյալ պետությունները։ Բյութանիայի թագավոր Նիկոմեդես Բ-ը (149—127) իր մորը՝ Ապամային որպես դիցուհու սրբատեղի էր նվիրել[14]։ Կապադովկայի թագավոր Արիարաթ Ե-ը, դատելով նրա դրամներից, իր մազերի հարդարանքը նմանեցնում էր Հելիոս աստծու մազերին, ըստ երևույթին նույնացնելով իրեն այդ աստծու հետ[15]։ Վերջապես հայտնի Միհրդատ Զ Եվպատորը, Պոնտոսի արքան, անվանվում էր Դիոնիսոս կամ Նոր Դիոնիսոս[16] և այլն։ Պետք է նշել, որ հելլենիստական փոքր պետություն-

---

11 Nilsson, էջ 169, Cerfaux-Tondriau, էջ 235 և հաջ.։

12 Nilsson, էջ 167 և հաջ.։

13 Անդ, էջ 171 և հաջ.։

14 Անդ, էջ 176 և հաջ.։

15 Cerfaux-Tondriau, էջ 261։

16 Անդ, էջ 255։

ների արքաների ու նրանց նախնիների պաշտամունքի խնդիրները անհամեմատ ավելի թույլ են ուսումնասիրված, քան այն ամենը, ինչ վերաբերում է Պտղոմյաններին ու Սելևկյաններին։ Հետագա ուսումնասիրությունները անշուշտ ի հայտ կբերեն նոր տվյալներ։

Թույլ հետազոտվածության մասին ասվածը, սակայն, չի վերաբերում փոքր երկրներից մեկին, ավելի ճիշտ՝ նրանցից ամենափոքրին՝ Կոմմագենեին, որի դինաստիական պաշտամունքը գրավել է գիտնականների ուշադրությունը առնվազն նույն չափով, ինչ որ՝ կենտրոնական երկրներինը։ Դրա պատճառը այդ երկրից հառնող արտակարգ հարուստ պատմական նյութն է, որը ոչ միայն վառ լուսաբանում է տիրակալի ու նրա նախնիների պաշտամունքի երևույթի առկայությունը Կոմմագենեում, այլև իր նշանակությամբ դուրս է գալիս այդ երկրի սահմաններից։ Այդ նյութը մեզ համար կրկնակի հետաքրքրություն է ներկայացնում ինչպես իր ընդհանուր արժեքով, այնպես էլ, մանավանդ, Կոմմագենե երկրի ու Հայաստանի անմիջական հարևանության և բազմադարյան սերտ պատմա-մշակութային կապերի պատճառով[17]։

Եփրատի արևմտյան կեռմանից փոքր-ինչ դեպի արևմուտք՝ Նեմրուդ լեռան[18] կատարին, Կոմմագենեի թագավոր Անտիոքոս Ա-ը (մ. թ. ա. 69—34 թթ.), որը Օրոնտյանների (Երվանդյանների) հայտնի տոհմից էր, մ. թ. ա. 60-ական թթ. հիմնադրել է հոյակապ մի տաճար, նվիրված աստվածների, թագավորական նախնիների և իր սեփական անձնավորության պաշտամունքին։ Սրբատեղին հիմնականում պեղվել է գերմանական հնագիտական արշավախմբի կողմից անցյալ դարի վերջերին[19]։ Քսաներորդ դարի 50-ական թվականների կեսի-

17 Г. Тирацян, Страна Коммагена и Армения, «Տեղեկագիր», 1956, № 3.

18 Կոմմագենե երկրում գտնվող այս Նեմրուդ լեռը չպետք է շփոթել Վանա լճի հարավ-արևմտյան ափին խոյացող Նեմրուդ լեռան հետ։

19 K. Humann und O. Puchstein, Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, էջ 232—352։

րին պեղումները շարունակել է ամերիկյան հնագիտական մի արշավախումբ, որը ի հայտ է բերել նորանոր արժեքավոր նյութեր[20]։

Նեմրուդի գագաթի արևմտյան և արևելյան կողմերում մեկական արհեստական հարթակ է պատրաստված, որոնցից յուրաքանչյուրի վրա միևնույն կարգով դասավորված են նույնանման պաշտամունքային կառույցներ։ Յուրաքանչյուր հարթակի վրա կանգնեցված հնգական հսկայական քարե արձանները մարդկային կերպարանքներ են՝ նստած վիճակում, որոնցից մեկը կանացի արձան է։ Արձանները լրիվ չեն պահպանվել, նրանց բազմաթիվ բեկորներն ընկած են հենց մոտակայքում։ Որոշված են նրանց նախնական չափերը. կենտրոնական արձանը ունեցել է 9 մ բարձրություն, մյուս չորսը՝ մոտավորապես 8-ական մ: Արձանները քանդակված են հելլենիստական ոճով, բայց արևելյան ուժեղ ազդեցության ներքո, որն առանձնապես նկատելի է նրանց հագուստի վրա։

Յուրաքանչյուր հարթակի վրա կանգնեցված է եղել նաև երկու շարքով մոտ երեսուն քարասալ, յուրաքանչյուր սալը 3 մ բարձրությամբ, 1,2 մ լայնությամբ և 0,3 մ հաստությամբ։ Ոչ բոլոր սալերն են պահպանվել, իսկ ամբողջությամբ հասածների թիվը շատ փոքր է։ Յուրաքանչյուր սալի վրա բարձրաքանդակով պատկերված է մեկական մարդկային կերպարանք. դրանց մեջ մի քանիսը կանացի են։

Հսկայական արձանների բազմոցների հետևի կողմում, յուրաքանչյուր հարթակի վրա, փորագրված է մեկական մեծ արձանագրություն՝ երկուսն էլ նույն բովանդակությամբ։ Արձանագրությունը մանրամասն պատմում է սրբատեղին հիմնադրողի, տաճարի, նրա նպատակադրման, արձանների ու բարձրաքանդակների մասին։ Պարզվում է, որ արձանները ներկայացնում են սինկրետիկ հելլենիստա-իրանական աստվածների, որոնք են Զևս-Օրոմազդես, Ապոլլոն-Միհր-Հե-

20 T. Goell, Throne above the Euphrates, „National Geographic", Vol. 119, № 3, March, 1961, էջ 390 և հաջ.։

լիոս-Հերմես, Հերակլես-Արտագնես (Վահագն)-Արես. դրանց կողքին ներկայացված է Կոմմագենե դիցուհին՝ երկրի սնողը» և վերջապես ինքը Անտիոքոս Ա արքան։

Սալերի վրա բարձրաքանդակով պատկերված են Անտիոքոսի նախնիները։ Յուրաքանչյուր պատկեր ունի իր արձանագրությունը, որն սկսվում է Անտիոքոսի տիտղոսաշարից. Βασιλεὺς μέγας Ἀντίοχος Θεὸς Δίκαιος Ἐπιφανὴς Φιλορώμαιος καὶ Φιλέλλην ὁ ἐγ βασιλέως Μιθραδάτου Καλλινίκου καὶ βασιλίσσης Λαοδίκης Θεᾶς Φιλαδέλφου. ***«Մեծ արքա Անտիոքոս Աստված Արդարադատ Հայտնված (աստված) Հռոմեասեր և Հունասեր, սերունդ արքա Միթրադատես Կալլինիկոսի և Լաոդիկե Դիցուհու Եղբայրասերի»։*** *Սրան հետևում է տվյալ սալի վրա պատկերված նախնու անունը։*

Սալերի մի շարքը նվիրված է Անտիոքոսի հայրական նախնիներին և սկսվում է Դարեհ Ա Աքեմենյանի պատկերով, որին կից կարդում ենք. Βασιλέα βασιλέων μέγαν Δαρεῖον τοῦ Ὑστάσπου — ***«Արքայից արքա մեծ Դարեհին, որդուն Վշտասպի»։*** *Դրան հաջորդող երկու սալերը փշրված են, իսկ հետևյալի վրա պատկերված է Անտիոքոսի նախնին՝ ուղիղ գծով Արոանդեսը։ Սրան հաջորդում է իր որդին՝ Արտասուրան, դրան՝ իր որդի Արոանդեսը, որի հետ կապված արձանագրությունը ուշագրավ է.* Ἀροάνδην Ἀρτασούρα τὸν γαμήσαντα βασίλισσαν Ῥοδογούνην τὴν βασιλέως βασιλέων μαγάλου Ἀρταξέρξου τοῦ καὶ Μνήμονος θυγατέρα — ***«Արոանդեսին Արտասուրայի [որդուն], որն ամուսնացած էր Հռոդոգունե արքայադստեր, արքայից արքա մեծ Արտաքսերքսես Մնեմոնի դստեր հետ»։ Այս Արոանդեսի մասին լրացուցիչ տվյալներ է հաղորդում Քսենոփոնը իր «Անաբասիսում»՝ անվանելով նրան Օրոնտաս[21]։ Սա Հայաստանի աքեմենյան սատրապն է եղել մ. թ. ա.*** V—IV ***դարերի եզրին և իսկապես ամուսնացած է եղել Արտաքսերքսես Մնեմոնի (405—359) դստեր հետ։***

[21] Xen., Anab., III, 4. 13.

Այստեղից պարզվում է Անտիոքոս Կոմմագենացու նախնիների կազմում Դարեհ Ա-ի ներգրավման իմաստը։ Ջարդված երկու սալերից մեկը (2-րդ կամ 3-րդ), այսպիսով, նվիրված պետք է լիներ Արտաքսերքսես Մնեմոնին։ Մյուս սալի խնդիրը պարզ չէ։ Հնարավոր է, որ նրա վրա պատկերված է եղել ևս մեկն այն Աքեմենյաններից, որոնք իշխել են Դարեհ Ա-ի և Արտաքսերքսես Մնեմոնի միջև ընկած ժամանակահատվածում (սրանք երեքն էին՝ Քսերքսես, Արտաքսերքսես Ա և Դարեհ Բ), ավելի շուտ՝ Քսերքսեսը։ Բացառված չէ նաև, որ պատկերվածը լիներ Ստրաբոնի կողմից որպես Օրոնտյանների (Երվանդյանների) տոհմի հիմնադիր հիշատակվող Հյուդարնեսը (պարսկ. Վիդարնա)՝ Դարեհ Ա-ի զինակիցը և հանրահայտ յոթ պարսիկներից մեկը[22]։

Արոանդես սատրապին հաջորդում է մի այլ Արոանդես, որն արդեն զարդարված է թագավորի տիտղոսով, իսկ սրանից հետո գալիս է ոմն ...անես. այնուհետև, ընդմիջումներով՝ Սամես, Արսամես, Միթրադատես։ Շարքն ավարտվում է ևս մի Միթրադատեսով՝ Կալլինիկոս պատվանվամբ, որը սրբատեղիի հիմնադիր Անտիոքոսի հայրն է։

Սալերի մյուս շարքը նվիրված է Անտիոքոսի մայրական նախնիներին և պարունակում է Սելևկյան թագավորներին, քանի որ Անտիոքոսի մայրը Սելևկյան Անտիոքոս Ը-ի (25—96), դուստրն է եղել։ Այդ շարքն սկսվում է Ալեքսանդր Մակեդոնացու պատկերով։ Ըստ երևույթին սա ներկայանում է այստեղ որպես Սելևկյանների քաղաքական նախորդ։ Սրան հաջորդել են հավանաբար Սելևկոս Ա-ի և Անտիոքոս Ա-ի պատկերները, որովհետև չորրորդ սալը վերջինիս որդու՝ Անտիոքոս Բ-ի պատկերն է կրում։ Այնուհետև, մի շարք փշրված սալերից հետո, 11-րդ տեղում, հանդես է գալիս Դեմետրիոս Բ-ը, որից հետո՝ նրա որդի Անտիոքոս Ը-ը՝ Անտիոքոս Կոմմագենացու պապը։ Սրան հաջորդում են ևս մի քանի վատ պահ-

[22] Strab., XI, 14, 15. ***Տե՛ս*** C. Toumanoff, A Note on the Orontids, I, „Le Muséon", LXXII, 1959, ***էջ 14 և հաջ., ուր հեղինակը նոր փաստեր է բերում Ստրաբոնի հաղորդման օգտին։***

պանված սալեր, որոնց վրա կան նաև կանացի պատկերներ։

Սրբատեղիում կանգնեցված են նաև մի շարք այլ պաշտամունքային կոթողներ, որոնց թվում Անտիոքոսի հորոսկոպը (բախտացույցը) կրող մի սալ, որի վրա պատկերված լուսատուների դիրքից հաջողվել է պարզել, որ այն վերաբերվում է մ. թ. ա. 62 կամ 61 թվականի հուլիսի 7-ին. հավանորեն սա սրբատեղիի հիմնադրման օրն է[23]։

Արձանների բազմոցների վրա փորագրված մեծ արձանագրությունը պատմում է աստվածների, հերոս-նախնիների և իրեն՝ իշխող թագավորի պաշտամունքի կազմակերպման մասին այս սրբատեղիում, որը Անտիոքոս Ա-ը նախապատրաստել է իր իսկ հուղարկավորության համար[24]։ Այստեղ կարգված էին քրմեր, հիերոդուլներ (տաճարային ստրուկներ)՝ երգիչներ ու երաժիշտներ, որոնց պարտականությունն էր սպասարկել սրբատեղին և սերնդից սերունդ հաղորդել իրենց արվեստը։ Թագավորը նվիրեց տաճարին χώράν τε ἱκανὴν καὶ προσόδους ἐξ αὐτῆς ἀκινήτους «բավարար քանակությամբ հողեր և նրանցից անվթար ստացվող եկամուտը»։ Այս հողերը ևս դառնում էին տաճարի անօտարելի սեփականությունը։ Ոչ ոք, ոչ ապագա թագավոր և կամ իշխան, արքունի և կամ քուրմ, և ոչ էլ որևէ մասնավոր անձ իրավասու չէ որևէ ձևով յուրացնելու կամ օտարելու «այն գյուղերն ու եկամուտները, որոնք ես նվիրել եմ… աստվածներին» — նախազգուշացնում է Անտիոքոսը։

Այդպիսին է Նեմրութ լեռան սրբատեղին։ Սակայն Կոմմագենեում, որքան էլ փոքր էր երկիրը, այն իր տեսակի մեջ միակը չի եղել։ Ներկայիս Գյառգյառի մոտակայքում հնում գոյություն ունեցած Արսամեյա քաղաքից ծագող մի արձանագրություն վկայում է, որ Անտիոքոսը այստեղ ևս սրբատեղի է

23 T. Goell, նշվ. աշխ., էջ 405։

24 Ամերիկյան արշավախմբի հիմնական նպատակներից մեկը՝ գտնել Անտիոքոսի գերեզմանը Նեմրութ լեռան վրա, այդպես էլ չի հաջողվել իրականացնել։ Տե՛ս T. Goell, նշվ. աշխ., էջ 405։



1. Անտիոքոս Ա Կոմմագենացու (մ. թ. ա. 69—34 թթ.)՝ Նեմրութ լեռան վրա հիմնադրած սրբատեղին։



2. Նեմրութ լեռան սրբատեղիի արևելյան հարթակը՝ հսկայական արձաններով։



3. Զևս-Օրոմազդես (Արամազդ) աստծու հսկայական արձանի գլուխը։



4. Ապոլլոն-Հելիոս-Միթրա-Հերմես աստծու հսկայական արձանի գլուխը։



5. Հերակլես-Արտագնես(Վահագն)-Արես աստծու հսկայական արձանի գլուխը։



6. Նախնիների բարձրաքանդակ կերպարանքներով սալերից երկու նմուշ։



7. Նախնիներից՝ Դարեհ Ա Աքեմենյանի բարձրաքանդակ կերպարանքի գլուխը։



8. Սրբատեղիի արևմտյան հարթակը. ձախից և աջևում՝ նախնիների բարձրաքանդակ կերպարանքներով սալերի պատվանդանների շարքերը։

հիմնադրել[25], ըստ որում շեշտը դրված է եղել ոչ այնքան իշխող թագավորի, որքան նրա նախնիների պաշտամունքի վրա[26]։ Նույն թագավորին պատկանող վերջերս գտնված մի արձանագրության մեջ ևս տեղեկություններ կան մի այլ Արսամեյա քաղաքի մասին, ներկայիս Քյահտայի տեղում, որն արձանագրության մեջ անվանված է «Նիմֆայոս գետի վրա (գտնվող) Արսամեյա»[27]։ Հաղորդվում է, որ Անտիոքոսի նախնի Արսամեսը այստեղ քաղաք է կառուցել, իսկ Անտիոքոսի հայրը՝ Միթրադատես Կալլինիկոսը սրբատեղի է հիմնադրել։ Անտիոքոսն ընդարձակել ու ճոխացրել է այն, միացնելով նրան «հողեր արքայական սեփականությունից»։ Դրանից առաջ մի սրբատեղի էլ է գտնվել, նորից դինաստիայի պաշտամունքին նվիրված, երկրի մայրաքաղաք Սամոսատում։ Մի մեծ արձանագրության մեջ, ի թիվս այլ տեղեկությունների, հաղորդվում է, ինչպես այդ արված է նաև Նեմրուդ լեռան արձանագրության մեջ, որ թագավորը, «բավարար քանակությամբ հողեր և նրանցից անվթար ստացվող եկամուտը» նվիրել է սրբատեղիին։ Վերջապես Սամոսատի մոտերքում գտնվող Ադիյամանից ծագող մի արձանագրություն, հար և նման Սամոսատի արձանագրությանը, ենթադրել է տալիս կամ մայրաքաղաքի մոտակայքում գոյություն ունեցած նմանօրինակ մի սրբատեղիի առկայությունը, կամ՝ որ Սամոսատի սրբատեղիի կառույցները և արձանագրությունները կրկնօրինակներ են ունեցել, ինչպես Նեմրուդ լեռան վրա[28]։

---

[25] L. Jalabert et R. Mouterde, Inscriptions grecques et latines de la Syrie, I, Paris, 1929, № 48.

[26] F. K. Dörner und K. Naumann, Forschungen in Kommagene, „Istanbuler Forschungen", Bd. 10, 1939, էջ 23 և հաջ.։

[27] F. K. Dörner, Arsameia am Flusse Nymphaios, eine neue kommagenische Kultstätte, "Bibliotheca orientalis", IX, 1952, № 3—4, էջ 93 և հաջ։

[28] Հմմտ. F. K. Dörner, T. Goell, Arsameia am Nymphaios, „Istanbuler Forschungen", Bd. 23, 1963, էջ 88 և հաջ.։ Դյորների հաշիվներով այժմ հայտնի է դինաստիական պաշտամունքին նվիրված կոմմագենյան ութ-ինը սրբատեղի։

2

Կոմմագենե երկրից ծագող այս չափազանց հարուստ նյութը մերձեցնում է մեզ անմիջականորեն հայկական իրականությանը, քանի որ Հայաստանը Կոմմագենեից բաժանված է եղել միայն Եփրատ գետով, բայց կապված է եղել նրա հետ բազմաթիվ թելերով։

Թագավորական դինաստիայի պաշտամունքը՝ նախ ի դեմս թագավորի նախնիների, ապա նաև իր սեփական անձի, ծայր առնելով հելլենիստական աշխարհի առաջատար երկրներում, տարածվել է այնուհետև, ջրի մեջ գցված քարից առաջացող շրջանների նման, նաև միջին ու փոքր երկրների վրա։ Կասկածից վեր է, որ այն պետք է ընդգրկեր Հայաստանը ևս, որն աչքի ընկնող պետություն էր արդեն մ. թ. ա. II դարի առաջին կեսում, իսկ մ. թ. ա. I դարի սկզբներին դարձավ, թեև ժամանակավորապես, Առաջավոր Ասիայի հզորագույն պետությունը։ Այն հանգամանքը, որ հիշյալ պաշտամունքի հետքերը Հայաստանում հայտնաբերվել են միայն նորերս, մի տասը տարի առաջ[29], բացատրվում է անտիկ հեղինակների՝ հելլենիստական-հռոմեական շրջանի Հայաստանի մասին պահպանված տեղեկությունների սղությամբ՝ մի կողմից, և Հայաստանի պատմության այդ ժամանակաշրջանի հնագիտական անբավարար հետազոտվածությամբ՝ մյուս կողմից։ Այս առումով պատահական չէ, որ հիշյալ հետքերը նախապես գտնվել են համեմատաբար ավելի ուշ շրջանի պատկանող պատմողական աղբյուրում՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ։

Ահա Խորենացու ընձեռած տեղեկություններն այդ մասին։ Պարթևական Արշակ արքայի եղբայր Վաղարշակը՝ հայ Արշակունիների դինաստիայի հիմնադիրը (որն ըստ Խորենացու ժամանակագրության իշխել է մ. թ. ա. II դարի երկրորդ

[29] Г. Х. Саркисян, Город Древней Армении (III в. до н. э. — IV в. н. э.), Ленинградский университет, 1951 (թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատ), էջ 9, նույնի Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960, էջ 33 և հաջ.։

կեսում), ի շարս իր կատարած բազմաթիվ բարեփոխությունների ու նորամուծությունների, «մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեացն։ Եւ աղերսեալ որ ի Հրէիցն Շամբատայ Բագարատ, որ և թագադիր և ասպետ, հանդերձ հարկեցուցանող բանիւք, թողուլ զօրէնս հրէութեանն, և պաշտել զկուռս. զոր ոչ առեալ յանձն՝ ըստ կամաց թողու զնա արքայն Վաղարշակ»[30]։

Արշակը՝ Վաղարշակի որդին ու ժառանգը, նույնպես ջանացել է հարկադրել Բագարատի որդիներին պաշտել կուռքերը. Բագրատունիներից երկուսը նույնիսկ զոհվել են հանուն հայրենի օրենքների, իսկ մյուսները որոշ զիջումներ են արել, բայց կռապաշտության չեն հասել[31]։

Արշակի որդի Արտաշեսը, մեծ նվաճող, «գտեալ յԱսիայ պղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպողոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր։ Զոր առեալ քրմապետացն, որ էին յազգէն Վահունեաց՝ զԱպողոնին և զԱրտեմիդայն կանգնեցին յԱրմաւիր, իսկ զՀերակլեայն զառնապատկերն, որ արարեալ էր ի Սկիւղեայ և ի Դիպինոսէ կրետացւոյ, զՎահագն իւրեանց վարկանելով նախնի՝ կանգնեցին ի Տարօն, յիւրեանց սեպհական գիւղն յԱշտիշատ, յետ մահուանն Արտաշիսի»։ Բացի այդ Արտաշեսը «յԵլլադայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրտեմիդեայ, զԱթենայ, զՀեփեստու, զԱփրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս. որք ոչ ժամանեալ միջամուխ լինել յաշխարհս՝ լսեն զբօթ մահուանն Արտաշիսի. և փախուցեալ ընկենուն զպատկերսն յամրոցն յԱնի. և քուրմք զնոցին զհետ լինելով, դադարեն առ նոսա»[32]։

Արտաշեսի որդի և ժառանգ Տիգրանը «Առաջին գործ զմեհեանսն շինել կամեցաւ։ Իսկ քրմացն, որ եկեալ էին ի Յունաց, զմտաւ ածեալ զի մի՛ ի խորագոյն Հայս վարիցին՝ պատճառեցան ըղձութիւնս, իբր թէ դիքն անդէն կամիցին զբնակիլն։ Որում հաւանեալ Տիգրան, կանգնեաց զՈլիմպիա-

30 Խորենացի, II, 8։
31 Անդ, II, 9։
32 Անդ, II, 12։

կան պատկերն Դիոսի յամուրն յԱնի, և զԱթենայն ի Թիլ, և զԱրտեմիդայ զմիւս[33] պատկերն յԵրիզայ, և զԵփեստուն ի Բագայառինջ։ Բայց զԱփրոդիտեայ զպատկերն, իբրև Հերակլեայ տարփաւորի, առ նորին պատկերին Հերակլեայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն... Եւ այսպէս մեհեանս շինեալ, և առաջի մեհենիցն բագինս կանգնեալ, զոհս ամենայն նախարարացն հրամայէ մատուցանել հանդերձ երկրպագութեամբ. զոր չառեալ յանձն արանց ազգին Բագրատունեաց»[34]։

Տիգրանի եղբայր և հաջորդ Արշամ թագավորի առջև ամբաստանում են Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչ թագակապ ասպետ Ենանոսին։ «Այսմ քսութեան հաւատացեալ արքային Արշամայ՝ հրամայեաց տանջանս պէսպէս ի վերայ Ենանոսի կուտել. և վախճան գործոյն—կամ թողուլ ի սպառ զօրէնս հրէութեան, և երկիր պագանել արեգական, և պաշտել զկուռս արքայի... կամ կախել զփայտէ և բնաջինջ լինել ազգի նորա»[35]։ Ենանոսը ստիպված է լինում տեղի տալ։

Մոտ հարյուր տարի սրանից հետո թագավորներից մեկը, բռնատիրող Երվանդը, որ միայն մոր կողմից էր Արշակունի, «շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբագնաց յօրինեալ է զկազմութիւն. և փոխեաց անդր զամենայն զկուռս որ յԱրմաւիր։ Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր»[36]։

Հաջորդ արքան՝ Արտաշեսը, որ վերականգնել էր օրինական իշխանությունը, հիմնադրեց մի նոր մայրաքաղաք՝ Արտաշատը, «կանգնէ ի նմա մեհեան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն»[37]։

33 Նկատի ունի առաջին, Արմավիրում տեղադրված պատկերը։
34 Խորենացի, II, 14։
35 Անդ, II, 24։
36 Անդ, II, 40։
37 Անդ, II, 49։

Եվս մեկևկես դար անց, պարսից թագավոր Արտաշիր Պապականը, որ տապալել էր պարթև Արշակունիներին ու տիրացել նրանց գահին, հաջողացրեց սպանել հայոց Խոսրով թագավորին և ժամանակավորապես գրավել Հայաստանը։ «Եւ զմեհենիցն պաշտամունս առաւել ևս յորդորէ,—ասում է նրա մասին Խորենացին,—այլ և զհուրն որմզդական, որ ի վերայ բագնին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել։ Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ և լուսնիւ յԱրմաւիր, և փոխեցան յԱրմաւիրայ ի Բագարան և դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշիր»[38]։

Ինչպես հայտնի է, Մովսես Խորենացու հաղորդումները հին հայերի հեթանոսական կրոնի մասին իր ժամանակ խստագույն քննադատության է ենթարկել ֆրանսիացի հայագետ Օգյուստ Կարրիերը, հայտարարելով, թե այդ բոլոր տվյալները պատմական ոչ մի արժեք չեն ներկայացնում[39]։ Նրա դատավճռի ստվերը դեռևս ընկած է այդ տվյալների վրա։ Կարրիերը մատնանշում է այն հանգամանքը, որ բոլոր այն աստվածները, որոնք հանդիպում են Մովսես Խորենացու մոտ, ինչպես և նրանցից յուրաքանչյուրի պաշտամունքի վայրի անունը, հիշատակված են նաև Խորենացու կարևորագույն աղբյուրներից մեկում՝ Ագաթանգեղոսի գրքում, այնտեղ, ուր նա պատմում է Հայաստանում Տրդատ Գ-ի կողմից քրիստոնեության հաստատման կապակցությամբ հեթանոսական տաճարների ավերման մասին[40]։ Ըստ որում, եթե հայերեն Ագաթանգեղոսը պարունակում է աստվածների հայկական անունները՝ Արամազդ, Տիր, Վահագն, Անահիտ, Աստղիկ, Նանե, Միհր, ապա հունարեն Ագաթանգեղոսը տալիս է բոլոր այդ աստվածների հունական անունները՝ Զևս, Ապոլլոն, Հերակլես, Արտեմիս, Ափրո-

38 Խորենացի, II, 77։

39 A. Carrière, Les huit sanctuaires de l'Arménie païenne, d'après Agathange et Moïs de Khoren, Paris, 1899.

40 Ագաթանգեղոս, 778—790, 809։

դիտե, Աթենաս, Հեփեստոս[41], որոնց նախապատվություն է տվել Խորենացին հայկական անունների առջև։ Այսպիսով Կարրիերը այդ աստվածների և նրանց պաշտամունքի մասին Խորենացու ունեցած տեղեկությունների աղբյուրը համարում է Ագաթանգեղոսին, նրա հայերեն և հունարեն տարբերակները միաժամանակ, և կամ մեզ չհասած հայերեն այնպիսի մի տարբերակ, որտեղ աստվածների հայկական անուններին զուգահեռ բերված էին նրանց հունական համարժեքները։ Ընդսմին Կարրիերն ընդգծում է աղբյուրի օգտագործման Խորենացու առանձնահատուկ ձևը. Ագաթանգեղոսի մոտ աստվածները և նրանց պաշտամունքի վայրերը հիշատակված են միայն ու միայն Տրդատի կողմից վերջիններիս ավերման կապակցությամբ, մինչդեռ Խորենացին այդ հանգամանքը քար լռության մատնելով, սրբատեղիների, նրանց հիմնադրման, նրանցում տեղադրված դիցարձանների և այլնի երկար պատմություններն է հորինում՝ հետին թվով, régressivement, ինչպես արտահայտվում է Կարրիերը։

Կարրիերի, ինչպես և Խորենացու մյուս գերքննադատորեն տրամադրված հետազոտողների դատողությունների թերին ամենևին այն չէ, որ նրանք ջանացել են վեր հանել աղբյուրների օգտագործման Խորենացու եղանակի յուրահատուկ բնույթը։ Այդ յուրահատկությունը հաճախ իսկապես առկա է, և նույնիսկ նրա որոշ կողմերը ճիշտ կերպով նկատել է նույն ինքը Կարրիերը։ Թերությունը նրանց լիակատար արհամարհանքն է Խորենացու պատմածի այնպիսի մանրամասների նկատմամբ, որոնք չեն գտնվում նրա (կամ նրան վերագրված) աղբյուրի մեջ, այն, որ նրանք այդ մանրամասները անվերապահորեն հորինված են համարում և դրանով իսկ փակում են իրենց ճանապարհը դեպի Խորենացու երկի ընդերքում թաքնված արժեքները։ Վերի օրինակը ակնբախ է այդ տեսակետից։

[41] Agathangelus und die Akten Gregors von Armenien. Neu herausgegeben von Paul de Lagarde, Göttingen, 1887, էջ 65 և հաջ.։

Այստեղ մենք չենք շոշափելու հին հայերի հեթանոսական կրոնի բոլոր այն հարցերը, որոնք ծագում են Մովսես Խորենացու հայտնած տեղեկությունների և դրանց՝ Կարրիերի տված քննադատության կապակցությամբ։ Մենք կբավարարվենք այն ամենով միայն, ինչը կապ ունի Հայաստանում թագավորական դինաստիայի պաշտամունքի խնդրի հետ։

Կարրիերը պնդում էր, թե Ագաթանգեղոսի հայերեն և հունարեն տարբերակների հիշատակած աստվածներից դուրս Խորենացին ոչ մի նոր աստծու անուն չի գործածում։ Այս պնդումը սակայն լրիվ չի արտահայտում իրավիճակը։ Խոսելով, օրինակ, Ապոլլոնի և Արտեմիսի մասին, Խորենացին, ինչպես տեսանք վերը մեջ բերած հատվածներում, անվանում է դրանց նաև Արև և Լուսին, մի բան, որ Ագաթանգեղոսի մոտ բացակայում է։ Մինչդեռ հայտնի է, որ սկսած դեռևս մ. թ. ա. IV դարից Արտեմիս դիցուհին նույնացվել է Սելենե-Լուսնին[42]։ Ապոլլոնի նույնացումը Հելիոս-Արևին նույնպես հանրահայտ փաստ է[43] և, ի դեպ, նշված է Անտիոքոս Կոմմագենացու վերը հիշատակված արձանագրության մեջ, այսինքն տարածում է ունեցել հայկական միջավայրին մոտ՝ կոմմագենյան միջավայրում՝ Տիգրան Բ-ի օրոք, որի ժամանակակիցն էր վերոհիշյալ Անտիոքոսը։ Այդպիսով, եթե այս փաստը Խորենացին ինքն է հորինել, ապա հորինել է իրականությանը զարմանալիորեն հարազատ։

Էլ ավելի հետաքրքրական է Զևսի օրինակը. Խորենացու հիշատակած Զևսը Ագաթանգեղոսի մոտ հանդիպող վերացական Զևսը չէ, այլ Զևս Օլիմպիականը։ Նախապես նշենք, որ Խորենացուն քաջ հայտնի է եղել, թե միևնույն աստվածը ունենում է հաճախ իր տարատեսակները։ Ահա թե ինչ է ասում նա Զևսի հայկական զուգահեռ հանդիսացող Արամազդի մասին։ «Ոչ Արամազդ ոք, այլ ի կամեցողսն լսին լինել Արամազդ չորից ևս այլոց անուանեցելոց ոմանց Արամազդ. յորոց մի է

[42] Maja encyklopedia kulturi świata antycznego, T. I, Warszawa, 1958, էջ 102։

[43] Անդ, էջ 75։

և Կունդ ումն Արամազդ»[44]։ Զևս Օլիմպիականի պաշտամունքը, որը հորդորվեց Սելևկյան Անտիոքոս Դ Էպիփանեսի կողմից, գերադասվեց մյուս աստվածների պաշտամունքից և նույնացվեց այդ արքայի պաշտամունքի հետ, այնուհետև մեծ տեղ էր գրավել Սելևկյանների մոտ[45]։ Այդ խնդրին դեռևս կանդրադառնանք այլ կապակցությամբ[46]։ Բնական կլինի ենթադրել, որ Զևս Օլիմպիականի պաշտամունքը տարածվել է Հայաստանում ևս՝ Արամզդի տարատեսակներից մեկի հետ նույնացման ճանապարհով, այն շրջանում, երբ Տիգրան Բ-ը տասնչորս տարի անընդհատ գրավում էր Սելևկյանների գահը՝ Անտիոքում։ Այդ կապակցությամբ ավելի ընդունելի է դառնում Խորենացու պատմածը դիցարձանների՝ Ասիայից (Խորենացու արտահայտությամբ) դեպի Հայաստան տեղափոխելու մասին։ Տիգրան Բ-ը ամբողջ քաղաքներ էր տեղափոխում Հայաստան («...ողջ Մաժաքը, ոտքի հանելով, տեղափոխեց...»,—ասում է Ստրաբոնը)[47], առավել ևս կարող է տեղափոխած լինել արձաններ, որոնց կարիքը մեծ պիտի լիներ։ Հին աշխարհի պատմությունը լի է նման փաստերով։ Արձաններ կարող էր ձեռք բերած լիներ դեռևս Արտաշես Ա-ը՝ նախկինում սելևկյան ստրատեգոս։

Կարրիերն այնուհետև պնդում է, թե Խորենացին Ագաթանգեղոսի հետքերով կուրորեն կրկնում է վերոհիշյալ աստվածների պաշտամունքի վայրերի անունները ևս։ Սա նույնպես ճիշտ չէ։ Խորենացին խոսում է Արմավիրի մասին որպես պաշտամունքային կարևոր կենտրոնի, ինչպես և Բագարանի մասին, որոնք Ագաթանգեղոսի մոտ հիշատակված էլ չեն։ Եթե նույնիսկ ենթադրենք, որ Բագարանի խնդրում Խորենացին գործել է իր նախասիրած եղանակով, պատմական եզրակացություններ հանելով տեղանվան ստուգաբանությունից (իսկ Բագարան տեղանունը աչքի է զարնում իր պաշտամունքային էությամբ, մի բան, որ նշում է հենց ինքը Խորենացին), ապա դեռ մնում է Արմավիրը։ Արմավիրի պաշտամունքային կենտրոնի մասին մենք տեղեկություններ ունենք դեռևս ուրարտական ժամանակներից, երբ քաղաքը Արգիշտիխինիլի էր կոչվում[48]։ Իսկ որևէ վայրի պաշտամունքային բնույթը, ինչպես հայտնի է, շատ մնայուն ու հաստատուն է։ Արմավիրի հունարեն արձանագրությունների ուսումնասիրումը հանգեցրել է այն եզրակացության, որ այստեղ մ. թ. ա. III—II դարերի եզրին գոյություն է ունեցել պաշտամունքային կենտրոն։ Հ. Մանանդյանն այդ արձանագրությունների մեջ գտնում է նույնիսկ Արմավիրում Ապոլլոնի և Արտեմիսի տաճարի մասին Խորենացու հաղորդման հաստատումը[49]։ Կ. Վ. Տրևերը համադրում է արձանագրությունների տվյալները Խորենացու մի այլ հաղորդման հետ, որի մեջ խոսվում է արմավիրյան սրբատեղիի սոսիների սաղարթների սոսափյունի միջոցով գուշակություններ կատարելու մասին։ Գուշակության նման եղանակն ընդունված է եղել նաև հին Հունաստանում՝ Դոդոնայի գուշակավայրում[50]։

Վերջապես Ագաթանգեղոսը բացարձակապես ոչինչ չի հաղորդում հայկական տաճարներում արքայի նախնիների արձանների գոյության, նախնիների պաշտամունքի, նրանց համար կատարված զոհաբերությունների մասին, որոնց վերաբերյալ, ինչպես տեսանք, մանրամասն տեղեկություններ է տալիս Մովսես Խորենացին։ Սրանք նույնպես, հետևելով Կարրիերին, պետք է Ագաթանգեղոսի հիշատակած աստվածների մասին régressivement հորինված պատմության մանրամասները համարել։

---

44 *Խորենացի*, I, 31։

45 Cerfaux-Tondriau, էջ 241։

46 Տե՛ս ստորև, էջ 75։

47 Strab., XII, 2, 9.

48 Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, էջ 73։

49 *Հ. Մանանդյան*, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, էջ 7 և հաջ.։

50 К. В. Тревер, Очерки по истории культуры Древней Армении, էջ 104 և հաջ.։

Սակայն հնարավո՞ր է արդյոք դրանք հորինված համարել, իմանալով այն ամենը, ինչ շատ համիրճ շարադրված է սույն գլխի սկզբում։ Այդ պատասխանի վրա նույնիսկ մի թեթև ակնարկ, թե Հայաստանում ևս գոյություն է ունեցել թագավորական դինաստիայի պաշտամունք, պետք է որ արժանանար ամենալուրջ վերաբերմունքի, իսկ Խորենացու հաղորդածը ոչ թե ակնարկ է, այլ հանգամանալից պատմություն՝ բազմաթիվ մանրամասներով։ Դիմենք վերջիններից մի քանիսին, հելլենիստական աշխարհի այլ երկրներից ծագող համապատասխան նյութի հետ համեմատության տեսանկյունով։

1. Ավանդական աստվածների և թագավորական նախնիների պաշտամունքի սերտ կապը Հայաստանում: Նման կապը հնարավորին չափ ցցուն դրսևորվում է նաև Նեմրութ լեռան սրբատեղիում, որ պարզ երևում է վերը շարադրված նյութերից։ Սելևկյանների և Պտղոմյանների չափազանց հարուստ պրակտիկայից բերենք միայն երկու օրինակ, որոնք վերաբերում են հայկական իրականությանն ավելի մոտ կանգնած Սելևկյաններին։ Դրանցից մեկը այնքան է մոտենում Խորենացու ասածներին, որ թվում է, թե վերջիններս անմիջական հիմք են ունեցել հենց այդ օրինակը, մի բան, որ, իհարկե, բացառված է։ Դուրա-Եվրոպոսում հայտնաբերված՝ մեր թվականության սկզբին պատկանող մի արձանագրության թվագրական բանաձևում հիշատակվում է Զևսի, Ապոլլոնի, թագավորական նախնիների և Սելևկոս թագավորի քուրմը (հմմտ. «...արեգական և լուսնի և իւրոց նախնեացն»)։ Ի դեպ այս արձանագրությունը վկայում է, որ Սելևկյան դինաստիայի պաշտամունքի մնացորդները դեռ հարատևում էին, երբ դինաստիան ինքը վաղուց արդեն չկար[51]։ Երկրորդ օրինակը վերաբերում է Պիերյան Սելևկիա քաղաքին։ Այնտեղից ծագող մի արձանագրության մեջ թվարկված է քրմերի հետևյալ խումբը. մեկ քուրմ՝ Օլիմպիական Զևսի և Զևս Կորի-

51 M. Rostovtzeff, Πρόγονοι, „The Journal of Hellenic Studies“, Vol. LV, 1935, էջ 56։

ֆայոսի, մեկ քուրմ՝ Դափնեական Ապոլլոնի, մեկ քուրմ՝ սոսկ Ապոլլոնի, մեկ քուրմ՝ Սելևկոս-Զևս-Նիկատորի, Անտիոքոս-Ապոլլոն-Սոտերի, Անտիոքոս Բ Թեոսի, Սելևկոս Բ Կալլինիկոսի, Սելևկոս Գ Սոտերի, Անտիոքոս Գ Մեծի որդի Անտիոքոսի, իրեն՝ Անտիոքոս Գ-ի, վերջապես մեկ քուրմ էլ՝ Սելևկոս թագավորի[52]։ Այստեղ ընդհանուր առմամբ նույն պատկերն է ինչ-որ և Դուրա-Եվրոպոսում, այն տարբերությամբ, որ բնութագիրը ավելի ծավալուն է, նախնիները թվարկված են անուններով և քրմերը մի ամբողջ խումբ են կազմում. հավանաբար սրբատեղին ավելի խոշոր էր։ Հետաքրքրական է հատկապես թագավորական դինաստիայի պաշտամունքի հետ կապված աստվածների կազմի կայունությունը. նույն Զևսը և Ապոլլոնը՝ Հերակլեսի հետ միացած, նմանօրինակ դեր են խաղացել Կոմմագենեում և նույն այդ աստվածները՝ Արտեմիսի ուղեկցությամբ՝ Հայաստանում։

2. Դինաստիայի պաշտամունքի հետ կապված աստվածների սինկրետիկ բնույթը, որը պարզ դրսևորվում է Կոմմագենեում, իր վառ արտահայտությունն է գտել նաև Հայաստանում։ Այստեղ հանդես են գալիս նույն Զևս-Արամազդը[53] (Կոմմագենեում՝ Օրոմազդես) և Հերակլես-Վահագնը[54] (Կոմմագենեում՝ Արտագնես)։ Ապոլլոնին և Արտեմիսին Խորենացին կոչում է նաև Արև ու Լուսին։ Այդ աստվածների անունների երրորդ զույգը՝ Տիր և Անահիտ, Խորենացին չի հիշատակում, թեև, իհարկե, իմացել է թեկուզ հենց նույն Ագաթանգեղոսից, բայց, անշուշտ, նաև անկախ նրանից։ Եվ այսպես՝ Ապոլլոն-Արև (Հելիոս)-Տիր ու Արտեմիս-Լուսին-Անահիտ։ Վերջինս Նեմրութ լեռան սրբատեղիում չկա և հայկական տարբերակի բնորոշ գիծն է հանդիսանում։ Մյուս բնորոշ գիծն էլ այն է, որ Ապոլլոն-Հելիոսը նույնացվում է ոչ թե Միհր աստծու հետ, ինչպես էր Կոմմագենեում, այլ Տիր աստծու[55], որը մեծ հա-

52 Nilsson, էջ 167։

53 Ագաթանգեղոս, 785. «բագինն Զևս դիցն Արամազդայ»։

54 Փավստոս, III, 14. «զբագինս մեհենիցն Հերակլայ՝ այսինքն Վահագնիս»։

55 Հմմտ. Ագաթանգեղոս, 778, Agathangelus, 65, 22։

մարում ուներ հայերի մեջ (հմմտ. Տիրան, Տրդատ, Տիրիթ Թեոֆոր (դիցանվանակիր) անունները)։ Հայկական պանթեոնի Միհր աստծու հետ նույնացվում էր Հեփեստոս աստվածը[56]*։*

3. Պաշտամունքային կառույցների նմանությունը։ *Նեմրութ լեռան սրբատեղիում աստվածները (և ինքը Անտիոքոսը) ներկայացված են արձաններով, իսկ թագավորական նախնիները՝ բարձրաքանդակներով։ Համաձայն Խորենացու, Հայաստանում աստվածներին կանգնեցվում էին* **պատկերք**, *որոնց տակ պետք է հասկանալ արձաններ, նամանավանդ երբ Խորենացին հայտնում է, որ դրանք «պղնձաձոյլ» և «ոսկեզօծ» էին*[57]*, իսկ թագավորական նախնիներին՝* **կուռք**: *Պարզ է, որ սրանց միջև որոշակի տարբերություն է եղել*[58]*, ինչպես Նեմրութ լեռան վրա, և եթե* **կուռք** *արձաններ չեն եղել (որովհետև* **պատկերք** *են արձանները), ապա թերևս դրանք բարձրաքանդակներ էին։*

4. Թագավորական դինաստիայի պաշտամունքին նվիրված տաճարների բազմաքանակությունը։ *Սելևկյանները, չհաշված քաղաքային սրբատեղիները, համապատասխան տաճարներ են ունեցել հավանաբար տերության յուրաքանչյուր սատրապությունում։ Կոմմագենյան Երվանդյաններին նվիրված սրբատեղիներից հայտնի են ութը կամ ինը, թերևս դրանց թիվը ավելի է եղել։ Հայաստանում Խորենացին երեք նման սրբատեղի է հիշատակում, ըստ որում դրանցից մեկը՝ Արտաշատ մայրաքաղաքում (Կոմմագենեի սրբատեղիներից մեկը նույնպես գտնվել է երկրի մայրաքաղաք Սամոսատում)։ Հայաստանում, իհարկե, դատելով երկրի ծավալից, ավելի մեծ թվով սրբատեղիներ պիտի լինեին, քան Կոմմագենեում։ Դրանցից ևս երկուսի մասին հաղորդում են Ագաթանգեղոսն ու Բուզանդը*[59]*։*

---

56 *Ագաթանգեղոս, 790,* Agathangelus, *68, 16։*
57 *Խորենացի, II, 12։*
58 *Տե՛ս անդ, II, 49, ուր տարբերությունը հատկապես ակնհայտ է։*
59 *Տե՛ս ստորև, էջ 62 և հաջ.։*

5. Ապրող թագավորի աստվածացումը։ *Այս կապակցությամբ Խորենացու ցուցումը փոքր-ինչ մշուշապատ է, սակայն միանգամայն հստակ է դառնում մի շարք այլ տվյալների (որոնց մասին կխոսվի) համադրումից հետո։ Խոսքը Արշամ թագավորի պահանջի մասին է՝ «պաշտել զկուռս արքայի»։*

Այս համեմատությունները, որոնց թիվը կարելի էր և ավելացնել, ծայրեիծայր հերքում են «հորինման» մասին ենթադրությունը։ Նրանք վկայում են, որ Խորենացին մեզ հետաքրքրող բնագավառում լավորակ աղբյուր (կամ աղբյուրներ) է ունեցել։ Մենք սակայն հակված չենք կարծելու, թե այդ աղբյուրը թագավորական դինաստիայի պաշտամունքի մասին Խորենացուն մատակարարել է այն բոլոր մանրամասները, որոնք մենք գտնում ենք այսօր Խորենացու մոտ։ Տեղյակ լինելով Խորենացու ամեն ինչում սլացիկ համակարգեր ստեղծելու ձգտմանը (որոշ դեպքերում նույնիսկ երկրորդական փաստերն ու տեղեկությունները՝ անխախտ պահպանվող գըլխավոր փաստերին ստորադասելու և հարմարացնելու միջոցով) և տեսնելով տվյալ համակարգի (այսինքն թագավորական դինաստիայի պաշտամունքի մասին տեղեկությունների ամբողջության) նախանձելի սլացիկությունը, կարելի է եզրակացնել, որ այստեղ որոշ մանրամասներ հանդես են գալիս հարմարեցված վիճակում։ Այսպիսին կարող է լինել, ասենք, պաշտամունքային կառույցների Արմավիրից Բագարան և Բագարանից Արտաշատ կրկնակի տեղափոխման մասին հաղորդումը։ Ավելի շուտ դրա տակ թաքնված են, ինչպես ասվեց վերը, զուգահեռաբար գոյություն ունեցած նույնատիպ երեք սրբավայրեր, որոնց մասին ստացած տեղեկությունները Խորենացին յուրահատուկ եղանակով համաձայնեցրել է միմյանց։ Զափազանցման և հարմարեցման կնիք է կրում Բագրատունիներին ճնշելու և նոր պաշտամունք պարտադրելու մասին Խորենացու պատմածը, թեև ստորև կհամոզվենք, որ այն պատմական հիմք ունի։ Թերևս կարելի է գտնել նաև նման այլ մանրամասներ։ Սակայն Խորենացու հաղորդածի էական կողմերից և ոչ մեկը հնարավոր չէ կասկածի ենթար-

կել, քանի որ դրանք այնքան են հարազատ մյուս երկրներին վերաբերող հայտնի փաստերին։

Արդ, ո՞րն է եղել Խորենացու աղբյուրը։ Դա մի չափազանց բարդ խնդիր է, և նրա բարդությունը չի նվազեցնում այն հանգամանքը, որ Խորենացին հաճախ և սիրով անվանում է իր աղբյուրները։ Վաղարշակի, որին նա վերագրում է պաշտամունքի հիմնումը, ինչպես և նրա որդի Արշակի գործունեության նկարագրության համար նշված է մի ընդհանուր աղբյուր՝ Մար Աբաս Կատինայի մատյանը, որն ըստ Խորենացու գրվել է մ. թ. ա. II դարի 2-րդ կեսում, իսկ իրականում՝ ոչ վաղ, քան մ. թ. IV դարը[60]։ Այդ մատյանը, հաղորդում է Խորենացին, ավարտվել է Արշակի թագավորության նկարագրությամբ[61]։ Այնուհետև, Խորենացին, իր իսկ խոստովանությամբ, հետևում է Ափրիկանոսին, որի հաղորդած տեղեկություններին, նշում է նա, ձայնակցում են Հովսեփոս Փլաբիոսը և Հիպոլիտեսը[62]։ Այդ վերաբերում է Արտաշեսի (Խորենացու առաջին Արտաշեսի, որին նա վերագրում է Կյուրոսի գործերից մի քանիսը), նրա որդի Տիգրանի (որը հայտնի Տիգրան Բ-ն է) և սրա եղբայր Արշամի գործունեությանը։ Վերջինիս կապակցությամբ Խորենացին վկայաբերում է նաև «զրույցք», որոնք նրա մոտ, ինչպես ցույց է տվել Մ. Աբեղյանը, հաճախ գրավոր աղբյուրներ են նշանակում[63]։ Բայց պարզ չէ, թե որչափով է վերաբերում Երվանդի շինարարական գործունեությանը Ողյումպ քրմի «մեհենական պատմության» այն վկայակոչումը, որը Խորենացին անում է Արտաշեսի և Երվանդի պայքարի նկարագրության վերջում ու գահակալած Արտաշեսի գործունեության բնութագրման սկզբում[64]։ Վերջինս

60 Я. А. Манандян, Начальная история Армении Мар-Абаса, „Палестинский сборник", вып. 2 (64–65), 1956, էջ 74 և հաջ.։

61 Խորենացի, II, 9։

62 Անդ, II, 10։

63 Անդ. II, 37. Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, էջ 16 և հաջ.։

64 Խորենացի, II, 48։ Տե՛ս և ստորև, էջ 144։

համենայն դեպս, և այդ թվում՝ Արտաշատի սրբատեղին հիմնադրելը, առնչվում է «մեհենական պատմության» հետ, որի տվյալները, ըստ Խորենացու պնդման, իրենց հաստատումն են գտնում վիպասանների երգերի և պարսից մատյանների մեջ։ Վերջապես Հայաստանում Արտաշիր Պապականի ծավալած գործունեության և, մասնավորապես, պաշտամունքային կառույցների ոչնչացման մասին տեղեկությունների աղբյուր է հանդիսացել, Խորենացու ասելով, իրադարձություններին ժամանակակից կեսարացի եպիսկոպոս Փիրմիլիանոսի երկը[65]։

Նման մի թվարկում, թեև պարունակում է բազմաթիվ հեղինակների անուններ, որոնց Մովսես Խորենացին հիշատակում է որպես իր աղբյուրներ, այնուամենայնիվ էապես չի օգնում մեզ հետաքրքրող հարցին պատասխանելու գործին։ Դժվար է պատկերացնել, թե այս բազմատեսակ աղբյուրներից յուրաքանչյուրը իսկապես Խորենացուն պարգևել է դինաստիայի պաշտամունքի մասին այնքան հարթ ու վերջավորված նրա պատմվածքի մանրամասներից մեկը, թեև մենք նախապես նման մի ենթադրություն էինք արել[66]։ Շատ ավելի հավանական է, որ Խորենացին այս խնդրում ունեցել է ընդամենը մեկ, կամ, համենայն դեպս, շատ սահմանափակ թվով աղբյուրներ և նրանցից ստացած նյութը ինքն է դասավորել իր «Պատմության» համապատասխան բաժիններում, նախապես մշակելով այն՝ որոշ միօրինակություն ու փոխհամաձայնություն հաղորդելու ուղղությամբ։ Մյուս կողմից, նրա հիշատակած բազմաթիվ աղբյուրների մեջ դժվար է մատնացույց անել հենց այն մեկը, կամ այն մի քանիսը, որոնք կարող էին պաշտամունքի մասին տեղեկություններ տալ։ Հիշատակված աղբյուրների մի մասը մեզ անհայտ է, մյուս մասը հայտնի, բայց չի պարունակում նման տեղեկություններ, մի երրորդ մասն էլ շատ անորոշ է վկայակոչված։ Ընդսմին, ամենևին բացառված չէ, որ մեզ հետաքրքրող աղբյուրը (աղբյուրնե՞րը) հիշատակված էլ չէ Մովսես Խորենացու մոտ։ Ահա թե ինչու

65 Խորենացի, II, 75։

66 Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 37։

«Հայոց պատմության» երկրորդ գրքի աղբյուրների խնդիրը, որի մի մասն է կազմում և այստեղ շոշափված հարցը, հնարավոր չէ լուծել թագավորական դինաստիայի պաշտամունքի մասին եղած սուղ տեղեկությունների վրա։ Այս խնդրով կարելի է զբաղվել միայն փաստերի ամբողջության հիմքի վրա և մենք նման փորձ կկատարենք հաջորդ գլուխներում։ Առայժմ հարցը բաց ենք թողնում, սահմանափակվելով այն համոզմունքով (որը հանգչում է վերը ներկայացված նյութի ու դատողությունների վրա, և որը մեզ սատար կհանդիսանա առաջիկա այդ փորձի ժամանակ), թե Խորենացին քննարկվող երևույթների մասին անպայմանորեն ունեցել է լավորակ ու արժանահավատ աղբյուր (կամ աղբյուրներ)։

3

Մինչև այստեղ մենք գիտակցորեն սահմանափակվում էինք դինաստիայի պաշտամունքի մասին Մովսես Խորենացու տվյալներով միայն, նպատակ ունենալով ցույց տալ, որ դրանք առանց լրացուցիչ նյութի իսկ բավարար չափով համոզիչ պատկեր են ստեղծում, մասնավորաբար երբ դրանք դիտվում են հարևան երկրների տվյալների պաստառի վրա։ Սակայն Հայաստանում տիրակալի և նրա նախնիների պաշտամունքի գոյության մասին կան նաև մի շարք այլ տվյալներ, որոնք թույլ են տալիս ավելի խոր թափանցել հետազոտվող երևույթի էության մեջ, քան այդ հնարավոր կլիներ միմիայն Խորենացու տվյալներով։

Հուստինոսի համառոտագրությամբ պահպանված Պոմպեոս Տրոգոսի «Պատմությունը» կազմող գրքերի վերնագրերից («պրոլոգ»-ներից) մեկում հիշատակված է «Տիգրանը, **Աստված մականվամբ, որը հպատակեցրել էր Մարաստանը և Միջագետքը»** — Tigranes cognomine Deus, a quo subacta est Media et Mesopotamia[67]։ **Խոսքն անշուշտ Տիգրան Բ-ի մասին է, մի բան, որ ընդունում են բոլոր հետազոտողները։**

[67] Pomp. Trog., prol. XLII.

Այս ցուցումը վկայում է, որ Տիգրան Բ-ը կրել է θεός «աստված» մականունը, որը տրվում էր տիրակալներին աստվածացման ժամանակ։ Հելլենիստական աշխարհի թագավորների մոտ հաճախակի են առավել սահմանափակ իմաստ ունեցող մականունները, ինչպիսիք են θεὸς Σωτήρ, θεὸς Ἐπιφανής, θεὸς Εὐεργέτης, θεὸς Δίκαιος և այլն՝ «փրկիչ աստված», «հայտնված աստված», «բարեգործ աստված», «արդարադատ աստված» և այլն։ Անտիոքոս Կոմմագենացին, Տիգրան Բ-ի ժամանակակիցն ու ստորադրյալը, անվանում էր իրեն «արդարադատ աստված»։ Սակայն հազվադեպ չէ և ուղղակի «աստված» կամ «դիցուհի» (θεός, θεά) պատվանունը, ինչպես Տիգրան Բ-ի դեպքում է։ Ի թիվս այլոց, այն կրել են, օրինակ, Սելևկյաններ Անտիոքոս Բ-ը և Կլեոպատրան (125—121)[68]։ Անտիոքոս Բ-ին այդ պատվանունը տվել են մ. թ. ա. 260 թվականին Միլետի քաղաքացիները, որոնք նրան աստված հայտարարեցին ի շնորհակալություն քաղաքը բռնապետ Տիմարքոսից ազատելու համար[69]։

Ոչ պակաս ծանրակշիռ են եղել նաև Տիգրան Բ-ին աստվածացնելու հիմքերը։ Ահա թե ինչպես է նկարագրում Հուստինոսը ծայրահեղ քայքայման հասած Սելևկյան տերության պատմության եզրափակիչ շրջանը և Տիգրան Բ-ի դերը գործերի կարգավորման մեջ[70]։ «Եղբայրների փոխադարձ ատելությունը, որը ժառանգել էին նրանց որդիները, հանգեցրեց անընդհատ պատերազմների, որոնք ասորական տերությունը և նրա թագավորներին հասցրին ծայրաստիճան ողորմելի վիճակի. ի վերջո ժողովուրդը դիմեց օտարի օգնության և սկսեց իր համար թագավոր որոնել օտարերկրացիների մեջ։ Ոմանք կարծում էին, թե պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մյուսները՝ Եգիպտոսի Պտղոմեոսին։ Սակայն այնպես պատահեց, որ Միհրդատը այդ ժամանակ զբաղված էր

[68] E. Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris, 1890, էջ 228։

[69] App., Syr., 65. Cerfaux-Tondriau, էջ 238։

[70] Just., XL, 1.

հռոմեացիների դեմ պատերազմելով, իսկ Պտղոմեոսը մշտապես Ասորիքի թշնամին է եղել։ Այդ պատճառով բոլորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի նկատմամբ, որը, բացի այն, որ սեփական ռազմական ուժեր ուներ, նաև դաշնակից էր պարթևներին և Միհրդատի խնամին էր։ Այսպես, հրավիրված լինելով բազմել Ասորիքի գահին, նա 17 տարիների ընթացքում[71] իշխում էր ամենայն անդորրությամբ։ Ո՛չ ինքն էր սպառնում զենքով, ո՛չ էլ ուրիշները նրան, այնպես որ պատճառ չուներ պատերազմելու»։

Ա. Սեյրիգի վերջերս կատարած ուսումնասիրություններում վեր են հանված Հուստինոսի հաղորդումը հաստատող նոր փաստեր։ Պարզվել է, որ ասորական այնպիսի քաղաքներ, ինչպիսիք էին Լաոդիկեյան և Բերիտը (Բեյրութ), Տիգրանի օրոք է, որ ստացել են իրենց ἐλευθερία — *«ազատություն» կոչված արտոնությունը, որը հելլենիստական աշխարհում նշանակում էր ինքնավարության սովորականից ավելի լայն շրջանակներ։ Ի նշանավորումն այդ իրադարձության, որը տեղի ունեցավ մ. թ. ա. 81 թվականին, Անտիոքում Տիգրանի գահակալելուց երկու տարի անց, հիշյալ քաղաքները հիմնեցին իրենց քաղաքային թվականությունները, որոնցով էլ սկսեցին թվագրել իրենց հատած դրամները։ Ապամեյա քաղաքը մ. թ. ա. 76 թվականին Տիգրանից ստացավ սեփական դրամ հատելու իրավունք, որպիսին նա չուներ Սելևկյանների օրոք[72]։*

Շատ հավանական է, որ Տիգրան Բ-ի աստվածացումը և նրան θεός — *«աստված» պատվանվան մատուցումը տեղի է ունեցել հենց այդ ժամանակներում, Ասորիքի քաղաքնե-*

71 *Այսինքն 83—66 թթ., մինչև Պոմպեոսի և Տիգրանի միջև կնքված պայմանագիրը, ըստ որի վերջինս կորցրեց Ասորիքը և Փյունիկիան։ Ապպիանոսը* (Syr., 48) *հիշատակում է 14 տարի, հաշվելով մինչև 69 թվականը, երբ Տիգրանը փաստորեն կորցնում է Ասորիքը։*

72 H. Seyrig, Antiquitées syriennes. 42. Sur les ères de quelques villes de Syrie, „Syria“, 1950, XXVII, էջ 26 և հաջ., 38 և հաջ.։

րում, ի նշան երախտագիտության Տիգրանի վերոհիշյալ կամ նմանօրինակ գործողությունների հանդեպ։

Այդ փաստի պատմականությունը հաստատվում է, ըստ երևույթին, և մի հանգամանքով՝ մեզ հասած երկու դրամների վրա եղած Βασιλέως μεγάλου Τιγράνου θεοῦ — *«արքայի մեծի Տիգրանի աստծու» արձանագրությամբ[73]։ Ասում ենք «ըստ երևույթին», որովհետև հետազոտողները դեռևս լրիվ համոզված չեն, որ այդ դրամները Տիգրան Բ-ինն են, բացառված չէ, որ դրանք կարող են պատկանել հաջորդ Տիգրաններից մեկին։ Վերջին հնարավորության հաստատումը ևս խոշոր նշանակություն կունենար, որովհետև մեկ անգամ ևս կպարզեր (դրա համար մենք ունենք և այլ ապացույցներ), որ Տիգրան Բ-ի աստվածացումը մեկուսացած երևույթ չի եղել հին Հայաստանի պատմության մեջ, կապված միայն այդ միապետի արտակարգ հզորության և մանավանդ սելևկյան ավանդույթների հետ, որոնց ժամանակավոր կրողը նա հանդիսացավ, այլ որ տիրակալի պաշտամունքը գոյություն է ունեցել Հայաստանում Տիգրան Բ-ից հետո էլ։*

Տիգրան Բ-ի աստվածացման փաստի կապակցությամբ հատուկ հետաքրքրություն է հարուցում Մովսես Խորենացու պատմածը հայոց թագավոր Տիգրան Երվանդյանի և մարաց թագավոր Աժդահակի պայքարի մասին։ Պատմածի բովանդակությունը հետևյալն է։ Հայոց թագավոր Տիգրանը, մեծ նվաճող ու այլևայլ բարեմասնություններով օժտված մի անձնավորություն, հասցրել է Հայաստանը աննախընթաց հզորության և հարստության։ Հարևան Մարաստանում իշխում է Աժդահակը, որը մեծ երկյուղ էր կրում Տիգրանից և պարսից թագավոր Կյուրոսի հետ նրա ունեցած դաշինքից։ Մի անգամ նա կանխագուշակ երազ է տեսնում. հայոց երկրի կողմից Մարաստանի վրա է գրոհում վիշապին հեծած մի դյուցազն, որը

73 E. Babelon, նշվ. աշխ., աղյուսակ XXIX, № 20, G. Le Rider, Monnaies grecques acquises par le Cabinet des médailles en 1959, „Revue numismatique“, 1959—1960, էջ 25, պատկերը՝ աղյուսակ III, № 32։

հարձակվելով Աժդահակի վրա, հաղթում է նրան։ Պատմելով երազը իր մերձավորներին, Աժդահակը որոշում է ամուսնանալ Տիգրանի քրոջ Տիգրանուհու հետ և այնուհետև մի հնար գտնել Տիգրանին վերացնելու։ Նրան հաջողվում է կնության առնել Տիգրանուհուն, սակայն Տիգրանի դեմ լարած դավերը ձախողվում են։ Տիգրանուհին իմաց է տալիս եղբորը վտանգի մասին։ Վերջինս, դուրս կորզելով քրոջը Աժդահակի ձեռքերից, հարձակվում է Մարաստանի վրա, հաղթում Աժդահակի զորքերին և սպանում նրան։ Իր քրոջը Տիգրանը ուղարկում է նորաստեղծ Տիգրանակերտ քաղաքը, իսկ Աժդահակի առաջին կնոջը՝ Անույշին, Աժդահակի սերնդի հետ միասին, վերաբնակեցնում է Մասիսի լանջին մինչև Արաքսի ափը։ Աժդահակի սերունդը, եզրափակում է Խորենացին, հիշատակվում է թվելյաց երգերում, ուր նրանք անվանվում են «վիշապազունք», «զի Աժդահակդ՝ ի մեր լեզուս է վիշապ»[74]։

Այս պատմությունը մանրամասն ու համակողմանի ուսումնասիրել է Մանուկ Աբեղյանը, որի գրեթե բոլոր եզրակացությունները մեզ ընդունելի և համոզիչ են թվում[75]։ Մ. Աբեղյանի կարծիքով, սույն պատմության հիմքում ընկած է կիսապատմական-կիսագեղարվեստական տիպի՝ հռետորական արվեստի կանոններով գրված մի գործ։ Այդ գործի հեղինակի համար որպես պատմական հիմք ծառայել են Տիգրան Բ-ի մասին հյուսված վիպական երգերը։ Այս վարկածը Մ. Աբեղյանը հիմնավորում է պատմվածքի մանրամասների և Տիգրան Բ-ի մասին անտիկ հեղինակների տվյալների համոզիչ համադրությամբ։ Հիշատակենք դրանցից մի քանիսը. Տիգրանի՝ «հույներին» նվաճելու մասին հաղորդումը, որտեղ հույների մեջ ճանաչում ենք Սելևկյան պետությունը և արևելյան Փոքր Ասիայի հելլենիստական քաղաքները, որոնք իսկապես նվաճել է Տիգրան Բ-ը. նրա՝ Մարաստանը նվաճելու մասին

74 Խորենացի, I, 24—30։

75 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 379—510, նույնի Հայոց հին գրականության պատմություն, հ. Ա, էջ 272 և հաջ.։

հաղորդումը, որը պատմական փաստ է պարունակում. իր քրոջը (իրականության մեջ՝ դստերը)[76] մարաց թագավորին կնության տալու մասին հաղորդումը. Տիգրանակերտի հիմնադրման մասին հաղորդումը։ Համոզիչ են և մնացած համադրությունները։

Գործողության տեղափոխումը Մովսես Խորենացու կողմից մի քանի հարյուրամյակ դեպի պատմության խորքը, դեպի Կյուրոսի ժամանակները, Մ. Աբեղյանը բացատրում է ընդհանրապես այն հանգամանքով, որ լավ պատկերացնելով Հայաստանի պատմության պարբերական շրջանները, ինչպես որ դրանք եղել են իրականության մեջ, Խորենացին, այնուամենայնիվ, ճիշտ տեղեկություններ չի ունեցել դրանց ժամանակագրության մասին։ Որպես մասնավոր պատճառներից մեկը, Մ. Աբեղյանը առաջ է քաշում այն հանգամանքը, որ Մովսես Խորենացուն աղբյուր ծառայած երկի հեղինակը ձեռքի տակ ունեցած պիտի լինի անտիկ պատմագրությունից եկող ինչ-որ տեղեկություններ, որոնց բովանդակությունը նմանվել է Քսենոփոնի՝ մեզ հայտնի տեղեկություններին՝ Տիգրան անունով մի հայ իշխանավորի, մարերի թագավոր Աստիագեսի և Կյուրոսի միջև եղած կապի մասին[77]։ Ժողովրդական երգերի Աժդահակի նույնացումը անտիկ հեղինակների Աստիագեսի հետ անունների հնչման նմանության հետևանքով, պատճառ է ծառայել նաև դրանց մեջ գովերգված Տիգրանին Աստիագեսի ժամանակի Տիգրանի հետ նույնացնելու համար։ Այս կետում թերևս կարելի էր վիճել Մ. Աբեղյանի հետ, որը, թվում է, ինչ-որ չափով նսեմացնում է Տիգրանի և Աստիագես-Աժդահակի մասին տեղեկությունների նշանակությունը, կտրելով հայկական հողից և վերագրելով դրանց զուտ մատենագրական ծագում (անտիկ պատմագրությունից)։ Այս խնդիրը, սակայն, դուրս է մեր քննության շրջանակներից։

76 Հայկական օնոմաստիկայի կանոններով Տիգրանուհի անունը ավելի կպատշաճեր Տիգրանի դստերը։

77 Xen., Inst. Cyri, II, III. Քսենոփոնի մոտ Աստիագեսի փոխարեն՝ Կիաքսարես։

Բացի Խորենացու կամ ավելի ճիշտ՝ նրա աղբյուրի հաղորդածի պատմական հիմքից, Մ. Աբեղյանը տեսնում է նաև առասպելական հիմք, որը, տարրալուծվելով պատմական փաստերի մեջ, տեղ-տեղ կորցրել է իր առասպելական բնույթը, բայց տեղ-տեղ էլ պահպանել այն։ «Աժդահակ անունը,— գրում է Մ. Աբեղյանը,— մեզ ծանոթ Աժի Դահական, Վիշապ Դահական է, որի դեմ կռվում է պարսից մեջ Թրայետաոնան. սորան համապատասխան է հնդկաց մեջ Ինդրայի հատկությունները ունեցող Տրիտա աստվածը, որ կռվում է նույնպես Վիշապի դեմ։ Աժդահակի վիշապ նշանակությունը ծանոթ է Խորենացուն»[78]։ «Աժդահակի և Տիգրանի առասպելն ունի, այսպիսով, ամբողջապես մի ամպրոպային առասպելի բովանդակություն,— կարդում ենք այնուհետև։— Աժդահակ, ամպրոպային վիշապը, որից սերվում են «Աժդահակի զարմք», վիշապներ կամ վիշապազունք, հափշտակում է Տիգրանից (սկզբնապես ամպրոպային աստված) նորա քրոջը և պահում իր մոտ։ Բայց Տիգրանը հարձակվում է յուր թշնամի վիշապի վրա, սպանում է նորան, ազատում քրոջը և գերում է վիշապի կնոջը, «վիշապաց մորն» և բնակեցնում նորան յուր սերնդով Մասիսի վրա։ Տիգրանի տեղը սկզբնապես ամպրոպային աստված եղած պիտի լինի։ Մեր ամպրոպային աստվածը, ինչպես տեսել ենք, է Վահագն։ Սա ևս եղած պիտի լինի սկզբնապես վիշապ Աժդահակի հետ կռվողը։ Այս ենթադրությունը հավանական է դառնում այնու, որ Աժդահակի դեմ կռվող Տիգրանը նորա հայրն է, մի հանգամանք, որ պատահական չի կարելի համարել։ Այդ ազգակցությունը մեր պատմագիրը կամ Վահագնի մասին երգողներից առած պիտի լինի, կամ Տիգրանի մասին պատմող աղբյուրներից»[79]։

Անհրաժեշտ է նաև մեջ բերել Վահագնի մասին Խորենացու հաղորդած մանրամասնությունները, որոնք Մ. Աբեղյանը շոշափել է իր աշխատության նախորդ էջերում։ Հաղորդելով,

78 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 500։
79 Անդ, էջ 502 և հաջ...։

որ Վահագնը Տիգրանի որդին է եղել և բառացիորեն մեջ բերելով Վահագնի ծննդյան երգը, որն ինքն անձամբ լսել է Գողթան գավառի երգիչներից, Խորենացին շարունակում է. «Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգին կռուել նմա և յաղթել, և կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութիւնսն նմա երգէին։ Այլ ասէն զսա և աստուածացեալ. և անդրի ի Վրաց աշխարհին զսորա չափ հասակին կանգնեալ՝ պատուէին զոհիւք»[80]։

Այստեղից պարզ է, որ թեև ամպրոպային առասպելի տարբերակներից մեկում Վահագնը փոխարինված է եղել Տիգրանով, սակայն զուգահեռաբար իր գոյությունն է շարունակել պահպանել նաև նախնական տարբերակը։ Անհասկանալի է միայն, թե ինչու Խորենացին Վահագնի աստվածացումը տեղափոխում է Վրաստան։ Փավստոս Բուզանդը հիշատակում է «զբագինս մեհենիցն Հերակլայ՝ այս ինքն Վահագնի, որում տեղոյ Աշտիշատն կարդացեալ»[81]։ Ինքը՝ Խորենացին ևս նշում է Հերակլեսի այդ սրբատեղին և այդ կապակցությամբ նույնիսկ հիշատակում Վահագնին[82]։ Վերջինս (Արտագնես անվանաձևով), ինչպես տեսանք, պաշտվում էր նաև Կոմմագենեում և նույնացվում Հերակլեսի հետ։

Ի՞նչ ուղիներով է կատարվել Վահագնի՝ Տիգրանով փոխարինումը առասպելում։ Ըստ Մ. Աբեղյանի, այդ տեղի է ունեցել այն ժամանակ, երբ առասպելի «պատմականացման» համընթաց «վիշապների» տակ սկսել են հասկանալ «մարերին», այսինքն մեդացիներին («մար» բառի զուգահեռ «օձ» իմաստի միջնորդությամբ). երբ վիշապները վերածվել են պատմական մեդացիների, ապա Վահագնն էլ վերածվել է պատմական Տիգրանի, որն իսկապես պայքարել է մեդացիների դեմ։

Զվիճարկելով այս մեկնաբանման արժանիքները, մենք առաջարկում ենք հետևյալը. Տիգրան Բ-ը իր ժամանակ աստվածացվել է և նույնացվել Վահագն-Հերակլես աստծու հետ,

80 Խորենացի, I, 31։
81 Փավստոս, III, 14։
82 Խորենացի, II, 12։

ուստի և հետագայում պարզ ու բնական կերպով առասպելում գրավել է վերջինիս տեղը։ Նման մեկնությունը ոչ թե հակասում, այլ լրացնում է Աբեղյանի բացատրությունը։ Բայց այն ունի միանգամայն ինքնուրույն նշանակություն Հայաստանում տիրակալի պաշտամունքի առումով, քանի որ ցույց է տալիս, որ թագավորը ոչ միայն աստվածացվում էր, այլև կարող էր նույնացվել որևէ աստծու հետ, ինչպես հաճախ տեղի էր ունենում հելլենիստական աշխարհի այլ երկրներում։ Մի շարք օրինակներ՝ Սելևկյաններից ու Պտղոմյաններից սկսած և Տիգրան Բ-ի դաշնակից Միհրդատ Եվպատորով վերջացրած, մեջ են բերված սույն գլխի սկզբում։

Մեր եզրակացությունը իր ուղղակի հաստատումն է գտնում Տիգրան Բ-ի դրամների մեջ։ Դրանցից երկուսի հակառակ երեսին պատկերված է Հերակլեսը։ Նա պատկերված է կանգնած, գլուխը շրջած դեպի ձախ, աջ ձեռքով հենված գուրզի վրա, ձախին առյուծենի[83]։ Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ այդ դրամները հատված են ոչ թե Անտիոքում կամ որևէ այլ, Հայաստանից դուրս գտնվող արհեստանոցում, ինչպես Տիգրան Բ-ի դրամներից շատերը, այլ Արտաշատում։ Այդ շատ հատկանշական է, որովհետև Տիգրան-Աժդահակի առասպելի հետ միասին համոզում է մեզ, որ Տիգրանի աստվածացումը և նույնացումը Վահագն-Հերակլեսի հետ Հայաստանի համար ոչ թե արտաքին, միայն նվաճված երկրների բազայի և սելևկյան ավանդների վրա հենված մի երևույթ էր, այլ ընդունված էր նաև հենց հայկական իրականության մեջ։ Այս առումով կարևոր է ընդգծել, որ հիշյալ դրամները պղնձյա են, հետևաբար և զուտ տեղական շրջանառություն են ունեցել։

[83] G. Le Rider, նշվ. աշխ., էջ 25, աղյուսակ III, № 31։



ա բ

Տիգրան Բ-ի դրամները.
ա. Հերակլես-Վահագն աստծու պատկերով
բ. θεός պատվանվան հիշատակությամբ։

Տիգրան Բ-ի աստվածացման և Վահագնի հետ նույնացման օրինակը հնարավորություն է ստեղծում մի խնդիր ևս պարզաբանելու։ Վաղուց նշված է Արտավազդի առասպելի և Մհերի առասպելի նույնությունը[84]։ Հաստատված է նույնպես այդ երկու առասպելների հարազատությունը Միհր (Միթրա) աստծու առասպելին («Մհեր» անունը հենց «Միհր»-ի տարբերակն է), որի մեջ Միհրը ներկայանում է որպես աշխարհի գոյության վերջին պահին հանդես եկող և չարը հաղթող մի էակ։ Արտավազդի առասպելը, գրել է Թադ. Ավդալբեգյանը, «...իր հնագույն կերպարանքով ոչ այլ ինչ է, բայց եթե Միթրայի հավատալիքի արտահայտության մի նոր փոփոխակ հայ միջավայրում»[84 ա]։

Արդ, տիրակալի պաշտամունքի լույսի ներքո պետք է եզրակացնել, որ թերևս հիշյալ երևույթի պատճառն է Արտավազդ թագավորի (հավանաբար՝ Արտավազդ Բ-ի) աստվածացումն ու նույնացումը Միհր աստծու հետ։

[84] Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 366։

[84ա] Թադ. Ավդալբեգյան, Միհրը հայոց մեջ, Վիեննա, 1920, էջ 54 և հաջ.։

4

Հաջորդ գրավոր հուշարձանը, որ գրավում է մեր ուշադրությունը Հայաստանում տիրակալի պաշտամունքի կապակցությամբ, դա Գառնիի հունարեն արձանագրությունն է, որն սկսվում է հետևյալ բառերով. Ἥλιος Τιριδάτης [βασιλεὺς] Μεγάλης Ἀρμενίας — «Հելիոս Տրդատ թագավոր Մեծ Հայքի»։ Տողասկզբի Ἥλιος բառը արժանացել է գրեթե նույնքան մեկնությունների, որքան հետազոտողներ զբաղվել են արձանագրության ընթերցումով ու թարգմանությամբ, և այնուամենայնիվ, մինչև օրս բավարար բացատրություն չի գտել։ Հետազոտողների մեծամասնությունը այն կապում է թագավորի անվան հետ, թարգմանելով «Արև-Տրդատ» (Ստ. Լիսիցյան)[85], «Էլիոս-Տիրիդատես» և «Տիրան-Տրդատ» (Հ. Մանանդյան)[86], «Արեգակնափայլ Տրդատ» (Ա. Գ. Աբրահամյան)[87] կամ համարելով այն Տրդատի քրմական անուն[88]։ Առանձնակի դիրք է բռնում Կ. Տրևերը, որը Հելիոս բառը համարում է աստծուն ուղղված ներածական կոչ՝ «Հելի՛ոս։ Տիրիդատեսը...» և այլն[89]։

Արձանագրության մեկնաբանության ժամանակին կատարած մեր փորձում հրաժարվել էինք այս բառը պարզաբանելուց, նշելով միայն տողատակի ծանոթության մեջ, որ այն թերևս հնարավոր է «կապել թագավորի և դինաստիայի այն պաշտամունքի հետ, որն ընդունված էր հին Հայաստանում»[90]։

85 «Սովետական Հայաստան» թերթ, 23 սեպտեմբերի 1945 թ.։

86 Հ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 5, նույնի, Новые заметки о греческой надписи и языческом храме Гарни, «Տեղեկագիր» 1951, № 4, էջ 13։

87 Ա. Աբրահամյան, Գառնիի հունարեն արձանագրությունը, «Էջմիածին», 1947, մարտ-ապրիլ, էջ 61 և հաջ.։

88 Ս. Մ. Կրկյաշարյան, Եվս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին, ՊԲՀ, 1965, № 3, էջ 235 և հաջ.։

89 К. В. Тревер, Очерки по истории культуры Древней Армении, էջ 203։

90 Գ. Սարգսյան, Գառնիի հունարեն արձանագրության շուրջը, «Տեղեկագիր», 1956, № 3, էջ 48 և հաջ.։

Այժմ այս ենթադրության մասին կարելի է շատ ավելի որոշակիորեն խոսել. արձանագրության Հելիոսը՝ դա Հելիոս (Արև)-Ապոլլոն-Տիր աստվածն է, և Տրդատը, աստվածացվելով, նույնացվել է այդ աստծու հետ, ինչպես Տիգրան Բ-ը՝ Վահագնի։

Գառնիի արձանագրության տվյալների այդչափ մեծ որոշակիության պայմաններում (հմմտ. վերը վկայակոչված արձանագրության «Սելևկոս-Զևս», «Անտիոքոս-Ապոլլոն» արտահայտությունները)[91] խնդրի այս լուծումն առանց այլևայլության կարելի կլիներ անվիճելի համարել, եթե խոսքը Արտաշիսյաններից մեկի մասին լիներ։ Սակայն մենք գործ ունենք Արշակունիների ներկայացուցչի՝ նրանց հայկական ճյուղի հիմնադրի հետ։ Իհարկե, նա ընդունած ու յուրացրած պիտի լիներ հայկական գահի հետ կապված շատ ավանդներ և չէր կարող չյուրացնել, սակայն տվյալ խնդրում էական նշանակություն ունեին նաև նրա նախնիների՝ պարթև Արշակունիների ավանդներն ու սովորույթները։

Հարցն այսպես է դրվում. օժանդակո՞ւմ էին արդյոք պարթև Արշակունիների համապատասխան ավանդները Հայաստանում ընդունված՝ տիրակալի պաշտամունքի շարունակվելուն, թե, ընդհակառակը, խանգարում էին։

Պարթևների մոտ թագավորական դինաստիայի պաշտամունքի խնդիրը առայժմ պատմագիտության մեջ հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել, ուստի և ի վիճակի չենք այստեղ տալ ընդհանուր պատկերը։ Բերենք միայն այդ խնդրին վերաբերվող մի շարք տվյալներ։ Հետազոտողները նշում են, որ պարթևական թագավորները այն ուղղափառ զրադաշտականները չեն եղել, ինչ նրանց նախորդած Աքեմենյանները և հաջորդած Սասանյանները։ «Նախնիների պաշտամունքը, որն ընդունված էր պարթևների մեջ,—կարդում ենք իրանյան քաղաքակրթության ուսումնասիրությանը նվիրված մի աշխատության մեջ,—Արշակին (դինաստիայի հիմնադրին

91 Տե՛ս վերը, էջ 43։

—Գ. Ս.) աստվածություն էր դարձրել»[92]։ Պարթև արքաներից Ֆրիապատիոսը (191—176), դրամի վրա անվանված է θεός[93]։ Մի շարք պարթև արքաներ իրենց տիտղոսաշարի մեջ ունեցել են θεοπάτωρ — «աստվածահայր» պատվանունը, ինչպես, օրինակ, Հրահատ Ա-ը, Հրահատ Բ-ը, Արտաբան Բ-ը, Հրահատ Դ-ը[94]։ Վերջինիս (թագավորել է մ. թ. ա. առաջին դարի վերջերին), ավելի ճիշտ՝ նրա «բախտին» է նվիրված մի արձանագրություն, որի մեջ նա θεός է անվանված. Φραάτου τε θεοῦ δαίμονα παντοκράτορος — «ամենակալ աստված Հրահատի բախտին»[95]։ Սրա կինը՝ թագուհի Մուսան, ըստ դրամների կրել է θεὰ Οὐράνια պատվանունը[96]։

Զափազանց հետաքրքրական է այս կապակցությամբ Իսիդոր Խարակացու հաղորդումն այն մասին, որ հին Նիսան պարթև թագավորների հանգստարանն է եղել[97]։ Հարավ-Թուրքմենական հնագիտական արշավախմբի Նիսայում կատարած պեղումների ժամանակ գտնված վավերագրերի (գինու հանձնման մասին գրանցումներ, կատարված խեցաբեկորների վրա) ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հին Նիսայում մի շարք տիպերի հողամասեր են եղել, որոնցից մեզ համար հետաքրքրական են այն հողամասերը, որոնք անվանված են ըստ մարդկանց անձնանունների «Ֆրիապատիական», «Արտաբանական», «Միհրդատական», «Գոտարզական» (Friyapātikān, Artaβānukān, Mihrdātakān, Gōtarzakān)։ «Բնորոշ է,— գրում են հետազոտողները, որ բոլոր այն անձնանունները, որոնցից կազմված են այդ հողերի անվանումները՝ Արշակունի դինաստիայի թագավորների անուններն են,

[92] C. Huart et L. Delaporte, L'Iran antique. Elame et la civilisation iranienne, Paris, 1952, էջ 321։

[93] W. W. Tarn, The Greeks in Bactria and India, Cambridge, 1951, էջ 92։

[94] Cerfaux-Tondriau, էջ 260։

[95] Nilsson, էջ 171։

[96] Cerfaux-Tondriau, էջ 260։

[97] Isid. Char., 12.

ավելի ճիշտ՝ Պարթևաստանում մ. թ. ա. I դարի սկզբներին թագավորած արքաների նախնիների ու նախորդների անուններ։ Դրանք են. Ֆրիապատիոսը, երրորդ պարթև թագավորը, և այնուհետև նրա շառավիղների կրտսեր ճյուղը՝ Արտաբան Բ, Միհրդատ Բ, և դրանցից հետո՝ վերջինիս հաջորդը՝ Գոտարզ Ա-ը։ Քանի որ վավերագրերը կազմելու ժամանակ այդ թագավորներն արդեն մեռած էին, ապա, ինչպես երևում է, խոսքը դրանց հետմահու պաշտամունքին նվիրված հողերի մասին է»[98]։ Հետագայում Նիսայում գտնվեց ևս մի վավերագիր, որտեղ «Գոտարզական» հողամասը հիշատակված է Գոտարզ թագավորի կենդանության օրոք, և իրենք՝ հետազոտողները շտապեցին հրաժարվել հողամասերի դերի մասին հայտնված կարծիքից կամ, համենայն դեպս, վերապահություն անել, թե այն կարող է վերաբերվել այդ տիպի ոչ բոլոր հողամասերին[99]։ Մինչդեռ ամենևին բացառված չէ, որ, եթե մեռյալ թագավորների անունը կրող հողամասերը սահմանված էին նրանց հետմահու պաշտամունքի համար, ապա Գոտարզի անունը կրողը ծառայում էր ապրող թագավորի պաշտամունքի պետքերին։ Վերը բերված փաստերը համահնչուն են այն ենթադրությանը, որ կենդանի պարթև թագավորները ևս պաշտամունքի առարկա են եղել. նորից կարելի է հիշատակել Անտիոքոս Կոմմագենացու և նրա նախնիների օրինակը։ Սակայն անհրաժեշտ չէր նույնիսկ ապրող թագավորի աստվածացումը. Ատտալյան թագավորները մահվանից առաջ չէին աստվածացվում, սակայն դեռ ապրելիս արժանանում էին հատուկ զոհասեղանների և զոհերի մատուցման[100]։

[98] И. М. Дьяконов, М. М. Дьяконов, В. А. Лившиц, Парфянский архив из древней Нисы, ВДИ, 1953, № 4, էջ 126 և հաջ.։

[99] И. М. Дьяконов, В. А. Лившиц, Документы из Нисы I в. до н. э. Предварительные итоги работы, „XXV Международный конгресс востоковедов“, М., 1960, էջ 21։

[100] Nilsson, էջ 173։

Պարթևների մոտ թագավորական դինաստիայի պաշտամունքի մասին վերջնական եզրակացություն անելը դուրս է մեր խնդրի սահմաններից և, թերևս, վաղաժամ։ Մեզ համար միանգամայն բավական էր համոզվել, որ պարթևական ավանդները չէին կարող խանգարել հայ Արշակունիների պաշտամունքի հաստատմանը՝ ըստ տեղական ավանդի, և որ այս կողմից ևս ոչինչ չի խոչընդոտում Գառնիի արձանագրության «Հելիոս» բառի մեր մեկնաբանմանը։

Պարթև Արշակունիների հանգստարան հանդիսացած Նիսայի կապակցությամբ մտաբերում ենք Ագաթանգեղոսի, Բուզանդի և Խորենացու տվյալները հայ Արշակունիների հանգըստարանների մասին։ Հեթանոսական տաճարների ավերումը նկարագրելիս Ագաթանգեղոսը հաղորդում է Տրդատի մասին. «... ապա երթեալ հասանէր յամուր տեղին անուանեալ Անի, ի թագաւորաբնակ կայեանսն հանգստոցաց գերեզմանաց թագաւորացն Հայոց։ Եւ անդ կործանեցին զբագինն Զեւս դիցն Արամազդայ, հօրն անուանեալ դիցն ամենայնի»[101]։ Ահա և Փավստոսի հաղորդումը IV դարի կեսերին պարսկական զորքերի կատարած ասպատակության մասին. «Եւ գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն, որ է յԱնգեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց. բազում գանձք մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ»։ Սակայն պարսիկները չկարողացան բերդն առնել. նրանց հաջողվեց մատնությամբ տիրանալ Դարանաղյաց գավառի Անի բերդին. «Ելանէին ի վեր... Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զԱրշակունեաց, և խաղացուցանէին ի գերութիւն զոսկերս թագաւորացն. բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեդեդ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն»[102]։ Պարսիկները կարծում էին,— ասում է

101 Ագաթանգեղոս, 785։

102 Փավստոս, IV. 24։

Բուզանդը, որ գերելով հայոց թագավորների ոսկորները, իրենց երկրին կհաղորդեն նրանց փառքը, բախտը և քաջությունը։ Սակայն հայոց զորքերը, վրա հասնելով, խլեցին թալանած գանձերը և արքաների ոսկորները։ Վերջիններս տեղափոխվեցին Արարատի լանջին գտնվող Աղձք գյուղը և այնտեղ թաղվեցին[103]։ Այդ նոր հանգստարանի խցերից մեկը՝ երկու սարկոֆագներով, պահպանվել է մինչև օրս։

Փավստոսն ուրեմն խոսում է թագավորական երկու հանգըստարանների մասին՝ Անգեղ-տուն գավառի Անգեղ բերդում և Դարանաղի գավառի Անի բերդում։ Անգեղում թաղված թագավորների անունները անհայտ են մնում, իսկ Անիում, ըստ Փավստոսի, ի թիվս այլոց, հանգչում էր Սանատրուկ թագավորը, երկրորդ հայ Արշակունին, որը թագավորել է մ. թ. I դարի վերջերին և II դարի սկզբներին։ Նույն Փավստոսը մի այլ տեղ հայտնում է, որ Անիում է թաղվել նաև Տրդատի որդի Խոսրով թագավորը (330—338)[104]։ Անիում, ուրեմն, կարող ենք եզրակացնել, թաղված էին բոլոր հայ Արշակունիները, սկսած թերևս հենց Տրդատ Ա-ից։ Զևս-Արամազդի մեհյանի առկայությունն այստեղ վկայում է, որ Անին եղել է նաև սրբավայր։

Իսկ ովքե՞ր են թաղված եղել Անգեղում։ Փավստոսի պընդմամբ՝ դարձյալ Արշակունիները։ Վերջինս սակայն պետք չէ բառացիորեն հասկանալ։ Անանունի և Մ. Խորենացու տվյալները պարզ ցույց են տալիս, որ ուշ շրջանի հայ պատմական ավանդությունը Հայկյաններից հետո ուրիշ հայկական թագավորական դինաստիա բացի Արշակունիներից չի ճանաչել, և սրանց մեջ է ներմուծել նաև Արտաշիսյաններին[105]։ Գերեվարած հրեաներին Հայաստանի քաղաքներում բնակեցնող Տիգրան թագավորը, այսինքն Տիգրան Բ-ը, Փավստոսի մոտ ան-

103 Փավստոս, անդ, տե՛ս նաև Խորենացի, III, 27։

104 Փավստոս, III, 11։

105 «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 10 և հաջ.։ Խորենացու արքայացանկը ցրված է նրա «Պատմության» 2-րդ գրքով մեկ։

վանված է Արշակունի[106]։ Ուրեմն նա ևս Խորենացու և Անանունի պատկերացումներն ուներ։ Այս տեսակետից միանգամայն հասկանալի է, որ նա Անիում թաղված Արշակունիներին անվանում է «հայոց առաջին թագավորներ» (քանի որ այնտեղ թաղված են եղել իսկապես առաջին հայ Արշակունիները), իսկ Անիի Արշակունիներին՝ սոսկ «նախնիներ»։

Այս տարբերությունը առիթ է տալիս մտածելու, որ Անգեղում թաղված պետք է լինեին Արտաշիսյան դինաստիայի թագավորները, որոնք թեև իրականում ավելի հին էին, քան հայ Արշակունիները, սակայն V դարում շրջանառության մեջ գտնվող արքայացանկերում գրավում էին միջանկյալ տեղ, մինչդեռ ցանկերը բացվում էին Արշակի (Խորենացու մոտ՝ Վաղարշակի) անունով[107]։ Այս ենթադրությունը իր հենարանն է գտնում Ապպիանոսի մի հաղորդման մեջ, թե Տիգրան Բ-ը պարթևների մոտ պատանդ լինելուց հետո երբ վերադարձել է Հայաստան, ապա թագադրվել է նույն այն տեղում, որտեղ հետագայում նա հիմնադրեց Տիգրանակերտ քաղաքը[108]։ Անշուշտ թագադրման վայրը չէր կարող որևէ պատահական աշխարհագրական կետ լինել, այլ կապված պիտի լիներ հայ ժողովրդի կամ թագավորական դինաստիայի ինչ-որ հին ավանդությունների հետ։ Հաշվի առնելով, որ Անգեղ ամրոցը տեղավորված է եղել Տիգրանակերտից ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա դեպի հյուսիս-արևմուտք, և ենթադրելով, որ այնտեղ գտնված թագավորական դամբարանը Արտաշիսյաններինն է եղել, կարելի է մտածել, որ Տիգրանը հենց այնտեղ է թագադրվել։ Դժվար է թագադրման ավելի պատշաճ տեղ պատկերացնել, քան դինաստիայի դամբարանը, որը հավանաբար նաև սրբատեղի է եղել։

Այսպիսով, թագավորական նախնիների պաշտամունքին նվիրված հայկական մեզ հայտնի սրբատեղիների քանակը հասնում է 4—5-ի։ Կոմմագենեում հայտնի է կրկնակին։ Սակայն հաշվի առնելով այս երկրների ծավալների տարբերությունը, իսկ առավել ևս այն հանգամանքը, որ Հայաստանի մասին տվյալները գալիս են այնպիսի չափազանց սուղ և հիմնականում ուշ շրջանի աղբյուրներից, որոնք մեզ հասցրել են քննության առարկա երևույթի փշուրները միայն, պետք է կարծել, որ նման սրբավայրերի թիվը շատ ավելի մեծ է եղել Հայաստանում։

106 Փ ա վ ս տ ո ս, IV, 55։

107 Այս խնդիրների մանրամասն պարզաբանումը տե՛ս հաջորդ գլխում։

108 A p p., Mithr., 67.

Վերադառնալով Արշակունիներին, պետք է մի քանի խոսք ասել Սանատրուկ արքայի մասին, որի գերեզմանը ամուր կառուցված լինելով, պարսիկները չեն կարողացել բանալ։ Սանատրուկը շատ հետաքրքրական անձնավորություն է եղել, և, ի տարբերություն վաղ շրջանի մյուս Արշակունիների, մասնավորապես իր նախորդ Տրդատ Ա-ի, քաջ հայտնի էր IV—V դարերի հայ պատմական ավանդությանը։ Նրա հետ է կապվում Մծուրք (Մծուրն) քաղաքի հիմնադրումը՝ Արածանիի ափին[109] և Թադեոս առաքյալի սպանությունը. նա հայտնի է և գովաբանված նաև անտիկ պատմագրության մեջ[110]։ Մովսես Խորենացին պատմում է, որ Սանատրուկը Մծբինում (իմա՛ Մծուրնում) իրեն արձան է կանգնեցրել[111]։ Նկատի ունենալով Հայաստանում տիրակալի պաշտամունքի մասին եղած մյուս տվյալները, կարելի է ընդունել այս հաղորդումը, որպես Սանատրուկի պաշտամունքի հաստատման մասին ակնարկ։

Հելլենիստական աշխարհում և մանավանդ, հետագայում, հռոմեական իրականության մեջ տիրակալի պաշտամունքի տարածված տարատեսակներից մեկն է եղել նրա «բախտի», «ճակատագրի» (τύχη, δαίμων) պաշտամունքը։ Վերը մենք արդեն հիշատակել ենք Հրահատ Դ-ի δαίμων-ի պաշտամունքի մասին[112]։ Նեմրութ լեռան արձանագրության մեջ ևս

109 Փ ա վ ս տ ո ս, IV, 14։

110 Արրիանոսը Սվիդասի մոտ՝ II, 668։

111 Խ ո ր ե ն ա ց ի, II, 36։

112 Տե՛ս վերը, էջ 60։

խոսք կա Անտիոքոս Կոմմագենացու τύχη-ի մասին[113]։ Τύχη-ի պաշտամունքը ծաղկեց հռոմեական շրջանում, մասնավորապես սկսած Օգոստոսի ժամանակից[114], և շարունակվեց մինչև կայսրների կողմից քրիստոնեության ընդունումը։

Թագավորի τύχη-ի և, հետևաբար, տիրակալի պաշտամունքի այդ տարատեսակի գոյության մասին հիշատակություն կա նաև հայկական հողի վրա Տիգրանակերտի՝ IV դարի սկզբներին վերաբերող[115] հունարեն արձանագրության մեջ։ Այս արձանագրության մեջ, որը շարադրված է հայոց թագավորի անունից, հիշատակվում է πρ[ον]οίᾳ τῶν θεῶν καὶ τῇ τύχῃ τ[ῇ] ἡμετέρα]։ Խոսքը այն մասին է, որ քաղաքները ունեին (կամ ստացել էին) ինչ-որ բարիքներ «հոգածությամբ աստվածների ու մեր (այսինքն թագավորի—Գ. Ս.) բախտի»։

[113] K. Humann und O. Puchstein, մեծ արձանագրության II в. 5 տողը։

[114] Cerfaux-Tondriau, էջ 329 և հաջ.։

[115] Սույն արձանագրության թվագրման հարցի շուրջը ընթացող վեճի (վեճը՝ արձանագրությունը մ. թ. III—IV դարերի եզրով և կամ IV դարի երկրորդ կեսով թվագրելու մասին է։ Տե՛ս ՊԲՀ, 1962 թ. 1-ին համարում զետեղված մեր հոդվածը) կապակցությամբ վերջերս նորից հանդես եկավ Լ. Ա. Ելնիցկին՝ К истории антицерковных и антихристианских тенденций в Армении в IV в. н. э., ВДИ, 1965, № 2, էջ 122 և հաջ. հոդվածով, որտեղ կրկին անգամ պաշտպանում է հիշյալ տեսակետներից երկրորդը։ Հոդվածը հետաքրքրական դիտողություններ է պարունակում, մասնավորապես մատնացույց է անում τύχη-ի հիշատակությունը Տիգրանակերտի արձանագրության մեջ, որպես ակնարկ՝ թագավորի «բախտի» պաշտամունքի Հայաստանում գոյության մասին։ Միաժամանակ հոդվածագիրը փորձ է արվում հաշտեցնելու Տիգրանակերտի արձանագրության տվյալները Փավստոսի կողմից Պապ թագավորին տրված բնութագրի հետ։ Փավստոսը պատկերում է Պապին որպես եկեղեցուն ճնշողի, անփույթ քրիստոնյայի ու հեթանոսությանը թողտվությամբ վերաբերվող անձնավորություն, բայց ոչ ավելին։ Միանգամայն պարզ է, որ Պապը, այնպիսին, ինչպիսին նա բնութագրված է Փավստոսի մոտ, չի կարող լինել Տիգրանակերտի արձանագրության հեղինակն (ու առավել ևս դրա հեղինակ չի կարող լինել IV դարի որևէ այլ քրիստոնյա հայ թագավոր)։ Համառելով այդ տեսակետի վրա, անհրաժեշտ կլինի ապացուցել, թե Պապը սխալ է բնութագրված Փավստոսի կողմից, թե վերջինս հանգամանորեն պատմելով Պապի մասին, հա-

Մյուս դեպքում հիշատակվում է [ἡμετέρα]ν τύχην κα[ὶ] βασιλε[ίαν]—«մեր բախտը և թագավորությունը»[116]։

Քաղաքին առաքված թագավորական մի ուղերձ հանդիսացող այդ արձանագրության լույսի ներքո մեծ հետաքրքրություն է ներկայացնում մի այլ թագավորական ուղերձ՝ Տրդատ Գ-ի հրովարտակը հայոց աշխարհին։ Աստվածների ու նրանց օգնության մասին իր որոշ արտահայտություններով այդ հրովարտակը փոխադարձ արձագանքում է Տիգրանակերտի արձանագրությանը, թեև, ըստ երևույթին, վավերական չէ։ Ահա մի հատված այդ հրովարտակից. «Ողջույն հասեալ և շինութիւն դիցն օգնականութեամբ (հմմտ. այս նախադասության թարգմանությունը Ագաթանգեղոսի հունարեն տարբերակում՝ πρόνοια γένηται ἀπὸ τῆς τῶν θεῶν βοηθείας և արձանագրության τῇ προνοίᾳ καὶ βοηθείᾳ τ[ῶν θεῶν] արտահայտությունը)[117], լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ, և քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս. իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիդ կայսերաց և ի մեր դիցախառն Պարթևաց հասցէ այցելութիւն ի փառաց թագաւորաց և ի քաջ նախնեաց»[118]։

զորդելով նաև մի շարք այնպիսի մանրամասներ, որոնք հաստատվում են Ամմիանոս Մարկելլինոսի կողմից, այսուհանդերձ տեղյակ չի եղել ամենագլխավոր հանգամանքին, այն է, որ Պապը պաշտոնապես լքել է դեռ դարասկզբից Հայաստանում պետական կրոն հանդիսացող քրիստոնեությունը, և բացեիբաց անցել հեթանոսության, ինչպես, ասենք, Հուլիանոս Ուրացողը (Տիգրանակերտի արձանագրության բնույթը թույլ չի տալիս այլ կերպ հանձնարարել նրա հեղինակին)։ Եվ կամ պետք է ապացուցել, թե Փավստոսը իմացել է այդ մասին, բայց թաքցրել, Պապին «չվարկաբեկելու» նպատակով։ Երկու դրույթն էլ հավասարապես անհավանական են։ Մենք հույս ունենք դեռ վերադառնալու այս խնդրին։ Արձանագրության ուսումնասիրությունը, թվում է, պետք է տանել նրա հնագրական տվյալների առավել խոր հետազոտման ուղղությամբ։

[116] Տես Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 81 և հաջ.։

[117] Agathangelus, էջ 30։

[118] Ագաթանգեղոս, 127։

Այս տողերը համակված են դինաստիայի պաշտամունքի ոգով: Այստեղ են Արամազդ, Անահիտ, Վահագն աստվածները, որոնք սերտ կապված են տիրակալների ու նրանց նախնիների պաշտամունքի հետ, այստեղ են «դիցախառն Պարթևները», այսինքն՝ Արշակունի դինաստիան, «թագավորաց փառքը», որը թերևս տվյալ դեպքում պետք է հասկանալ որպես տոհմ և վերջապես «քաջ նախնիք», որոնք ուղերձի մեջ պատկերանում են որպես հայոց աշխարհի անտեսանելի պահապաններ:

Տիգրանակերտի արձանագրության հետ միասին, այս հրովարտակը վկայում է, որ տիրակալի և նրա նախնիների պաշտամունքը, իր այս կամ այն դրսևորմամբ, շարունակել է գոյություն ունենալ Հայաստանում ընդհուպ մինչև քրիստոնեության հաստատումը[119]:

Այս տեսակետից դիտելով՝ արդեն Խորենացու պատմածը Արտաշիրի կողմից պաշտամունքային կառույցները ոչընչացվելու մասին անաքրոնիզմ չի թվում: Հավանական է դառնում, որ դրա տակ պատմական փաստ է թաքնված: Ուղղափառ մազդայասնի համար պետք է ատելի լինեին հելլենիստական սինկրետիկ պաշտամունքները: Արտաշիրի՝ Հայաստանին տիրանալու մասին Ագաթանգեղոսի և Խորենացու հաղորդումներից բացի այլ բան հայտնի չէ, սակայն Արտաշիրի որդի Շապուհ Ա-ի (241—272) հայտնի եռալեզու արձանագրությունը, որի մեջ նա պատմում է հռոմեացիների դեմ վարած պատերազմների մասին, վկայում է, որ իր որդին՝ Որմիզդ-Արտաշիրը (Արտաշիր Պապականի թոռը) թագավորել է Հայաստանում: Թերևս Ագաթանգեղոսի և Խորենացու Արտաշիրի տակ տվյալ դեպքում թաքնված է այս Որմիզդ-Արտաշիրը[120]:

119 Ակադ. Կ. Մելիք-Օհանջանյանը հրավիրեց մեր ուշադրությունը Փավստոսի մի հատվածի վրա (IV, 5), որը ենթադրել է տալիս, թե պաշտամունքի տարրերը պահպանվում էին դեռևս IV դարի երկրորդ կեսում: Պապ թագավորի օրոք տեղի ունեցած հայ-պարսկական ճակատամարտերից մեկում հայ զինվորները, սպանելով պարսիկ զինվորներին, բացականչում էին. «Արշակայ թագաւորին մերոյ զոհ լիջիր» կամ «Առ Արշակ քաջ» (որ ըստ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի պետք է ընթերցվի «Ա՛ռ, Արշակ քաջ»):

Տիգրանակերտի արձանագրության և Տրդատի մյուս հրովարտակի տվյալները միաժամանակ ուրվագծում են Հայաստանում թագավորական դինաստիայի պաշտամունքի զարգացման եզրափակիչ փուլերի ժամանակագրությունը: Ավելի բարդ է նրա սկզբնական փուլերի, նրա ծագման ժամանակագրության խնդիրը: Տիրակալի պաշտամունքի մասին հաստատապես կարելի է խոսել միայն սկսած Տիգրան Բ-ի ժամանակից, բայց ոչինչ չի ստիպում համարելու այդ ժամանակը նաև արքայական նախնիների պաշտամունքի սկզբնակետ, մանավանդ որ նախնիների պաշտամունքի հաստատումը սովորաբար նախորդում էր տիրակալի պաշտամունքի հաստատմանը: Առաջինի սկիզբը հնարավոր է թվում տանել դեպի ավելի վաղ շրջան, վերագրելով այն Արտաշես Ա-ին (190—մոտ. 160): Հայկական պետության սահմանների շեշտակի ընդարձակումը, նրա ռազմական հզորության ու քաղաքական հեղինակության այն աճը, որ տեղի ունեցավ այդ ժամանակ, դրա համար կարող էին անհրաժեշտ նախապայմաններ ստեղծել: Արտաշես Ա արքան, անցյալում՝ Սելևկյանների ստրատեգոս, նրանց պետության ավանդների և սովորությունների կրողն էր, իսկ այդ շրջանում, մ. թ. ա. II դարի սկզբներին, տիրակալի պաշտամունքը իր ծաղկումն էր ապրում Սելևկյանների մոտ: Պաշտամունքի հայկական տարբերակի շատ գծեր՝ և՛ Ապոլլոնին (Սելևկյանների հովանավոր աստծուն) նվիրված մեծ տեղը, և՛ պաշտամունքի ձևը նրան մերձեցնում են հենց սելևկյան տարբերակին: Կոմմագենյան պաշտամունքի հետ հայկականի ունեցած ընդհանրությունները ևս որոշ չափով բացատրվում են վերջինիս սելևկյան արմատներով (թեև հիմնականում դրանք հայ-կոմմագենյան կապերի կամ թերևս, Կոմմագենեի

120 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Նախշ-ի-Ռուստեմի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, Պ Բ Հ, 1966, № 2, էջ 67 և հաջ.:

վրա հայ քաղաքակրթության ունեցած ազդեցության հետ կարող են առնչվել)։

Արտաշեսը մեծ հոգատարություն է ցուցաբերել իր նախնիների հիշատակի հավերժացման նկատմամբ։ Իր հիմնադրած քաղաքներից հինգը նա անվանել էր իր հոր Զարեհի անունով (Զարեհավան կամ Զարիշատ<*Զարեհաշատ)[121], այստեղ ևս հետևելով հելլենիստական աշխարհի, մասնավորապես Սելևկյանների սովորությանը[122]։ Նախնիների հիշատակի, կամ ավելի ճիշտ իր ծագումնաբանական ծառի մասին հոգատարության մի այլ արտահայտություն էր նրա ձգտումը, իր ծագումը կապել նախորդ, Երվանդյան (Օրոնտյան) դինաստիային։ Ստրաբոնի հաղորդումից չի երևում, որ Արտաշեսը ազգակցական կապերով կապված է եղել այդ տոհմին[123]։ Խորենացին, ընդհակառակը, կարծում է, թե նրանք միևնույն (Արշակունի) տոհմին են պատկանել, բայց Երվանդին նա վերագրում է ապօրինի ծագում՝ Արշակունի տոհմին պատկանող մի կնոջից[124]։ Արտաշես Ա-ը արձանագրության մեջ ինքն իրեն անվանում է Երվանդական (այսինքն՝ Երվանդյան)[125]։ Քանի որ դժվար է անգիտանալ Ստրաբոնի հաղորդումը, մենք ենթադրում ենք, որ Արտաշեսը Երվանդյան է եղել հավանաբար իգական գծով (մոր կողմից), և այդ հանգամանքն է, որ յուրօրինակ ձևով բեկվելով, իր արտահայտությունն է գտել Խորենացու մոտ Երվանդի մասին պատմածի մեջ[126]։ Իսկ Արտաշեսի հոր՝ Զարեհի տոհմը այլ ծագում է ունեցել։

121 Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 43։

122 Սելևկոս Ա-ը իր հոր Անտիոքոսի (որը, ինչպես և Արտաշեսի հայր Զարեհը, թագավոր չէր եղել) անվամբ Անտիոքներ է կոչել իր հիմնադրած քաղաքներից տասնվեցը (App., Syr., 57)։

123 Strab., XI, 14, 15.

124 Խորենացի, II, 37։

125 И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армении, ВДИ, 1955, № 2, էջ 168, ծան. 1, Գ. Տիրացյան, Արտաշես Ա-ի նորագյուտ արձանագրությունը, «Տեղեկագիր», 1957, № 10, էջ 108։

126 Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Հայաստանը մ. թ. ա. II դարում, «Տեղեկագիր», 1965, № 3, էջ 59, տե՛ս նաև ստորև էջ 204 և հաջ.։

Արտաշեսի կողմից Երվանդյաններից իր ծագման ընդգծումը շատ հասկանալի պատճառներ է ունեցել։ Այստեղ մեծ դեր է խաղացել նոր դինաստիաների հիմնադիրներից շատերին հատուկ ձգտումը՝ հիմնավորել իրենց իշխանության օրինականությունը նախորդ դինաստիայի հետ ունեցած ազգակցական կապի օգնությամբ։ Էլ ավելի է գայթակղեցրել Արտաշեսին այն հանգամանքը, որ սերված համարվելով Երվանդյաններից, նա դրանով իսկ դառնում էր Աքեմենյանների շառավիղ[127]։ Հելլենիստական Առաջավոր Ասիայի տիրակալների երազն էր Աքեմենյանների կամ թեկուզ Դարեհի զինակիցներից որևէ մեկի սերունդ համարվել[128]։ Պարթև Արշակունիները նույնպես հասցնում էին իրենց ծագումը Աքեմենյաններին, Արտաքսերքս Բ-ին (համաձայն Արրիանոսի հաղորդման)։ Առանձնապես հաջողությամբ էին պսակվել Երվանդյանների հավակնությունները, որոնք ժամանակին ապացուցելով իրենց ծագումը Աքեմենյաններից և, բացի այդ, նաև վեց պարսիկներից մեկից՝ Հյուդարնեսից, իրենք դարձել էին ցանկալի ու նախանձելի նախնիներ։ Ավելի ուշ, սկսած մ. թ. ա. I դարի սկզբներից, նրանք իրենց նախնիների ցանկի մեջ ներմուծեցին նաև Սելևկյաններին, Ալեքսանդր Մակեդոնացու գլխավորությամբ[129]։

Ահա այս բոլոր հանգամանքները շատ հավանական են դարձնում, որ թագավորական նախնիների պաշտամունքը Հայաստանում հաստատվել է հենց Արտաշես Ա-ի օրոք։ Այդ ժամանակ էլ պետք է տեղի ունենար նախնիների անվանական ցանկի կանոնացումը մոտավորապես այն կազմով, որը մենք հանդիպում ենք հետագայում, մեկ հարյուրամյակ անց, Կոմ-

127 Գ. Ա. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ ն. մ. թ. III—II դարերի Հայաստանի պատմության մասին, «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 14 և հաջ.։

128 Համա. Polyb., V, 43 (Պոնտոս), Diod., XXXI, 19 (Կապադովկիա) և այլն։

129 Տե՛ս վերը, էջ 31։

մագենացի Անտիոքոս Երվանդյանի արձանագրություններում՝ Աքեմենյաններ, Երվանդյաններ։ Սրանց հետզհետե պիտի ավելանային Արտաշեսն ու իր հետնորդները՝ Արտաշիսյանները, իսկ Արշակունիների՝ Հայաստանի գահին հաստատվելուց հետո պիտի ավելանային նախ՝ պարթև Արշակունիները, որպես հայ Արշակունիների նախնիներ, ապա և, հետզհետե, իրենք հայ Արշակունիները։ Որոշ ժամանակաշրջանում, հատկապես, ինչպես երևում է նույն Խորենացու հաղորդումից, Օգոստոս կայսեր օրոք, Հայաստան է ներմուծվել նաև հռոմեական կայսեր պաշտամունքը։ Խորենացին հայտնում է, թե «...ի Հայս առաքեալ գործակալք Հռոմայեցւոց, բերելով զպատկերն Աւգոստոսի կայսեր՝ կանգնեցին յամենայն մեհեանս» (II, 27)։

Թագավորական նախնիների պաշտամունքի հաստատումը ավելի վաղ, այն է՝ Երվանդյանների ժամանակին վերագրելու փորձը, որ հիմնված է Խորենացու մոտ Երվանդ թագավորի կապակցությամբ այդ պաշտամունքի հիշատակման փաստի վրա[130], մեզ բավարար համոզիչ չի թվում։ Երվանդը, ինչպես հայտնի է, Խորենացու մոտ սխալմամբ տեղադրված է մ. թ. I դարի երկրորդ կեսում և «օրինականացված» է այնտեղ նրա գործունեության կապակցմամբ այնպիսի դեմքերի հետ, ինչպիսիք են Վեսպասիանոս և Տիտոս Փլաբիոսները[131]։ Այդ անաքրոնիզմը և նրա «օրինականացումը» հազվագյուտ դեպք չէ Խորենացու մոտ։ Նման երևույթները մենք փորձել ենք բնութագրել որպես Խորենացու «ժամանակագրական համակարգի արտադրանք»[132]։ Այն տեղի է ունենում, երբ որևէ թագավորի կամ գործչի վերագրվում են որոշ գործեր ու հարաբերություններ, ելնելով ոչ թե նրա անձից, այլ այն տեղից, որ նա գրավում է Խորենացու ժամանակագրական համակարգում։ Բացառված չէ, որ պաշ-

130 Գ. Ա. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 13։

131 Խորենացի, II, 37—46։

132 Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 137։

տամունքի մասին տեղեկությունները կապված են եղել Խորենացու մոտ այն կոնկրետ ժամանակի հետ, որտեղ սխալմամբ ընկել է Երվանդը։ Ավելի հավանական է, սակայն, որ պաշտամունքի մասին տվյալների՝ Երվանդի հետ կապելը տեղի է ունեցել նախնիների պաշտամունքի մասին տեղեկությունների Խորենացու կողմից համակարգման ու ըստ «Պատմության» բաժինների տեղաբաշխման ընթացքում։ Շեշտենք, որ պաշտամունքի հաստատումը Արտաշես Ա-ի ժամանակին վերագրելիս, մենք ամենևին չենք հենվում այն փաստի վրա, որ Խորենացին Արտաշեսին ևս առնչում է այդ պաշտամունքին։

Մի կարևոր հանգամանք կա, որը և ստիպում է մեզ թերահավատությամբ վերաբերվել թվագրման վերոհիշյալ փորձին։ Մ. թ. ա. III դարը չափազանց վաղ ժամանակ է Երվանդյան Հայաստանի կարգի պետություններում թագավորական նախնիների պաշտամունքի հաստատման համար։ Խոսքը, իհարկե, ոչ թե ընդհանրապես այդ պաշտամունքի, այլ նրա հելլենիստական տարատեսակի մասին է։ Այդ երևույթը, բացի Պտղոմյաններից և Սելևկյաններից, III դարում արձանագրված է միմիայն Ատտալյանների մոտ։ Ավելի լայն տարածում է գտնում տիրակալի ու նրա նախնիների պաշտամունքը մ. թ. ա. II և I դարերում (Կապադովկիա, Բյութանիա, Պոնտոս և այլն)։ Կոմմագենեում այն հաստատվել է ոչ ավելի վաղ, քան մ. թ. ա. II դարի վերջերին, Անտիոքոս Կոմմագենացու հոր՝ Միթրադատես Կալլինիկոսի օրոք։

Մնում է պարզել Հայաստանում դինաստիայի պաշտամունքի ունեցած նկարագիրը. պետակա՞ն էր արդյոք այն և հիմնադրված թագավորական իշխանությա՞ն կողմից, թե քաղաքային տիպի պաշտամունք էր, ոչ պարտադիր, որի ստեղծման նախաձեռնությունը ոչ թե աստվածացվողներինն էր, այլ աստվածացնողներինը։ Հելլենիստական շրջանի հայկական պետության բնույթն իսկ կասկածելի է դարձնում, թե Հայաստանում քիչ թե շատ լայն տարածում կարող էր գտնել

քաղաքային տիպի պաշտամունքը, որը հատուկ էր առավելապես Հունաստանի հին քաղաքներին, որոնցից այն փոխ էին առել որոշ հելլենիստական պոլիսներ։ Քաղաքային պաշտամունքն անշուշտ գոյություն ուներ Տիգրան Բ-ի տերության մեջ, որն ընդգրկում էր Ասորիքը, Փյունիկիան, Կիլիկիան ու սրանց հելլենիստական բազմաթիվ պոլիսները։ Բայց դա համեմատաբար կարճատև ժամանակաշրջան էր։ Նրանից դուրս, եթե հաշվի չառնենք հնարավոր բացառությունները, խոսք կարող է լինել պետական, պաշտոնական, վերուստ հաստատված պաշտամունքի մասին։

Խորենացու տվյալները ևս այս եզրակացության օգտին են վկայում։ Պաշտամունքի հաստատողները, տաճարների հիմնադրողները, դրանց մեջ արձաններ կանգնեցնողները, քրմեր նշանակողները (վերջինս շատ կարևոր է. արքայի կողմից քրմերի նշանակումը պաշտամունքի պետական բնույթի հատկանիշներից մեկն էր)[133] նրա մոտ թագավորներն են։ Այնուհետև շատ պերճախոս են թագավորների և Բագրատունիների պայքարի դրվագները։ Թագավորները ջանում էին հրեական (ըստ Խորենացու) ծագում ունեցող այդ տոհմին պարտադրել թողնելու իրենց պապենական օրենքները, ընդունելու հեթանոսական աստվածներին, պաշտելու թագավորի և նրա նախնիների կուռքերը։ Արդեն նշել ենք այդ պայքարի նկարագրման մեջ եղած որոշ չափազանցությունները, սակայն բախման հիմքը պատմական է։

Ահա Խորենացու պատմածի որոշ մանրամասներ, որոնց վրայից մեր շարադրանքի սկզբում թեթևակի անցանք։ Վաղարշակի որդի Արշակի ճնշման տակ Բագրատունիները ստիպված էին որոշ հարցերում տեղի տալ՝ շաբաթ օրերը ելնել պատերազմի ու որսի, չթլպատել իրենց զավակներին, իսկ Տիգրանի օրոք՝ նաև ճաշակել թագավորական զոհաբերություններից և ուտել խոզի միս։ Վերջապես Արշամ թագավորի օրոք, ինչպես ասվեց, նրանք վերջնականապես թողեցին հրեական օրենքները։

133 Nilsson, էջ 165, 178։

Սելևկյանների պատմությունից. Ան-
Ահա և մի դեպք Սելևկյանների պատմությունից. Անտիոքոս Դ Եպիփանեսը մ. թ. ա. 167 թ. չեղյալ հայտարարեց Անտիոքոս Գ-ի այն հրամանագիրը, որով Երուսաղեմը արտոնություններ էր ստացել, և ճնշումներ նշանակալից հրեական կրոնի դեմ։ Տաճարներում հրեական գործադրեց հրեական կրոնի դեմ։ Տաճարներում հրեական ծիսակատարությունները փոխարինվեցին հունականներով, այնտեղ կանգնեցվեցին հունական զոհասեղաններ, որոնց վրա հաճախակի խոզեր էին զոհաբերում։ Թլպատումը, ինչպես և շաբաթը, տոները, սրբագործման ծեսերը արգելվեցին։ Եհովայի կողքին կանգնեցին հունական աստվածները, իսկ բոլորից վեր՝ Զևս Օլիմպիականը, որը նույնացվել էր Անտիոքոս Դ-ի հետ[134]։ «Եւ արասցէ ըստ կամաց իւրոց եւ — կարդում ենք Դանիելի գրքում, — բարձրասցի թագաւորն, — բարձրասցի եւ ի վերայ ամենայն աստուածոց, և ի վերայ և հպարտասցի ի վերայ ամենայն աստուածոց խօսեսցի ամբարտաւանս»։ Ու այնուհետև. «Եւ ի վերայ աստուածոցն հարց իւրոց զմտաւ ածցէ… Աստուածոյն աստուածոց խօսեսցի ամբարտաւանս»։ Ու այնուհետև. «Եւ ի վերայ ամենայնի եւ զամենայն դիս զմտաւ ոչ ածցէ, եւ ի վերայ ամենայնի հպարտասցի։ Եւ զԱստուած հզօր ի տեղւոջէ իւրմէ փառաւորեսցէ, և զԱստուած զոր ոչ ծանեան հարք նորա՝ փառաւորեսցէ…»[135]։ Խոսքը, ինչպես նշվեց, Անտիոքոսի հետ նույնացված Զևս Օլիմպիականի մասին է։

Խորենացու պատմածի նմանությունը այս դրվագին, հրեաների և թագավորի միջև ստեղծված փոխհարաբերությունների առումով, շատ ակնառու է, բայց տարբեր է միջավայրը։ Փորձենք սակայն հասկանալ, թե վերոհիշյալ տեղերը ինչ հիմքի վրա կարող էին ծագել Խորենացու մոտ։ Որ Բագրատունիները հրեա չէին, այդ հայտնի էր դեռ Խորենացու ժամանակ. նա պնդում էր իր հատուկ կարծիքը ուրիշների հետ վիճելով. այդ խոստովանում է հենց ինքը[136]։ Ընդհանրապես նախարարությունը այն միջավայրը չէ, որտեղ կարող էին

134 Cerfaux—Tondriau, էջ 241 և հաջ.։
135 Դ ա ն., ԺԱ, 36 և հաջ.։ Հմմտ. «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 9։
136 Խ ո ր ե ն ա ց ի, I, 22։

ծավալվել նման իրադարձությունները: Այդպիսի միջավայր կարող էր լինել հայկական քաղաքների հրեական բնակչությունը: Հայտնի է, որ Տիգրան Բ-ի կողմից Հայաստան տեղափոխված և քաղաքներում բնակեցված մարդկային կես միլիոնանոց զանգվածի մեջ մեծ տեղ էին գրավում հրեաները: Նրանց վերաբնակեցումը, ավելի փոքր մասշտաբներով, տեղի է ունեցել և Արտավազդ Բ-ի օրոք: Հրեաները ապրում էին հայկական քաղաքներում մեկուսացած համայնքներով-պոլիտևմաներով ընդհուպ մինչև IV դարի կեսերը, երբ Շապուհ Բ-ը նրանց մեծ մասին հայկական բնակչության հետ միասին տեղահան արեց և գերեվարեց Պարսկաստան[137]: Եթե հաշվի առնենք աղբյուրների մշակման Խորենացու նախասիրած ձևերը, ապա դժվար չէ վերականգնել հայոց թագավորի և նրա հպատակ հրեաների միջև տեղի ունեցած բախումների վերաբերյալ տեղեկությունների զարգացումն ու ձևափոխումը մինչև այն վիճակը, որում նրանց հանդիպում ենք Խորենացու մոտ: Մի կողմից նա տեղեկություն է ունեցել կրոնական հարցերում, մասնավորապես տիրակալի պաշտամունքի շուրջ հրեաների հետ թագավորի բախումների մասին, մյուս կողմից, համոզված է եղել Բագրատունիների հրեական ծագմանը: Միավորելով այս երկու գծերը, ինչպես որ հաճախ էր անում, Խորենացին օգտագործել է դրանք իր սիրած տոհմի ներկայացուցիչների գովաբանման նպատակով:

Այս բոլորը հաստատում են տիրակալի և նրա նախնիների պաշտամունքի պետական, պաշտոնական բնույթը Հայաստանում:

Ի վերջո մի քանի խոսք քննության առարկա երևույթի սոցիալ-քաղաքական նշանակության մասին: Արտասահմանյան հետազոտողները, որոնք հսկայական ու մանրակրկիտ աշխատանք են կատարել տիրակալի ու նրա նախնիների պաշտամունքի՝ տարբեր երկրներում ու ժամանակաշրջաններում գոյություն ունեցած կոնկրետ ձևերի ու դրսևո-

137 Փավստոս, IV, 55:

րումների բացահայտման գործում[138], հաճախ սքողում, ավելի ճիշտ՝ մերժում են նրա սոցիալ-քաղաքական նշանակությունը, որպես միապետի կենտրոնացված իշխանությանը օժանդակող միջոցի: Հիմնական փաստարկն այստեղ այն է, թե տիրակալների պաշտամունքն ստեղծվել է հելլենիստական միապետների իշխանության ու հզորության հիմքի վրա, հետևաբար նա իշխանության հետևանքն ու դրսևորումն է, և ոչ՝ նեցուկը[139]: Նման դատողությունը սոփեստության է հասնում: Պաշտամունքը իշխանության արդյունքն է այնքանով, որ տիրակալի պաշտամունքը հնարավոր է դարձել ու իրականացել այն ժամանակ, երբ տիրողները հսկայական իշխանություն են ձեռք բերել (այդ մասին արդեն խոսվել է գլխի սկզբում): Բայց չէ՞ որ իշխանությունը, մեկ անգամ հաստատվելով, այնուհետև անսասան չէր մնում: Մեզ քաջ հայտնի է, թե հելլենիստական արքաների իշխանությունը մշտապես ինչպիսի արհավիրքների էր ենթակա. հարևան պետությունների ագրեսիան, տվյալ պետության ներսում գործող կենտրոնախույս ուժերը, ներդինաստիական երկպառակությունները և, որ կարևորագույնն է, աշխատավոր ճընշված զանգվածների դժգոհությունը: Հետևաբար իշխանությունը մշտական նեցուկի ու հենարանի կարիք էր զգում, որոնք և հելլենիստական միապետները որոնում ու գտնում էին տիրող դասակարգի տարբեր սոցիալական շերտերում ու տարրերում, ներգրավելով այս գործի մեջ, անշուշտ, և հզոր զենքը, առաջին հերթին՝ կրոնը:

Որպես երկրորդ փաստարկ՝ հօգուտ հիշատակված դրույթի առաջ է քաշվում այն հանգամանքը, որ թագավորները շատ դեպքում «մեղավոր չէին» իրենց պաշտամունքի ստեղծման մեջ. նախաձեռնությունը պատկանում էր քաղաքներին, որոնք անում էին այդ ի պատասխան արքայական բարեգործությունների և կամ բարեգործությունների ակնկալությամբ,

138 Հետաքրքրվողներին հղում ենք Cerfaux—Tondriau-ի գրքում զետեղված ծավալուն մատենագրությանը (էջ 9—73):

139 Nilsson, էջ 179 և հաջ., Cerfaux—Tondriau, էջ 262:

մինչդեռ միապետներին մնում էր միայն ընդունել իրենց մատուցվող պատիվը։

Նախ և առաջ, դեռ հայտնի չէ, թե քաղաքների ցուցաբերած նախաձեռնությունը իսկապես որքանո՛վ էր բխում քաղաքներից, և որքանո՛վ էր ներշնչվում կամ նույնիսկ թելադրվում միապետների կողմից։ Քաղաքների և միապետների միջև հելլենիստական շրջանում հաստատված փոխհարաբերությունների էությունը վկայում է, որ շատ դեպքում տեղի էր ունենում հենց երկրորդը։

Մյուս կողմից, չէ՞ որ քաղաքային պաշտամունքից բացի, գոյություն ուներ տիրակալի և նրա նախնիների պետական պաշտամունքը, որը հիմնադրվում ու իրականացվում էր տիրակալների սեփական նախաձեռնությամբ, ըստ որում նյութական զոհողությունների գնով։ Չի կարելի լրջորեն պնդել, թե թագավորներն այդ բոլորը անում էին սոսկ իրենց ինքնասիրությունը բավարարելու համար, երբ օրակարգում կային շատ ավելի հրատապ խնդիրներ։

Դիտելով քննության առարկա երևույթը հելլենիստական միապետությունների անկայունության, մակերևույթին ոչ միշտ նկատելի, բայց նրանց ամբողջ էությունը սասանող սոցիալ-քաղաքական պայքարի, վերջապես ամեն քայլափոխում տնտեսական ու քաղաքական կարգի երևույթներում արտահայտվող՝ ստրկատիրական հասարակարգի ճգնաժամի պատառի վրա, չի կարելի չհանգել այն եզրակացության, որ թագավորական իշխանության պաշտամունքի հիմնարկությունը, պետական իշխանության այլ միջոցների հետ միասին, ուներ կարևոր և լուրջ սոցիալական ֆունկցիա՝ օժանդակել տիրող դասակարգին նրա տիրապետության ապահովման գործում։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԵՐԸ, ՆՐԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ

1

Հին Հայաստանում թագավորական դինաստիայի պաշտամունքի տարածված լինելու ակնառու փաստը և հատկապես այն հանգամանքը, որ հիմնական տեղեկություններն այդ մասին հաղորդում է ոչ այլ աղբյուր, քան ինքը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», սրում է մեր ուշադրությունը այդ իսկ երկի մեջ հանդես եկող թագավորական դինաստիաների, մասնավորապես մինչքրիստոնյա հայ արքաների ու պարթև արքաների շարքերի վրա։ Արդեն առիթ ենք ունեցել քննելու այդ շարքերը՝ նրանց հետ կապված ժամանակագրական տվյալների առումով[1], իսկ այժմ, երբ հետամուտ ենք դինաստիայի պաշտամունքի մասին տեղեկությունների աղբյուրներին, հասկանալի է, մեզ հետաքրքրում է արքայացանկերի ծագման խնդիրը։

Այդ խնդիրը իր ներկայացրած տեսական հետաքրքրության հետ մեկտեղ (կապված Խորենացու աղբյուրների համակարգի հետ), ունի նաև շեշտված գործնական նշանակություն հայ ժողովրդի պատմության հին շրջանի գիտական ուսումնասիրման համար։ Հանրահայտ են այն տարբեր մո-

1 Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 34 և հաջ., 75 և հաջ.։

տեցումները, որ դրսևորվել են հայ թագավորների Խորենացու առաջարկած հաջորդականական շարքի նկատմամբ՝ սկըսած Չամչյանից։ Եթե վերջինս դեռևս ընդունում էր այդ հաջորդականությունը և ջանում հնարավորին չափ պահպանել այն[2], ապա հետագայի պատմաբանները հետզհետե տեղի տվին[3] ու վերջապես հրաժարվեցին[4] դրանից, ավելի ու ավելի հենվելով արտաքին՝ անդրադարձվող իրողություններին ժամանակակից կամ նրանցից համեմատաբար կարճ ժամանակահատվածով բաժանված աղբյուրների վրա, որոնք են. Պոլիբիոս, Ստրաբոն, Տակիտոս, Ապպիանոս, Պլուտարքոս, Դիոն և անտիկ պատմագրության բազմաթիվ այլ ներկայացուցիչներ։ Այդ աղբյուրների տվյալների հիման վրա քայլ առ քայլ ստեղծվել է Հայաստանում իշխողների հաջորդականության և ժամանակագրության մասին այլ պատկերացում, որն իր վերջավորված արտահայտությունն է գտել Հ. Մանանդյանի «Քննական տեսության» մեջ[5]։ Խորենացու մոտ Արշակունիներին հատկացված ժամանակահատվածում ի հայտ է բերվել մի ամբողջ ոչ-Արշակունի հայկական դինաստիա, որն իշխել է շուրջ երկու դար՝ մ. թ. ա. 189 թ. մինչև մեր թվականության սկիզբը, և ստացել գիտության մեջ «Արտաշիսյան» անվանումը՝ իր հիմնադիր Արտաշես Ա-ի անունից։ Արշակունիների Հայաստանում հաստատման տարեթիվը Խորենացու տվածի համեմատությամբ հետաձգվել է շուրջ երկու դարով՝ մինչև մ. թ. I դարի կեսերը[6]։

2 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Ա, Վենետիկ, 1784, գիրք երկրորդ, էջ 101 և հաջ.։

3 Հ. Գաթրճյան, Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչև ցմեր ժամանակս, հ. Ա և Բ, Վիեննա, 1849 և 1852։

4 Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, Թիֆլիս, 1895, հ. Ա։

5 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1944, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957։

6 **Մի քանի հեղինակներ՝** A. von Petrowic (Arsaciden-Münzen, Wien, 1904), Ատրպետ (Տիգրան մեծի դրամները, «Ազգագրական հանդես», XXIII, էջ 39 և հաջ.), Ստ. Լիսիցյան (Тигран Великий по монетам, «Գիտական ժողովածու, նվիրված Հայաստանում սովետական

Մյուս կողմից փորձեր են արվել գտնելու Խորենացու արքայացանկի օգտագործման նոր եղանակներ, հրաժարվելով նրա առաջարկած ժամանակագրական դասավորությունից և գործի դնելով նրա մատուցած բուն նյութը։ Փորձերը հիմնված են այն հանգամանքի վրա, որ Խորենացու կողմից «Արշակունի» հայտարարված արքայաշարքը պարունակում է մի քանի այնպիսի արքայանուններ՝ Երվանդ, Արտաշես, Տիգրան, Արտավազդ և այլն, որոնք, խորթ լինելով Արշակունիներին, ընդհակառակը, բնորոշ են նախաարշակունյան

իշխանության հաստատման 20-ամյակին», Երևան, 1941, էջ 107 և հաջ.), մասամբ և Հ. Տաշյան (Արշակունի դրամներ, մասն Ա, Վիեննա, 1919, էջ 160 և հաջ.), հենվելով մի խումբ բավարար չպարզաբանված դրամների վրա ու ջանալով հաստատել դրանց տվյալները պատմողական աղբյուրների որոշ ակնարկների հատուկ մեկնաբանությամբ, ձգտում են ապացուցել Արշակունիների դեռևս մ. թ. ա. II դարում Հայաստանի գահի վրա հաստատվելու և, այսպիսով Տիգրան Բ-ի և նրա հաջորդների՝ Արշակունի տոհմին պատկանելու հանգամանքը։ Եթե միայն հարցը չվերածվի պնդման, թե Արտաշիսյաններից մեկը կարող է ինչ-որ ազգակցական կապ հաստատած լինել հարևան երկրում իշխող Արշակունի դինաստիայի հետ, այնտեղից թագուհի վերցնելով (որ միանգամայն հնարավոր է), և պաշտպանվի այն տեսակետը, թե Տիգրանը ուղիղ գծով ծագում է Արշակունիներից, ապա պետք է հաղթահարվի առնվազն երեք, մեր կարծիքով անհաղթահարելի, դժվարություն։ Նախ, պետք է հիմնավորված կերպով մերժվի Հայաստանի մ. թ. ա. II—I դարերի պատմության ամենաարժանահավատ աղբյուրը հանդիսացող Ստրաբոնի աներկբայելի պնդումը, թե Տիգրանը Արտաշեսի սերնդից էր։ Երկրորդ, պիտի բացատրվի Արշակունի դինաստիային հատուկ անձնանունների կատարյալ բացակայությունը մ. թ. ա. II—I դդ. հայոց թագավորների մեջ և հակառակը։ Երրորդ, պիտի բացատրություն տրվի նաև այն հանգամանքին, թե ինչու՞ մ. թ. ա. I դարի հայ-պարթևական հարաբերությունները լուսաբանող բազմաթիվ, հաճախ շատ մանրամասն, տվյալների մեջ, որոնք հաղորդում է մեզ հունա-հռոմեական պատմագրությունը, այդպիսի մի կարևորագույն փաստի մասին միայն մի երկու խախուտ ակնարկ են կարողանում հայտնաբերել ձգտողները (համեմատենք թեկուզ, թե որքան պարզ և ուժգնորեն է դրսևորված մ. թ. I և հաջորդ դարերի հայ-պարթևական ազգակցությունը հունա-հռոմեական պատմագրության անհամեմատ ավելի սուղ տվյալներում և ինչպես է այն արտահայտվում հայոց թագավորների անվանացանկի մեջ)։

հայկական դինաստիաների՝ Երվանդյանների և Արտաշիսյանների ներկայացուցիչների համար։ Եվ ոչ միայն, ասենք, հատուկ են եղել Արտաշիսյաններին, այլև սպառում են այդ դինաստիային պատկանող արքաների անվանացանկը, քանի որ նրա բոլոր ներկայացուցիչները հիրավի կրել են միայն երեք անուն՝ Արտաշես, Տիգրան, Արտավազդ։ Բայց և ոչ միայն այդ. Խորենացու արքայացանկի մի արքայախումբը՝ Երվանդ—Արտաշես—Արտավազդ—Տի(գ)րան—Տիգրան, իր դասավորությամբ իսկ համընկնում է հայ արքաների պատմական հաջորդականությանը մ. թ. ա. II դարի սկզբից մինչև մ. թ. ա. I դարի կեսերը, թեև ինքը Խորենացու մոտ տեղադըրված է մ. թ. I—II դարերում[7]։

Այստեղից պարզվում է, թե ինչ գործնական նշանակություն ունի վերոհիշյալ արքայացանկի ծագման խնդրի պարզաբանումը, նրա մեջ պարունակվող տեղեկությունների՝ հինգ-յոթ հարյուրամյակների վրայով Խորենացուն հասնելու ուղիների բացահայտումը։ Այն միանգամայն անհրաժեշտ է, եթե ուզում ենք դրանք պատմական ուսումնասիրությունների հուսալի և արժանահավատ աղբյուր դարձնել։ Իսկ մինչ այդ նրանք մնում են թեև չափազանց հետաքրքրաշարժ, բայց միևնույն ժամանակ առեղծվածային փաստեր, որոնք կարելի է ցուցադրել, բայց որոնց վրա չի կարելի հաստատորեն հենվել։

Խորենացու արքայացանկերի արմատների որոնումներն առայժմ հասցրել են առավելն մինչև IV դար, մինչև Մարաբա Մծուրնացու մատյանը։ Այդ արքայացանկերը առնչվում են Անանունի, այսինքն՝ Սեբեոսի «Պատմության» կից հատվածի հեղինակի կողմից ներկայացվող արքայացանկերին և երկուսն էլ սերվում Մարաբայի մատյանից։ Այս ճշմարտությունը ընդունում է հայագետների մեծամասնությունը, թեև մանրամասների որոշ տարբերություններով[8]. այսպես, կա կարծիք, որ Խորենացին օգտվել է Մծուրնացուց՝ Անանունի միջնորդությամբ, կա և հակառակը, որ միջնորդը Խորենացին է և այլն։ Մենք հակամետ ենք այն երրորդ տեսակետին, ըստ որի երկուսն էլ՝ Խորենացին և Անանունը, իրարից անկախ, օգտվել են Մծուրնացու մատյանից[9]։

7 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հ. Ա, էջ 133 և հաջ., Գ. Սարգսյան, Հայաստանը մ. թ. ա. II դարում, «Տեղեկագիր», 1965, № 3։

Մեր ձեռնարկած գործի համար իհարկե առաջնակարգ նշանակություն կունենար պարզել, թե իրականում ի՞նչ կազմ են ունեցել պարթևական և հայկական արքայացանկերի սկզբնօրինակները Մարաբայի մատյանում, թե Անանունի և Խորենացու մեզ հասած ցանկերի ո՞ր առանձնահատկություններն են, որ գալիս են այդ սկզբնօրինակից։ Դժբախտաբար այդ անհնարին է իմանալ անհրաժեշտ ճշգրտությամբ, ուստի ստիպված ենք պատկերացնել սկզբնօրինակները որպես պահպանված ցանկերի բաղադրություն։

Ահա այդ ցանկերը.

Անանուն	Խորենացի
Պարթևական արքայացանկը	
Արշակ (56 տարի)	*Արշակ (31 տարի)*
	Արտաշես (26)

8 Տե՛ս J. Marquart, Beiträge zur Geschichte und Sage von Eran. Die Listen der eranischen und armenischen Arsakiden bei Mar Abas und Ps.-Moses Xorenaci, „Zeitscrhrift der Deutschen morgenländischen Gesellschaft" (ZDMG), 1895, № 49, էջ 646 և հաջ., Н. Адонц, „Начальная история Армении" у Себеоса в ее отношениях к трулам Моисея Хоренского и Фауста Византийского, „Византийский временник", VIII, 1901, 1—2, էջ 96 և հաջ., Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, մասն Բ, Վիեննա, 1960, էջ 264 և հաջ., Ստ. Մալխասյանց, Սեբեոսի պատմությունը և Մովսես Խորենացի, Թիֆլիս, 1899 և այլն։

9 Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 13 և հաջ., 128։

Արշակ (70)	Արշակ (53)
	Արշական (30)
Աշնաշ (32)	Արշանակ (32)
Արշէն (22)	Արշէզ (22)
Արշաւիր (45)	Արշաւիր (46)
Արտաշէս (34)	Արտաշէս (34)
Դարեհ (30)	Դարեհ (30)
Արշակ (17)	Արշակ (17)
Արտաշիր (46)	Արտաշէս (29)
Պերոզ (64)	Պերոզ (34)
Վաղարշակ (50)	Վաղարշ (50)
Արտաւան (36)	Արտաւան (36)[10]

Հայոց արքայացանկը

Արշակ (42 տարի)	Վաղարշակ (22 տարի)
Արշակ (13)	Արշակ (13)
Արտաշէս (25)	Արտաշէս (25)
Արտաւան (12)	
Արշաւիր, Արշակ } (37)	Տիգրան (33)
	Արտաւազդ (2)
Երուանդ (21)	Արշամ (20)
Արտաշէս (52)	Աբգար (38)
Տիրան (22)	Սանատրուկ (30)
Տիգրան (42)	

10 Խորենացու տարբերակի գահատարիների թվերը տրված են հետազոտությունների ընթացքում ճշտված վիճակում, այսպես. Արշանակ 32՝ 31-ի փոխարեն (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 85, Թ. ա ղ. Ավդալբեգյան, Խորենացու «Պատմության» ժամանակաբանական սկզբնագիրը վերականգնելու նոր փորձ, ՊԲՀ, 1964, № 4, էջ 211), Արշեզ 22՝ 20-ի փոխարեն (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 85), Արշակ 17՝ 19-ի փոխարեն (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 84, Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 208), Արտաւան 36՝ 31-ի փոխարեն (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 84, Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 208)։ Տե՛ս նաև Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 24—26։

Արշամ (20)	Երուանդ (21)
Աբգար (38)	Արտաշէս (41)
Սանատրուկ (30)	Արտաւազդ (—)
	Տիրան (21)
	Տիգրան (42)
Արտաշէս (41)	
Արտաւազդ, Տիգրան } (24)	
Վաղարշ (20)	Վաղարշ (20)
Խոսրով (48)	Խոսրով (48)[11]

Նմանություններն ու տարբերություններն ակնհայտ են։ Ընդհանուր տպավորությունն այն է եղել միշտ, որ Անանունն ավելի հարազատ է սկզբնաղբյուրին։ Հավանաբար դա այդպես է, սակայն դժվար է պնդել, թե Խորենացու մոտ հանդես եկող այս կամ այն առանձնահատկությունը ժառանգված չէ սկզբնօրինակից[12]։ Ելնելով այս հանգամանքից (ինչպես և այն փաստից, որ ներկա դեպքում, երբ խոսքը ցանկերի ծագման մասին է, մեզ համար այնքան կարևոր չեն Խորենացու և Անանունի ցանկերի տարբերությունները, որքան մտահոգում է այն, որ հանկարծ չանտեսվի սկզբնօրինակի որևէ կարևոր տվյալ), նպատակահարմար է դիտել դրանք միասնաբար, որպես նույն սկզբնօրինակի երկու տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրը՝ մեկն առավել, մյուսը պա-

11 Այստեղ երկու թիվ է ճշտված՝ Արտաւազդ 2՝ զրոյի փոխարեն (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 82, Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 24), Երուանդ 21՝ 20-ի փոխարեն (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 84, Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 208)։ Անանունի հայոց արքայացանկի տարբերակը շարունակվում է մինչև Պապ թագավորը. Խոսրովի վրա այն հատելու հիմքերի մասին տե՛ս Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 80 և հաջ.։

12 Հմմտ. Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, մասն Բ, էջ 363, 371, ուր նա ցույց է տալիս, որ Անանունի պարթևական արքայացանկում ևս պետք է լիներ 14 թագավոր, ինչպես այժմ Խորենացու մոտ է, և հիմնավորում է երկու թագավորների վերականգնումը։

կաս չափով, մեկը մի կետում, մյուսը մի այլ, կարող են պահպանած լինել նախնական պատկերը։

Արքայացանկերի՝ Մարաբայից այն կողմն ընկած արմատների բացահայտման լուրջ փորձեր, որքան մեզ հայտնի է, չեն եղել։ Անանունի այն տեղեկությունը, թե արքայացանկերը գալիս են Տրդատ թագավորի Ագաթանգեղոս անունով քարտուղարի («Կեղծ Ագաթանգեղոս») փորագրած արձանագրությունից, պարուրված է ուսումնասիրողների թերահավատության թանձրագույն պատյանով. այդ հարցին մենք կանդրադառնանք հետագայում։ Գր. Խալաթյանցը, որ չէր ընդունում Մարաբայի գոյությունը, համարել է արքայացանկերը Անանուն մատենագրի հորինվածք, հիմնված V—VII դարերի հայալեզու տարաբնույթ աղբյուրների վրա[13]։

Մի փոքր ավելի ուշադրություն է դարձվել արքայացանկերից պարթևականի ծագման խնդրի վրա։ Պետք է ասել, որ այս արքայացանկը ոչ պակաս կարևոր ու հետաքրքրական է, քան հայկականը, և ինչպես հետագայում կտեսնենք, նույնանման առանձնահատկություններ է ցուցաբերում։ Սերտ կապված լինելով հայ Արշակունիների ցանկի հետ, այն ոչ միայն թույլ չի տալիս վերջինիս ծագման խնդիրը առանձին ու մեկուսացած ուսումնասիրել, այլև որոշ իմաստով այդ խնդրի լուծման բանալին է հանդիսանում։ Ուստի, նախ և առաջ, պետք է անդրադառնալ այդ ցանկի ծագման հարցին։

Գր. Խալաթյանցի կարծիքով, Մ. Խորենացին վերցրել է Անանունի պարթևական ցանկը և լրացրել այն պարսկական ինչ-որ աղբյուրի տվյալներով[14]։ Վերջին կետում նա հենվում

13 Г. Халатянц, Армянский эпос, ч. I, էջ 96 և հաջ.։ Այդ աղբյուրներն են. Աստվածաշունչ, Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն», Ագաթանգեղոս, Սեբեոս, Փավստոս, Ղազարոս, Կորյուն, Եղնիկ, ժողովրդական վեպ, Երվանդաշատ քաղաքի անունը։ Անանունը վերլուծված է այստեղ նույն եղանակով, որով Գր. Խալաթյանցը սովորաբար վերլուծում է Խորենացուն, ելնելով իր կանխակալ այն համոզմունքից, թե վերջինս կեղծարար է։

14 Г. Халатянц, Армянские Аршакиды, ч. I, էջ 118։

է Ա. Գուտշմիդի վրա, սակայն Գուտշմիդի տեսակետը որոշ չափով այլ է եղել։ Նա չէր ընդունում Անանունի գոյությունը, նրա աշխատությունը համարելով Խորենացու հորինվածքը, և կարծում էր, թե Անանունի գրվածքը Խորենացու «Հայոց պատմության» սևագրությունն է[15]։ Արդ, Գուտշմիդի կարծիքով, Խորենացին, որն ընդհանրապես հմուտ է երևում պարսկական գործերում, գիտե Զրադաշտին, Ռոստոմ Սագճկի և Բյուրասպի Աժդահակի առասպելները և շատ ուրիշ բաներ, առել է պարթևների արքայացանկը Խոռոհբուտ պարսիկի մատյանում պարունակված՝ ազգով ասորի, բայց պարսիկներին հարազատ և նրանց մեջ Ռաստսոհուն (Ճշմարտախոս) կոչված Բարսումայի երկից[16]։ Թեև սույն կարծիքը չի արդարանում Մովսես Խորենացու այն ցուցման ուշադիր քննությամբ, որի վրա հենված է[17], այսուհանդերձ ուժի մեջ է մնում Գուտշմիդի դրույթը, թե պարթևական արքայացանկը ծագում է

15 A. Gutschmid, նշվ. աշխ., հայերեն թարգմանությունը «Հանդէս ամսօրեայ», 1877, էջ 294—299։

16 Անդ, էջ 216։

17 Իր երկրորդ գրքի 68 և 69-րդ գլուխներում Խորենացին, ինչպես հայտնի է, տալիս է պարթևական արքայացանկը, սկսած առաջին Արշակից։ Հիշատակելով վերջին պարթև արքա Արտավանին և սրա գահընկեց արվելու հանգամանքը Արտաշիր Ստահրացու կողմից, որը և նվաճում է գահը, Խորենացին այնուհետև շարունակում է. «Բազում են ժամանակիս այսորիկ պատմողք ի Պարսից և յԱսորւոց, այլ և ի Յունաց։ Քանզի ի սկզբանէ թագաւորութեանն Պարթևաց մինչև ցդադարումն՝ ընդ հռոմայեցւոց կալանգործ, երբեմն հնազանդութեամբ և երբեմն պատերազմաւ, զոր պատմէ Պաղեփատոս և Պորփիւր և Փիլեմոն, և այլ բազումք։ Բայց մեք ասասցուք ի մատենէն, զոր եբեր Խոռոհբուտ, զԲարսումայի»։ «Այս Խոռոհբուտ,—շարունակում է Խորենացին հաջորդ գլխում,— դպիր եղեալ Շապհոյ թագաւորին Պարսից... պատմագրեաց զգործս Շապհոյ և Յուլիանու։ Ընդ նմին թարգմանեաց և զառաջնոցն պատմութիւնս, մատեան մի, որ գերեկից իւր լեալ Բարսումայի ուրումն անուամբ, զոր Պարսք Ռաստսոհուն կոչեն. յորմէ մեր առեալ՝ երկրորդեմք այժմ ի գիրս յայսմիկ, թողլով զառասպելաց նոցա աբաբաջմունս։ Քանզի անտեղի է մեզ այժմ երկրորդել զառասպելսն յաղագս երազոյն Փափագայ... Այլ մեք ասասցուք միայն զատոյգն, որ ինչ ճշմարտութեանն վայել է պատմութիւն» (շարունակությունը հաջորդ էջում)։

պարսկական միջավայրից. այսպիսի ենթադրությունը միանգամայն բնական է, անկախ այն բանից, թե արդյո՞ք այն համապատասխանում է իրականությանը։

Ոչ պակաս օրինական է և այն ենթադրությունը, թե պարթևական արքայացանկը ծագում է ասորական ոլորտից։ Այդպես էր կարծում Մարկվարտը, նկատի ունենալով նույն Բարսումային, բայց դիտելով սրան, ի տարբերություն Գուտշմիդի, որպես ասորական գրականության ներկայացուցչի[18]։

Այս մեջբերումից պարզ է, որ Խորենացին իր պարթևաց արքայացանկը չի համարում Բարսումայից ընդօրինակված։ 68-րդ գլխի վերջում նա նշում է. «Բայց մեք ասացուք ի մատենէն, զոր երբեր Խոռոհբուտ, զԲարսումայի», իսկ 69-րդ գլխի վերջում նույն այդ մատյանին հետևելու և նրանից ընտրողաբար նյութեր քաղելու կապակցությամբ կրկնում՝ «Այլ մեք ասացուք միայն զստոյգն...» և այլն։ Միանգամայն հասկանալի է, որ ասացուք ապառնին չի կարող վերաբերել նախորդող շարադրանքին, որի մեջ է զետեղվում պարթևաց արքայացանկը, այլ ակնարկում է հաջորդող շարադրանքը, որ նվիրված է Արտաշիր Սասանյանին։ Ուստի 68-րդ գլխի վերը մեջ բերված հատվածը պետք է ըմբռնել հետևյալ իմաստով. շատերն են պատմել պարթևների թագավորության մասին, բայց մենք այս բոլորը մի կողմ ենք դնում և շարունակում մեր պատմությունը Խոռոհբուտի բերած՝ Բարսումայի մատյանից։

Բարսումայի մատյանի բովանդակությունը երևում է Խորենացու այն նշումից, թե այժմ ինքը երկրորդում է այդ մատյանից, առանց կրկնելու, սակայն, նրա առասպելների բարբաջմունքը։ Վերջիններիս մի քանի նմուշները, որ Խորենացին իսկույն մեջ է բերում, վերաբերում են Արտաշիր Պապականին, և ոչ պարթևական թագավորներին։ Այստեղից իմացվում է, որ Խոռոհբուտի՝ իր գրած Շապուհ Բ-ի և Հուլիանոսի պատերազմի պատմության վրա ավելացված «առաջնոց պատմութիւնք»-ը (Բարսումայի մատյանը) պարունակած պիտի լինի Սասանյանների պատմությունը Արտաշիրից մինչև Շապուհ Բ, իսկ պարթև արքաների պատմությունը կարող էր շոշափված լինել միայն նրանց տապալման կապակցությամբ՝ Արտաշիրի ձեռքով։

[18] J. M a r q u a r t, նշվ. աշխ., ZDMG, 1895, № 49, էջ 648։ Այս Բարսուման կամ, ասորական հնչմամբ, Բարծաուման, մեզ հայտնի չէ ասորական գրականությունից։ Հայտնի երկու անձնավորությունները, որոնք կրել են Բարծաումա անունը, ապրել ու գործել են 5-րդ դարում, Սասանյան Պերոզ թագավորի օրոք (457—484 թթ.)։ Տե՛ս. A. B a u m s t a r k, Geschichte der syrischen Literatur, Bonn, 1922, էջ 108, 147։

Անշուշտ, անկախ Բարսումայի մասնավոր խնդրից, այս կարծիքը հիմնված է երևում մի ժամանակ տարածված այն տեսակետի վրա, թե Մարաբան ինքը ասորական գրականության գործիչ է եղել, որը իրերի բերմամբ անդրադարձել է հայկական հարցերին։ Այդպես էին մտածում հատկապես Պ. Ֆետտերը[19], Ն. Մառը[20] և ուրիշներ։ Սրանց կողքին ունենք Ն. Ադոնցի[21] և Հ. Մանանդյանի[22] կարծիքները, որոնք Մարաբային, հակառակ նրա ասորական անվան, համարում էին հունական կրթություն ունեցող հեղինակ։

Այսպիսով, ուրվագծվում է երեք տարբեր միջավայր կամ ոլորտ, պարսկական, ասորական և հունական, որտեղից (անկախ աղբյուրների մեջ պահպանված կոնկրետ ցուցումների մեկնաբանություններից) կարելի է սպասել պարթևական արքայացանկի ներթափանցումը հայ պատմագրության մեջ։ Ի դեպ, նույն այս երեք միջավայրերն է թվարկում, և հենց նույն առումով, նաև ինքը Մովսես Խորենացին, ասելով. «Բազում են ժամանակիս այսորիկ (պարթև Արշակունիների ժամանակի—Գ. Ս.) պատմողք ի Պարսից և յԱսորւոց, այլ և ի Յունաց»[23]։ Ահա, ուրեմն, կարևոր խնդիր է ստուգել նախապես, թե ո՞ր միջավայրից կարող է սերված լինել քննության առարկա արքայացանկը, արդյոք թվարկվածներից որևէ մեկի՞ց, թե հենց հայկականից։

---

[19] P. V e t t e r, Das Buch des Mar Abas von Nisibis, Festgruss an Rudolf Roth, Stuttgart, 1893, էջ 81 և հաջ.։

[20] Н. М а р р, О начальной истории Армении Анонима, „Византийский временник“, I, вып. 1, 1894, էջ 289 և հաջ.։

[21] Н. А д о н ц, նշվ. աշխ., էջ 96։

[22] Я. А. М а н а н д я н, Начальная история Армении Мар Абаса (К вопросу об источниках Себеоса, Моисея Хоренского и Прокопия Кесарийского), „Палестинский сборник“, вып. 2 (64—65), 1956, էջ 76։

[23] Խ ո ր ե ն ա ց ի, II, 68։

2

Սկսենք պարսկական միջավայրից, պահպանելով Խորենացու առաջարկած հերթականությունը։

Հետազոտողներին մեծ զարմանք է պատճառում այն անհամապատասխանությունը, որ կա Իրանի պատմության պարթևական շրջանի նշանակության և այդ շրջանի մասին Սասանյանների օրոք գոյություն ունեցած պատկերացումների միջև։ Հիրավի, Արշակունիների հարուստ ու փարթամ պատմության մասին հաջորդ շրջանում արդեն գրեթե ոչինչ չգիտեին[24]։ Հայտնի իրանագետ Քրիստենսենը այստեղ տեսնում է Սասանյանների՝ իրենց նախորդած դինաստիաների, հատկապես Արշակունիների հանդեպ ունեցած խիստ բացասական միտումնավոր վերաբերմունքի հետևանքները և վերագրում այդ վերաբերմունքը Սասանյանների ծայրահեղ կրոնամոլության, որի պատճառով նրանք ատում էին այդ հարցերում կրավորական դիրք բռնած Արշակունիներին։ Սպառի՞չ է արդյոք այս բացատրությունը, թե ոչ, դժվար է ասել, թերևս այն կարելի է լրացնել և ուրիշներով։ Բայց փաստը մնում է փաստ։

Այդ փաստը իր ցայտուն արտահայտությունն է գտել Ֆիրդուսու «Շահնամե»-ում, որի մեջ գեղարվեստականորեն վերարտադրված է Իրանի առասպելական և պատմական ավանդությունների ամբողջ բազմազանությունը, սկսած ամենահին ժամանակներից մինչև արաբների տիրապետությունը։ «Շահնամե»-ի տասնյակ հազարավոր տողերից Արշակունիներին նվիրված ընդամենը քաներկու բեյթերում թվարկված տասի չափ տիրակալների անունները մեծ մասամբ չեն էլ համընկնում պարթևական թագավորների իրական անունների հետ, իսկ պատմական իրողությունների նկարագրության մասին խոսք անգամ չկա[25]։

[24] H. Massé, Firdousi et l'épopée nationale, Paris, 1935, էջ 17 և հաջ.։

[25] Le livre des rois, par Abou'lkasim Firdousi, V, Paris, 1877, էջ 216։

Ճիշտ է, միաժամանակ «Շահնամե»-ում առկա է պարթևական շրջանին վերաբերվող բառերի, տերմինների և հատուկ անունների մի նշանակալից շերտ, ըստ որում այդ անունները կրողներից մի քանիսը կարևոր դեր են խաղում պոեմում, սակայն դրանք տարրալուծված են նյութի ամբողջության մեջ, և հեղինակը չի էլ գիտակցում, թե գործ ունի այն շրջանի արժեքների հետ, որի վրայից նա երկու խոսքով է անցնում[26]։

«Շահնամե»-ում արտահայտված պատկերը հարազատորեն վերարտադրում է այդ խնդիրների կապակցությամբ Սասանյան դինաստիայի օրոք (226—651) գոյություն ունեցած իրավիճակը, որովհետև Ֆիրդուսու նյութը պատմական հենց այն ավանդություններն են, որոնք տարածված են եղել ու գրանցվել են դեռևս Սասանյանների ժամանակ։ Այդ թագավորների դիվաններում ժամանակի ընթացքում կուտակվել են պատմական և կիսապատմական բնույթի նյութեր, ժամանակագրություններ և արքայացանկեր, որոնց ի մի բերման առաջին փորձը կատարվել է Խոսրով Ա-ի ժամանակ (531—579)[27]։ Վեցերորդ դարի հույն հեղինակ Ագաթիասը տեսել ու օգտվել է այդ նյութերից, որոնք նա անվանում է περσικοὶ βίβλοι. βασιλικὰ ἀπομνημονεύματα. βασιλικαὶ διφθέραι[28]. «պարսկական մատյաններ», «արքայական հիշատակարաններ», «արքայական մատյաններ»։ Իրենց վերջնական միավորումն ու ձևավորումը դրանք ստացել են Սասանյան թագավոր Հազկերտ Գ-ի օրոք (632—651)։ Այդ մատյանը, որի կազմումը վերագրվում է ումն դեհկան Դանիշվարի, կոչվել է «Խվատայ նամակ» («Տիրողների գիրք») և մեզ չի հասել։ Չեն հասել և նրա՝ VIII դարում կատարված արաբերեն մի քանի թարգմանությունները[29], և մեր տեղեկությունները «Խվատայ

[26] Th. Nöldeke, Das iranische Nationalepos, Zweite Auflage, Berlin und Leipzig, 1920, էջ 7—8։

[27] Անդ, էջ 12—13։

[28] Agathias, II, 27, IV, 30.

[29] Th. Nöldeke, նշվ. աշխ., էջ 13 և հաջ.։

նամակի» բովանդակության մասին գալիս են դրանց վրա հիմնված Ֆիրդուսու և արաբ կամ արաբալեզու մի շարք պատմիչների գործերից, ըստ որում վերջիններս, որպես պատմիչներ, ավելի մեծ ճշգրտությամբ են պահպանել նյութը, մեզ հասցնելով նաև արքայացանկերում հիշատակված յուրաքանչյուր տիրողի գահատարիների քանակը[30]։ Բերենք տասներորդ դարի նման պատմիչներից երեքի՝ Թաբարիի, Մասուդիի և Համզա Իսպահանեցու երկերում պահպանված՝ Արշակունիների (Աշկանիների) արքայացանկի տարբերակները որպես նմուշ, պատկերացում տալու համար այդ ցանկի բնույթի մասին և համեմատելու համար Խորենացու-Անանունի պարթևական արքայացանկի հետ։ (Մասուդիի և Համզայի սյունակներում տալիս ենք միայն այն անունները կամ թվերը, որոնք տարբերվում են Թաբարիից)։

Թաբարի[31]		Մասուդի[32]		Համզա[33]	
Աշկ	10		20		52
Սաբուր	60				24
Ջուդարզ	10				50
Բիզան	21	Նիզար		Վաուհան	
Ջուդարզ	19				
Նարսի	40				30
Հուրմուզ	17		20		
Արդավան	12		15	Փիրուզան	
Կիսրա	40				
Բալաշ	24				
Արդավան	13				55
	266		’82		344

Աչքի է զարնում այն հանգամանքը, որ «Խվատայ նամակից» ծագող այս արքայացանկը, որը մանակի տարբե-

30 Th. Nöldeke, նշվ. աշխ., էջ 41։

31 Tārīkh al-Ṭabari, I, al-Qāhira, 1960, էջ 580 և հաջ.։

32 Mas'ūdī, Muridj al-Zahal, al-Qāhira, 1948, էջ 235 և հաջ.։

33 Hamzae Ispahanensi annalium libri X, t. II, Translatio latina Lipsiae, 1948, էջ 10։

րություններով կրկնվում է մի շարք արաբ հեղինակների մոտ, խիստ կրճատում է, որոշ հեղինակների մոտ գրեթե կիսով չափ սեղմում պարթև Արշակունիների իշխանության իրական ժամանակաշրջանի տևողությունը։ Արաբական հեղինակները թեև լրացուցիչ աղբյուրներ ու տվյալներ չեն ունեցել պարթևական շրջանի պատմության ու ժամանակագրության մասին, բայց բավականաչափ փորձված են եղել համաշխարհային պատմության ժամանակագրության խնդիրներում և նկատել են այս խզումը[34]։ Փորձեր են արվել վերացնելու այն, ստեղծելով պարթևական արքայացանկի նոր տարբերակներ, որոնք պարունակում են ավելի շատ անուններ և անհրաժեշտ քանակությամբ տարիներ։ Այդպիսի արհեստականորեն ընդարձակված արքայացանկերի կարելի է հանդիպել գրեթե բոլոր այն հեղինակների մոտ, որոնք մեջ են բերում նախնական սեղմ տարբերակը[35]։ Դրանք ներկա դեպքում մեզ չեն հետաքրքրում։

Մեզ հետաքրքրողն այստեղ «Խվատայ նամակից» ծագող այս արքայացանկերի և Խորենացու-Անանունի պարթևական արքայացանկի համեմատությունն է։ Առաջին հայացքից իսկ երևում է, որ դրանք շատ են տարբեր թե՛ անուններով, թե՛ նրանց կից թվերով, և թե՛ վերջիններիս հանրագումարներով։ «Աշկ» անունը, որով սկսվում է պարսկական ցանկը,

34 **Տե՛ս օրինակ**, Абурейхан Бируни, Избранные произведения, I, Ташкент, 1957, էջ 121 և հաջ.։

35 Tabari, նշվ. աշխ., էջ 581 և հաջ., Hamra, նշվ. աշխ., էջ 18, տե՛ս նաև Бируни, նշվ. աշխ., էջ 120։ Մասուդիի մոտ փորձ է արված անգամ բացատրելու հիշյալ խզման պատճառը։ Երբ Արտաշիրը, ասված է այնտեղ, տիրացավ Իրանին, մի ավանդություն կար, որ պետությունը կկործանվի Զրադաշտի ռեֆորմից հազար տարի հետո։ Ժամկետը երկարացնելու համար Արտաշիրը իրեն Ալեքսանդր Մակեդոնացուց բաժանող 510-ից ավելի տարիները կիսեց երկու մասի, և մի մասը, այդ ժամանակ իշխած թագավորների հետ միասին դեն նետեց պատմությունից, պահպանելով միայն մյուս մասն ու նրա թագավորներին, և հայտարարեց, թե իր գահակալման տարին ընկնում է Ալեքսանդր Մակեդոնացուց հաշված ընդամենը 260-րդ տարվա վրա։ Տե՛ս H. Massé, նշվ. աշխ., էջ 18։

ճիշտ է, նույն «Արշակն» է, որը գլխավորում է հայկական ցանկը, բայց սա իհարկե փաստարկ չի կարող ծառայել ցանկերի հարազատության օգտին։ Արշակունիների հիմնադիրը իսկապես Արշակ է կոչվել, և այդ հանգամանքը կարող էր գալ հասնել մեր արքայացանկերին բազմաթիվ ճանապարհներով։ Նրանից հետո սկսվում են տարբերությունները։ Պարսկական ցանկի հաջորդ անունները գրեթե մինչև վերջ չկան հայկականում։ Կարևորն այն է, որ անունների մեծամասնությունը (պարսկականում՝ Սաբուր, Բիզան կամ Նիգար, Նարսի, Հուրմուզ, հայկականում Արշեզ, Արշավիր, Արտաշես, Դարեհ և այլն) խորթ են պարթև Արշակունիներին, չկան նրանց իրական պատմական արքայացանկում, բայց և փոխադարձաբար չեն կրկնվում պարսկական և հայկական արքայացանկերում։ Այս հանգամանքը առանձնապես ընդգծելի է և ցույց է տալիս, որ նրանք չեն կարող իրարից սերված լինել։ Միակ բացառությունը՝ Պերոզ-Փիրուզ անունը, որը պարթև Արշակունյաց մոտ չհանդիպելով հանդերձ, կա հայկական ցանկում և պարսկական ցանկի որոշ տարբերակներում, չի կարող փոխել այդ եզրակացությունը։ Թերևս այն ինչ-որ պատմական հիմք ունի[36]։

Վերջին երկու անունները, սակայն, Բալաշ ու Արդավան և, համապատասխանորեն, Վաղարշ ու Արտավան, համընկնում են։ Սա էլ, Աշկ-Արշակի համընկնման պես, ընդհանրապես չի կարող փաստարկ լինել մի ցանկը մյուսից սերված համարելու օգտին (որովհետև այդ անունների տակ թաքնըված են երկու իրական Արշակունի արքաներ՝ դինաստիայի վերջին ներկայացուցիչներ Վաղարշ Ե-ը և Արտավան Ե-ը), սակայն ավելի ուշադրության է արժանի։

Հարցն այն է, որ այդ վերջին պարթև թագավորները, հատկապես Արտավանը, պարսկական գրականության մեջ հանդես են գալիս ոչ միայն հիշյալ արքայացանկում և նրա տարբերակներում, այլև այդ ցանկից դուրս՝ Արտաշիր Պա-

36 Տե՛ս ստորև, էջ 120։

պականի հետ կապված ավանդություններում։ Արտաշիրը՝ Սասանյան դինաստիայի հիմնադիրը, պայքարել է վերջին Արշակունի Արտավանի հետ, և այդ պայքարը մանրամասնորեն արտացոլված է իրանական ժողովրդական «Կարնամակ ի Արտաշիր Բաբական» վեպի մեջ[37]։ Ֆիրդուսին լայնորեն օգտագործել է այդ վեպը, ուստի և նրա մոտ ևս Բալաշի որդի Արդավանը մյուս պարթև թագավորների նման դատարկ անուն չէ, այլ գործող անձ։

Արդ, Հայաստանում ևս տարածված է եղել Սասանյան Պապաքի որդի Արտաշիրի և Արշակունի Վաղարշի որդի Արտավանի պայքարի մասին մի վեպ։ Այդ են վկայում Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության առաջաբանը, ուր տրված է պայքարի մանրամասն նկարագրությունը[38], և Մովսես Խորենացու «Պատմության» երկրորդ գրքի 60-րդ գլուխը (մասամբ մեջ բերվեց վերը), որտեղ բովանդակալից ակնարկներ կան նույն զրույցի առանձին դրվագների կապակցությամբ։ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը, մանրամասնորեն հետազոտելով խնդիրը և համեմատելով «Կարնամակի», Ագաթանգեղոսի ու Խորենացու տվյալները, հանգել է համոզիչ եզրակացության, «որ ո՛չ Ագաթանգեղոսը և ո՛չ էլ Մովսես Խորենացին ծանոթ չեն եղել «Կարնամակին», որ նրանք աչքի առաջ չեն ունեցել գրավոր պահլավերեն աղբյուր, այլ պարզապես իրենց տեղեկությունները քաղել են Հայաստանում, գուցե նաև Իրանում, տարածված Արտաշիրյան վիպական ցիկլի, գրավոր «Կարնամակին» անհայտ, պատումներից»[39]։ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը ցույց է տվել նաև, որ

37 Տե՛ս Արտաշիր Բաբական կարնամակ. պահլավ բնագրեն թարգմանեց հանդերձ ծանոթագրությամբ դոքտ. Հ. Թիրաքյան, Փարիզ, 1907։

33 Agathangelus, էջ 4։

39 Կ. Մելիք-Օհանջանյան, Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-նամե»-ում ու հայ մատենագրության մեջ, «Ֆիրդուսի» (Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու), Երևան, 1934, էջ 24։

Ագաթանգեղոսը և Խորենացին օգտվել են նույն վիպական շարքի տարբեր պատումներից[40]։

Հետաքրքրականն այստեղ մեր թեմայի առումով այն է, որ Հայաստանում տարածված այս վեպը կարող էր հանդիսանալ մի աղբյուր, որի հիման վրա պարթև Արշակունյաց հայկական արքայացանկը լրացվել է իր վերջին երկու անուններով։ Նույն ձևով և Իրանում Արշակունիների պարսկական արքայացանկի մեջ վերջին երկու անունները կարող են մուտք գործած լինել «Կարնամակից» կամ նույն վեպի մի այլ պատումից։ Այս չափով միայն և այս իմաստով կարելի է խոսել հայկական ու պարսկական արքայացանկերի ազգակցական կապի մասին։

Համոզվելով, որ Խորենացու-Անանունի մոտ պահպանված պարթև Արշակունիների արքայացանկը սերված չէ պարսկական բանավոր կամ գրավոր պատմական ավանդության ոլորտից, անցնենք այժմ հաջորդ, ասորական ոլորտին։

Ասորական գրականության մեջ չենք հանդիպում պարթև Արշակունիների սիստեմատիկ արքայացանկի, ուստի համեմատության համար պետք է ընտրենք այլ եզրեր։

Ասորական գրականության մեջ կան մի շարք ընդհանուր ժամանակագրական երկեր, որոնք պարունակում են մարդկության պատմության ժամանակագրությունը՝ սկսած Ադամից։ Սրանց մեջ ամենից կարևորներն ու հայտնիներն են Միքայել Ասորու (XII դար)[41] և Գրիգոր Բար-Հեբրեոսի (XIII դար) ժամանակագրությունները։ Սրանք իրենց մեջ են առել նախորդ ասորական նմանօրինակ ընդգրկում ունեցող ժամանակագիրների նվաճումները։ Վերջիններից պետք է հիշատակել Հովհաննես Եփեսոսցուն (IV դար), Հակոբ Եդեսացուն

40 Կ. Մելիք-Օհանջանյան, նշվ. աշխ., էջ 54։ Տե՛ս նաև Բ. Լ. Չուգասզյան, Հայ-իրանական գրական առնչություններ, Երևան, 1963, էջ 19։

41 Միքայել Ասորու ժամանակագրությունը շատ վաղ թարգմանվել է հայերեն, տե՛ս Տեառն Միխայէլի Պատրիարքի Ասորւոյ Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1870, և համառոտը՝ Երուսաղեմ, 1871։

(VIII դար), Դիոնիսիոս Թել-Մահրացուն և մի քանի ուրիշների։ Սրանք իրենց հերթին հենվել են ավելի վաղ շրջանների ասորական աղբյուրների վրա։ Դժբախտաբար, սակայն, այս բոլոր հեղինակները մեզ հետաքրքրող շրջանի ժամանակագրության հարցերում գտնվում են Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հզոր ազդեցության ներքո, և գրեթե դուրս չեն գալիս նրա շրջանակներից։ Եվ պետք է ասել, որ այդ ազդեցությունը զարմանալիորեն վաղ է դրսևորվել, դեռևս IV դարում, երբ Եվսեբիոսը թարգմանվել է ասորերեն[42]։ Այնպես որ ասորական ժամանակագրության այս ճյուղը որևէ այնպիսի կարևոր բան չի պարունակել պարթևների մասին, որ չունենա Եվսեբիոսը[43] (վերջինիս տվյալներին կանդրադառնանք քիչ հետո) և չի կարող նյութ մատուցած լինել մեր պարթևական արքայացանկի համար։

Ավելի հետաքրքրական է մեզ համար ասորական գրականության մի այլ ճյուղ՝ տեղական փոքր ժամանակագրությունները։ Ասորական գրականության ամենավաղ շրջանի համար՝ մինչև V դարը, հատկանշական են վարքագրություններն ու պարականոնները, ինչպես և ծիսական գրականությունը, ապա՝ տեղական ժամանակագրությունները, որոնք ընդգրկում են մի քաղաքի կամ մի երկրամասի պատմություն։ Հիմնված լինելով գրավոր կամ բանավոր ձևով պահպանված ավելի հին նյութերի վրա, վերջիններս հաճախ արժեքավոր և հետաքրքրական տեղեկություններ են պարունակում։ Այսպիսի ժամանակագրություններից կարևորագույններն են Իեշու Սյունակյացի 506—507 թվականներին կազ-

42 A. Baumstark, նշվ. աշխ., էջ 58։

43 Բացառությամբ, թերևս, մի դրվագի. Միքայել Ասորին (նշվ. աշխ., էջ 144, համառոտ, էջ 121) հիշատակում է, որ Մամայայի որդի Ալեքսանդրի օրով թագավորեց Արտաշիր Սասանյանը։ Պարթև Արշակունիների բարձման ու Սասանյանների հաստատման մասին տեղեկությունը բացակայում է Եվսեբիոսի մոտ։ Մեր վաղ միջնադարյան գրողները ևս ստույգ տեղեկություններ չունեն այդ իրադարձության տարեթվի մասին (հմմտ. Խորենացի, որը այդ դեպքը առնչում է Փիլիպոս Արաբի օրերին, նաև Անանուն)։

մածը, անանուն «Եդեսյան ժամանակագրությունը», «Կարկա դե Բեթ Սելոխ քաղաքի ժամանակագրությունը» (երկուսն էլ VI դարում կազմված) և վերջապես Մեշիհա-Զխայի՝ Ադիաբենե երկրի քրիստոնեական եկեղեցու պատմությունը (գրված 540 և 551 թթ. միջև)[44]։ Մեզ համար առանձին հետաքրքրություն է ներկայացնում վերջինը, որովհետև, որքանով մեզ հաջողվեց պարզել, ասորական գրականության մեջ ամենավաղ սիստեմատիկ տեղեկությունների շարքը պարթև Արշակունիների մասին նրա մեջ է պահպանված։ Երկը հասել է մեզ սկզբից ու վերջից թերի վիճակում։ Առավել հին շրջանի պատմությունը հեղինակը շարադրել է, ըստ իր խոստովանության, իր ուսուցիչ Հաբելի պատմածի հիման վրա։ Դատելով Հաբելի պատմածի բովանդակությունից, դեռևս V դարում (որի վրա է ընկնում մասամբ Հաբելի ապրելու ժամանակը) Ասորիքում գոյություն է ունեցել բավական ստույգ (թերևս և գրավոր) պատմական ավանդություն պարթև Արշակունիների մասին, իր բնույթով արմատապես տարբեր նույն այդ ժամանակ պարսիկների միջև այդ մասին տարածված պատկերացումներից, որոնք բնութագրվեցին վերը։ Ասորական այս ժամանակագրության մեջ հանդես են գալիս պարթևական վերջին թագավորներից հինգը ոչ սոսկ անուններով, այլ որպես իրական պատմական գործիչներ՝ կապված որոշակի պատմական իրադարձությունների հետ։ Այսպես, հիշատակվում է Արշակունի Խոսրով թագավորի պատերազմը Տրայանոս կայսեր հետ և Խոսրովի պարտությունը, ինչպես և Տրայանոսի գալուստը Ադիաբենե. սրանք պատմական փաստեր են (մ. թ. 116)[45]։ Պատմվում է Վաղարշ (Վոլոգեշ) Բ թագավորի (105/6—147) քրիստոնյաներին ներշնչած երկյուղի մասին, սրա մահվան և Վաղարշ Գ-ի (148—192) գահակալման մասին, նկարագրվում է վերջինիս պատերազմը

[44] Sources syriaques. Vol. I. Mšiḥa-Zkha (Texte et traduction), Mossoul, 1907.

[45] Հմմտ. N. Debevoise, A Political History of Parthia, Chicago, 1938, էջ 230։

հռոմեացիների դեմ, երկու զորքերին պատուհասած ժանտախտը և այլն[46], որ նույնպես պատմական փաստեր են, հաստատված այլ աղբյուրներով։ Այնուհետև պատմվում է Վաղարշ Դ-ի թագավորության մասին (192—207), սրա ընդհարումների՝ հռոմեացիների և, մյուս կողմից՝ պարսիկների հետ, որոնք արդեն սկսել էին գլուխ բարձրացնել, նկարագրվում է Խորասանում տեղի ունեցած ճակատամարտը։ Վերջապես մանրամասն տեղեկություններ են տրվում (պատմական, և ոչ վիպական բնույթի) Արտավանի ու սրա տապալման մասին պարսիկ Արտաշիրի կողմից։

Արդ, եթե բերված տվյալների հիման վրա մի փոքրիկ արքայացանկ կազմենք, կստացվի հետևյալ պատկերը՝ Խոսրով, Վաղարշ Բ, Վաղարշ Գ, Վաղարշ Դ, Արտավան։ Հեղինակը տալիս է ժամանակագրական երկու կռվան՝ շարքի սկզբի և վերջի համար։ Խոսրովը ժամանակակից է Տրայանոսի արշավանքին դեպի Արևելք (114—116). Արտավանը տապալվել է հունաց (=սելևկյան) 535 թ. (=մ. թ. 224 թ.)։ Թե՛ ցանկը, թե՛ ժամանակագրությունը պատմական են, ինչպես և, իրենց որոշ անճշտություններով հանդերձ, պատմական են նկարագրված իրադարձությունները։ Եթե սրա հետ համեմատենք Խորենացու-Անանունի արքայացանկի համապատասխան մասը, ապա այնտեղ չենք գտնի Խոսրովին, իսկ երեք Վաղարշների փոխարեն կհանդիպենք միայն մեկին. խախտված վիճակում հանդես կգա նաև ժամանակագրությունը։ Իհարկե մենք զուրկ ենք ասորական արքայացանկի նաև նախորդ հատվածները վերականգնելու հնարավորությունից, դրանք հայկականի հետ համեմատելու համար, սակայն բերված փաստերն էլ թույլ են տալիս եզրակացնելու, որ հայկական արքայացանկն իր բնույթով ու ծագմամբ այլ է, քան V—VI դարերում, ևս առավել ուրեմն IV դարում կամ ավելի վաղ, ասորական միջավայրում գոյություն ունեցած պատ-

[46] N. Debevoise, նշվ. աշխ., էջ 252, հմմտ. նաև էջ 231, 255, 258։

կերացումները, ուստի և չի հենված նրանց վրա և նրանցից չի սերվում։

Գալով հունական միջավայրին, այստեղ ևս գտնում ենք երկու տիպի աղբյուրներ, որոնք տեղեկություններ են պահպանել պարթև Արշակունիների մասին։ Դրանցից առաջինը պատմողական աղբյուրներն են, որոնցից կարևորագույնը Օգոստոսի ժամանակակից Պոմպեոս Տրոգոսի երկն է։ Այն հասել է մեզ մ. թ. II դարի հեղինակ Հուստինոսի համառոտագրությամբ և պարունակում է պարթևների կապակցված պատմությունը սկզբից մինչև մ. թ. 9 թվականը, բացառությամբ մ. թ. ա. 94—55 թթ.։ Այս երկի հիման վրա էլ, մի շարք անտիկ հեղինակների հաղորդած տեղեկությունների, վիմագրական և, մանավանդ, դրամագիտական տվյալների օժանդակությամբ, քայլ առ քայլ ստեղծվել են այսօրվա գիտական պատկերացումները՝ հաջորդաբար թագավորած երեք տասնյակ պարթև Արշակունիների պատմության ու ժամանակագրության մասին[47]։ Պարզ է, որ սա այն ոլորտը չէ, ուր մենք կարող ենք փնտրել քննության առարկա արքայացանկի ակունքները, թեև բացառված չէ, որ այս կամ այն հեղինակի առանձին հաղորդումները կարող են հասած լինել հայ հեղինակներին։

Աղբյուրների մյուս տիպը ժամանակագրական երկերն են։ Պետք է ասել, որ հունական սինքրոնիկ ժամանակագրությունների մեջ պարթև Արշակունիներն երբեք հատուկ շարք կազմելու չեն արժանացել, որպիսի շարքեր կազմել են եգիպտական, ասորական, եբրայական, հունական, Աքեմենյան, Պտղոմեյան, Սելևկյան թագավորները, հռոմեական կայսրները և ուրիշներ։ Պարթևական թագավորները միայն ըստ առիթի՝ մյուս շարքերի այս կամ այն ներկայացուցչի հետ հարաբերության մեջ մտնելու կապակցությամբ են հիշատակվել այնտեղ։ Դրա փայլուն օրինակը տալիս է Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը», որն այդ տիպի հունական ժամանա-

[47] М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, էջ 15 և հաջ.։

կագրությունների հանրագումարն է հանդիսանում։ Պարթև Արշակունիներն այնտեղ հիշատակված են երիցս. նախ մակեդոնացիների դեմ ապստամբելու կապակցությամբ, ապա՝ 122 տարի անց, Սելևկյանների դեմ մի այլ Արշակի հաղթական կռիվ մղելու առիթով, և այնուհետև հռոմեացիների դեմ Վաղարշ (Ողոգեսոս) Գ-ի արշավելու կապակցությամբ[48]։

«Քրոնիկոնը» թարգմանվել է հայերեն V դարում. ավելի վաղ հայերին նրա հայտնի լինելու հետքերը չկան։ Ն. Ադոնցը ենթադրել է, որ Անանունի մոտ եղած եվսեբիական նյութը (մեր նշած երեք կետերից առաջին երկուսը) հետագայի՝ Մարաբայի աշակերտների ձեռքով արված հավելում է, Մարաբայի հիմնական ստաղծի վրա[49]։ Գր. Խալաթյանցը սրամտորեն, թեև ակամա, հաստատել է այդ միտքը, ցույց տալով այն հակասությունը, որ կա պարթևական արքայացանկի և Եվսեբիոսից եկող ու սխալ հասկացված տվյալների միջև[50]։

Այսպիսի արտաքին բնույթ է կրում պարթև Արշակունիների մասին Եվսեբիոսի հաղորդած տեղեկությունների ազդեցությունը մեր արքայացանկի վրա։ Դրա մի ուրիշ փայլուն դրսևորումն էլ տալիս է Խորենացին՝ վերը հիշատակված երեք տեղեկություններից վերջինի առիթով։

«Քրոնիկոնում» Մարկոս Ավրելիոս կայսեր երրորդ տարվա դիմաց կարդում ենք. «Ողոգեսոս արքայ պարթևաց ի Հռո-

48 «Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանակականք երկմասնեայ», Վենետիկ, 1818, մասն Ա, էջ 349—350, մասն Բ, էջ 233, 245, 288։

49 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 97։

50 Г. Халатянц, Армянский эпос, ч. I, էջ 88 և հաջ.։ Եվսեբիոսի մոտ երկու տարբեր Արշակներին վերաբերող տեղեկությունները, որոնց միջև ընկած է 122 տարի, հավելողը, չիմանալով, վերագրել է մի Արշակի և ստիպված է եղել տալ նրան 130 տարվա թագավորություն։ Բայց, երբ հասել է արքայացանկին և նրա մեջ հիշատակված Արշակի դիմաց նշված 56 տարիներին, ապա համաձայնություն ստեղծելու համար երանգավորել է իր խոսքը, հայտնելով, որ 130-ը Արշակի կյանքի տարիներն են, իսկ նա թագավորել է 56 տարի։

մայեցւոց վայրս արշաւեաց»[51]։ Այս տեղեկությունը Խորենացու մոտ հետևյալ կերպ է անդրադարձել. «Եւ Պերոզ արքայ Պարսից ի Հոռոմայեցւոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող. քանզի յառաջ անուանէր Վաղեգեսոս ի յունաց լեզուն. բայց թե Պարսք զինչ կոչեն զնա, ոչ գիտեմ»[52]։ Այստեղից պարզորոշ երևում է, թե ինչպես է Մովսես Խորենացին Եվսեբիոսից առած տեղեկությունը հարմարեցրել իր արքայացանկին, որի ժամանակագրության համաձայն տվյալ տարիներին իշխել է Պերոզը։ Խորենացին ամենևին չի փորձել Պերոզ անունը փոխարինել «Վաղեգեսոս»-ով, այլ միայն վերջինս կցել է այդ անվանը։ Ըստ որում նրան իսկապես հայտնի չի եղել, որ «Վաղեգեսոս»-ը դա նույն Վաղարշն է։ Թյուրիմացության մեջ է Գր. Խալաթյանցը, երբ պնդում է, թե «աչքի է զարնում նաև, որ մեր պատմաբանը (Խորենացին—Գ. Ս.) ձևացնում է թե չգիտի Ոլոգեսոսի պարսկական անունը... թեև հաջորդ իսկ գլխում ինքն անվանում է նրան հենց նրա պարսկական Վաղարշ անունով»[53]։ Բայց խնդիրն այն է, որ հաջորդ գլխում[54] հիշատակված Վաղարշը ամենևին էլ Պերոզը չէ, ինչպես սխալմամբ կարծում է Խալաթյանցը, այլ հենց արքայացանկի Վաղարշը՝ Պերոզի հաջորդը։

Այսպիսով, քննելով ու բացառելով բոլոր հնարավոր օտար միջավայրերը, որտեղից կարելի էր ենթադրել պարթևների արքայացանկի ծագումը, ելնելով կամ նրա բովանդակությունից կամ ժամանակի հայ մատենագրության կապերից ու առնչություններից, մենք եզրակացնում ենք, որ այն ձևավորված պիտի լինի տեղում, հայկական միջավայրում։ Սրանից հետո թվում է, թե ավելորդ կլիներ կատարել նույն էքսկուրսները նաև հայկական արքայացանկի նկատմամբ։ Ինքնին հասկանալի է, որ սա ևս, դեռ ավելի հիմունքներով, պետք է դիտվի որպես հայկական միջավայրի ծնունդ։

51 Եւսեբի Պամփիլեայ..., մասն Բ, էջ 288։
52 Խորենացի, II, 64։
53 Г. Халатянц, Армянские Аршакиды, ч. I, էջ 108։
54 Խորենացի, II, 65։

3

Այժմ, շարունակելու համար, պետք է պարզել, թե Մարաբայի մատյանում, որն առայժմ մեր տեսադաշտի եզրն է կազմում, քննության առարկա արքայացանկերը ի՞նչ ծավալով են հանդես եկել, արդյո՞ք որպես սոսկ ցուցակներ, թե՞ այնտեղ եղել է նաև նրանց հետ կապված շատ թե քիչ հանգամանալից պատմություն։ Որքան մեզ հայտնի է, սույն հարցը այսպիսի սրությամբ չի հետաքրքրել հետազոտողներին, այնինչ նրան պատասխանելու համար որոշակի հնարավորություններ կան։

Քանի որ Մծուրնացու մատյանը մեզ չի հասել, ապա նրա բովանդակության մասին պատկերացումները ստիպված ենք քաղել այն հեղինակների երկերից, որոնք անմիջականորեն օգտվել են նրանից։ Այդ հեղինակներն են. Խորենացի, Անանուն, Պրոկոպիոս Կեսարացի՝ VI դարի բյուզանդական հեղինակ, որը վերարտադրել է այդ մատյանի որոշ տվյալները՝ հիշատակելով այն որպես «Հայոց պատմություն»։

Սկսենք Անանունից, որի տվյալները առավել շոշափելի են։ Առաջին հերթին անհրաժեշտ է ծանոթանալ նրա առաջաբանին։ Բերում ենք այն ըստ Գ. Աբգարյանի կողմից ճշտված բնագրի և նրա իսկ թարգմանությամբ։

«Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից վարժ խուզակի զանստորագրեալ ժամանակ և զնախնի քաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս, զիմն յիշատակել զառասպելս և ի նոյն շարագրելով ասացից զառ ի յապայսն եղելոյ, և ցուցից համառաւտիւք զարդեաց ժամանակացն զաղետիցս վերաբերութիւն զամս և զաւուրս հին թագաւորացն յիշատակելով։

Անդ հայելով ի մատեանն Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ [յարձանագիրն], զոր եգիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծուրն քաղաքի, յապարանսն Սանատրուկ արքայի, հանդէպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայենիցն։ Քանզի զսիւնս տաճարին այնորիկ խընդրեալ ի դուռն արքային Պարսից և բացեալ զաւերածն վասն

տեանցն՝ ըստ դիպան արձանագրին, դրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հին թագաւորացն Հայոց և Պարթևաց, յունարէն դպրութեամբ, զոր իմ գտեալ ի Միջագետս, ի նորին աշակերտացն, կամեցայ ձեզ զրուցակարգել, քանզի այս ունէր զվերնագիրն այսպէս. «Ես Ագաթանգեղոս դպիր, գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի դիւանէ արքունի»։ Զոր փոքր մի և ապա յիւրում տեղւոջն տեսցես զպատճենն»։

Թարգմանություն.

«Վարժ հետազոտողի քմահաճ ցանկությամբ չէ, որ ես ձեռնարկում եմ գրել չգրված ժամանակի և նախնի քաջերի պատմությունը, հիշատակել որոշ առասպելներ։ Նույնը շարունակելով ես կասեմ հետագայում եղածը և համառոտ ցույց կտամ ներկա ժամանակների աղետների վրա հասնելը, հիշատակելով հին թագավորների տարիները։ Այնտեղ նայելով Մարաբա փիլիսոփա Մծուրնացու մատյանը [այն արձանագրությանը], որը նա գտավ սյան վրա դրոշմված, Մծուրն քաղաքում, Սանատրուկ արքայի ապարանքում, արքունական տաճարի դռան հանդեպ, արքայական կայանի ավերակների տակ ծածկված, երբ որ այդ տաճարի սյուները պահանջեցին պարսից արքայի դուռը և երբ սյուների պատճառով բացեցին ավերակները, հանդիպեցին արձանագրությանը՝ դրոշմված վեմի վրա՝ Հայոց և Պարթևաց հին թագավորների տարիները՝ հունարեն գրությամբ։ Սա գտնելով Միջագետքում, նրա աշակերտների մոտ, կամեցա ձեզ պատմել, որովհետև սա ուներ այսպիսի վերնագիր. «Ես՝ Ագաթանգեղոս գրիչս, այս արձանի վրա իմ ձեռքով գրեցի Հայոց առաջին թագավորների տարիները, քաղելով արքունի դիվանից քաջն Տրդատի հրամանով»։ Որի պատճենը կտեսնես քիչ հետո, իր տեղում»[55]։

55 Գ. Աբգարյան, Սեբեոսի պատմությունը և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 31—33։ Այստեղ մենք ներմուծել ենք նաև վաղուց արդեն առաջարկված «հինգ» բառի ճշտումը որպես «հին», որին Գ. Աբգարյանը անդրադառնում է իր աշխատության հաջորդ էջերում (էջ 34 և հաջ.)։

Այս հատվածից երևում է, որ նրա հեղինակը, Միջագետքում եղած ժամանակ, ծանոթացել է Մարաբա Մծուրնացու անունը կրող մի մատյանի, որի մեջ զետեղված է եղել մի արձանագրության պատճեն, որը Մարաբան գտել է վեմի վրա դրոշմված՝ Մծուրն քաղաքում գտնվող՝ Սանատրուկ հայոց արքայի պալատի ավերակներում, երբ այդ ավերակները պեղվել են տաճարի սյուները պարսից արքայի հրամանով իր մոտ տանելու նպատակով։ Վեմի վրա գրված են եղել հայոց և պարթևաց հին թագավորների տարիները, ընդ որում արձանագրությունն ունեցել է նաև վերտառություն, որը բառացի կրկնված է առաջաբանում և վերը մեջ բերված տեքստի ու թարգմանության մեջ առնված է չակերտների մեջ։ Բերելով վերնագիրը, առաջաբանի հեղինակը խոստանում է տալ նաև արձանագրության պատճենը՝ քիչ հետո իր տեղում։

Նախազգուշացնելով այնուհետև, որ սկզբում պիտի ավելի հին պատմություններ անի, նա իսկապես սկսում է դրանց շարադրանքը. դրանք են Հայկ ու Բելի, Արա և Շամիրամի առասպելները, նրանց հետնորդների պատմությունը մինչև Ալեքսանդր Մակեդոնացի։ Այնուհետև[56] նկարագրվում են պարթևների ապստամբությունը մակեդոնացիների դեմ, նրանց թագավոր Արշակի՝ Սելևկյանների նկատմամբ տարած հաղթանակները, Հայաստանում իր որդի Արշակ Փոքրին թագավոր կարգելուն և սրա թագավորության սկզբին ուղեկցող հանգամանքները։ Սրանից հետո գալիս են երկու արքայացանկեր՝ պարթևների և հայերի։

Քանի որ առաջաբանի «հինգ» բառը ճշտվում է որպես «հին», բոլոր հիմքերը կան այս երկու ցանկերի մեջ տեսնելու Ագաթանգեղոսի արձանագրության՝ առաջաբանում խոստացած պատճենը։ Այն իսկապես գտնվում է առաջաբանից «փոքր մի» (Ստ. Մալխասյանցի հրատարակության մեջ՝ 7 էջ)

56 Քանի որ Մարսյակին վերաբերվող փոքր հատվածի այստեղ տեղադրումը տեքստի հետևառաջության խախտման հետևանք է. տե՛ս Գ. Աբգարյան, նշվ. աշխ., էջ 11[illegible]։

հեռու և «յիրում տեղւոջն»։ Երկու հանգամանք սակայն կարող են կասկած հարուցել։ Մեկ, որ հայոց արքայացանկը շարունակվում է Տրդատից (որի ժամանակակիցն է եղել արձանագրության հեղինակ Ագաթանգեղոսը) դեպի այս կողմը, հասնելով մինչև Պապ թագավորը։ Այդ խնդրին անդրադարձել ենք մեր նախորդ ուսումնասիրության մեջ, հանգելով այն եզրակացության, որ ցանկի՝ Տրդատից սկսած հատվածը հետագայի հավելում է[57]։ Երկրորդ, որ առաջաբանում մի դեպքում կարդում ենք՝ «դրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հին թագաւորացն Հայոց և Պարթևաց», սակայն մյուս դեպքում՝ «գրեցի... զամս առաջին թագաւորացն Հայոց»։ Երկրորդ դեպքում պարթևների մասին խոսք չկա, ուստի, քանի որ երկու նախադասություններն էլ նույն արձանագրության են վերաբերվում, կամ առաջինից պետք է հանել «և Պարթևաց» բառերը, որպես ընդմիջարկում, կամ երկրորդում՝ վերականգնել դրանք։ Կարծում ենք, որ պարթևների արքայացանկի ներկայությունը՝ առաջաբանի խոստացած տեղում, բավարար հիմք է ծառայում այդ գործողություններից երկրորդին դիմելու համար։

Այժմ դառնանք մեզ հետաքրքրող խնդրին, թե ինչ բովանդակություն ու ծավալ է ունեցել արձանագրության պատճենը ոչ թե Անանունի մատյանում, ուր մենք այն հանդիպում ենք, և որտեղ այն կարող էր Մարաբայի ծավալուն տեքստի համառոտությունը լինել, այլ հենց բուն Մարաբայի մատյանում։ Եթե մենք չիմանանք, թե խոսքը ինչ տեսակի ու ծավալի գրվածքի մասին է, որի նկատմամբ ասված է, թե այնտեղ գրված են «զամս և զաւուրս հին թագաւորացն» կամ «զամս առաջին թագաւորացն», արդյոք դա մի մատյա՞ն է, թե միգուցե արձանագրություն կրող մի մատանի՞, ապա մենք չենք կարող գուշակել, թե ինչքան է ծավալվել հեղինա-

57 Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 80 և հաջ.։ Տե՛ս նաև Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, մասն Բ, էջ 269 և հաջ.։

կը. նկարագրե՞լ է նա, արդյոք, իր ընտրած թագավորների կյանքն ու գործունեությունը և ժամանակի իրադարձությունները, թե՞ սոսկ թվարկել է նրանց անունները։ Բայց երբ մեզ հայտնի է, որ գրվածքը մի վիմագիր արձանագրություն է, դրանով իսկ վերոհիշյալ արտահայտությունները ստանում են իրենց կոնկրետ նշանակությունը։ Իհարկե, արձանագրություններն էլ մեծ ու փոքր են լինում, ինչպես, օրինակ վերը հիշատակված ու մասամբ մեջ բերված՝ Նեմրուդ լեռան հսկա հունարեն արձանագրությունը[58]։ Սակայն այդ տիպի արձանագրությունները խիստ հազվադեպ են և, ընդհակառակը, սովորական են մի քանի կամ մի քանի տասնյակ տողերից բաղկացածները։ Բացի այդ, ի դեմս առաջաբանի հեղինակի, մենք բարեբախտաբար գործ ունենք մի բծախնդիր մարդու հետ, որը չի վլացել նշելու, թե արձանագրությունը արված է եղել մեկ վեմի վրա («ի վերայ վիմի»)։ Այստեղից էլ պիտի եզրակացնել, որ արձանագրությունը պարունակած պիտի լինի ոչ ավելին, քան կարող էր պարունակել մեկ վեմ, այն է՝ սոսկ երկու դինաստիաների թագավորների ցանկերը, և յուրաքանչյուր արքայանվան դիմաց՝ նրա գահատարիների քանակը, որի իմաստով էլ պետք է հասկանանք «զամս և զաւուրս» կամ մյուս դեպքում պարզապես «զամս... թագաւորացն» արտահայտությունը։ Հետևաբար Մարաբայի մատյանում զետեղված «պատճենը» մեծ հավանականությամբ ունեցել է նույն ծավալը, ինչ որ գտնում ենք Անանունի մատյանում։ Այս եզրակացության են բերում Անանունի տվյալները։

Այլ պարագաներում թերևս անհրաժեշտ լիներ հիշատակել բոլոր այն կարծիքները, որոնք կապված են Ագաթանգեղոսի, կամ շատ ավելի մեծ տարածում ստացած «Կեղծ Ագաթանգեղոս»-ի անվան հետ, որի գոյության հարցը հայագիտության առավել կնճռոտ խնդիրների թվին է պատկանում։

58 Տե՛ս Ստ. Մալխասյանցի «Առաջաբանը» «Սեբեոսի եպիսկոպոսի պատմության» բնագրի հրատարակության մեջ, Երևան, 1939, էջ Ե—ՁԱ։

Սակայն դրա կարիքը չկա, որովհետև մենք այստեղ չենք պնդում, թե Ագաթանգեղոսի արձանագրությունը իսկապես գոյություն է ունեցել, և չենք վիճում այն կեղծ համարողների հետ։ Մենք ելնում ենք այն հանգամանքից, որ գոյություն է ունեցել նրա «պատճենը» Մարաբայի մատյանում, իսկ այժմ գոյություն ունի այդ «պատճենի» պատճենը՝ Անանունի մատյանում։ Բայց կարո՞ղ էր արդյոք գոյություն ունենալ պատճենը՝ առանց իսկական գրության։ Անշուշտ կարող էր, և այդպիսի դեպքերը քիչ չեն։ Դրանք տեղի են ունենում այն ժամանակ, երբ հեղինակը ամեն գնով ցանկանում է իր հաղորդածին հնարավորին չափ մեծ կշիռ ու նշանակություն տալ։ Բացառված չէ, ուրեմն, որ Մարաբա Մծուրնացին, քաղելով իր արքայացանկերը այլ աղբյուրից, վերագրել է դրանք ինչ-որ մտացածին կամ իրական, բայց բոլոր դեպքերում բարի համբավ ունեցող անձնավորության։

Այսպիսի մոտեցումը ոչինչ չի փոխում արձանագրության հնարավոր ծավալի մասին վերը ասվածի մեջ։ Հիրավի, եթե հեղինակը ցանկացել էր իր հաղորդելիքը ներկայացնել որպես գոյություն չունեցած մի արձանագրության պատճեն, ապա նա պետք է հոգ տաներ, որ «պատճենը» իր ծավալով ու բովանդակությամբ չժխտեր սկզբնագիր օրինակի գոյությունը, այն է, չանցներ մեկ վեմի վրա փորագրելի արձանագրության չափերից։

Դառնանք այժմ Պրոկոպիոս Կեսարացու տվյալներին։ Համապատասխան հատվածը, ինչպես և Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի կարծիքները Մարաբայի մատյանից դրա ծագելու մասին, արդեն մի անգամ մեջ ենք բերել մեր նախորդ աշխատության մեջ[59], ուստի այստեղ հիշեցնենք միայն հիմնական բովանդակությունը։ Հին ժամանակ, ասում է Պրոկոպիոսը, հայերն ունեցել են իրենց բնիկ թագավորը։ Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո պարթևներն ապստամբեցին

59 Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 36 և հաջ.։

մակեդոնացիների դեմ և տիրեցին Պարսկաստանին 500 տարի շարունակ։ Այն ժամանակ պարթև թագավորներից մեկը Արշակ անունը կրող իր եղբորը թագավոր կարգեց Հայաստանում, որի մասին պատմում է «Հայոց պատմությունը»։ Շնորհիվ ազգակցության, նրանց միջև հինգ հարյուր տարի խաղաղություն էր տիրում։

Այս բոլորը համընկնում է Անանունի պատմածի հետ։ Ճիշտ է, Արշակունիներին նախորդող հայ իշխողները նրա մոտ թագավոր չեն համարվում, ինչպես Պրոկոպիոսի մոտ, բայց, նախ, վերջինս կարող էր ինքնուրույն հասնել այդ հորջորջման և երկրորդ, հավանական է, որ Մարաբայի մոտ նրանց մի մասը թագավորներ են համարվել, ինչպես կա Խորենացու մոտ, որը թերևս, հենվում է Մարաբայի վրա։ Բացի այդ, Պրոկոպիոսը հայոց թագավոր կարգված Արշակին համարում է պարթև թագավորի եղբայր (ինչպես Խորենացու մոտ է), իսկ Անանունը՝ նրա որդի[60]։ Ինչ վերաբերում է մեզ այստեղ հետաքրքրող, այսինքն Ագաթանգեղոսի արձանագրության պատճենին համապատասխանող հատվածին, ապա Պրոկոպիոսը ոչինչ այնպիսի բան չի ավելացնում Անանունից ստացած մեր տեղեկությունների վրա, որը ստիպեր մեզ հետ կանգնել վերը առաջ քաշած դրույթից։ Պարթև արքաները տիրել են 500 տարի, ասում է Պրոկոպիոսը, տալով ցանկի թվական տվյալների հանրագումարը, իսկ Անանունը տալիս է բուն ցանկը, որի գահատարիների գումարն է 502 տարի։ Պարթևների և հայերի միջև ազգակցության հետևանքով 500 տարի խաղաղություն է տիրել (այս նշանակում է, որ պարթև Արշակունիները և նրանց հայկական ճյուղը գրեթե միաժամանակ են սկսել թագավորել), ասում է Պրոկոպիոսը։ Հայոց արքան կարգվել է առաջին իսկ պարթև Արշակունու կողմից, ձայնակցում է Անանունը։ Մի խոսքով, Պրոկոպիոսի պատմածից մենք այնպիսի տպավորություն չենք ստանում, թե նրա օգտագործած «Հայոց պատմության» մեջ հետաքրքրող հատ-

60 Տե՛ս այդ մասին Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 127 և հաջ.։

վածում ավելի բան է եղել, քան պարթև և հայ Արշակունիների արքայացանկերն են։

Խորենացու մոտ պատկերն արտաքնապես միանգամայն այլ է։ Այստեղ ավելի մանրամասն, քան Անանունի մոտ, շարադրված են Հայկի և Բելի, Արայի և Շամիրամի առասպելները, անհամեմատ ավելի հարուստ է և հաջորդող նյութը, մինչև Ալեքսանդր Մակեդոնացի։ Թեև պարզված է, որ այս բաժինները ամբողջությամբ չէ, որ ծագում են Մարաբայի մատյանից, և որ Խորենացին այլ աղբյուրներ էլ է ունեցել[61], այնուհանդերձ Մարաբային վերագրելի նյութի ճոխությունը ցույց է տալիս, որ վերջինիս մատյանի համապատասխան բաժինները շատ ավելի հարուստ են եղել, քան այն, ինչ ներկայացված է Անանունի մոտ։ Անանունը, ուրեմն, համառոտել է Մարաբայի մատյանի հիշյալ բաժինները։ Հաջորդ՝ պարթևների ապստամբության և Սելևկյանների դեմ մղված պայքարին նվիրված հատվածը, սակայն, հակառակ պատկերն է ցուցադրում. Անանունն այստեղ ավելի հանգամանալից է, քան Խորենացին։ Հայոց առաջին Արշակունու թագավորության նկարագրության խնդրում առաջնությունը նորից անցնում է Խորենացուն։ Հաջորդ հատվածներում, սակայն, նախորդների, կոպիտ ասած, քանակական տարբերությունը փոխվում է որակականի։ Անանունի չոր ու ցամաք արքայացանկերի դիմաց Խորենացու մոտ հանդիպում ենք հայոց թագավորների ծավալուն և մանրամասն պատմության, որը զբաղեցնում է ամբողջ երկրորդ գիրքը և ըստ առիթի համեմվում պարթև թագավորների պատմության առանձին դրվագներով։ Սրան զուգակցվում է, սակայն, մի այլ հանգամանք, որն սկզբում անհասկանալի է թվում։ Մինչդեռ Անանունը այդ մասը շարադրում է Մարաբայի մատյանում զետեղված՝ Ագաթանգեղոսի արձանագրության պատճենից, Խորենացին, հասնելով հայոց երկրորդ Արշակունու՝ Վաղարշակի որդի Արշակի (=Անանունի Արշակի որդի Արշակին)

61 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 390 և հաջ.։

թագավորության ավարտին, հայտարարում է, որ Մարաբայի մատյանը այստեղ վերջանում է. «Աստանօր սպառին բանք ծերունւոյն Մար Աբայ Կատինայ»[62], իսկ Ագաթանգեղոսին կամ նրա արձանագրությունը բնավ չի հիշատակում։

Ո՞րն է այդ հակասության լուծման բանալին։ Մեր կարծիքով այն կա Անանունի տվյալների մեջ. ըստ վերջինների, Մարաբայի գրչին պատկանող բուն տեքստը ավարտվել է առաջին հայ Արշակունի Արշակ Փոքրով (=Խորենացու Վաղարշակը), իսկ այնուհետև, թեև նույն Մարաբայի մատյանի շրջանակներում, եղել է, սակայն, մի ուրիշ տեքստ՝ Ագաթանգեղոսի արձանագրության պատճենը, այսինքն պարթևաց և հայոց արքայացանկերը, նորից սկսած առաջին պարթև և հայ Արշակունիներից։ Պրոկոպիոս Կեսարացու մոտ ևս այս բոլորը շարադրված են մեկ աղբյուրի՝ «Հայոց պատմության» շրջանակներում։ Արդ, ինչպե՞ս է վարվել Խորենացին, ունենալով ձեռքի տակ Մարաբայի մատյանը։ Նա սահմանազատել է Ագաթանգեղոսին Մարաբայից և վերջինիս հետ իր հաշիվները փակել Վաղարշակի որդի Արշակով։ Այստեղից, թերևս, պետք է եզրակացնել, որ Անանունի մոտ Մարաբայի սեփական շարադրանքի ավարտի տեղը միայն մոտավոր ճշտությամբ է նշված. երկրորդ հայ Արշակունու գործերի հիշատակումը զոհ է գնացել համառոտման։ Իրականում Մարաբայի շարադրանքը ավարտվելիս է եղել հենց նրանով[63]։

Որևէ հեղինակի երկում հիշատակված կամ մեջ բերված այլ հեղինակների առանձնացման ու որպես առանձին աղբյուր ներկայացման երևույթը խորթ չէ Խորենացուն։ Այսպես, օրինակ, նա Եվսեբիոս Կեսարացու մոտ իր հանդիպած Բերոսոսին, Աբյուդենոսին և Աղեքսանդր Բազմավեպին դիտել

62 Խորենացի, II, 9։

63 Ն. Ադոնցը ենթադրում է, որ այն ավարտվելիս է եղել նույնիսկ երրորդ հայ Արշակունի Արտաշեսով, և իրավամբ մտացածին է համարում այն կարծեցյալ հակասությունը, թե ինչպե՞ս Վաղարշակի օրոք ստեղծված գրքի մեջ կարող էր տեղ գտնել նրա որդի Արշակի թագավորության նկարագրությունը (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 100)։

է տալիս որպես իր անմիջական աղբյուրներ[64]։ Ներկա դեպքը նմանատիպ դեպքերից նրանով է տարբեր, որ այստեղ հեղինակը, առանձնացնելով Ագաթանգեղոսին և նրա արձանագրությունը Մարաբասից ու նրա մատյանից, ոչ թե առաջինին դիտել է տալիս որպես ինքնուրույն աղբյուր, այլ լռությամբ է մատնում նրան։ Աղբյուրի լռությամբ մատնելու այլ փաստեր կարելի է բերել Խորենացուց։ Այդպիսին է, օրինակ, «Հայոց պատմության» ողջ երրորդ գիրքը (աննշան բացառությամբ)։ Բայց երբեք սա առանց պատճառի չի լինում։ Երրորդ գրքի դեպքում պատճառն այն է, որ Խորենացին դիտելով իրեն որպես նկարագրվող իրադարձություններին ժամանակի առումով մոտ կանգնած անձնավորություն, հարկ չի համարում նշել այլ աղբյուրներ, մի բան, որ նա առատորեն անում է հին ժամանակների նկատմամբ։

Քննարկվող դեպքը ևս իր պատճառները կամ պատճառը ունեցած կլինի։ Մեր կարծիքով դա հետևյալն է. Ագաթանգեղոսն ու նրա արձանագրությունը Մարաբասի մատյանում ըստ երևույթին հիշատակված են եղել այնպես, որ տեղիք են տվել այդ արձանագրության հավելումը բուն մատյանին հետագայի գործ համարելու։ Այդ հանգամանքը կարող է հիմք տված լինել Խորենացուն մի քանի հարյուրամյակ դեպի պատմության խորքը տանել Մարաբասի անձնավորությունը և Տրդատ Մեծի թագավորությանը հաջորդած ժամանակներից (որոնց հետ Մարաբասն կապվում էր որպես Տրդատի քարտուղար Ագաթանգեղոսի արձանագրությունը պատճենավորող) հասցնել նրան Վաղարշակի ժամանակները։ Իսկ Ագաթանգեղոսին չհիշատակելու պատճառ կարող է հանդիսացած լինել այն հանգամանքը, որ Խորենացուն քաջ հայտնի Ագաթանգեղոսը[65], հայոց դարձի պատմիչը, արձանագրություն-

64 Խորենացի, I, 4։ Հմմտ. դեռևս V. Langlois, Etudes sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren, „Bulletin de l'Académie Impériale des Sciences de St-Petersbourg“. Tome III, 1861, էջ 546։

65 Խորենացի, II, 67, 74, 79, 80, 83, 86։

ների և արքայացանկերի նման ոչ մի բան չէր պարունակում։

Բայց հրաժարվելով Ագաթանգեղոսի անունը և նրա արձանագրությունը հիշատակելուց, Խորենացին, ինչպես ցույց են տալիս փաստերը, այսինքն իր իսկ արքայացանկերը, ամենևին չի մերժել արձանագրության «պատճենի» նյութը և դարձրել է այն իր երկրորդ գրքի շարադրանքի հիմք։ Սակայն վերը ասվածից հետևում է, որ այդ նյութը եղել է սոսկ արքայանունների թվարկություն՝ օժտված գահատարիների նշումներով, և չի պարունակել դրանց հետ կապված իրադարձությունների պատմություն։ Պատմական դեպքեր են եղել նկարագրված Մարաբասի մատյանի՝ արձանագրության պատճենին նախորդող էջերում՝ այն է պարթև և հայ առաջին Արշակունիների գործունեությունը։ Ըստ Գ. Աբգարյանի, այստեղ է եղել նաև Մամիկոնյանների ծագման մասին զրույցը, որը Անանունի մոտ թերթերի եռևառաջության խախտման հանգամանքով պոկվել է իր տեղից և ընկել խորթ միջավայր[66]։ Այս, ինչպես նաև սկզբնապես այնտեղ այլ նյութերի առկայությունը միանգամայն հնարավոր է։ Սակայն դրանք արձանագրության «պատճենի» հետ կապված չեն եղել։

Ի դեպ, այն փաստը, որ Խորենացին իր աղբյուրից սոսկ արքայանունների ցանկեր է ժառանգել և ոչ թե նրանցում հիշատակված թագավորների քիչ թե շատ ծավալուն պատմությունը, հավաստվում է նաև մշակման այն եղանակով, որ Խորենացին կիրառել է ցանկերի նկատմամբ, խախտելով տեղ-տեղ նրանց «ագաթանգեղյան» կարգը, տեղափոխություններ և ընդմիջարկումներ անելով, որը հավանաբար չէր լինի, եթե Խորենացին գործ ունեցած լիներ ամբողջական պատմության հետ։

Թե ինչպես, ինչ նյութերով է Խորենացին հայոց արքայացանկին կյանք, միս ու արյուն տվել, այդ հարցին կանդրադառնանք հաջորդ գլխում, իսկ այժմ մեր նպատակն է պարզել այն ուղիները, որոնցով արքայացանկերը հասել են Մարաբասին։

66 Գ. Աբգարյան, նշվ. աշխ., էջ 79։

4

Մեր հերթական առաջադրանքն է քննել արքայացանկերի անվանական կազմն առանձին անունների ծագման, տարածման, հայերի մեջ ներթափանցման և օգտագործման ժամանակի, մեր ցանկերի մեջ գրված դիրքի և այլ առումներով, որոնելով այնպիսի տվյալներ, որոնք կարող են օժանդակել մեր առջև կանգնած խնդրի լուծմանը։ Որպեսզի արքայացանկերի սկզբնօրինակների որևէ անուն դուրս չմնա, մենք հավասարապես կընդգրկենք նրանց երկու՝ և՛ Խորենացու, և՛ Անանունի տարբերակների մեջ պահպանված բոլոր անունները։ Սկսենք պարթևական արքայացանկից։

Արշակ: Պարթև Արշակունիների դինաստիայի հիմնադրի անձնական անունն է. այնուհետև դարձել է դինաստիայի բոլոր թագավորների տոհմանուն, որը նրանք կրում էին իրենց անձնական անուններին կից։ Սկզբնական շրջանում, մինչև մ. թ. I դարը, պարթև արքաները իրենց հատած դրամների վրա զետեղված արձանագրություններում հանդես էին գալիս միայն Արշակ տոհմանունով, առանց անձնանվան, մի բան, որ շատ դժվարացնում է նրանց տարբերումն ու թվագրումը[67]։ Βασιλέως βασιλέων ᾿Αρσάκου Εὐεργέτου Δικαίου ᾿Επιφανοῦς Φιλέλληνος — այսպես է ներկայանում իր դրամների վրա, օրինակ, պարթևական թագավոր Հրահատ Դ-ը (մ. թ. ա 37—2 թթ.)[68]։ Այս առումով հատկանշական է, որ մեր արքայացանկում Արշակ անունը ներկայացված է երեք անգամ. ուրեմն սրանցից երկու դեպքում, բացառյալ առաջին Արշակը, մենք գործ ունենք ոչ թե անձնական անունների, այլ տոհմանվան հետ, որովհետև Արշակունի դինաստիայում անձնական Արշակ անունով ուրիշ թագավոր գոյություն չի ունեցել։ Խորենացու արքայացանկը պարունակում է նաև չորրորդ Արշակին՝ Արշական[69] ածանցյալ ձևով, որ նշանակում է Արշա-

67 М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, էջ 15։

68 Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, Ա, Վիեննա, 1919, էջ 66։

69 Արշակների առատության վրա Խորենացու արքայացանկում ուշադրություն է դարձրել դեռևս Սեն-Մարտենը, նշելով, որ գործ ունենք տոհմ-

կունի, Արշակյան։ Արշակ անվանաձևը հայերը փոխառել են անմիջապես և հարազատորեն պարթևական անվանաձևից։

Արտաշէս: Այս անունը, ընդհանրապես, միանգամայն խորթ է պարթև Արշակունիներին, նրանցից ոչ մեկը այդպես չի կոչվել։ Պարսկական անուն է, որ կրել են Աքեմենյան դինաստիայի երեք ներկայացուցիչներ. Արտաքսերքս Ա (465—425), Արտաքսերքս Բ Մնեմոն (405—359), Արտաքսերքս Գ Օքոս (359—338)։ ᾿Αρταξέρξης — այդ անվան հունական ձևն է, որ ընդունված է գիտական գրականության մեջ։ Հայերենի մեջ այդ անունը շատ վաղ է մտել. առաջին հիշատակությունը Արտաշես Ա-ի (189—մոտ 160 թթ.) արամեերեն արձանագրություններում է։ Ա. Բորիսովը գտնում է, որ այստեղ հանդիպող 'RTḤŠSY գրությունը լրիվ համընկնում է հունական հեղինակների (Պոլիբիոս, Ստրաբոն) հաղորդած ᾿Αρταξίας ձևին[70]։ Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան այս անվանաձևի առթիվ գրում են. «Թեև այդ անունը իրանական ծագում ունի (համապատասխանում է «Արտաքսերքս» անվան) սակայն այն պարթևական չէ, ինչպես հետագայում հայկական նախարարական արիստոկրատիայի մեջ ընդունված շատ անուններ։ Հարցն այն է, որ հին իրանական *R̥taxšaϑ^{r}a-ն հյուսիս-արևմտյան իրանական լեզուներում (մարական և պարթևական) պետք է տա միջին իրանական շրջանում *Artaxšahr ձևը (որին և հանդիպում ենք Նիսայի պարթևագիր խեցիների վրա, պատմական 'RTḤŠTR գրությամբ) և միայն հին պարսկերեն լեզվում է, որ տալիս է Artaxšaça... Հենց այդ ձևից է օրինաչափորեն ծագում մեր արձանագրությունների (Արտաշես Ա-ի — Գ. Ս.) 'RTḤŠSY (կարդա Artaxšasī) ձևը և հին

անվան հետ. նա Արշակ անվան ածանցյալ ձևեր է տեսնում նաև Արշանակ և Արշաւիր անունների մեջ։ Տե՛ս M. J. Saint-Martin, Fragments d'une histoire des Arsacides, I, Paris, 1850, էջ 251։

70 А. Борисов, Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1946, № 2, էջ 100։

հայկական ավանդական «Արտաշես» ձևը»[71]։ Եթե «Արտաշես»-ը անմիջապես ծագում է աքեմենյան (ըստ երևույթին՝ ուշ աքեմենյան) շրջանի անվանաձևից, ապա մենք կարող ենք հաջորդ եզրակացությանը հանգել, որ այն թափանցել է հայերի մեջ որպես աքեմենյան արքայական անուն (մանավանդ, եթե հիշենք, որ Արտաքսերքս Բ Մնեմոնը համարվում էր Երվանդյանների նախնի[72]) և որպես այդպիսին էլ սկզբնապես պատվաստվել է հայկական օնոմաստիկային։

Արշանակ: Անանունի մոտ սրան համապատասխանում է **Աշնաշ**: Երկու անուններն էլ այլ աղբյուրներում չեն հիշատակվում, թերևս ինչ-որ մի անվան երկու աղավաղված ձևերն են, որոնք ստացվել են այդ անվան դժվարընթեռնելիության պատճառով. միգուցե պարզապես «Արշակ»-ի։

Արշէզ: Անանունի մոտ սրան համապատասխանում է **Արշէն**: Ճիշտ պետք է համարել ավելի շուտ **Արշէզ** ձևը, որը մի քանի անգամ կրկնվում է Խորենացու մոտ, այնինչ Արշէն-ը Անանունի մոտ միայն մեկ անգամ է հիշատակված, ուստի և նրա աղավաղված լինելու հավանականությունը ավելի է։ Հնարավոր է թերևս վերականգնել սկզբնական «Արշէս» ձևը, որն ունի Ստեփանոս Տարոնեցին՝ Անանունի ընդօրինակած հատվածում[73]. ս տառը գրությամբ կարող է շփոթվել թե ն-ի և թե զ-ի հետ։ Արշէզ անունը Հր. Աճառյանը[74] համեմատում է ῎Αρσης, ᾿Οάρσης[75] անվան հետ, որը կրել է Աքեմենյան թագավորներից մեկը (338—336)։ Եվսեբիոսի Քրոնիկոնի հայերեն թարգմանությունում այն՝ բնագրին հարազատ, տառադարձված է Արսէս[76]։ Այդպես էլ պիտի լիներ Խորենացու մոտ, եթե տառադարձված լիներ հունարենից։ Անվան հին պարսկական ձևն է Վարշա,

vr̥šā[77]։ Խորենացու ձևն իրենից պարսկականի և հունականի մի հիբրիդ է ներկայացնում, եթե հետևելու լինենք Հր. Աճառյանի համադրությանը։ Թերևս նման հիբրիդացումը հնարավոր էր, եթե անունը, թափանցելով հայկական միջավայր, նախ գրի առնվեր արամեական տառերով, իսկ այնուհետև միայն անցներ հունական դպրության մեջ, պահպանելով սակայն բանավոր ավանդությունում բառամիջի շ հնչյունը, որը և հետագայում՝ անունը հայերեն տառերով տառադարձելու ժամանակ, պետք է վերականգնվեր։ Ինքնըստինքյան նման ուղին կարող է դիտվել որպես սովորական որոշ իրանական անունների համար։ Այդ է ակնարկում նաև հաջորդ քննարկվող անունը։

Արշավիր անունը միանգամայն խորթ է Արշակունիներին։ Ինչպես նշում է Հր. Աճառյանը, Աստվածաշնչի հայերեն թարգմանությունում Արշավիր անունը դրված է եբրայական Axašvēroš անվան տեղ. «Յամին առաջներորդի Դարեհի որդւոյ Արշաւրայ» (Դան., IX, 1)[78]։ Axašvēroš-ը հին պարսկական Xšayāršā անվան եբրայական ձևն է, իսկ նրա հունական ձևն է Ξέρξης, Քսերքսես, որը և ընդունված է գիտական գրականության մեջ։ Այսպիսով, Xšayāršā-ն, Axašvēroš-ի միջնորդությամբ, հայկական հողի վրա դարձել է Արշավիր, որը նույնպես ծագումով պարսկական անուն է (թեև ստուգաբանորեն Xšayāršā-ից միանգամայն տարբեր), բայց որը պարսից մեջ ամենևին չի հանդիպում, իսկ հայերի մեջ՝ բազմիցս[79]։ Axašvēroš անունը հաղորդվել է Սեպտուագինտին ᾿Ασσουήρος ձևով։ Հարց է ծագում. արդյոք Աստվածաշնչի թարգմանի՞չն է ընտրել Արշավիր անունը որպես համահնչյուն՝ հայերի մեջ բացակայող անվանը փոխարինելու համար, թե՞ այդ նույնացումը գոյություն է ունեցել թարգմանչից անկախ և նրանից առաջ, և վերջինս միայն հետևել է ընդունված ավան-

[71] И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армении, ВДИ, 1955, № 2, 169 և հաջ.։

[72] Տե՛ս վերը, էջ 30։

[73] Տե՛ս «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 12։

[74] Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 298։

[75] Diod., XVII, 5, Plut., Alex., II, 3 և ուրիշ.։

[76] Եւսեբի Պամփիլեայ..., Բ, էջ 222։

[77] М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, էջ 104, F. Justi, Iranisches Namenbuch. Marburg, 1885, էջ 231։

[78] Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 296։

[79] F. Justi, էջ 30։

դությանը։ Երկրորդ ենթադրության օգտին է վկայում Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի հայերեն թարգմանության հետևյալ հատվածը. «Առ սովաւ,— նշում է Եվսեբիոսը Աքեմենյան Արտաքսերքս (հայերենում՝ Արտաշէս) Բ-ի անվան դիմաց,— թուի լեալ Եսթերայ պատմութիւնն, որ ի հրէից պատմի. եթէ նոյն իցէ՝ որ յեբրայեցւոց Արշաւիրն անուանի եւ ըստ եօթանասնից թարգմանութեանն Արտաշէս կոչի»[80]։ Հայտնի է, որ Եսթերի եբրայեցերեն գրքի Axašvēroš-ը (որ միանգամայն այլ անձնավորություն է, քան վերոհիշյալ նրա անվանակիցը) Սեպտուագինտում թյուրիմացաբար Ἀρταξέρξης է դարձել, որից և հայերեն թարգմանության մեջ՝ Արտաշէս։ Եվսեբիոսը հենց այդ թյուրիմացության վրա է հենվում Եսթերի պատմությունը տվյալ Արտաշէսին կցելով։ Այդ մեզ սակայն այժմ չի հետաքրքրում։ Կարևորն այն է, որ հայ թարգմանիչը այստեղ ևս պարզորոշ կերպով նույնացնում է Axašvēroš անունը Արշավիր անվան հետ։ Եթե երկու թարգմանիչներ (իրարից անկա՞խ) կատարում են նույն գործողությունը, ապա այստեղ դժվար է պատահական զուգադիպում տեսնել։ Ինքը երևույթը շատ կենսական է և հաճախ հանդիպում է նաև մեր օրերում. որևէ անուն, թափանցելով օտար միջավայր, փոխարինվում է այդ միջավայրին ծանոթ մի այլ անվամբ, ըստ հնչման նմանության։ Այսպես, Մկրտիչը ռուսական միջավայրում դառնում է Նիկիտա (օրինակ՝ Մկրտիչ-Նիկիտա Էմին)։

Ե՞րբ կարող է տեղի ունեցած լինել տվյալ փոխարինումը։ Հնարավոր է, իհարկե, որ հենց V դարում։ Սակայն փորձենք մոտենալ սույն խնդրին մի այլ կողմից։ Դարեհի որդի Քսերքսեսը բավական հռչակված է եղել իր ժամանակվա աշխարհում և հատկապես Աքեմենյան տերության մեջ. նրա անունը պիտի թափանցեր տերության բոլոր անկյունները և, ի թիվս այլոց, հայկական միջավայր։ Որ այդ իսկապես տեղի է ունեցել, վկայում է այն հանգամանքը, որ Տոփքի թագավորը, Արշամաշա-

80 Եւսեբի Պամփիլեայ..., Բ, էջ 216։

տում նստած Քսերքսեսը՝ Անտիոքոս Գ-ի ժամանակակից, կրել է այդ անունը[81]։

Այդ անվան՝ հայկական միջավայրը թափանցելու ուղին վերականգնելիս, չպետք է մոռանալ, որ նույն Axašvēroš — ’ḤŠWRŠ[82], ինչպես որ սկզբնապես, առանց ձայնավորների, գրանցվել է եբրայական Աստվածաշնչում, շատ մոտիկ պիտի լինի իր հնչմամբ և գրանցմամբ արամեական այն (դժբախտաբար մեզ պակասող) ձևին, որով իր ժամանակ այդ անունը պիտի գար Հայաստան, քանի որ արամեերենը, ինչպես հայտնի է, Աքեմենյան տերության գրասենյակային ու գործնական լեզուն էր։ Ուստի և նրա փոխարինումը Արշավիր անունով, որի մասին մենք տեղեկանում ենք հինգերորդ դարում (այսինքն իսկույնեթ, հենց որ հայատառ գրականությունը թույլ է տալիս), կարող է և ավելի վաղ տեղի ունեցած լինել։

Դարեհ անունը ևս չկա պարթև արքաների մեջ հայտնի անվանացանկում (միայն մի արքայազն՝ մ. թ. 30-ական թթ.) և շատ բնորոշ է Աքեմենյանների համար. Դարեհ Ա (522—486), Աքեմենյանների դինաստիայի նոր ճյուղի հիմնադիր, Դարեհ Բ (424—405), Դարեհ Գ (336—330)՝ վերջին Աքեմենյանը։ Անվան հին պարսկական ձևն է Dārayava(h)u-, հունական տառադարձությամբ՝ Δαρεῖος։ Հայկական Դարեհ ձևը Ա. Փերիխանյանի կարծիքով ծագած պիտի լինի միջին մարերեն *Daraḥ ձևից, ուրեմն նախապարթևական ժամանակին է վերաբերվում[83]։ Հայկական անվանաձևի խորթությունը

81 Polyb., XXV, 2, 12։ Մի ժամանակ բանասերները, փնտրելով Xšayārša անունը հայկական միջավայրում, կանգ էին առել Շավարշ անվան վրա, սակայն պարզվեց, որ Շավարշը համապատասխանում է պարսկական Syāwaršan-ին, ինչպես Շավասպը՝ Syāwāspa-ին։ Տես F. Justi, էջ 299 և հաջ.։ Ինչ վերաբերում է հայ հին գրականության մեջ հանդիպող Քսերքսես ձևին, ապա դա զուտ մատենագրական փոխառություն է հունարենից։

82 Veteris testamenti concordantiae hebraicae atque chaldicae, Solomon Mandelkern, Jerusalem (Tel Aviv), 1955, s. v.

83 А. Г. Периханян, Арамейская надпись из Зангезура, ՊԲՀ, 1965, № 4, էջ 118 և հաջ.։

հունականին ընդգծվում է և այն հանգամանքով, որ Դարեհի անվանը հաճախ ուղեկցող հայրանունը V դարի հայերենում «Վշտասպայ» էր (ուղիղ ձևը՝ *Վիշտասպ> Վշտասպ), որ ծագում է անմիջականորեն հին պարսկական Wištāspa-ից, մինչդեռ հունական տառադարձությունն է Հյուստասպես (’Υστάσπης)։

Պերոզ անունը հայտնի չէ պարթև Արշակունիների միջև։ Այդպես էր անվանվում Սասանյան արքաներից մեկը (457—484), իսկ նրանից առաջ, IV դարում, Շապուհ Բ-ի եղբայրը։ Անունը, ինչպես ճիշտ նշում է Խորենացին՝ պարսկերեն նշանակում է «հաղթող»։ Նույնը հիշատակում է և Ամմիանոս Մարկելլինոսը (victor)[84]։ Թերևս, ինչպես մտածել է տալիս Խորենացին, այն կարող է լինել և որևէ պարթև թագավորի պատվանուն։ Ըստ դրամների Νικάτωρ—«հաղթող» պատվանունն է կրել, օրինակ, Արտավան Բ-ը (մ. թ. ա. 128—123 թթ.)։ Գոտարզ արքան (մ. թ. 40—50 թթ.) կրել է Νικηφόρος (Նորից «հաղթող») — պատվանունը[85]։ Մեր ենթադրության օգտին է խոսում կարծես այն հանգամանքը, որ պարսկական ու արաբական գրականության մեջ հանդիպող պարթև թագավորների արքայացանկի որոշ տարբերակներում կա Փիրուզ կամ Փիրուզան անունով թագավոր։

Վաղարշ. I—III դարերի պարթև Արշակունիներից հինգի անունը։ Անվան բազմիցս հանդիպող հունական և լատինական Οὐολόγαισος, ’Ολαγέσης, Vologaesus և այլ տարատեսակներով տառադարձությունը և սորական wlgš տառադարձությունը համընկնում են պարթևական անվանաձևի հետ, որը արամեատառ գրանցված է դրամների վրա՝ Walgašē malkā[86]։ Հայկական Valarš ձևի առնչությունը պարթևական ձևի հետ պարզ չէ։ Ցուստին այն նույնիսկ ուրիշ անուն է համարում, որով հայերը փոխարինել են Walgaš-ը[87]։ Հետաքրքրա-

[84] F. Justi, էջ 247։

[85] Հ. Տաշյան, Արշակունի դրամներ, Ա, էջ 37 և 97։

[86] F. Justi, էջ 344։

[87] Անդ, էջ 346։

կան է Գառնիի նորագյուտ, մ. թ. II—III դարերին պատկանող արամեերեն արձանագրության մեջ հանդիպող wlgs գրությունը, որը փաստորեն արամեատառ արտահայտված հունա-լատինական ձևն է ցուցադրում[88]։

Արտաւան. պարթևական հինգ թագավորների անուն, որոնց թվում և Արշակունի դինաստիայի վերջին թագավորի՝ Արտավան Ե-ի (213—226)։ Հայկական Արտաւան ձևը որոշակի նմանություն է դրսևորում հունա-լատինական տառադարձություններին՝ ’Αρτάβανος, Artabanus, որոշ տարբերակներով, որոնց հիմքում ընկած է պարթևական ձևը։ Պարսիկ պահլավերենի մեջ գործածվում Ardavān ձևը[89]։

Պարթևական արքայացանկի անունների այս տեսությունը թույլ է տալիս որոշ հետևություններ անել նրա կազմի մասին։ Կազմը միատարր չէ։ Այստեղ հանդիպում ենք անունների մի խմբի, որն աչքի է ընկնում ոչ միայն իր խորթությամբ պարթև Արշակունիների իրական անվանացանկին, այլև նրանով, որ հարազատ է մի այլ դինաստիայի՝ Աքեմենյանների անվանացանկին։ Անունների այս խումբն է՝ Արտաշես, Դարեհ, Արշաւիր, Արշէզ։ Եթե արդարանան վերջին երկու անուններին վերը տրված պարզաբանումները, ապա կարելի կլինի արձանագրել, որ առկա անունները սպառում են Աքեմենյան դինաստիայի Դարեհյան ճյուղի անվանական կազմը։

Սակայն թվարկված անունները իրենց՝ Աքեմենյանների արքայացանկին պատկանելությամբ չէ միայն, որ աչքի են ընկնում, այլ հետաքրքրական են նաև նրանով, որ հայկական միջավայր են մտել դեռևս հին ժամանակներից։ Դարեհ անվանաձևը ցույց է տալիս, որ այն ներմուծվել է նախապարթևական շրջանում, իսկ Արտաշէսի դեպքում, անվանաձևից բացի, այդ մասին վկայում են Արտաշես Ա-ի արամեական

[88] А. Периханян, Арамейская надпись из Гарни, ՊԲՀ, 1964, № 3, էջ 137։

[89] И. М. Оранский, Введение в иранскую филологию, М., 1960, էջ 181։

արձանագրությունները։ Նույնը, թեև պակաս համոզվածությամբ, կարելի է նշել նաև Արշավիր ու Արշէզ անունների կապակցությամբ։

Սրան կարելի է ավելացնել նաև այն հետևությունը, որ վերոհիշյալ անունները իրանական միջավայրից Հայաստան են թափանցել որպես թագավորական անուններ, այսինքն, որ նրանց ներմուծման անմիջական դրդապատճառը եղել է այն հանգամանքը, որ դրանք կրել են Աքեմենյան թագավորները։ Վերը այդ նշվեց Արտաշես և մասամբ Արշավիր անունների կապակցությամբ, բայց նույնը վերաբերվում է նաև մյուսներին, հատկապես Դարեհ անվանաձևին, որը, մտնելով հայկական միջավայր, ըստ երևույթին չի էլ օգտագործվել որպես անձնանուն[90], այլ պահպանվել է միմիայն որպես Դարեհ Վշտասպյանի անունը։

Քննենք այժմ նույն կարգով հայոց թագավորների ցանկի անունների կազմը, չկրկնելով սակայն այն տեղեկությունները, որոնք բերվեցին պարթևական ցանկի պարունակած նույն անունների կապակցությամբ։

Վաղարշակ. Անանունի մոտ սրան համապատասխանում է **Արշակ**։ Սրանց համապատասխանության խնդրի մանրամասն քննարկումը մեզ շատ հեռու կտաներ։ Բավարարվում ենք կրկնելով, որ արքայացանկերի սկզբնօրինակն սկսված պիտի լինի Արշակով, որ պարզ երևում է Պրոկոպիոս Կեսարացու համապատասխան վկայությունից[91]։ Բացառված չէ, որ առաջին հայոց Արշակունիները պարթև Արշակունիների նման կրել են Արշակ տոհմանունը[92]։

---

90 Ուստի և այն բացակայում է Հր. Աճառյանի Հայոց անձնանունների բառարանում. ներկայացված է միայն, այն էլ մեկ անգամ, Դարա անվանաձևը, որն արդեն Սասանյան շրջանի փոխառություն է (Հայոց անձնանունների բառարան, Բ, էջ 20)։

91 De aedificiis, III, 1, Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 36 և հաջ.։

92 Անդ, էջ 127 և հաջ.։

Արտաշէս. բնորոշ է Արշակունիներին Հայաստանում նախորդած դինաստիայի համար։ Այս անունով երեք թագավոր է հայտնի՝ Արտաշես Ա (189—մոտ. 160 մ. թ. ա.), Արտաշես Բ (30—20 մ. թ. ա.), Զենոն-Արտաշես (18—34 մ. թ.)։ Վերջին հայ Արշակունին ևս կրել է այդ անունը (422—428), մի գուցե նրա սասանյան «Արտաշիր» անվանաձևով[93]։

Տիգրան. հայերի մեջ օգտագործվում է սկսած հնագույն ժամանակներից, համենայն դեպս մ. թ. ա. VI դարից[94]։ Հայ Արշակունիներին, ինչպես և, ի դեպ, պարթև Արշակունիներին այն միանգամայն խորթ է եղել։ Խիստ բնորոշ է Արտաշիսյանների համար, որոնց մեջ հանդիպում է բազմիցս։ Ըստ Հ. Մանանդյանի, արքայացանկի մեջ հանդես եկող Տիրան անունը ևս պետք է տվյալ դեպքում Տիգրան կարդալ[95]։

Արտաւազդ. հայ Արշակունիների համար խորթ անուն։ Մ. թ. III դարի կեսերին Հայաստանում թագավորած Արտավազդն ամենայն հավանականությամբ Արշակունի չի եղել[96]։ Արտաշիսյան դինաստիայում այդ անունով երեք թագավոր է եղել։

Արտաւան (հիշատակվում է միայն Անանունի տարբերակում). խորթ է ինչպես հայ Արշակունիներին, այնպես էլ Արտաշիսյաններին։ Վերջերս հայտնաբերվել է մի բրոնզե դրամ, որը հրատարակիչը աներկբայելիորեն Ծոփքի թագավորության դրամների շարքն է դասում, ընդգծելով նրա համակողմանի նմանությունը Ծոփքի թագավոր Քսերքսեսի նախկինում հայտնի դրամներին։ Արդ, այդ դրամի արձանագրությունը, որ թերի է պահպանված, կարդացվում է որպես ΒΑΣΙΛΕΩΣ [...]ΑΒΑΝΟΥ[97]։ Այդպիսի -αβανος կամ -αβανης վերջավորություն ունեցող այլ անուն, քան Ἀρταβανος/ης, հայտնի

---

93 Խորենացի, III, 58։

94 Xen.. Inst. Cyri, III. 1, 14, Խորենացի, I, 22։

95 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Ա, էջ 135, 302, 303։

96 Անդ, Բ, էջ 93։

97 G. Le Rider, Monnaies grecques acquises par le Cabinet des médailles en 1959, „Revue numismatique“, 1959—1960, էջ 23։

չէ։ Ի դեպ, այդ անունը թեև շատ գործածական է եղել պարթև Արշակունիների միջև, սակայն բնորոշ պարթևական չէ։ Եղել են այդ անունը կրող, մի քանի ամիս թագավորած, Աքեմենյան թագավոր՝ Քսերքսես Ա-ի հաջորդը[98] և այլ անձինք։ Վերոհիշյալ դրամի հրատարակիչը նշում է նաև, որ Արտաւան անունը, առկա լինելով հայ թագավորների արքայացանկում (նկատի ունի քննության առարկա արքայացանկը), կարող է վերականգնվել այդ դրամի վրա[99]։

Արշավիր (հիշատակվում է միայն Անանունի տարբերակում). ինչպես և նախորդը, չկա հայ Արշակունիների և Արտաշիսյանների միջև։ Եթե հաշվի առնենք վերը ասվածը այդ անվան և Xšayāršā-Քսերքսես անվան համապատասխանության մասին, ապա պետք է նորից հիշատակել Ծոփքի թագավոր Քսերքսեսին, որը նստած էր Արշամաշատ քաղաքում և ամուսնացած Անտիոքոս Գ Մեծի քրոջը, որի ձեռքով էլ սպանվեց[100]։ Սրանից պահպանվել են դրամներ Βασιλέως Ξέρξου արձանագրությամբ[101]։

Արշամ. հին պարսկական անուն՝ Aršāma[102]. Նախորդ երկուսի նման խորթ է հայ Արշակունիներին և Արտաշիսյաններին։ Հայտնի են Ծոփքի թագավոր Արշամի դրամները Βασιλέως ᾿Αρσάμου արձանագրությամբ[103]։ Այս Արշամը հետազոտողների կողմից նույնացվում է Arsabes հայոց թագավորի հետ, որը մ. թ. ա. 230-ական թվականներին հյուրընկալել է Սելևկյան գահի հավակնորդ Անտիոքոս Հիերաքսին[104] և հիմնադրել Արշամաշատ քաղաքը։ Հայտնի է նաև կոմմագենյան Երվանդյանների շարքում հիշատակված մի ᾿Αρσάμης թագավոր[105], Կոմմագենեում գտնվող երկու ᾿Αρσαμεία քաղաք-

98 Եսեբի Պամփիլեայ․․, Բ, էջ 208։
99 G. Le Rider, նշվ. աշխ., էջ 24։
100 Polyb., VIII, 25, Joh. Ant., fr. 53.
101 E. Babelon, նշվ. աշխ.։
102 F. Justi, էջ 29։
103 E. Babelon, նշվ. աշխ.։
104 Polyaeni Strategem., IV, 17.
105 K. Humann und O. Puchstein, նշվ. աշխ., էջ 309։

ների հիմնադիրը, որն ապրել է նույնպես մ. թ. ա. III դարի երկրորդ կեսում։ Գ. Տիրացյանի կարծիքով այդ երկուսը միևնույն անձնավորությունն են, որը և եղել է Կոմմագենե-Ծոփք միացյալ թագավորության միապետ[106]։

Արշամ անվան ներկայությունը հայոց անվանացանկում վաղուց ի վեր թյուրիմացություն են համարում, կապելով ցանկում նրան հաջորդող Աբգարի Ուխխամա՝ «Սև» մականվան սխալ ըմբռնման հետ՝ որպես Աբգարի հայրանուն «Արշամայ»։ Թյուրիմացությունը իսկապես տեղի է ունեցել, դա մի փաստ է, որ հավաստվում է Լաբուբնայի հայերեն թարգմանության մեջ «Աբգար Արշամայ» գրության առկայությամբ, բնագրի «Ուխխամա»-ի փոխարեն[107]։ Մեր կարծիքով, սակայն, այդ թյուրիմացությունը հնարավոր է դարձել միմիայն այն պատճառով, որ նախապես հայոց արքայացանկում առկա է եղել Արշամ անունը։

Աբգար. Ուռհայի (Եդեսիայի) ասորական իշխանության տերերի միջև շատ ընդունված անուն։ Աբգարներից մեկի հետ կապված է Քրիստոսի հետ նամակագրություն ունենալու և հրաշքով հիվանդությունից փրկվելու ու քրիստոնեություն ընդունելու ավանդությունը։ Այդ ավանդությունը հայկական հողի հետ կապելու ձգտման հետևանքով Աբգարը հայացվել է։

Սանատրուկ անունը ընդունված էր և՛ պարթև, և հայ Արշակունիների մոտ։ Այդ անունն է կրել երկրորդ հայ Արշակունին (մոտ. 80—110 թթ.)[108]։

Երվանդ. խորթ լինելով հայ Արշակունի և Արտաշիսյան դինաստիաներին, նախաարտաշիսյան շրջանում Հայաստանում իշխող դինաստիայի ամենաբնորոշ անունն է, որով և ամբողջ տոհմը կոչվել է Երվանդյան։ Նեմրուդ լեռան արձանագրություններից և այլ աղբյուրներից հայտնի են մի շարք

106 Г. Тирацян, Страна Коммагена и Армения, «Տեղեկագիր», 1956, № 3, էջ 74.
107 Լաբուբնեայ դիւանագիր դպրի Եդեսիոյ Թուղթ Աբգարու, Վենետիկ, 1868, էջ 4։
108 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Բ, մասն Ա, էջ 14։

Երվանդներ, որոնցից մեկը, որ Հայաստանի աքեմենյան սատրապն էր և ամուսնացած էր Արտաքսերքս Բ Մնեմոնի դստեր հետ, կառավարել է V—IV դարերի եզրին, երկրորդը, որ արդեն Հայաստանի թագավոր էր, իշխել է Ալեքսանդր Մակեդոնացու օրով, երրորդը, որ դինաստիայի հայաստանյան ճյուղի վերջին ներկայացուցիչն է, իշխել է մ. թ. ա. III դարի վերջերին—II դարի սկզբներին[109]։ Սրանից գահը խլել է Արտաշես Ա-ը, որը, սակայն, իր ծննդաբանության մեջ պահպանել է RWNDKN «Երվանդական» հորջորջումը։ Երվանդյանները շարունակել են թագավորել Կոմմագենեում։

Տիրան. *IV դարի հայ Արշակունի թագավորի անուն։ Տե՛ս նաև վերը, Տիգրան անվան տակ։*

Վաղարշ *անունը կրել են երկու հայ Արշակունի թագավորներ՝ Վաղարշ Ա (117—մոտ. 140) և Վաղարշ Բ (II դարի վերջ— III դարի սկիզբ)։*

Խոսրով *անունը կրել են մի շարք հայ Արշակունիներ, որոնցից առաջինը իշխել է մ. թ. III դարի սկզբներին։*

Հայոց արքայացանկը, ինչպես համոզվում ենք, իր բազմատարրությամբ հետ չի մնում նախորդ, պարթևական արքայացանկից և նույնիսկ գերազանցում է նրան։ Նախ և առաջ նրանից, որպես ոչ-Արշակունի, անջատվում են Արտաշես, Տիգրան, Արտաւազդ անունները, որոնք պատկանում են Արշակունիներին նախորդող՝ Արտաշես Ա-ի կողմից հիմնադրված դինաստիային։ Այնուհետև առանձնանում է այս դինաստիային նախորդած իշխողների հետ կապված Երուանդ անունը։ Սրա տոհմին բնորոշ է եղել մեր արքայացանկում տեղ գտած Արշամ անունը[110]։ Անանունի տարբերակը տալիս է և Արշաւիր ու Արտաւան, որոնց մեջ նշմարելի են Ծոփքի դինաստիայի (Երվանդյան տոհմի մի ճյո՞ւղ) թագավորների պատկերները։

109 Տե՛ս Գ. Տիրացյան, Երվանդունիները Հայաստանում, «Տեղեկագիր», 1958, № 6, էջ 61 և հաջ.։

110 Հմմտ. J. Marquart, նշվ. աշխ., էջ 655։

Ավելացնելով սրանց վրա նախորդ արքայացանկում պարունակվող Աքեմենյաններին, սկսած Դարեհից, մենք տեսնում ենք, որ հայկական պատմական ավանդությունը պահպանել է հնագույն արքայացանկերի ամբողջ մի փունջ, որը մեսրոպատառ գրականության մեջ հանդես է գալիս Արշակունիների անվան տակ քողարկված։

Մենք իրավունք ունենք պնդելու, որ այդ արքայացանկերի դարերի ընթացքում պահպանումը պատահականության հետևանք կամ սոսկ գրական հաջորդականության մի երևույթ լինել չէր կարող։ Մանավանդ օտար իշխողների անվանաշարքերի պահպանման հանգամանքը անպայման պետք է կապված լինի տեղում, հին Հայաստանի կյանքում էական դեր խաղացած որևէ երևույթին կամ հիմնարկությանը նրանց ունեցած առնչության հետ. նրանք չէին պահպանվի, եթե չունենային այդ տեղական երևույթին, հիմնարկությանը ծառայելու, սպասարկելու ֆունկցիան և դրանով իսկ անհրաժեշտ չդառնային։

5

Մեր տեսադաշտում կա միայն մի այնպիսի երևույթ կամ հիմնարկություն, որի շնորհիվ ամբողջ այդ նյութը կարող էր հարատևել։ Դա նախորդ գլխում հետազոտված թագավորական դինաստիայի պաշտամունքն է, որը, ինչպես ջանացել ենք ցույց տալ, գոյություն է ունեցել Հայաստանում, սկսած մ. թ. ա. II դարի առաջին կեսից մինչև, հավանաբար, քրիստոնեության հաստատումը Հայաստանում, և ապրել է զարգացման մի շարք փուլեր։

Մովսես Խորենացին հաղորդում է, որ հայոց թագավորները հատուկ մեհյաններ էին կառուցում, ուր զետեղում էին իրենց աստվածների պատկերները և իրենց նախնիների կուռքերը, պաշտում դրանց ու զոհեր մատուցում։ Հայկական մի շարք այլ նյութեր, ինչպես և Հայաստանի հարևան հելլենիստական երկրների վառ օրինակները, ցույց են տալիս, որ Խո-

րենացու այս հաղորդումները միանգամայն ճշմարտացի են[111]։ Հարց է ծագում, թե ովքե՞ր էին պաշտամունքի առարկա դարձած այդ նախնիները։ Նախորդ գլխում մենք մոտավորապես բնութագրեցինք նրանց կազմը, հենվելով Նեմրուդ լեռան արձանագրությունների և այլ նյութերի վրա։ Ըստ այդ արձանագրությունների, Երվանդյանները իրենց սերված էին համարում Աքեմենյաններից, ավելի ճշգրիտ՝ Աքեմենյանների Դարեհյան ճյուղից (Դարեհը նրանց առաջին նախնին էր)։ Հայոց թագավոր Արտաշես Ա-ը, որ պայքարից հետո փոխարինել էր գահի վրա վերջին Երվանդին, այսուհանդերձ, իրեն «Երվանդական» էր համարում, ինչպես մի քանի անգամ նշել ենք։ Այսպիսով՝ Աքեմենյաններ, Երվանդյաններ և Արտաշեսի սերունդը՝ Արտաշիսյաններ։ Այնուհետև գալիս են Արշակունիները, որոնք ինչպես երևում է նախորդ գլխում քննարկված նյութերից, հետ չեն կանգնում դինաստիայի պաշտամունքից, շարունակում են հետևել այդ սովորությանը[112]։ Նրանց նախնիներն են պարթև Արշակունիները։ Ահա և պարթև ու հայ Արշակունիներ։ Մենք ստանում ենք իսկ և իսկ այն պատկերը, որ պարունակում են քննարկված արքայացանկերը, և դժվար է այս երկու երևույթները չկամրջել, հեռու պահել իրարից։ Ավելորդ է ասել, որ ոչ մի առարկություն չի կարող առաջացնել Ծոփքի դինաստիայի ներկայացուցիչների այդ հավելումը նկարագրված փնջին, որին մի գուցե հիմք են տալիս Անանունի տարբերակի տվյալները։

Այսպիսով մեր տրամադրության տակ կա արքայացանկերի զարգացման շղթայի երկու օղակ՝ սկզբնականը և վերջնականը։ Դրանց միջև եղած օղակները մեզ հայտնի չեն, բայց կարելի է վերականգնել՝ հենվելով կողմնակի տվյալների վրա։

111 Տե՛ս սույն աշխատության առաջին գլուխը։

112 Տե՛ս վերը, էջ 59 և հաջ.։

Քանի որ դինաստիական պաշտամունքին նվիրված Հայաստանի սրբավայրերից ու մեհյաններից ոչ մեկը դեռևս չի հայտնաբերված ու պեղված, մենք ստիպված ենք որպես ելակետ ընդունել Կոմմագենեի սրբատեղիները, հատկապես Նեմրուդ լեռան մեհյանը, հուսալով, որ մեր համապատասխան տաճարները շատ չպետք է տարբերվեին հարևան, նաև հարազատ այդ երկրի տաճարներից. այդ հույսի համար ամուր պատվանդան են Խորենացու նկարագրությունները։

Արդ, Նեմրուդ լեռան մեհյանում շարքերով տեղադրված են սալեր, որոնցից յուրաքանչյուրը կրում է նախնիներից մեկի բարձրաքանդակ պատկերը և համապատասխան արձանագրություն, որի մեջ հիշատակված է այդ նախնու անունը և հաճախ կոչումն ու հայրանունը։ Հասկանալի է, որ սրանց հետ մեկտեղ տաճարներում գոյություն պիտի ունենային նախնիների ցուցակները, ինչպես և նրանց հետ կապված այլ գրանցումներ, թեկուզ հենց գործնական նպատակով արված. այն է, թե ե՞րբ (տարվա ո՞ր օրերին) և ինչպիսի՞ զոհաբերություններ պիտի մատուցվեին տվյալ նախնուն այն զոհասեղանների վրա, որոնցից մեկական կանգնեցված է յուրաքանչյուր սալի դիմաց[113], ովքե՞ր էին տվյալ նախնու կամ նախնիների մի ենթախմբի պաշտամունքն իրականացնող քրմերը և այլն։

Վերը հիշատակվեց մի արձանագրություն, որտեղ հականե-հանվանե թվարկված են Սելևկյան մի շարք թագավորներ ու նրանց պաշտամունքը սպասարկող քրմերը։ Հետաքրքրական է նշել, որ պարթև և հայ թագավորների ցանկը պարունակող՝ այսպես կոչված Կեղծ Ագաթանգեղոսի արձանագրությունը, ըստ Անանունի, գրված է եղել «հանդէպ-դրան արքունական տաճարի» գտնվող վեմի վրա, և այն հայտնաբերել են հենց տաճարը պեղելու առիթով[114]։

113 Հմմտ. Խորենացու այն հաղորդումը, թե Բագարանում «զբագնաց յօրինեալ է զկազմութիւն» (II, 40)։

114 Տե՛ս վերը, էջ 103։

Քանի որ թագավորական դինաստիայի պաշտամունքը շարունակվել է Հայաստանում մի քանի դարերի ընթացքում, հասկանալի է, որ մեհյանների դիվաններում պետք է կուտակվեին նմանօրինակ մեծաքանակ հին ու նոր գրանցումներ՝ ինչպես գործնական, այնպես էլ հանդիսավոր բնույթ կրող նպատակների համար, ըստ որում, իհարկե, ոչ միայն վիմագիր, այլև մագաղաթագիր։ Դինաստիայի պաշտամունքը Հայաստանում հասել էր ընդհուպ քրիստոնեության հաստատման նախօրեին, միգուցե և մնացորդաբար հարատևել որոշ ժամանակ ևս։ Ճիշտ է, Ագաթանգեղոսից տեղեկանում ենք, որ բոլոր հեթանոսական տաճարները կործանվել ու հիմնահատակ քանդվել են IV դարի սկզբներին, սակայն այս հաղորդումներին պիտի մոտենալ որոշակի վերապահությամբ, որին մղում է մեզ Դարանաղյաց Անիի սրբատեղիի օրինակը, ինչպես և Գառնիի հեթանոսական տաճարի պահպանման փաստը[115]։

Հասկանալի է, որ այս բոլորի մեջ կարևորագույն տեղերից մեկը պատկանում է լեզվի խնդրին։ Դժբախտաբար առկա սուղ տվյալները թույլ չեն տալիս այն պատշաճորեն լուսաբանել, հաստատապես որևէ բան ասել այն մասին, թե ո՛ր լեզվի հետ գործ ունենք այս բնագավառում։ Նախնական արամեերենին, որը Հայաստանը ժառանգել էր Աքեմենյաններից, որպես գործնական ու պետական լեզու, շուտով համաուղեկից դարձավ հունարենը։ Վերջինս, իհարկե, թափանցել էր և կրոնի ասպարեզը՝ հունական կրոնի որոշ տարրերի հետ միասին։ Այդ են վկայում հայոց պանթեոնի աստվածների ու աստվածուհիների հունական կրկնանունները, սակայն մեր արքայացանկի անվանաձևերը թույլ չեն տալիս համակերպվել այն մտքին, թե մեսրոպատառ գրականությունը դրանք ստացել է անմիջականորեն հունարենից, որովհետև նրանք չափազանց տարբեր են համապատասխան անունների հունական անվանաձևերից, որում մենք համոզվեցինք վերն արված

115 Տե՛ս ստորև, էջ 240։

տեսության ժամանակ։ Վերջինը նկատել է դեռ Ա. Գուտշմիդը[116]։ Առկա անվանաձևերն իրենց շեշտված ու որպես օրենք անխառն հայկական ձևավորմամբ, հատկապես օտար անունները, թույլ չեն տալիս հաշվելու նաև այն ենթադրության հետ, թե նրանց պահպանումը և հարատևումը կարող էր սոսկ բանավոր, ինչքան էլ որ այն ուժեղ պատկերացնենք, ավանդույթի հետ կապված լինել, և ակնարկում են հայկական գրավոր ավանդույթի գոյությունը։ Ուրիշ խոսքով, նրանք թերևս մի նոր հիմք են տալիս խոսելու նախամեսրոպյան գրավոր հայերենի մասին, թեկուզ և խիստ սահմանափակված՝ քրմության միջավայրով ու տաճարների սահմաններով։

Ինչևիցէ. մեհենական դիվանների այդ նյութը եկել հասել է մեսրոպատառ գրականությանը։ Մեր արքայացանկերը, սակայն, ցույց են տալիս, նախ, որ այդ նյութերի տվյալները ոչ թե սոսկ արտագրվել են, այլ մշակվել ու խմբագրվել են, և երկրորդ, որ բացի դրանցից, արքայացանկերի կազմությանը ծառայել են և այլ աղբյուրներ, որոնց մի մասը կարելի է որոշել։

Այսպես, հայոց արքայացանկի համար նյութ է ծառայել նաև Աբգարի զրույցը՝ իր հայկական տարբերակով, որը դրդել է Աբգար անունը մտցնել հայոց թագավորների ցանկի մեջ։ Պարթևական արքայացանկի համար լրացուցիչ նյութ են տվել, ամենայն հավանականությամբ, Արտավան-Արտաշիրյան զրույցի հայկական տարբերակները, որոնցից վերցվել են արքայացանկը եզրափակող Վաղարշ ու Արտավան անունները։ Այս եզրակացությանն է բերում մեզ հենց այն հանգամանքը, որ պարթևների վերը քննված պարսկա-արաբական արքայացանկում ևս հանդես են գալիս այդ երկու թագավորները, ուստի և հիմք կա ընդհանուր աղբյուր փնտրելու, և այդ աղբյուրի դերը հենց պատշաճում է Իրանում և Հայաստանում տարածում գտած վիպական այդ ցիկլին։ Ցիկլը, ինչ-

116 Տե՛ս A. Gutschmid, նշվ. աշխ., հայերեն թարգմանություն, էջ 213։

պես հիշատակված է վերը, համապատասխան տեղում[117], հայ մատենագրության մեջ ներկայացված է նախ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, ապա և Ագաթանգեղոսի «Պատմության» հունարեն տարբերակի առաջաբանում։

Այսպիսով, եթե հիշյալ երկու անուններն անջատենք արքայացանկի պարունակած իրական պարթևական անուններից, ապա այնտեղ փաստորեն մնում է միայն «Արշակ» անունը, ճիշտ է, երեք կամ չորս անգամ կրկնված։ Պետք է ասել, որ մեզ համար այստեղ անսպասելի ոչինչ չկա։ Ընդհակառակը, հենց պետք էր ենթադրել, որ պարթև Արշակունիների նախնական ցանկը կպարունակի բոլոր թագավորների համար՝ «Արշակ» անունը, և այդ անվան մի քանի անգամ կրկնվելը դրա մնացորդը պիտի համարել։ Սրանով էլ հավանաբար պայմանավորված է եղել Աքեմենյանների արքայացանկի՝ Արշակունիների ցանկի վրա դյուրությամբ շերտավորվելու հանգամանքը։ Պետք է կարծել, սակայն, որ նախնական ցանկի Արշակները տարբերվել են իրարից ինչ-որ հատկանիշներով։ Այդ հատկանիշը ըստ երևույթին յուրաքանչյուրի մյուսից տարբեր գահատարիների քանակությունն է եղել[118]։ Թերևս մեր արքայացանկերը կազմողի ձեռքի տակ, բացի հիշատակվածներից, ուրիշ նյութեր էլ են եղել, որոնք նա հաշվի է առել։ Բայց ամենից կարևորը և հետևանքներով հարուստը եղել է նրա այն ընդհանուր պատկերացումը, ըստ որի հայոց թագավորները Հայկյան տոհմի ավարտվելուց հետո միմիայն Ար-

117 Տե՛ս վերը, էջ 95։

118 Պարթևական արքայացանկի ժամանակագրական խնդիրներին մասամբ անդրադարձել ենք նախորդ աշխատության մեջ (տե՛ս Մ. Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 38 և հաջ.)։ Հ. Մարկվարտը (նշվ. աշխ., էջ 646 և հաջ.) և Հ. Տաշյանը (Արշակունի դրամներ, մաս Բ, էջ 374) փորձել են, յուրաքանչյուրն իր ձևով, վերականգնել ցանկերի ժամանակագրությունը պատմականին մոտ։ Այդ փորձերից ավելի համոզիչ է թվում Հ. Տաշյանի փորձը, որը մեծ չափով հենվել է Մովսես Խորենացու տվյալների վրա, մինչդեռ Մարկվարտը, մի կողմ դնելով սրանք, որպես աղավաղված, իր ուշադրությունը սևեռել է միմիայն Անանունի տվյալների վրա։

շակունի տոհմին են պատկանել։ Այս տեսանկյունով էլ նա մշակել է իր ունեցած նյութերը։

Ե՞րբ է տեղի ունեցել այդ մշակումը և արքայացանկերի ձևավորումը։ Կազմողի «պանարշակունիական» կոնցեպցիան և մի շարք այլ հանգամանքներ ստիպում են մեզ հրաժարվել վաղ թվագրությունից, և, որքան հնարավոր է, սեղմվել V դարին, երբ բացարձակորեն իշխում էր այդ կոնցեպցիան։ Ուրեմն կարևոր է որոշել terminus post quem non։ Որպես այդպիսին մեզ կարող է բնականաբար ծառայել Մարաբասի մատյանի ստեղծման ժամանակը, այսինքն ամենաուշը IV դարի վերջերը։ Այսպես է որոշում Մարաբասի ժամանակը Հ. Մանանդյանը՝ հենվելով նրա, որպես «Մծուրնացի» բնութագրման վրա, որն անշուշտ շատ շոշափելի հիմք է Մարաբասի կյանքի թվագրման հարցում[119]։ Պետք է ասել, որ հենց ինքը Մարաբասն ըստ ամենայնի հարմար թեկնածու է արքայացանկերի կազմողի ու խմբագրողի դերում պատկերանալու համար։ Ազգով ասորի, ինչպես ցույց է տալիս նրա անունը, ուրեմն և իր մայրենի լեզվին գիտակ, մծուրնացի, ուրեմն ըստ էության հայ ու հայոց լեզվի ու մշակույթի մեջ հմուտ, վերջապես հունարեն մատյանի հեղինակ[120], ուրեմն և քաջ հունագետ։ Նա ունի բոլոր հատկությունները դիտվելու համար որպես մեհենական դիվանների հետախույզ։ Վերջապես նրա «պանարշակունիական» կոնցեպցիան, որը ելակետ է հանդիսացել Խորենացու և Անանունի համանման կոնցեպցիաների և Պրոկոպիոս Կեսարացու հիշատակված երկի համապատասխան հատվածի մասի համար։

Սակայն իրեն՝ Մարաբասի ցուցումը, եթե հավատալու լինենք Անանունին, որպես միջնորդի, հղում է մեզ դեպի դա-

119 Я. А. Манандян, Начальная история Армении Мар Абаса, էջ 74 և հաջ.։

120 Հմմտ. Н. Адонц, նշվ. աշխ., էջ 96, Я. А. Манандян, նշվ. աշխ., էջ 73։ Այդ մասին է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ Պրոկոպիոս Կեսարացին օգտվել է Մարաբասի մատյանից։

բասկիզբը, արքայացանկերի հեղինակությունը վերագրելով Տրդատ Ա-ի քարտուղար Ագաթանգեղոսին, իսկ նրանց աղբյուրը՝ արքայական դիվանին։ Վերջին կետը ինքնըստինքյան խոչընդոտ չի հարուցում, որովհետև իմանալով ժամանակի արքունի դիվանների բնույթը, թեկուզ պարթև արքաների դիվանի օրինակով[121], բնական պիտի համարենք այնտեղ բազմաթիվ տեղերից և, իհարկե, գործել դադարած մեհյանների դիվաններից ժողոված նյութի առկայությունը։ Անհամեմատ ավելի դժվար է Ագաթանգեղոսի անձնավորության խնդիրը։

Ագաթանգեղոսը և իր արձանագրությունը, ինչպես ասվեց վերը, խիստ թերահավատության առարկա են եղել հայ բանասիրության մեջ, սակայն սրա կողքին ունենք նաև ավելի ուշ շրջանում Ն. Ակինյանի հայտնած կարծիքը։ Երկու Ագաթանգեղոսներից՝ արձանագրության հեղինակից և Գրիգոր Լուսավորիչի վարքի հեղինակից, Ն. Ակինյանը առանց տատանվելու իրական է համարում առաջինին։ Արձանագրության «վերնագրին մեջ,— ասում է նա,— մեն մի բառ (թերևս յուր համառոտագրության մեջ) ունի հարազատության ամեն մի կնիք» և դրա «ցայտուն նշանակ է», ի միջի այլոց, ***«գրիչ» բառը*** (γραφεύς)[122]***։ Բայց իզուր կլիներ փնտրել Ագա-*** *թանգեղոսի ակնարկած ցանկերը Սեբեոսի (այսինքն Անանունի—Գ. Ս.) մոտ. նրանք այնտեղ «հայտնապես խանգարված են», սակայն այս վիճակում էլ պահպանում են պատմական որոշ արժեք*[123]*։*

Մեր կարծիքով ևս, եթե անգամ Ն. Ակինյանի նման ընդունենք Ագաթանգեղոսին իբրև պատմական անձնավորություն, ապա արքայացանկերը իրենց ներկա վիճակում չի

121 *Տե՛ս վերը, էջ 91։*

122 *Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, հատ. Բ, Վիեննա, 1924, 5. Սեբեոս եպիսկոպոս Բագրատունյաց և յուր Պատմութիւնն ի Հերակղ, էջ 84 և հաջ.։*

123 *Անդ, էջ 94 և հաջ.։*

կարելի վերագրել նրան։ Դրան խանգարում է թեկուզ Աբգարի առկայությունը հայոց արքայացանկում, որը դեռ բացատրելի է, եթե խոսքը Մարաբասի մասին է, բայց անառնչելի է Ագաթանգեղոսի անվանը։ Ելքը թերևս այն ենթադրության մեջ է, որ ակնարկված մշակումն ու խմբագրությունը միանվագ չի կատարվել, այլ երկու (կամ ավելի՞) փուլերով, և որ դրան մասնակցել են թե՛ Ագաթանգեղոսը (նախնական փուլ, որի ընթացքում առեղծվել է արքայացանկերի առաղձը), և թե՛ Մարաբասը (վերջնական փուլ, որի ժամանակ նրանք ստացել են մեզ հայտնի իրենց նկարագիրը)։ Մարաբասն իր հերթին ամբողջ գործը վերագրել է Ագաթանգեղոսին[124]*։ Ի դեպ արքայացանկերի տարբերակների գոյության փաստը խոսում է նրանց աստիճանաբար կազմվելու ճանապարհի օգտին։*

* * *

Այս գլխի սկզբում մենք նշեցինք այն կիրառական նշանակությունը, որն ունի արքայացանկերի ծագման բացահայ-

124 *Իհարկե, այս նկարագրությունը սոսկ մի սխեմա է, որն արտահայտում է կատարվածի ավելի շուտ ուղղությունը և ընդհանուր բովանդակությունը, քան կենդանի պատկերը։ Հնարավոր է, որ արքայացանկերի մշակմանը մասնակցել են այլ անձինք, որոնց անունները մեզ անհայտ են մնում։ Ինչ վերաբերում է Մարաբասին, ապա բացառված չէ, որ նրան կարելի է վերագրել նաև Անանունի արքայացանկի մեջ տեղ գտած՝ Տրդատից մինչև Պապ հատվածի անունների (բայց ոչ թվերի, որոնք շատ ավելի ուշ շրջանի ազդեցության հետքեր են կրում. տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 80) հավելումը (հմմտ.* Н. Марр., *նշվ. աշխ., էջ 293 և հաջ., որտեղ հեղինակը տեղավորում է Մարաբասի մատյանը IV դարի վերջերում—V դարի սկզբներում, ելնելով Անանունի արքայացանկում հենց Պապ թագավորի (368—374) հիշատակումից)։ Այդ դեպքում պետք է ենթադրել, սակայն, որ սկզբնական տեքստում ինչ-որ նշում է եղել, մոտավորապես «և սրանցից հետո թագավորեցին» իմաստով, որով հավելումը բաժանվել է «պատճենից»։*

տումը հայ ժողովրդի հին պատմության շարադրման համար։ Այստեղ կանգ առնենք խնդրի մի այլ կողմի վրա։

Գիտության մեջ ստեղծվել է Խորենացու կամ վաղ միջնադարյան այլ մատենագիրների՝ հնագույն կամ հին շրջանին վերաբերվող հաղորդումների հետազոտման որոշակի մի մեթոդիկա։ Այդ մեթոդիկայի հիմքն է կազմում հիշյալ հաղորդումների համեմատությունը համապատասխան երևույթների ու իրադարձությունների մասին սեպագիր աղբյուրների, անտիկ պատմագրության կամ իրերին ժամանակակից օտարալեզու արձանագրությունների տված տեղեկությունների հետ, նրանց միջև եղած նմանությունների վերհանման նպատակով։ Քանի որ հենց սկզբից բացառվում է այդ հին կոթողների՝ մեր մատենագիրներին աղբյուր ծառայած լինելու հանգամանքը, ապա վերհանված նմանությունները իրավացիորեն դիտվում են որպես էական փաստարկ՝ հօգուտ այն բանի, որ մեր մատենագիրները ինչ-որ ձևով, ինչ-որ ուղիով, արժեքավոր տեղեկություններ են ստացել հին շրջանի մասին։ Այդ «ձևն» ու «ուղին», սակայն, զարմանալիորեն չի հետաքրքրել հետազոտողներին և կամ հետաքրքրել է աննշան չափով։

Անբավարար գտնելով նման դեպքերում արվող՝ «ժողովրդական բանահյուսության» վկայակոչումը, որը կարող է տեղին համարվել միայն որոշ դեպքերում (երբ հաղորդումը կրում է ժողովրդական ստեղծագործության կնիքը), մենք տվյալ գլխում հայ մատենագիրների հաղորդումների համեմատությունը հին աղբյուրների տվյալների հետ, ինչպես և ի հայտ եկող նմանությունը, դարձրինք քննության ոչ թե նպատակ, այլ ելակետ՝ ջանալով գտնել այդ նմանության արմատները։ Նյութի քննությունը բերեց հասցրեց մեզ հեթանոսական շրջանի մեհենական դիվաններին, որպես մի ուղու կամ հունի, որով հին ժամանակի մասին տեղեկությունները հասել են դեպի մեսրոպատառ մատենագրությունը, մի կամրջի, որով կապակցվում են, մի կողմից հին, մյուս կողմից՝ միջնադարյան (բայց երկու դեպքում էլ՝ հայ, տեղական) **գրավոր** պատմական ավանդությունները։ Թե տեղեկությունների ինչպիսի՛

պանգված է հասել այս հունով, բացի մեր քննած արքայացանկերից, այդ դեռ ապագա հետազոտության առարկա է. մեր կարծիքով այն բավական մեծ պիտի լինի։

Սակայն մեր վաղ միջնադարյան մատենագրության մեջ ներկայացված հին շրջանի նյութը այնքան է լայնածավալ ու բազմազան, որ մտածել է տալիս ոչ թե մի, այլ մի շարք այդպիսի ուղիների ու կամուրջների մասին (որոնց թվում իր պատշաճ տեղն է գրավում, իհարկե, նաև ժողովրդի բանավոր հիշողությունը)։ Այդ ուղիները ևս կարոտ են բացահայտման։

Սխալ կլիներ կարծել, թե այս խնդիրը կարևոր է միայն ու միայն Մովսես Խորենացու երկի ու նաև մի քանի այլ պատմագիրների երկերի առումով։ Այն վերաբերում է ամբողջ վաղ միջնադարյան հայերեն մատենագրությանը իր բոլոր՝ թե՛ պատմական, թե՛ փիլիսոփայական, թե՛ աստվածաբանական, թե՛ գիտական և թե՛ այլ ժանրերով։ Այն անմիջականորեն վերաբերում է նաև վաղ թարգմանական գրականությանը, որը պարունակում է նախորդ շրջանի հայ մշակույթի չափազանց հարուստ շերտ։ Այդ շերտը ի հայտ է գալիս այն տերմինների, հասկացությունների ու անունների մեջ, որոնք հայ թարգմանիչները չեն ընդօրինակել ու սոսկ տառադարձել թարգմանվող երկերից, այլ որոնց համար նրանց տրամադրության տակ եղել են հայկական միջավայրում նախապես ստեղծված կամ ընդունված տերմիններ, հասկացություններ, անուններ, որոնք կատարելապես հայաձև են կամ այդպիսին են դարձել նախորդող դարերի ընթացքում։ Դրանք արժանի են խորն ու մանրակրկիտ **կոմպլեքսային** ուսումնասիրման, որը նկատելի չափով կլրացնի մեր պատկերացումները հին հայկական քաղաքակրթության մասին։

Մենք խոսք բացեցինք հատկապես թարգմանական գրականության մասին, որովհետև այն հին պատմական ավանդույթը որն արտահայտվել է մեր քննած արքայացանկերի մեջ, իր մի այլ, նույնպես շատ հետաքրքրական, դրսևորումն է գտել նաև V դարի թարգմանական գրականության մեջ, մասնավորապես նրա այնպիսի կոթողների, ինչպիսիք են

Աստվածաշունչը ու Եվսեբիոսի «Քրոնիկոն»-ը։ Սրանց բնագրերում Աքեմենյան թագավորների անունները հանդես են եկել բնականաբար իրենց հունական անվանաձևերով։ Արդ, հայ թարգմանիչները, ունենալով Աքեմենյանների անունների մի մասի համար (հենց այն մասի, որը հանդես է գալիս մեր արքայացանկում, այսինքն՝ Դարեհյան ճյուղի) դարերի ընթացքում մշակված հայկական համարժեքները (Դարեհ, Արտաշես, Արշավիր), հունական անվանաձևերը (Դարեյոս, Արտաքսերքսես, Ասուերոս) փոխարինել են այդ հայկական ձևերով։ Մյուս դեպքերում, երբ համարժեքները բացակայել են, ապա թարգմանիչները ստիպված ընդօրինակել են հունական ձևերը՝ Կյուրոս, Կամբիսես, Քսերքսես[125], տալով սոսկ նրանց հայերեն տառադարձումը[126]։

---

125 Նաև Արսէս։ Արշէզ անվանաձևը (Արսէս անունը կա միայն «Քրոնիկոնում») թարգմանիչը ինչ-ինչ պատճառներով գործի չի դրել, թերևս անծանոթ լինելով նրան։

126 Կիւրոս (Եւսեբի Պամփիլեայ... Ա, էջ 45, 61 և ուրիշ, Բ. էջ 196, Ա. Եզր., Ա, 58 և ուրիշ, Բ. Եզր., Ա, 1 և ուրիշ), Կամբիսէս (Եւսեբի Պամփիլեայ..., Ա, էջ 45, 105 և ուրիշ, Բ, էջ 200, 202, 337), Քսերքսէս (Եւսեբի Պամփիլեայ..., Ա, էջ 104, 220, Բ, էջ 107, 109), Արսէս (Եւսեբի Պամփիլեայ..., Ա, էջ 105, 197 և ուրիշ, Բ, էջ 222)։ Ըստ Գր. Խալաթյանցի վերը հիշատակված կարծիքի (էջ 86, ծան. 13) արքայացանկը կազմողը պարզապես քաղել է անունները Աստվածաշնչի ու «Քրոնիկոնի» հայերեն թարգմանություններից։ Խնդրի լուծման հեշտագույն ճանապարհ, եթե միայն հարց չտրվի, թե ինչո՞ւ քաղվել են միմիայն հայաձև անունները։ Ակներևաբար իրերն այստեղ գլխիվայր են ներկայացված։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՈՂՅՈՒՄՊ ՔՈՒՐՄ, ԳՐՈՂ ՄԵՀԵՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

1

Մ. թ. ա. III դարում Հայաստանում իշխել է Երվանդյան տոհմը, որի վերջին ներկայացուցիչ Երվանդը (մ. թ. ա. III—II դարերի եզր) գահընկեց է արվել հայ մեծատոհմիկ, Սելևկյանների ստրատեգոս (սատրապ) Արտաշեսի կողմից։ Արտաշեսը տիրացել է գահին և հիմնել նրա անունով գիտության մեջ «Արտաշիսյան» անվանումը ստացած դինաստիան։ Արտաշիսյանների ժամանակաշրջանը (մ. թ. ա. II—I դարեր) համընկել է հայկական պետության վերելքի ու ծաղկման շրջանի հետ, որով և հայ ժողովրդի պատմության ամենահետաքրքիր և կարևոր հատվածներից մեկն է հանդիսանում։ Սակայն, եթե այդ շրջանի երկրորդ մասը, սկսած Տիգրան Բ-ի գահակալումից (մ. թ. ա. 95), համեմատաբար լավ է արտացոլված (թեկուզ և միակողմանի՝ գրեթե միայն քաղաքական պատմության առումով) աղբյուրների, հատկապես հունահռոմեական պատմագրության մեջ, այն պատճառով, որ Հայաստանն այդ ժամանակ սերտ առնչության մեջ է եղել հռոմեական իրականության հետ, ապա նրա առաջին մասը՝ III—II դարերը, մնում է գրեթե մթության մեջ, իսկ եղած մի քանի կցկտուր տեղեկությունները հազիվհազ թույլ են տալիս ուրվագծել դարաշրջանի ամենաընդհանուր պատկերը և Արտաշես Ա-ի հուժկու կերպարանքը։

Երվանդյանները և Արտաշիսյանները, ինչպես տեսանք, իրենց արտացոլումն են գտել Խորենացու աշխատությունում, ըստ որում այդ արտացոլումը գալիս է հին ու հավաստի վավերական աղբյուրներից։ Բայց այդ բոլորը չէ։ Չէ՞ որ Խորենացին այդ թագավորների կապակցությամբ առատ ու բազմերանգ, երկրի արտաքին հարաբերություններին և նամանավանդ ներքին կյանքին վերաբերող պատմական նյութ է առաջարկում։ Պատմական իրականությունը վերականգնելու համար այդ նյութը որքանո՞վ է հավաստի ու պիտանի։

Հայագիտության մեջ վաղուց ի վեր կարծիքներ են հայտնվել, որ թեև Երվանդյան ու Արտաշիսյան դինաստիաների ներկայացուցիչները Խորենացու մոտ հանդես են գալիս ժամանակագրական առումով խիստ տեղաշարժված վիճակում, այնուամենայնիվ նրանց հետ առնչվող պատմություններում պատմական ճշմարտություն կա. այդ ուղղությամբ մասնավորապես ակնարկներ են եղել հենց Երվանդ-Արտաշես դրվագի կապակցությամբ[1]։ Սակայն հստակորեն այդ մասին առաջին անգամ արտահայտվել է Հ. Մանանդյանը 1930 թվականին հրատարակած իր գրքում[2]։ Այնուհետև նա հանգամանորեն անդրադարձել է այդ խնդրին իր «Քննական պատմության» էջերում։ «Միանգամայն բնական ու հասկանալի է,— գրել է Մանանդյանը,— որ Արտաշեսյան այդ շրջանի պատմական մեծ անցքերը նյութ են դառել վիպական հին երգերի ու ավանդությունների, որոնցից օգտվել է Մովսես Խորենացին»[3]։ «Զրույցների և երգերի մեջ, ըստ երևույթին, պատմվում էին Արտաշեսի այն պատերազմները, որոնց միջոցով նա վերջ էր դրել Երվանդյանների իշխանությանը...»[4]։ Հիշատակելով Ստրաբոնի մոտ հանդես եկող Օրոնտեսին՝ Երվանդյան վերջին թագավորին, Հ. Մանանդյանը գտնում է, որ սա հենց այն Երվանդն է, որին հիշատակում է Խորենացին, շփոթելով նրան «Եդեսիայի Աբգար է թագավորի որդու՝ Արբանդեսի հետ[5], որը ժամանակակից էր Տրայանոս կայսեր (98—117 մեր թվ. հ.)»[6]։

«Այսպիսով,—շարունակում է Հ. Մանանդյանը,— անտես առնելով Խորենացու վերոհիշյալ վկայությունների մեջ ժամանակագրական նրա սխալ կռահումները՝ կարող ենք ենթադրել, որ Երվանդաշատը, հավանորեն, հիմնել է III դարի վերջում կամ II դարի սկզբում մ. թ. ա. Արտաշես Ա-ի նախորդը, Օրոնտաս-Երվանդը, որի մասին պատմական ստույգ տեղեկություններ պահպանվել են Ստրաբոնի և Խորենացու մոտ»։ Եվ վերջապես՝ «Խորենացու պատմության մեջ, ինչպես նորերս պարզվեց, պահված են պատմական կարևոր հիշողություններ նաև Արտաշես Ա-ի պետական ու կուլտուրական գործունեության մասին»[7], գրում է Հ. Մանանդյանը Խորենացու մոտ հիշատակված սահմանաքարերի և Սևանի ափին գտնված Արտաշեսին պատկանող արամեերեն արձանագրությունների կապակցությամբ։

Այս մեջբերումներից, բացի Խորենացու հաղորդումներին տրված գնահատականից, պարզվում է նաև Հ. Մանանդյանի կարծիքը Խորենացուն հասնելու դրանց ուղիների մասին, որոնք են ժողովրդական բանավոր երգերն ու ավանդությունները։

Սակայն երկու տարի անց՝ 1946 թ. հրատարակված իր նոր աշխատության մեջ, Հ. Մանանդյանը, ըստ երևույթին անբավարար համարելով այս բացատրությունը, նոր տեսակետ է առաջ քաշում։ Դրդապատճառն է Արմավիրյան հունարեն արձանագրություններին տված նրա նոր լուսաբանությունը, որի մեջ մեծ դեր է հատկացված Խորենացու հաղորդած տեղեկություններին։ «Ինչպես հայտնի է,— գրում է Հ. Մանան-

[1] Հմմտ. J. Marquart, նշվ. աշխ., ZDMG, 1895, № 49, էջ 656։

[2] Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н. э.), Ереван, 1930, էջ 97.

[3] Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Ա, էջ 124։

[4] Անդ, էջ 126։

[5] Տե՛ս ստորև, էջ 178 և հաջ.։

[6] Հ. Մանանդյան, նշվ. աշխ., Ա, էջ 127։

[7] Անդ, էջ 128։

դյանը,— Երվանդի և Արտաշեսի պատմությունը և նրանց ժամանակաշրջանի անցքերը շարադրելիս՝ Խորենացին, ինչպես ինքն է հայտնում, օգտվել է ուրիշ աղբյուրների թվում նաև Հանիի Ուղյուպ կամ Ողյումպ քրմի մեհենական պատմությունից... Գիտնականների մեծագույն մասը կարծում են մինչև այժմ, որ ինչպես Հանիի տաճարի քրմի անձնավորությունը, նույնպես և նրան վերագրված պատմությունը շինծու տեղեկություններ են և իրեն Խորենացու հերյուրանքներն են»: Հ. Մանանդյանը, հակադրվելով այս կարծիքին, գտնում է, որ «... միանգամայն հնարավոր է, որ Ողյումպ քրմի մեհենական պատմությունը կարող էր Խորենացուն ծառայած լինել, ինչպես այդ վկայում է ինքը՝ պատմահայրը: Այս խնդիրը, ինչպես տեսնում ենք, պետք է վերանայվի...»[8]:

Հ. Մանանդյանի այս հարցադրումը միանգամայն ճիշտ և տեղին է: Հետզհետե ի հայտ եկող նորանոր նյութերը և նրանց հարազատությունը Խորենացու հաղորդածին բոլորովին անհնարին են դարձնում այն ենթադրությունը, թե նա Արտաշեսի պատմությունն անելիս հենվել է միմիայն ժողովրդի հիշողության վրա:

Սակայն խնդիրը կարոտ է քննության: Մենք չենք դադարի զարմանալուց այդ հարազատության վրա ու առեղծվածային համարելուց այն, չենք դադարի Խորենացու տվյալների օգտագործումը «հավանաբար», «ըստ երևույթին» և այլ նման արտահայտություններով ներածելուց, քանի դեռ բացահայտված չեն նրանց ակունքները և այն ուղիները, որոնցով դրանք հարյուրամյակների միջով հասել են Խորենացուն: Բայց առկա պարագաներում, երբ մենք ոչինչ չգիտենք նախաքրիստոնեական Հայաստանում գոյություն ունեցած գրականության մասին, Խորենացու մեզ հետաքրքրող հաղորդումների ակունքը գտնելու ամենահուսալի և գրեթե միակ միջոցն է մնում Խորենացու իսկ համապատասխան հատվածի հետևո-

8 Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, էջ 30 և հաջ.:

ղական ու մանրակրկիտ հետազոտությունը, որի նպատակը կլինի զատել նրանից ժամանակագրական տեղաշարժման արդյունք հանդիսացող հավելումները և Խորենացուն ծառայած այլևայլ օժանդակ աղբյուրների ներդրումները, և այդ միջոցով հնարավորին չափ հավաստիությամբ ի հայտ բերել նրա հիմնական աղբյուրը՝ իր նախնական ծավալով, բովանդակությամբ, բնույթով և ուղղվածությամբ հանդերձ: Նման աշխատանքից հետո արդեն անհամեմատ ավելի դյուրին կլինի դատել այդ աղբյուրի ծագման մասին:

Հենց այս նպատակադրումն ունի մեր աշխատության ներկա գլուխը:

Առաջին խնդիրն է, ինչպես այդ երևում է Հ. Մանանդյանի վերը մեջ բերված նկատառումներից, սահմանագծել այն դերը, որ խաղում է Խորենացու այս պատմության մեջ ժողովրդական բանահյուսությունը:

Բարեբախտաբար այդ խնդրի վրա շատ հանգամանորեն կանգ է առել ժողովրդական բանահյուսության խոշորագույն գիտակ Մ. Աբեղյանը[9]: Հակադրվելով Գր. Խալաթյանցին[10], որը գրեթե զրոյի էր հասցնում ժողովրդական բանահյուսության դերը Խորենացու «Հայոց պատմության» մեջ, և մասնավորապես Արտաշեսի մասին վիպական երգերի բառացի մեջբերումներն իսկ հայտարարում այս ու այն մատենագրական երկերից դուրս կորզած բառերի ու մոտիվների արհեստական խառնուրդ[11], Մ. Աբեղյանը փայլուն կերպով վեր է հանել Խորենացու կողմից որպես ժողովրդական ներկայացվող դրվագների իրական ժողովրդական բնույթը: Արտաշեսի մասին հաղորդածից Մ. Աբեղյանը զատել է այն, ինչ որ իսկապես առասպելական բնույթ ունի և ցույց տվել, որ դա կազ-

9 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 283—379:

10 Տես Н. Марр, К критике истории Армении Моисея Хоренского, „Византийский временник", V, 1898, որտեղ քննադատված են Գր. Խալաթյանցի հետազոտական մեթոդները:

11 Г. Халатянц, Армянский эпос, ч. I, էջ 208—213, ч. II, էջ 52—72:

մում է մի ամբողջական ու վերջավորված վիպական ցիկլ։ Մ. Աբեղյանն ուսումնասիրել է այդ ցիկլի մի կողմից պատմական-կենցաղային, մյուս կողմից՝ առասպելական հիմքերը։

Սակայն Մ. Աբեղյանը մտադրություն ու նպատակ չի ունեցել զբաղվելու այդ զատումից հետո մնացած նյութի զանգվածով, որի մասին և տեղեկացնում է ընթերցողին։ Մեր նպատակն է, ընդհակառակը, հենց այդ «մնացած» նյութի հետազոտությունը։ Նպատակների այդ տարբերությունից դրդված, մենք ստիպված կլինենք նորից անդրադառնալ ժողովրդական բանահյուսությանը վերաբերող տարրերի սահմանազատման գործին, հենվելով իհարկե նաև Մ. Աբեղյանի աշխատանքի վրա։

2

Երվանդի և Արտաշեսի պատմությանը նվիրված են Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի գլուխներից քսանչորսը՝ 37-րդից մինչև 60-րդը։ Ամբողջ այս հատվածը աղբյուրագիտական առումով հստակորեն բաժանվում է երկու մասի։ Սահմանն անցնում է Երվանդի դեմ մղած պայքարի ավարտման և Արտաշատի շինության մասին հաղորդումների միջև։ Ավարտելով այդ պայքարի պատմությունը Երվանդի եղբայր Երվազի սպանության դրվագով, Խորենացին գլխի վերջում գրում է. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմպ քուրմ Հանւոյ, գրող մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում և Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգք վիպասանաց»[12]։

Մինչ այդ կետը Խորենացու շարադրանքը հոսում է գրեթե առանց աղբյուրների վկայակոչումների (մեկ անգամ հիշատակվում են «զրոյցք»՝ Երվանդի ծննդյան հանգամանքների կապակցությամբ, և երկու անգամ մեջ է գալիս «ասեն»-ը, որոնց մասին ստորև)։ Վերոհիշյալ սահմանակետից հետո վի-

12 Խորենացի, II, 48։

ճակը կատարելապես փոխվում է[13]. շարադրանքը բազմիցս ընդմիջվում է վիպասանքի և առասպելների վկայակոչումներով և վիպասանքից առանձին նախադասությունների ու ամբողջ հատվածների բառացի մեջբերումներով։ Պարզ է դառնում, որ այս մասում Խորենացին, իր խոստման համաձայն, մեծ չափով օգտագործել է ժողովրդական բանահյուսությունը, ձեռքի տակ ունենալով մի կապակցված ու մանրամասն ավանդություն, որպիսին նա չի ունեցել առաջին մասի համար։

49-րդ գլխի սկզբում, նախքան երկրորդ մասի բուն շարադրանքն սկսելը և վերը մեջ բերված խոստումից անմիջապես հետո, Խորենացին տալիս է այդ ավանդության հակիրճ (կոնսպեկտիվ) բովանդակությունը, որը հետագայում նրան որպես յուրատեսակ «ծրագիր» է ծառայում։ Ելնելով այդ «ծրագրի» կարևորությունից, մենք մեջ ենք բերում այն ամբողջությամբ։

«Արտաշիսի վերջնոյ գործք,— դիմում է Խորենացին իր մեկենասին,— բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան — շինել զքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանս, և ծնունդք զարմիցն, և իբր տրփանք Սաթինկան ընդ Վիշապազունսն՝ առասպելաբար, այս ինքն ընդ զարմս Աժդահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտովն Մասեաց. մարտ ընդ նոսա և քայքայումն յիշխանութենէն, և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն, և նախանձ որդւոցն Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս ի ձեռն կանանցն։ Այս ամենայն, որպէս ասացաք, յայտնի են քեզ յերգս վիպասանացն. բայց յիշատակեսցուք և մեք կարճառօտիւք, և զայլաբանութիւնն ճշմարտեսցուք»[14]։

Սա «կոնսպեկտն» է, «ծրագիրը» այն ավանդության, որը Խորենացին այժմ շարադրելու է ավելի հանգամանորեն և բառացի մեջբերումներով։ Սակայն նրա շարադրանքն այդ ավանդության շրջանակներով չի սահմանափակվելու։ Ինչ-

13 Հմմտ. Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 285 և հաջ.։

14 Խորենացի, II, 49։

պես ասված է նախորդ գլխի վերջում, «երգք վիպասանաց»-ը բերվում է նրա մոտ սոսկ ի լրումն և ի հաստատումն Ողյումպ քուրմի թողած պատմության։ Այժմ տեսնենք, կետ առ կետ հետևելով «ծրագրին», թե ինչ ձևով է օգտագործում Խորենացին «երգք վիպասանաց»-ը։

«...շինել զքաղաքն». Խորենացին անմիջապես անցնում է Արտաշատի հիմնադրման պատմությանը, որին և նվիրված է գլխի մնացած մասը։

«....խնամութիւն ընդ Ալանս». Խորենացին հաջորդ գլխում պատմում է ալանների հարձակման մասին Հայաստանի վրա և բառացիորեն մեջ բերում ալանների արքայազնին գերելու կապակցությամբ նրա քրոջ՝ Սաթինիկի՝ Արտաշեսին ուղղված խոսքը. «Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ հաղթեցեր քաջ ազգին Ալանաց...» և այլն, որով նա խնդրում է վերադարձնել պատանուն։ Արտաշեսի մեջ ցանկություն է զարթնում ամուսնանալ Սաթինիկի հետ, սակայն ալանաց թագավորը չի համաձայնվում՝ «Եւ ուստի՞,— ասում է նա,— տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց»։ Արտաշեսը տեղի չի տալիս և առևանգում է աղջկան. այս դրվագը Խորենացին նորից բառացիորեն է բերում, հիշատակելով «ոսկեօղ շիկափոկ պարանն», որի օգնությամբ կատարվել է առևանգումը։ Խորենացուն այդ չի համոզում և նա այստեղ տալիս է իր խոստացած «այլաբանությունների ճշմարտեցման» առաջին օրինակը՝ «Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ կարմիր՝ լայքա շատ և ոսկի բազում տուեալ ի վարձանս՝ առնու զտիկին օրիորդն Սաթինիկ։ Այս է ոսկեօղ շիկափոկ պարանն»։ Հենց այստեղ էլ նա տալիս է երկրորդ օրինակը՝ վիպասանքի այն խոսքի կապակցությամբ թե «տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն»։ Խորենացին նախազգուշացնում է, թե խոսքը ոսկու և մարգարտի իսկական անձրևի մասին չէ, այլ ոսկեդրամների և մարգարտահատիկների ցրման մասին՝ հարսի և փեսայի կողմից։

«...եւ ծնունդք զարմիցն». Նույն տեղում Խորենացին հիշատակում է, որ Սաթինիկը «առաջին եղեալ ի կանանցն Արտաշիսի՝ ծնանի նմա զԱրտաւազդ և զայլս բազումս»։

«...իբր տրփանք Սաթինկան ընդ Վիշապազունս՝ առասպելաբար, այս ինքն ընդ զարմս Աժդահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտովն Մասեաց». Ինչպես տեսնում ենք, արդեն «ծրագրում» Խորենացին տալիս է «առասպելաբանությունների ճշմարտեցման» ևս մի օրինակ, պարզաբանելով, որ Վիշապազունքը Աժդահակի սերունդն են։ Պետք է ասել սակայն, որ «ծրագրում» հիշատակված «տրփանք Սաթինկան»-ը Խորենացու՝ Արտաշեսին նվիրված այս պատմության մեջ կատարելապես լռության է մատնված։ Դրան վերաբերող վիպասանքի խոսքերը նա բառացիորեն մեջ է բերում մի այլ տեղ և այլ կապակցությամբ, առաջին գրքի 30-րդ գլխում, ուր պատմվում է Աժդահակի տիկնոջ՝ Անույշի՝ Մասիսի ստորոտում բնակվելու մասին։ «Այլ և տենչայ, ասեն,—գրում է Խորենացին,— Սաթինիկ տիկին տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արգաւանայ», սակայն իրենից ոչ մի բառ չի ավելացնում։

«...մարտ ընդ նոսա (վիշապազունս—Գ. Ս.) և քայքայումն յիշխանութենէն և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածոցն»: Այստեղ ևս էական տարբերություն կա վիպասանքի և Խորենացու՝ Արտաշեսին նվիրված շարադրանքի միջև։ Վիպասանքի բուն խոսքերը «ծրագրի» այս կետի կապակցությամբ՝ Խորենացին մեջ է բերում իր առաջին գրքում, նոր հիշատակված՝ Անույշին վերաբերվող գլխում. «...ճաշ ասեն գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի, և խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց», իսկ Արտաշեսի պատմության մեջ վիճակը բոլորովին այլ է։ Նախ, այստեղ վիշապազն Արգավանը վերանվանված է Մուրացյան տոհմի նահապետ Արգամ, և երկրորդ, գժտության պատճառը ոչ թե այդ Արգամի «խարդավանակ լինելն» է, այլ Արտաշեսի որդի Արտավազդի նախանձը, որից դրդված նա ճաշի պահին կասկած է ձգում հոր սիրտը՝ Արգամի նկատմամբ։

Այնուհետև, արդեն «ծրագրի» համաձայն, նկարագրվում
է, թե ինչպես Արտաշեսը հղեց իր Մաժան որդուն Մուրացյան-
ներին կոտորելու և նրանց ապարանքներն այրելու։ Մաժանը,
սակայն, ինչպես երևում է, գործը մինչև վերջ չի հասցնում,
որովհետև վերջնական հարվածը Մուրացյաններին հասցնում
է Արտավազդը, որը և տիրանում է նրանց ամբողջ ունեցված-
քին[15]։ Հավանորեն վիպասանքի հենց այս տեղումն է եղել
Անույշի մասին պատմող վերոհիշյալ գլխում մեջ բերված
(բայց Արտաշեսի մասին պատմության մեջ անտեսված) բա-
ռացի հետևյալ հատվածը. «Այլ և Արտաւազդայ ոչ գտեալ, ա-
սեն, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղեկիկ ապարանից ի հիմ-
նանալն Արտաշատու՝ նա անց, աւէ, գնաց և շինեաց ի մեջ
Մարաց զՄարակերտ»[16]։

«...նախանձ որդւոցն Արտաշիսի և գգուութիւն ընդ մի-
մեանս ի ձեռն կանանցն»: Նախանձը,— պատմում է Խորե-
նացին, ծագում է Արտավազդի՝ հայոց բոլոր զորքերի վրա
հրամանատար կարգվելու կապակցությամբ։ Արտաշեսը չա-
հանում է փարատել այն, տալով եղբայրներից Վրույրին հազա-
րապետությունը, Մաժանին՝ քրմապետությունը Դարանաղյաց
Անիի տաճարում։ Բացի այդ, զորքը բաժանվում է չորս մասի,
որոնցից միայն արևելյանն է մնում Արտավազդի հրամանա-
տարության ներքո, արևմտյանն ստանում է եղբայրներից Տի-
րանը, հյուսիսայինը՝ Զարեհը. հարավայինի հրամանատար
է կարգվում Սմբատ Բագրատունին[17]։

Ահա այսպես Խորենացին իրականացնում է «ծրագրի»
կետերը, բացահայտելով դրանք կամ առասպելից արված
բառացի մեջբերումներով, կամ առասպելի դրվագների իր սե-
փական շարադրմամբ, և վերջին դեպքում թույլ տալով որոշ
շեղումներ՝ առասպելից, որոնց մասին դեռ կխոսվի։ Իր «ծրա-
գրից» դուրս, որպես ժողովրդական բանահյուսության, առաս-

15 Խորենացի, II, 51։
16 Անդ, I, 30։
17 Անդ, II, 53։

պելի արգասիք, Խորենացին հիշատակում է նաև, որ «Դոմետ
զումն ասեն եկեալ», և իսկույն տալիս իր հերթական «ճշմար-
տեցումը», թե «որ է ինքն կայսրն Դոմետիանոս. ոչ ինքն
եկեալ այսր, այլ զհրաման նորա և զզօրս այլաբանելով յա-
նուն նորա կոչեն»[18]։ Եվս մի տեղ Խորենացին հիշատակում է
առասպելը՝ Սմբատ Բագրատունու կապակցությամբ, ասելով,
որ նրա գովերգումը առասպելում շատ հեռու չէ իրականու-
թյունից[19]։ Ինչ վերաբերում է Արտաշեսի մահվան դրվագին,
ապա Մ. Աբեղյանը ցույց է տվել, որ այն պատկանում է մի
ուրիշ, Արտավազդի և Մասիսի վիհում նրա կալանավորման
հետ կապված, առասպելի[20], ուստի և պատահական չէ նրա
բացակայությունը «ծրագրից»։ Թերևս քննարկվող հատվա-
ծում լինեն և առանձին այլ առասպելական մոտիվներ, որոնք
սակայն անճանաչելի են։

Բայց ճանաչված նյութի, այն է՝ բուն «ծրագրի», վիպա-
սանքից բառացի մեջբերումների և Խորենացու կողմից բուն
«ծրագրի» շարադրված դրվագների հիման վրա էլ ի հայտ է
գալիս մի ամբողջական վերջավորված առասպել, որի հիմ-
քում Մ. Աբեղյանը տեսնում է բազմաթիվ ժողովուրդների
մոտ դրսևորվող մի «թափառական» սյուժե՝ կինը դավաճա-
նում է ամուսնուն, սիրահարվելով մի վիշապի (կամ դևի),
իսկ որդին սպանում է վիշապին։ Մ. Աբեղյանի փաստարկումը
և այլ ժողովուրդների բանահյուսությունից բերած մի շարք
զուգահեռները սպառիչ են և կասկածի տեղ չեն թողնում, թե
Արտաշես—Սաթինիկ—Արգավան—Արտավազդի (Խորենացու
մոտ Գողթան գավառի երգիչների անունից հանդես եկող) ժո-
ղովրդական առասպելի հիմքում հենց այդ թափառական սյու-
ժեն է ընկած։

Այդ սյուժեն, իհարկե, ինչպես տեսանք, հանդես է գա-
լիս որոշակի պատմական հագուստով. հերոսը, Արտաշեսը,

18 Խորենացի, II, 54։
19 Անդ, II, 52։
20 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 354։

հայոց թագավոր է, մի թագավոր, որ շփվել է կոնկրետ-պատմական անձնանց հետ, պատերազմել նրանց դեմ, փեսայացել նրանց, հիմնադրել կոնկրետ-պատմական Արտաշատը, վերջապես բախվել ոմն Դոմետի հետ (որը ևս մնում է կոնկրետ-պատմական, լինի դա Դոմիտիանոս կայսրը, ինչպես կարծում է Խորենացին, թե Դոմիտիոս Կորբուլոնը, ինչպես հակված են մտածելու արդի պատմաբանները)։ Այս բոլորը վկայում են, որ վիպասանքի պատմական հիմքն է կազմում ամենից ավելի Տրդատ Ա Արշակունու գործունեությունը[21]։ Արտաշատի հիմնադրման դրվագը ևս փորձում են կապել Տրդատի կողմից նրա վերանորոգման փաստի հետ, բայց դա ավելի շուտ կապված է սոսկ վիպասանքի հերոսի «Արտաշես» անվան հետ։ Իսկ թե ինչու Տրդատը ժողովրդի հիշողության մեջ Արտաշես է դարձել, այդ խնդիրը մանրամասնորեն ու համոզիչ կերպով պարզաբանել է Մ. Աբեղյանը[22]։

Պետք է ասել, սակայն, որ Մ. Աբեղյանը, վիպասանքի այս ցիկլի պատմական հիմքը որոնելիս, հետևողական չի գտնվել և, չնայած տատանումներով, դուրս է եկել իր իսկ կողմից փայլուն բացահայտված առասպելական հիմքով սահմանագծված Արտաշես—Սաթինիկ—Արգավան—Արտավազդ շրջագծից, ներգրավելով վիպասանքի ոլորտը նաև Երվանդ—Արտաշես հակամարտությունը։ Սա մեթոդական տեսակետից էլ ճիշտ չէ, բայց նախ և առաջ ծայրեծայր հակասում է Խորենացու վերը մեջ բերված համապատասխան հստակ ցուցումին, որ նա տալիս է իր 48-րդ գլխի վերջում (Երվանդ—Արտաշեսի հակամարտությունը շարադրել-վերջացնելուց հետո), այն մասին, որ վիպասանքի նյութը նա սկսում է օգտագործել միայն այդ կետից, այսինքն Արտաշատի հիմնադրման դրվագից (և այդ հաստատվում է Խորենացու բերած «ծրագրով» ու բոլոր բառացի մեջբերումներով, որոնցից լրիվ դուրս

21 Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, Թիֆլիս, 1895, Բ, էջ 242։

22 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 311 և հաջ.։

է մնում Երվանդ—Արտաշես հակամարտությունը)։ Իսկ եթե Մ. Աբեղյանը ցանկանում էր ապացուցել այդ թեզը հակառակ Խորենացու պնդման (որպիսի ցանկության մեջ ինքնըստինքյան պարսավելի ոչինչ չկա), ապա նա պետք է կոնկրետ կերպով ցույց տար այդ դրվագի մեջ պարունակվող տեղեկությունների ժողովրդական-բանահյուսական բնույթը (ինչպես անում է բոլոր մնացած դեպքերում), և ոչ միայն այդ, այլև դրանց պատկանելությունը հիշյալ ցիկլին։ Այնինչ 12 գլուխներից բաղկացած այդ ամբողջ հատվածում նա կարողանում է նշել միայն Երվանդի չար աչքի մասին խոսքերը[23], որից հետո գրում է. «Ցույց բովանդակությունը քննելով հնար լինի մի քանի ժողովրդական վիպական գծեր ևս հանել այդ պատմությունից, բայց այդ երկրորդական համարելով՝ թողնում ենք։ Խորենացին միջոց չի տալիս ճանաչելու բուն առասպելը հերյուրած պատմությունից»[24]։

Այսպիսով՝ Խորենացին խոսքով ժխտում է Երվանդ—Արտաշես հակամարտության դրվագի՝ վիպասանների երգերի թվին պատկանելը, գործով էլ «միջոց չի տալիս ճանաչելու բուն առասպելը»։ Մ. Աբեղյանն էլ իր հերթին չի կարողանում այդտեղ առասպելական որևէ բան գտնել, բացի չար աչքի մասին խոսքերից (որը շատ տարածված հավատալիք է Մ. Աբեղյանի իսկ ցուցումի համաձայն, ուստի և չի կարող անհրաժեշտություն ունենալ անպայման մեզ հետաքրքրող ցիկլին առնչվելու)։ Որանից հետո էլ ի՞նչ հիմք կա այդ մասը առասպելին կցելու։

Մեզ համար միանգամայն պարզ է, թե ինչու է այդպես ստացվել Մ. Աբեղյանի մոտ։ Ցավոք սրտի մեծ բանասերը չէր կարող իր ձեռքի տակ ունենալ այն վավերական նյութերը (մասնավորապես՝ Արտաշեսի հետագայում գտնված վիմագիր արձանագրությունները), որոնք անքակտելի կապ են ստեղծում Խորենացու Արտաշեսի և հատկապես պատմական

23 Հատվածի սկզբում հիշատակված «զրույցք»-ի մասին տես սորև, էջ 210։

24 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 285։

Արտաշես Ա-ի միջև։ Այդ նյութերը, ինչպես տեսանք, ստիպեցին Հ. Մանանդյանին, որը սկզբնապես ևս, Մ. Աբեղյանի նման, մեզ հետաքրքրող դրվագին բանահյուսական ծագում էր վերագրում, փոխել իր կարծիքը և եզրակացնել, որ Խորենացու պատմածի հիմքում գրավոր աղբյուր է ընկած։ Մ. Աբեղյանը ևս, և առավել դյուրությամբ, կհանգեր այդ տեսակետին[25], եթե հնարավորություն ունենար համոզվելու, թե այդ կապն իրական է և միակը։ Ձունենալով այդ հնարավորությունը, նա Խորենացու Արտաշեսին կապում է բոլոր հայտնի հայոց Արտաշես թագավորների հետ (Արտաշես Ա, Արտաշես Բ՝ մ. թ. ա. 30—20 թթ., Արտաշես Գ Զենոն՝ մ. թ. 18—34 թ.), ինչպես և Տրդատ Ա-ի հետ (վերջինը միանգամայն ճիշտ է, բայց միայն իսկապես վիպասանքին վերաբերող հատվածի նկատմամբ)[26]։ Իսկ եթե մի պատմության հերոսի մեջ մարմնավորված են մի շարք գործիչներ, ապա այդ պատմությունը իհարկե ժողովրդական բանահյուսությանն է պատկանում։ Սրա կողքին սակայն Մ. Աբեղյանը, ինչպես տեսանք տողատակում արված մեջբերումից, ընդունում էր նաև Խո-

25 *Որին նա ընդհանրապես շատ ավելի մոտ էր կանգնած, քան Հ. Մանանդյանը՝ սկզբնապես. այդ երևում է Մ. Աբեղյանի հետևյալ խոսքից. «Պատմագիրը Երվանդի մասին և ապա նորա և Արտաշեսի կռիվը (Բ, լէ-խբ) պատմելուց հետո՝ հիշում է յուր աղբյուրը. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմպ քուրմ Հանւոյ, գրող մեհենական պատմութեանց, և զայլ քազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում և Պարսից մատեանք վկայեն և Հայոց* երգք *վիպասանաց» (ընդգծումը Մ. Աբեղյանինն է)։ Ուրեմն նա Երվանդի և Արտաշեսի պատմությունը մինչև իր գլուխն առնում է գրավոր աղբյուրից, որի ինչ և ինչպես լինելը մեզ այստեղ չի հետաքրքրում։ Հայոց վիպասանք միայն իբրև վկայություն են կոչվում այդ պատմության համար» (էջ 284)։*

Գրավոր աղբյուրի մասին շատ պարզ է ասված, բայց, ցավոք սրտի, վերջին նախադասության միտքը (որը, ինչպես նշվեց վերը, ճիշտ չէ, քանի որ հակասում է հենց այստեղ մեջբերված Խորենացու ցուցմանը, թե վիպասանքը վկայակոչվում է միայն առաջինկա շարադրանքի կապակցությամբ), էջից էջ գնալով ավելի գերակշռող է դառնում Մ. Աբեղյանի մոտ ու վերջապես ճնշում գրավոր աղբյուրի առկայության մասին թեզը։

26 *Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 325։*

րենացու ինչ-որ գրավոր աղբյուրի առկայությունը՝ Երվանդ—Արտաշես հակամարտության դրվագի համար, սակայն լավ չէր պատկերացնում նրա դերը։

3

Ահա, ուրեմն, այն նյութը, որ Խորենացին քաղել է ժողովրդական բանահյուսությունից, շրջագծվում է Աբեղյանի վերհանած առասպելական հիմքի և դրա հետ կապակցվող պատմական հիմքի շրջանակով։ Սակայն քննարկվող հատվածում դրանից դուրս մնում է նյութի մի մեծ զանգված, հետաքրքրական տեղեկությունների մի ամբողջ շարան, որն արդեն չի առնչվում ժողովրդական բանահյուսության հետ և հետևաբար գալիս է այլ աղբյուրներից։ Անշուշտ նույն այդ նյութի ոլորտին են պատկանում և այն գործոնները, որոնք ստիպել են Խորենացուն առասպելն օգտագործելիս տեղ-տեղ շեղվել նրա մոտիվներից, կամ նոր փաստերով լրացնել այս կամ այն դրվագը և կամ, ընդհակառակը, լռության մատնել առանձին մանրամասներ։

Մի առ մի քննենք այդ կետերը. ա) Արտաշատի հիմնադրման պատմության գերակշռող մասի խորթությունը՝ առասպելին, բ) Սաթինիկի՝ Արգավանի հանդեպ տածած «տրփանքի» շրջանցումը, գ) Արգավանի վերանվանումը Արգամ, Վիշապազուններինը՝ «զարմք Աժդահակայ», «մարեր», «Մուրացյաններ», դ) Արգավանի դավադրության փոխարինումը Արգամի դեմ դավադրությամբ և ե) Արտաշեսի որդիների փոխադարձ նախանձի փարատման միջոցների մի մասի խորթությունը առասպելին։

Արտաշատի հիմնադրման մասին Խորենացին պատմում է հետևյալը. «Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ։ Ձեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրեաց. վասն որոյ անաշխատ և երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպո-

զոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն։ Եւ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ փոխեալ էին անդր յԱրմաւիրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ։ Նա և զամենայն վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւիրայ և զոր անդէն արարեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ. և առաւել ևս յինքենէ յօրինէ իբրև զքաղաք արքայանիստ»[27]։

«...Պետք է նկատել,— գրում է Մ. Աբեղյանը,— որ Արտաշատի շինության մասին Արտաշեսի ձեռքով՝ բացի անոր «հիմնանալուց» կամ շինվելուց՝ ուրիշ բան հայտնի չէ վիպասանքից։ Ինչ որ Խորենացին բերում է Արտաշատի շինության մասին՝ Խորենացու սեփական պատմությունն է...»[28]։ Այո՛, բայց որտեղի՞ց է առել Խորենացին այդ «սեփական պատմությունը» (որը դուրս է մնում Մ. Աբեղյանի շահագրգռություններից)։

Քննենք երկու այն հիմնական կետերը, որո՛նք այստեղ առաջ է քաշում Խորենացին՝ աստվածների ու նախնիների պատկերների տեղափոխումը և հրեաների վերաբնակեցումը՝ Արտաշատ։

Անկասկած է, որ Արտեմիսի և Ապոլլոնի արձանների և թագավորական նախնիների կուռքերի թեման միանգամայն խորթ է Արտաշեսի առասպելին։ Տվյալ դրվագը սոսկ մի օղակ է կազմում Խորենացու «Պատմության» երկրորդ գրքի տարբեր գլուխներում հաղորդած՝ թագավորական դինաստիայի պաշտամունքի մասին տեղեկությունների շղթայում[29]։ Այդ տեղեկությունները, ինչպես մենք մանրամասն ցույց ենք տվել սույն աշխատության առաջին գլխում, ոչ միայն զարմանալիորեն հարազատ են հելլենիստական աշխարհի մյուս երկրներից մեզ հասած դինաստիայի պաշտամունքի մասին փաստերին, այլև իրենց հավաստիության երաշխիքն են

27 Խորենացի, II, 49։

28 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 318։

29 Խորենացի, II, 10, 40, 49, 77 և ուրիշ.։

գտնում բուն Հայաստանից ծագող վիմագրական հուշարձանների ու դրամների տվյալների մեջ։ Բացի այդ, թագավորական նախնիների պաշտամունքն անմիջականորեն առնչվում է Արտաշատի ու նրա հիմնադրության հետ այնքանով, որքանով այդ պաշտամունքի սկիզբը, հիմնարկումը տեղի է ունեցել Արտաշես Ա-ի օրոք և, հետևաբար, հենց հավանորեն Արտաշատում։

Նույնն է վիճակը «Երվանդի քաղաքից» (=Երվանդաշատ) հրեա բնակչության Արտաշատ տեղափոխման մասին հաղորդման կապակցությամբ։ Սա ևս օղակ է հաղորդումների մի շղթայի, որն սկսվում է երկրորդ գրքի 19-րդ գլխից և հասնում մինչև երրորդ գրքի 35-րդ գլուխը, պարունակելով հրեաների հոծ զանգվածների Տիգրանի կողմից դեպի Հայաստան գերեվարման, սրանց հետնորդների հետագա բախտի ու Հայաստանի ներսում վերաբնակեցումների, և վերջապես Պարսից թագավոր Շապուհ Բ-ի կողմից սրանց դեպի Պարսկաստան գաղթեցնելու պատմությունը։ Այդ հրեաների մասին կարևորագույն տեղեկություններ է պահպանել նաև Փավստոս Բուզանդը[30]։ Այս պատմությունը ևս ոչ մի առնչություն չունի Արտաշեսի առասպելին[31]։

Հրեաների հիշատակությունը Արտաշատի հիմնադրման կապակցությամբ, իհարկե, անաքրոնիզմ է (որի պատճառը Խորենացու ժամանակագրական համակարգի առանձնահատկություններն են), սակայն ամենևին անաքրոնիզմ չէ նորաստեղծ քաղաքի բնակեցման այն մեթոդը, որն այստեղ նկարագրում է Խորենացին։ Հին քաղաքների բնակչության մի մասի վերաբնակեցումը նոր հիմնադրված քաղաքում և, այսպիսով, նրա բնակչության լրացումը կամ նույնիսկ ստեղծումը, կոչվում էր συνοικισμός («համարնակեցում», «միա-

30 Փավստոս, IV, 55։

31 Տե՛ս նաև Գ. Սարգսյան, Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ, «Բանբեր մատենադարանի», № 3, 1956, էջ 31 և հաջ.։

սին բնակեցում») և ամենատարածված երևույթներից մեկն էր հելլենիստական աշխարհում, որի տարբեր մասերում այդ եղանակով տասնյակ ու հարյուրավոր նոր քաղաքներ են շինացվել։ Նույն այդ եղանակով են բնակեցվել Տիգրանակերտը և այլ հայկական քաղաքներ[32]։ Խորենացու այս հաղորդումը, անկախ նրա մեջ հրեաների հիշատակությունից, որ ինչպես ասվեց, անաքրոնիզմ է, մի ակնարկ է այն մասին, որ Արտաշատը ևս իր ժամանակ շինացել է συνοικισμός-ի միջոցով[33]։ գտնում նույն Արտաշատի հիմնադրման մասին Ստրաբոնի Ջափազանց կարևոր է, որ այդ ակնարկը իր հաստատումն է հաղորդման մեջ, որտեղ ասված է, թե այդ քաղաքը συνῳκισμένη καλῶς «լավ (կամ՝ խնամքով) համաբնակեցված է»[34]։

Ահա թե ինչպիսի նյութեր է պարունակում Մ. Խորենացու «սեփական պատմությունը», նյութեր, որոնք ոչ միայն պատմականորեն ճշմարտացի են, այլև իրոք առնչվում են Արտաշատին ու նրա հիմնադրմանը։

Վերը թվարկված կետերից երեքը՝ բ, գ և դ, վերաբերվում են միևնույն անձնավորությանը՝ առասպելի Արգավան վիշապազնին, ուստի և դրանք կարելի է միասնաբար քննարկել։ Ինչպես հիշում ենք, դեռևս իր «ծրագրում» Խորենացին պարզաբանում է, որ վիշապազունները ոչ այլ ինչ են, եթե ոչ «զարմք Աժդահակայ»։ Մ. Աբեղյանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ այդ նույնացումն իրեն՝ Խորենացու գործն է, ըստ որում վերջինս կանգ չի առել այդ կետում և զարգացրել է միտքը, տանելով այն առասպելականից դեպի պատմական ոլորտը. եթե Աժդահակը մարաց թագավոր է եղել, ուրեմն նրա «զարմք» մարերն են, մասնավորապես և այն մարերը, որոնք Տիգրան Երվանդյանի օրերից սկսած բնակվում են Հա-

32 Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 65 և հաջ., 108։

33 Անդ, էջ 42։

34 Strab., XI, 14, 6։ Այս հանգամանքի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ս. Կրկյաշարյանը (տե՛ս նրա Возникновение городов в Армении во II в. до н. э.—III в. н. э., "Научные доклады высшей школы, историч. науки", 1961, № 4։

յաստանում։ Մյուս կողմից Խորենացին պնդում է, որ Մուրացյան տոհմի նահապետներն անվանվում են «մարացւոց տէր», ուրեմն Մուրացյանները մարեր են, հետևաբար և Աժդահակի սերունդ, ուստի և վիշապազունք[35]։

Սակայն եթե այս տրամաբանական զարգացման գիծը միանգամայն դյուրըմբռնելի է և, մանավանդ, խիստ բնորոշ Խորենացու համար, ապա շատ ավելի բարդ է Խորենացու կատարած Արգավան> Արգամ անցումը։ Միանգամայն պարզ է, որ Արգամ անունը Արտաշեսի առասպելից դուրս էր, որովհետև առասպելի համապատասխան անունը Արգավանն է. «Այս Արգամ է,— հայտնում է Խորենացին,— որ յառասպելին Արգաւանն անուանի»[36]։ Արդ, ինչ դրդապատճառ պիտի ունենար Խորենացին Արգավանը Արգամով փոխարինելու համար։ «Այլաբանության ճշմարտեցման» ոչ մի կարիք չկար այստեղ, որովհետև չկար ինքը այլաբանությունը, ինչպիսին, ասենք, Խորենացին տեսնում է «վիշապազունք» բառի մեջ, բացատրելով այն որպես «զարմք Աժդահակայ»։ Չկա այստեղ նաև իմաստի զարգացման (ու դրանով՝ շարադրանքի հարստացման) որևէ հնարավորություն, որ գայթակղեցներ Խորենացուն, ինչպիսին կար, ասենք, «զարմք Աժդահակայ»-ից մարերին անցման մեջ։ Ուրեմն ո՞րն է այդ փոխարինման դրդապատճառը։

Առաջին ենթադրությունը, որ կարելի է անել, հետևյալն է. Արգամը հայտնի էր Խորենացուն Մուրացյան նախարարական տան տոհմական բանավոր ավանդությունից, որպես այդ տոհմի նախնիներից մեկի անունը։ Բնական է այդ դեպքում, որ եթե վիշապազունքը մարերն են, ապա վիշապազն Արգավանը «մարացվոց տեր» Մուրացյան Արգամն է։ Այս ենթադրությունը, սակայն, մի շարք խոչընդոտների է հանդիպում։

Նախ և առաջ Արգամին վերաբերող դրվագները (իհարկե բուն Արգամին, և ոչ թե Արտաշեսի առասպելում Արգավանին փոխարինած Արգամին) իրենց մեջ ոչինչ բանահյու-

35 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 325 և հաջ.։

36 Խորենացի, II, 51։

տական-վիպական բան չեն կրում։ Արգամը, թագավորության երկրորդ անձնավորությունը, իր զորքով ներկայանում է Երվանդի ճամբարը, սակայն սրա և Արտաշեսի միջև տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ ձեռնպահ է մնում, որի համար Արտաշեսը նրան բարձր պարգևների ու պատվի է արժանացնում[37]։ Դրվագը ավելի քան ճշմարտապատում է։

Երկրորդ, ընդհանրապես անհավանական է, թե այդպիսի մի ավանդություն Մուրացյանների մասին գոյություն ունեցած լինի Խորենացու օրոք։ Վերջինիս տեղեկություններից դուրս, այդ տոհմի մասին վաղ շրջանի գրական կոթողների մեջ մենք ունենք միայն երկու հիշատակություն. մեկը՝ Գահնամակում, ուր այդ տոհմանունը, «Մարացեան» ձևով, գրավում է ցանկում 69-րդ, այսինքն նախավերջին, տեղը, ամենահետին, երկրորդական նախարարությունների շարքում[38], մյուսը՝ Զորանամակում, «Մուրացան» ձևով, որն ընկած է «Հարավային դուռն» ստորաբաժանման ամենավերջում[39]։ Որ Մուրացյան տոհմը ամենաաննշաններից է եղել, պարզվում է այն հանգամանքից, որ այն ոչ մի անգամ չի հիշատակվում ժամանակի հարուստ պատմական գրականության մեջ (բացառյալ, իհարկե, Խորենացու), որը, ինչպես գիտենք, խիստ հագեցած է նախարարական տների գործունեության նկարագրություններով կամ գեթ նրանց հիշատակումներով։ Այնինչ այդ տոհմը, ինչպես երևում է Գահնամակում նրա թվարկված լինելուց, հինգերորդ դարում գոյություն է ունեցել։ Հայտնի չէ և Մուրացյանների տիրույթների աշխարհագրական վայրը, և միայն Զորանամակի «Հարավային դուռն» ստորաբաժանման մեջ թվարկված լինելն է, որ, թերևս[40], հուշում է Հայաստանի հարավային շրջաններում նրանց բնակվելու հանգամանքը։

37 Խորենացի, II, 47։

38 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 431։ Նաև Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 250։

39 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 252։

40 Ն. Ադոնցը նշում է, որ ըստ երկրի կողմերի նշանակված այդ «դռների» կազմը մտնող նախարարական տիրույթների իրական տեղադրությունը

Մեր կարծիքով (հիմնված Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանդես եկող նախարարական տների և Գահնամակի ցանկերի մանրամասն համեմատական ուսումնասիրության վրա, որի արդյունքները մենք կներկայացնենք այլ առիթով), Խորենացու տեղեկությունները խնդրո առարկա տոհմի, ինչպես և մի շարք այլ աննշան երկրորդական տոհմերի մասին սահմանափակված են եղել Գահնամակում նրանց հիշատակությամբ։ Գահնամակում հիշատակված նման երկրորդական տոհմերի մեծ մասը Խորենացին անտեսել է[41]։ Մուրացյան տոհմը գրավել է Խորենացու ուշադրությունը միայն ու միայն իր անվան, այսպես ասած, դյուրաստուգաբանելիությամբ (Նույնը կարելի է ասել և մի քանի այլ տոհմերի մասին)։

Ինչպես տեսանք, Գահնամակում և Զորանամակում տոհմը հիշատակվում է երկու տարբեր ձևերով, որոնցից մեկն ունի «մուր», մյուսը՝ «մար» հիմքը։ Այս տարբերությունն արտահայտված է և Խորենացու մոտ. նա հայտնում է, թե տոհմը կոչվում է «Մուրացեան», բայց նրա նահապետը՝ «Մարացւոցն տէր»[42]։ Անշուշտ սրանցից մեկը հիմնական իսկական ձևն է, մյուսը՝ երկրորդային, հիմնականից ծնված։ Մեր կարծիքով մար> մուր և մուր> մար փոփոխման հնարավոր ուղղություններից անշուշտ պետք է կանգ առնել երկրորդի վրա, որովհետև այն ժողովրդական ստուգաբանություն է պարունակում, տալիս է «մար» ցեղանունը, մինչդեռ առաջինն անիմաստ է[43]։ Ստուգաբանության այս եղանակը շատ է բնորոշ

հաճախ հակասում է «դռների» անվանումներին, այսինքն այս կամ այն նախարարական տունը, որ նշանակված է Զորանամակում, ասենք, «Հյուսիսային դռան» կազմում, իրականում գտնվել է արևելքում և այլն (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 282)։

41 Համտ. Н. Адонц, նշվ. աշխ., էջ 264 և հաջ.։

42 Խորենացի, II, 8։

43 Ն. Ադոնցը (նշվ. աշխ., էջ 420) ընդհակառակը, ելակետային ձևն է համարում Մարացեան (<*Մարոցեան), որտեղից՝ Մուրացան, և գտնում, որ տոհմանունն իսկապես ծագում է «մար» ցեղանունից։ Ն. Ադոնցը չի

Խորենացուն (ինչպես կհամոզվենք ստորև) և գայթակղեցուցիչ է հենց իրեն վերագրել այն։ Սակայն ելնելով Խորենացու երկից դուրս այդ երկու ձևերի հիշատակված լինելու հանգամանքից, ինչպես և Խորենացու երկում դրանց մատուցման եղանակից («Քանզի ոչ ասեն նահապետաց ազգին՝ Մուրացեան տէր, այլ Մարացւոցն տէր»), կարելի է ենթադրել, որ ստուգաբանությունը կատարվել է Խորենացուց անկախ և հասել նրան Գահնամակի տարբերակներում[44]։ Նման անուններ, ինչպես սովեց, Խորենացուն գրավել են իրենց իմաստավորվածությամբ, նրանով, որ իրենց մեջ իսկ կրել են այդ տոհմերի պատմության լուսաբանման հնարավորությունը՝ անվան ստուգաբանման միջոցով (եղանակ, որ այսօր էլ լայնորեն կիրառում են պատմաբաններն ու բանասերները)։ Խնդրո առարկա տոհմանունը, հատկապես, հոյակապ հնարավորություն է ընձեռել Խորենացուն՝ լուսաբանելու Մուրացյանների անցյալը, կապելով նրանց Աժդահակի սերնդի հետ և ստեղծելով վերոհիշյալ ստուգաբանական շարքը՝ վիշապազունիներից մինչև Մուրացյան տոհմը։

Նշենք մի վերջին հանգամանք ևս, որ թույլ չի տալիս Արգամին Մուրացյաններինը համարել։ Ահա Խորենացին հաջողությամբ և միանգամայն տրամաբանորեն անցել է վիշապազուններից մինչև Մուրացյանները ուղին, ունենալով որպես միջանկյալ օղակներ «Աժդահակայ զարմք»-ը և մարերին։ Եթե մենք պնդենք, որ նա այդ ուղու վերջում հանդիպել է որպես Մուրացյանների նահապետի Արգամին (և ոչ թե, ասենք, մի Պարույրի կամ Զորակի), որի անունը միաժամանակ զարմանալիորեն նման է Խորենացու ելակետում գտնվող առասպելական վիշապազնի Արգավան անվանը, ապա մենք

փաստարկում իր այս պնդումը, և մենք չենք կարող համաձայնվել այդ կարծիքի հետ, որովհետև դրանով Մուրացան (կամ Մուրացյան) անվանաձևի գոյության հիմքը և իմաստը լրիվ անհասկանալի է դառնում։

44 Սակայն կարծում ենք բացառված չէ և «Մարացյան» ձևի առաջացումը Գահնամակի հետագա արտագրությունների ժամանակ՝ Խորենացու սամծի ազդեցության տակ կատարված ընդմիջարկության միջոցով։

այստեղ, բացի երջանիկ զուգադիպությունից, պատահականությունից, ուրիշ բան տեսնել չենք կարող։ Տեսականորեն նման դեպքը բացառված չէ, բայց իրականության մեջ այն կարող է լինել միայն որպես զուգադիպություն, պատահականություն, ուստի և, պարզ է, մենք չենք կարող այդ պատահականությունը մեր եզրակացության հիմքում դնել։

Այսպիսով՝ Արգամ անվան նմանությունն իսկ Արգավան անվանը խոսում է Մուրացյանների տոհմին նրա պատկանելու դեմ, հուշում, որ Արգավան> Արգամ զարգացման գիծը այլ է, տարբեր, քան վիշապազունք> Մուրացյան գիծը, և ստիպում է Արգամի ծագման այլ ոլորտ փնտրել։ Իսկ այս հարցում մենք արդեն երկընտրանքի հնարավորություն չունենք. եթե Արգամը չի ծագում վիպասանքից և Մուրացյանների ավանդությունից, ապա նա գալիս է, անձամբ իր (և ոչ Արգավանի) հետ կապված դրվագների հետ միասին, Խորենացու հիմնական գրավոր աղբյուրից, որպես Երվանդյանների բարձր պաշտոնյա, հետագայում անցած գահի հավակնորդի կողմը։ Արդ, Արգամի իրական պատմական դեմք համարվելը այսուհետև կապված է մնում միայն ու միայն նրան հիշատակող գրավոր աղբյուրի հավաստիության աստիճանից։ Ինչ վերաբերվում է «Արգավան-Արգամ Մուրացյան» կերպարին, ապա այն Խորենացուն է պատկանում և ստացվել է երեք աղբյուրների (վիպասանք, Գահնամակ, Երվանդ—Արտաշեսի պատմության գրավոր աղբյուր) տվյալների միաձուլումից[45]։

Գալով վերը բ. գ. և դ. կետերում նշված այն փոփոխություններին, որ մտցրել է Խորենացին վիպասանքի տվյալների մեջ, այժմ կարող ենք ասել, որ դրանց պատճառը եղել է, ան-

45 Մասնավորապես, բարձրաստիճան պաշտոնյա Արգամի դրվագը մի կողմից, և տոհմի՝ մարեր ու հետևաբար Աժդահակի սերունդ համարվելու հանգամանքը՝ մյուս կողմից, կռվան են ծառայել Խորենացու համար այդքան վեր բարձրացնելու Մուրացյանների աննշան տոհմի անցյալը (Մ. Խոր., II, 8)։

շուշտ, Խորենացու գրավոր աղբյուրից եկած Արգամի նկարագրի ազդեցությունը։

Խորենացու՝ առասպելից շեղման վերջին ե. կետը կապված է «ծրագրի» այն տեղի հետ, ուր ասված է. «Նախանձ որդւոց Արտաշիսի և գրգռութիւն ընդ միմեանս ընդ ձեռն կանանցն»։ Այս բառերը բացահայտելիս Խորենացին առասպելից մեջբերումներ չի անում, այլ տալիս է իր սեփական շարադրանքը. Արտավազդը, ասում է նա, ստացավ հորից «զիշխանութիւն զօրացն ամենեցուն։ Եւ նախանձ բերելով ընդ նմա եղբարցն ի գրգռութենէ կանանց իւրեանց. վասն որոյ կարգէ Արտաշէս զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործս տանն արքունի. և զՄաժան կարգէ քրմապետ ի յԱնի դիցն Արամազդայ։ Բաժանէ Արտաշէս և զիշխանութիւն զօրուն ընդ չորս. զարեւելեան զօրն թողու ի վերայ Արտաւազդայ, և զարեւմտեանն տայ Տիրանայ, զհարաւայինն ի Սմբատ հաւատայ և զհիւսիսայինն ի Զարեհ»[46]։

Վերջին հաղորդումը՝ զորքի իշխանությունը չորս մասի բաժանելու և եղբայրներին ու Սմբատին հանձնարարելու մասին առասպելին չի պատկանում թեկուզ այն պատճառով, որ զորքը չորս մասի բաժանելու գաղափարն սկսվում է արծարծվել դեռևս Վաղարշակի գործունեությանը վերաբերող գլուխներում[47], իսկ այստեղ տեսնում ենք նրա զարգացման սոսկ հերթական փուլը։ Ակներևաբար այս դրվագը արհեստականորեն բարդված է Վրույրին և Մաժանին վերաբերվող այն նախորդ դրվագի վրա, որի մեջ նրանք ստանալով մեկը հազարապետություն, մյուսը՝ քրմապետություն, հավասարվում են Արտավազդին, և եղբայրների նախանձը փարատելու խնդիրը լուծվում է։

Այդ հավելումը, ըստ երևույթին, հետևանք է այն բանի, որ բուն առասպելում Արտաշեսն այդքան շատ որդիներ չի ունեցել։ Այստեղ մենք կակնկալեինք ոչ ավելի քան երեք զա-

46 Խորենացի, II, 53։

47 Անդ. II, 8։

վակ, ինչպես որ ընդունված է ժողովրդական բանահյուսության մեջ։ Ովքե՞ր պիտի լինեին դրանք, բացի Արտավազդից, որի ներկայությունը կասկածից վեր է։ Մեջբերված հատվածը հուշում է մեզ, որ դրանք եղել են Վրույրը և Մաժանը, որոնց բավարարմամբ, ինչպես ասվեց, բանահյուսական դրվագը տրամաբանորեն ավարտվում է։ Ճիշտ է, «ծրագրի» համապատասխան կետի բացահայտման ժամանակ Խորենացին գրում է, որ Սաթինիկը «ծնանի նմա զԱրտաւազդ և զայլս բազումս, զորս ոչ կարևոր համարեցաք այժմ անուամբ թուել, բայց զկնիսն յորժամ ի գործ ինչ հասանիցեմք»[48]։ Այստեղ խոսքը, թերևս, ավելի քան երեք որդիների մասին է, սակայն մենք գիտենք, որ «բացահայտման» պահերին Խորենացին արդեն միայն առասպելին չի հետևում, այլ շարադրում է բոլոր աղբյուրների տվյալներից միահյուսված նյութը։

Հ. Մանանդյանի ուսումնասիրությունները տալիս են մեզ Արտաշեսի որդիներին առասպելական և ոչ առասպելական խմբերի զատելու մի առավել կարևոր ու արդեն պատմական հիմք։ Հիշատակելով Խորենացու մոտ Արտաշեսին վերագրված հինգ որդիներին՝ Վրույր, Մաժան, Արտավազդ, Զարեհ, Տիրան, Հ. Մանանդյանը գրում է. «Սրանցից վերջին երեքը,— իմ կարծիքով, հավաստապես կարող են համարվել Արտաշես Ա-ի որդիներ»[49]։ Ի՞նչն է Հ. Մանանդյանին բերում այն եզրակացության, որ Զարեհը, Տիրանը և Արտավազդը իրական պատմական, և ոչ առասպելական, անձնավորություններ են եղել ու հանդիսացել են Արտաշես Ա-ի (189—մոտ. 160 մ. թ. ա.) որդիները։ Պատճառները տարբեր են, բայց և նույնատիպ. նրանք ելնում են Արտաշես Ա-ին ժամանակակից վավերագրերի կամ նրա ժամանակի մասին անտիկ պատմագրության հաղորդած տվյալներից։

Այսպես, Զարեհի պատմականության օգտին է խոսում այն հանգամանքը, որ նույն Զարեհ անունն է կրել նաև նրա

48 Խորենացի, II, 50։

49 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Ա, էջ 131։

պապը՝ Արտաշես Ա-ի հայրը, համաձայն վերջինիս արամեերեն արձանագրությունների, ուր նա իրեն անվանում է «Արտաշես արքա որդի Զարեհի»։ Թոռան անվանակոչումը պապի անունով ընդունված է շատ ժողովուրդների մեջ, իսկ հայերի մոտ միշտ լայն տարածում է ունեցել։ Զարեհի կապակցությամբ Հ. Մանանդյանը վկայակոչում է նաև վրացական տարեգրության՝ «Քարթլիս ցխովրեբա»-ի տվյալները (որոնց մենք կանդրադառնանք այլ առումով) Արտաշես հայոց թագավորի որդիներ Զարեհի և Տիգրանի մասին։

Տիգրան է անվանված «Քարթլիս ցխովրեբա»-ում Արտաշեսի այն որդին, որը միևնույն պարագաներում (վրաց թագավորի՝ Զարեհին գերի վերցնելու և սրա եղբոր Տիգրանի՝ օգնության հասնելու) Խորենացու մոտ անվանված է Տիրան։ Այս հանգամանքը կարելի է լրացուցիչ հենարան համարել Հ. Մանանդյանի այլ հիմունքներով արտահայտած մտքի, թե Խորենացու մոտ Արտաշեսի Տիրան անվանված որդու իսկական անունը Տիգրան է եղել։ Այս Տի(գ)րանի կապակցությամբ Հ. Մանանդյանը հիշատակում է Ապպիանոսի հաղորդումը, ըստ որի Տիգրան Բ-ի հոր անունը ևս Տիգրան է եղել։ Համաձայն Ստրաբոնի հայտնի վկայության, Տիգրան Բ-ը Արտաշես Ա-ի շառավիղն է՝ թոռը, եթե հաշվի առնենք նրանց գահակալման տարեթվերի միջև ընկած համարյա մեկ հարյուրամյակը։ Հետևաբար Տիգրան Բ-ի հայր Տիգրան Ա-ը Արտաշես Ա-ի որդին է եղել։

Ինչ վերաբերում է Արտաշես Ա-ի Արտավազդ որդու պատմականությանը, ապա այն բավարար չափով հավաստվում է Հուստինոսի՝ պարթև թագավոր Միհրդատ Բ-ի (մ. թ. ա. 123—88 թթ) օրոք ապրած հայոց Արտավազդ թագավորի մասին հաղորդմամբ, որը և մեջ է բերում Հ. Մանանդյանը։

Այսպիսով տեսնում ենք, որ Խորենացու մոտ հանդես եկած Արտաշեսի հինգ որդիներից երեքը, որոնք հիշատակվում են զորքերի հրամանատարության չորս մասի բաժանման կապակցությամբ (որը մենք համարեցինք առասպելին

խորթ երևույթ), զատվում են մյուսներից՝ առասպելականներից, նաև որպես պատմական անձնավորություններ և դրանով մտածել տալիս, որ նրանց հետ առնչվող այդ նորամուծությունը՝ զորքի հրամանատարության բաժանումը չորս մասի ըստ երկրի կողմերի, որն ընկած է հետագա բդեշխությունների առաջացման հիմքում, նույնպես պատմական իրողություն է, կապված Արտաշես Ա-ի ժամանակի հետ։

Սակայն այդ երեքից Արտավազդը առկա է որդիների նաև այն խմբում, որն առասպելում է ներկայացված եղել ու, այդպիսով, երկու խմբերը միացնող օղակ է հանդիսանում։ Ըստ երևույթին, նա հիմք պիտի ծառայած լինի Խորենացուն՝ երկու աղբյուրներից Արտաշեսի որդիների մասին եկող այդ տարբեր տեղեկությունները միավորելու համար[50]։

Վերլուծելով Խորենացու կողմից վիպասանքի մի շարք դրվագներում մտցված փոփոխություններն ու ներմուծումները և յուրաքանչյուր դեպքում հանգելով եզրակացության, որ դրանք ինչ որ այլ աղբյուրի տվյալների ներգործության հետևանք են, այժմ, թվում է, իրավունք ունենք ընդհանրացում անելու։ Հենվելով այն հանգամանքի վրա, որ բոլոր դեպքերում Խորենացու մտցրած ուղղումները տանում են դեպի տվյալ դրվագի պատմականացումը, իսկ դեպքերի մեծ մասում նույնիսկ դեպի նրանց առնչումը կոնկրետ՝ Արտաշես Ա-ի հավաստի աղբյուրներից մեզ հայտնի գործունեությանը, կարելի է մտածել, որ միշտ գործ ունենք միևնույն աղբյուրի ազդեցության հետ, աղբյուր, որը և՛ իրականում արժանահավատ է, և՛ Խորենացու աչքում բարձր արժեք է ունեցել, ավելի

50 Բացի այս հինգ որդիներից Խորենացին հիշատակում է նաև Արտաշեսի վեցերորդ որդուն, Տիգրան անունով, սակայն շատ ուշ, Արտավազդի և Տիրանի թագավորությունները նկարագրելուց հետո (II, 74)։ Ըստ երևույթին սա ներկայացված չի եղել ոչ վիպասանքում, ոչ էլ Արտաշեսի պատմության գրավոր աղբյուրում, այլ գալիս է Մարաբայից ժառանգած արքայացանկից։

բարձր, քան վիպասանքը, ուստի և հիմք է ծառայել վերջինիս մատուցած նյութի մշակման համար։

4

Այդ աղբյուրը, որը Խորենացին անվանում է Ողյումպ քրմի «մեհենական պատմություն», բացի վերը նշված մի քանի փաստերից, որոնք դարձել են առասպելի նյութի մշակման գործոն, մատակարարել է Խորենացուն նաև բազմաթիվ այլ, արդեն առասպելից անկախ հանդես եկող փաստեր, որոնց քննարկմանն էլ անցնում ենք։

Քանի որ մենք, իրերի բերմամբ, սկսեցինք Արտաշեսի պատմության քննությունը մեջտեղից, և ոչ սկզբից, և հերթականորեն անդրադարձանք մի քանի գլուխների, ապա նպատակահարմար է շարունակել քննությունը նույն կարգով մինչև պատմության ավարտը ու այնուհետև նոր վերադառնալ նրա սկզբնական հատվածին։

Նույն գլխում, որտեղ խոսվում է Արտավազդի եղբայրների ու նրանց նախանձի մասին, ուսումնասիրողները ուշադրություն են դարձրել Կասբից երկրի մասին հաղորդման վրա, երկիր, որը հիշատակված է նաև Ստրաբոնի մոտ՝ Κασπιανή— *Կասպիանե ձևով*[51]*։ Գ. Ա. Տիրացյանը մատնացույց է արել, որ Կասպիանե երկիրը Արտաշես Ա-ի կողմից մեդացիներից (մարերից) գրավելու և Մեծ Հայքի պետությանը միացնելու մասին՝ իր զուգահեռն է գտնում դեպի Կասբից երկիրը Արտաշեսի օրոք կատարված արշավանքի Խորենացու այս գլխում տրված նկարագրության մեջ*[52]*։ Խորենացու նկարագրությունը, սակայն, շատ ավելի մանրամասն է, և Գ. Ա. Տիրացյանն իրա-*

51 *Ս. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 57։*

52 *Գ. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի դրվագներ Հայաստանի Ն. մ. թ. III—II դարերի պատմության մասին, «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 17 և հաջ.։*

վացիորեն հարց է դնում այդ մանրամասնությունների մի մասի պատմական հավաստիության վերաբերյալ։

Անդրադառնանք Ստրաբոնի համապատասխան հատվածին.

«Պատմում են,— գրում է Ստրաբոնը,— որ Հայաստանը, նախապես փոքր լինելով, աճել է Արտաքսիասի (Արտաշեսի) և Զարիադրիսի (Զարեհի) ուժերով. սկզբում սրանք Անտիոքոս Մեծի ստրատեգոսներն էին, իսկ նրա տեղի տալուց հետո թագավորներ դարձան մեկը Սոֆենեի (Ծոփքի), Ակիսենեի, Օդոմանտիսի և այլ երկրամասերի, մյուսը՝ Արտաքսատայի (Արտաշատի) շուրջն ընկած հողերի վրա. աճեցին, շրջակա ազգերից երկրամասեր գրավելով՝ մեդացիներից (մարերից)՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան (Պարսպատունիքը)[53]*, իբերներից (վրացիներից) Պարիադրեսի (Պարխարի) նախալեռները, Խորձենեն (Կղարջքը)*[54] *և Գոգարենեն (Գուգարքը), որը Կյուրոս (Կուր) գետի այն կողմն է, խալիբներից և մոսինոյկներից՝ Կարենիտիսը (Կարին) և Դերքսենեն*[55] *(Դերջան), որոնք Փոքր Հայքին են հարում կամ նրա մասերն են, կատաոններից՝ Ակիլիսենեն (Եկեղիքը) և Անտիտավրոսի շուրջն ընկած հողերը, ասորիներից՝ Տամորիտիսը*[55ա] *(Տմորիքը). այնպես որ բոլորը միալեզու են»*[56]*։*

Այս նկարագրության մեջ խոսքը երկու անձնավորությունների՝ Արտաշես Ա-ի և Ծոփքում թագավորած Զարեհի ձեռքբերումների մասին է։ Վերջինս իր պետությանն է միացրել նրան հարող Ակիլիսենեն (Եկեղիքը) և «Անտիտավրոսի շուրջն ընկած հողերը», գրավելով դրանք կատաոններից։ Մնացածը Ստրաբոնի հաղորդման մեջ վերաբերում է Արտաշես Ա-ին։

53 *Ըստ Ս. Երեմյանի։*

54 *Տե՛ս Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 59։*

55 ***Բնագրում*** Ξερξήνην — ***ուղղելի է*** Δερξήνην։

55ա ***Բնագրում*** Ταρωνῖτιν — ***ըստ Մարկվարտի, Տոմաշեկի և Մանանդյանի կարծիքի ուղղելի է*** Ταμωρῖτιν ***«Տմորիքը». տե՛ս Հ. Մանանդյան,*** *Քննական տեսություն, Ա, էջ 117։ Ըստ Ս. Երեմյանի ուղղելու անհրաժեշտություն չկա. տե՛ս նշվ. աշխ., էջ 53, 60։*

56 Strab. *XI. 14, 5։*

Արտաշես Ա-ը, ուրեմն, ըստ այս հաղորդման, ընդլայնել է Հայոց պետությունը երկրի բոլոր չորս ուղղություններով. արևելյան՝ դեպի մեդացիների (մարերի) կողմը, հյուսիսային՝ դեպի իբերների (վրացիների) կողմը, արևմտյան՝ դեպի Փոքր Հայքի կողմը և, վերջապես, հարավային՝ դեպի ասորիների կողմը։ Պետության ընդլայնման այս չորս ուղղությունները, ելակետ ընդունելով «Արտաշատը և նրա շուրջն ընկած հողերը», Ստրաբոնի մոտ դրսևորվում են ամենայն հստակությամբ։

Արդեն նշվեց, որ Խորենացու մոտ իրենց արտացոլումն են գտել արևելյան ուղղությամբ Արտաշեսի իրականացրած ռազմական ձեռնարկությունները։ Սակայն սա բոլորը չէ։ Խորենացին հենց այդ գլխում տեղեկություններ է հաղորդում նաև նույն թագավորի օրոք հյուսիսային ուղղությամբ ձեռնարկված արշավանքի մասին։ Հայտնելով Արտաշեսի որդիներից Զարեհի հյուսիսային զորքի հրամանատար նշանակվելու մասին, նա շարունակում է. «Եւ Զարեհ էր այր սէգ և յորս երէոց նահատակ, իսկ առ պատերազմունս վատ և տաղտուկ. զորոյ զփորձ առեալ Քարձամայ ուրումն արքայի Վրաց՝ ապստամբեցուցանէ զերկիրն, և կալեալ զԶարեհ, ի բանտի դնէ ի Կաւկաս։ Ընդ որում պատերազմեալ Արտաւազդայ և Տիրանայ հանդերձ Սմբատաւ դարձուցանեն զեղբայրն ի մեծէ կարակմէ»։

Հ. Մանանդյանն օգտագործել է այս հատվածը, ինչպես և բովանդակությամբ սրան հարող՝ «Քարթլիս ցխովրեբա»-ի հատվածը, Արտաշեսի Զարեհ որդու պատմականության խնդրի կապակցությամբ, սակայն դրանք, մասնավորապես երկրորդը, որ լի է մանրամասներով, շատ ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում Արտաշեսի հյուսիսային արշավանքների կապակցությամբ։ Ահա «Քարթլիս ցխովրեբա»-ի համապատասխան հատվածը.

«Ապա Հայոց թագավոր Արտաշեսն (Արտաշանն) իր ամբողջ զորքով և նրա սպարապետ Սմբատ Բյուրատյանը շարժվեցին դեպի Քարթլի... Եկան հայերը և նստեցին Մցխեթում...

Ապա վրացիք և օսերն՝ նեղ տեղն ընկնելով, խնդրեցին հաշտություն, արյուն և հատուցում չփնտրելով։ Հայոց թագավորն ունկնդիր եղավ նրանց աղերսին, և... սարկացնելով վրացիներին ու օսերին՝ գնաց։ Անցավ մի քանի տարի և հայերից ավերված Քարթլին վերաշինվեց։ Այդ ժամանակ հայերը զբաղված էին, քանի որ պատերազմ սկսեցին պարսից և հույների հետ։ Ապա վրացիք և օսերը բարեպատեհ ժամանակ գտան և սկսեցին ճնշել հայերին, քանի որ հայոց ամբողջ զորքը և թագավորի երկու որդին Սմբատի հետ միասին պատերազմումն էին [ընդդեմ] պարսից... Արտաշես (Արտաշան) թագավորը զորք ժողովեց [նրանցից], որոնք տանն էին և՝ տալով իր Զարեհ (Զարեն) որդուն՝ ուղարկեց ընդդեմ վրաց։ Իսկ վրացիք և օսերը՝ ժողովվելով դիմեցին Ջավախքի կողմը, հաղթեցին և փախուստի մատնեցին Զարեհ (Զարեն) հայոց թագավորի որդուն, և խորտակեցին նրա ամբողջ զորքը, որին հետամուտ եղան մինչև Հայքի սահմանները և բանտարկեցին թագավորազն Զարեհին (Զարենին) լճի ափին, որ Ցել է կոչվում... և կալանավորեցին Դարիալանի բերդում... Ապա երրորդ տարին եկավ Սմբատ Բյուրատյանը և թագավորի որդիք Արտավազդը (Արտավազ‖Արտվազ) և Տիգրանը հայկական ամբողջ զորքով... և կանգ առան Թռեղքում... Վրացիք վերադարձրին թագավորի որդուն...» և այլն[57]։

Այս հատվածի նմանությունը Խորենացու համապատասխան հատվածին ակնհայտ է ոչ միայն ըստ բովանդակության, այլև ըստ այն պարագայի, որ այստեղ ևս, ինչպես Խորենացու մոտ է, գործողությունը տեղափոխված է մ. թ. I դարը (հատվածից այդ անմիջապես չի երևում, բայց պարզվում է «Քարթլիս ցխովրեբա»-ում նրա գրաված տեղով)։ Սակայն նույնքան ակնհայտ են և տարբերությունները, որոնք դրսևորվում են մեծ մասամբ վրացական աղբյուրի հաղորդած և Խորենացու մոտ բացակայող մանրամասնություններում։ Դրվագի աղերսը հայ գրականության հետ և մասնավորապես Խո-

57 Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 158 և հաջ.։

րենացու «Հայոց պատմության» հետ անուրանալի է[58], սակայն տակավին պարզ չէ և վիճելի է այդ աղերսի բնույթը[59]: Խնդիրը հայագիտական ոլորտում մշակվելու մեծ կարիք է զգում: Մենք այստեղ չենք խորանա այդ հարցի մեջ և կբավարարվենք՝ նշելով վրացական աղբյուրի հաղորդած՝ մեզ համար առանձնապես արժեքավոր մանրամասները, այն, որ Խորենացու մոտ մեկ արշավանքի դիմաց այստեղ հիշատակվում է Արտաշեսի օրոք դեպի հյուսիս կատարված երեք արշավանք, որ հիշատակված են ի միջի այլոց հայերի պատերազմները պարսիկների ու հույների դեմ և վերջապես կարևորագույնը, որ հայկական արշավանքները կապվում են հատկապես Ջավախքի և Թռեղքի հետ, որոնք մասն են Գուգարքի, իսկ Գուգարքը, ինչպես տեսանք, հիշատակված է Ստրաբոնի մոտ (Գոգարենե) որպես Արտաշեսի կողմից իբերներից (վրացիներից) ձեռք բերված երկրամաս:

Ստրաբոնի մյուս, հարավային ուղղությանը վերաբերող հաղորդման կապակցությամբ (որտեղ ասված է, թե Արտաշեսը գրավեց «ասորիներից Տամորիտիսը (Տմորիքը)») մեր ուշադրությունն է գրավում Խորենացու նույն քննարկվող գլխից մի այլ հատված: Պատմելով, որ Կասբից երկրից հաղթությամբ վերադարձած Սմբատը որպես պարգև ստանում է լայնածավալ հողեր ու պատերազմի ավարը, որին նախանձելով արքայազն Արտավազդը մտադրվում է սպանել Սմբատին, Խորենացին շարունակում է. «Իսկ Սմբատայ տեղի տուեալ, գնաց զկողմամբք Ասորեստանի... Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱւկի նստուցեալ զբազմութիւն գերւոյն. քանզի էր ի ծերութեան կին արարեալ յասորեստանեայց հուպ յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց, վասն այնորիկ և զնորին կողմամբք բնակեցաւ»: Խորենացու այն բացատրությունը, թե «քանզի էր» և այլն, հակասում է իր իսկ հիշատակած «Հրամանաւ Արտաշիսի

[58] Г. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси,, 1959, էջ 346,

[59] Լ. Մելիքսեթ-բեկ, նշվ. աշխ., Ա, էջ 141 և հաջ.:

բնակէ...»-ին: Հավանորեն, քաջ գիտենալով, որ Տմորիքը երբեք Բագրատունյաց տոհմին չի պատկանել, Խորենացին անհրաժեշտ է գտել հատուկ հիմնավորում տալ Սմբատի այնտեղ բնակվելուն:

Ստրաբոնի վկայության լույսի ներքո Խորենացու այս հաղորդման իսկական իմաստը այն է, որ Արտաշեսը իր զորավարին նշանակում է Տմորիքի կառավարիչ և այդ հանգամանքը համահնչուն է Խորենացու՝ նույն այս գլխում արած հաղորդմանը, թե Արտաշեսը Սմբատին նշանակեց հարավային զորքերի հրամանատար: Սմբատն, այսպիսով, ստացել է և՛ ռազմական, և՛ վարչական իշխանություն: Ընդսմին, ինչ-որ պատճառով անհրաժեշտ է գտնվել կատարել նախորդ արշավանքի ժամանակ գերեվարված բնակչության վերաբնակեցում, թերևս նոր նվաճված Տմորիքը յուրացնելու նպատակով: Նման վերաբնակեցումները մեզ շատ լավ հայտնի են հին արևելյան պետությունների պրակտիկայից. մերձավոր օրինակ է ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի (մ. թ. ա. 786—764 թթ.) կողմից Ծուպանի և Խատտի երկրներում վերցրած 6600 ռազմագերիների բնակեցումը իր նոր հիմնադրած Էրեբունի բերդաքաղաքում, որի մասին հաղորդում է Խորխորյան արձանագրությունը[60]: Թե ինչո՞ւ Խորենացու մոտ ի հայտ չի գալիս Տմորիքի նվաճման մոմենտը, այդ առանձին հարց է, որը կապված է նույնանման այն հարցի հետ, թե ինչո՞ւ Կասբից երկրի նվաճումը դիտվում է նրա մոտ սոսկ որպես ապստամբության ճնշում: Այդ հարցին մենք կանդրադառնանք սույն գլխի վերջում:

Արտաշեսի արշավանքների չորրորդ, արևմտյան ուղղությունը իր հատուկ արտահայտությունը չի գտել Մ. Խորենացու այս գլխում այնպես, ինչպես գտել են արևելյան, հյուսիսային և հարավային արշավանքները: Սակայն պարզորոշ դրսևորվել է, Ստրաբոնի մոտ ևս առկա, երկրի բոլոր չորս

[60] УКН, 128 А2. Տե՛ս նաև И. М. Дьяконов, К вопросу о судьбе пленных в Ассирии и Урарту, ВДИ, 1952, № 1, էջ 95 և հաջ.:

ուղղություններով Արտաշեսի գործադրած ռազմական ջանքերի ընդհանուր գաղափարը։ Նկատի ունենք զորքերի արդեն հիշատակված բաժանումը չորս մասի և համապատասխան զորավարությունների ստեղծումը։

Այսպիսով, պետք է նշենք, որ Մ. Խորենացու «Հայոց պատմության» երկրորդ գրքի 53-րդ գլխի տվյալները Արտաշեսի ռազմական գործունեության մասին սխեմատիկորեն առնչվում են Ստրաբոնի «Աշխարհագրության» XI գրքի 14-րդ գլխի 5-րդ կետում նույն այդ պատմական դրվագի մասին հաղորդածին։ Քանի որ Խորենացու կողմից Ստրաբոնի երկի օգտագործման հանգամանքը խիստ բացառվում է, և առկա առնչության բնույթը ուղղակի օգտագործման մասին չէ, որ վկայում է, այլ ավելի բարդ հարաբերակցության, ապա կարելի է ենթադրել, որ տվյալ հարցի կապակցությամբ Ստրաբոնի օգտագործած աղբյուրը պատմա-մշակութային նույն ոլորտից, թերևս նույն ակունքից է գալիս, ինչ որ և Խորենացուն աղբյուր ծառայած երկի նախնական տարբերակը։

Այժմ անցնենք մի այլ խնդրի, որը տվյալ դեպքում ծագելով նույն 53-րդ գլխի բովանդակությունից, ունի ավելի լայն նշանակություն։ Այդ գլխում նկարագրված բոլոր իրադարձությունների մեջ չափազանց մեծ դեր է վերապահված թագադիր ասպետ Սմբատ Բագրատունուն․ հիրավի նա է արշավում Կասբից երկիրը և հաղթանակով ու ավարով վերադառնում, նա է նշանակվում Տմորիքի վերակացու, նա է կարգվում հարավային զորքերի հրամանատար, վերջապես նա է արշավում դեպի վրաց կողմը և ազատում արքայազն Զարեհին։ Որ սա Սմբատի հետ կապված դրվագների պատահական խտացում չէ, վկայում է նրա խաղացած դերը Արտաշեսի ողջ պատմության մեջ, այնպես, ինչպես այդ պատմությունը շարադրված է Խորենացու մոտ։ Սմբատը փրկում է մանուկ Արտաշեսին Երվանդից․ Սմբատը հովանավորում է նրան մինչև հասունանալը․ Սմբատը զորք է խնդրում և ստանում պարթևաց արքայից, բերում Արտաշեսին Հայաստան․ Սմբատը

ճակատամարտ է տալիս Երվանդի զորքերին, հետապնդում փախչող Երվանդին, առնում Երվանդաշատը․ Սմբատն է թագավորեցնում Արտաշեսին, սպանում քրմապետ Երվազին, նոր քրմապետ նշանակում, խնամախոս դառնում Արտաշեսի և Սաթինիկի կապակցությամբ, արշավում ալանների երկիրը, թագավորեցնում այնտեղ Սաթինիկի եղբորը, ճակատամարտում հաղթում հռոմեացիներին և դրանով փրկում արքայազուններին։ Այսպիսով Սմբատը գրեթե անելիք չի թողնում Արտաշեսին, փոխարինում է նրան, դառնալով նրա alter ego։ Որչափո՞վ է հավաստի նրա այս մասնակցությունը թվարկված իրադարձություններին, որոնց գերակշռող մասը, ինչպես տեսել ենք ու կտեսնենք, իրական-պատմական է։ Նույնիսկ առանց լրացուցիչ փաստարկների, միայն մտաբերելով այն առանձնահատուկ տեղը, որ Խորենացին հատկացրել է Բագրատունիներին իր «Պատմության» մեջ ընդհանրապես, կարելի է պնդել, որ Սմբատի դերը խիստ չափազանցված է։ Որ Սմբատը նման դեր չի խաղացել Արտաշեսի պատմության առասպելական աղբյուրում, վիպասանքում, հետևում է հենց այն հանգամանքից որ առասպելը հյուսված է Արտաշեսի և ոչ Սմբատի շուրջը։ Մ. Աբեղյանը նշում է, որ Խորենացին Սմբատի մասին «գուցե վիպասանքից ոչինչ կամ շատ սակավ բան վերցրած լինի»[61]։ Այս սակավ բանի մասին ենթադրությունն էլ հանգչում է այն փաստի վրա, որ Խորենացին մի տեղ ասում է հետևյալը․ «Սիրելի է ինձ ասել և վասն առնն քաջին Սմբատայ․ Քանզի արդարև ըստ առասպելին ոչ ինչ կարի հեռի ի ճշմարտութենէն»[62], որից հետո նկարագրում է Սմբատի բարեմասնությունները, ըստ որում ամենևին ոչ ժողովրդական ոճով, կիրառելով նույնիսկ «դրակոնտիկոն» հունարեն բառը։ Սակայն այստեղ հիշատակված «առասպել» բառի տակ արդյոք անպայման պիտի հասկանանք վիպասա՞նքը, Արտաշեսի առասպե՞լը։ Անշուշտ այնպիսի մի հզոր

61 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 378, ծան. 1։
62 Խորենացի, II, 52։

ու փառավոր նախարարական տոհմ, ինչպիսին էր Բագրատունյաց տոհմը, ունեցել է իր ավանդությունները ու առասպելները (հմմտ. Արծրունիների ավանդությունները Թովմայի մոտ), որոնց քաջածանոթ պիտի լիներ Բագրատունիների շատագով Խորենացին։ Սակայն, եթե վերանանք Սմբատի այդօրինակ մասնակցությունից, համարելով այն Խորենացու կողմից թույլ տրված չափազանցություն, որը և իրականում այդպես է, այնուամենայնիվ դեռ մնում է այն հարցը, թե ինչո՞ւ Սմբատն ընդհանրապես առնչվել է Արտաշեսին և հանդես եկել նրա զինակցի ու սատարի դերում։ Ահա այստեղ արդեն հասնում ենք այնպիսի մի ոլորտի, որտեղ Խորենացին, առանց աղբյուրից քաղած որևէ կռվանի ոչ մի քայլ չի անում. այլ բան է, որ հետո նա կարող է զարգացնել ու զարդարել այդ կռվանը, ինչպես արել է ներկա դեպքում։

Մինչև ամենավերջին ժամանակները մենք ստիպված կլինեինք փնտրել այդ կռվանը Արտաշեսի առասպելի մեջ, և հենց այդպես էլ անում է, ինչպես տեսանք, Մ. Աբեղյանը։ Այժմ, սակայն, կարող ենք հանգիստ թողնել առասպելը և որոնել այդ կռվանը Խորենացու հիմնական գրավոր աղբյուրում։ Այդ հնարավորությունը ընձեռում է վերջերս Զանգեզուրում գտնված Արտաշեսի արամեերեն արձանագրությունը, որի մեջ կան հետևյալ տողերը [’]rtḥš[sy] mlk ’rwnd[qn] ṭb br zryḥr wnqpr qtr br ’ḥstrsrt—«Արտաշես արքա, Երվանդական, Բարի, որդի Զարեհի և Նեկփառ, թագադիր, որդի Ախշահրսարտի»[63], ըստ որում այդ տողերը խաղում են արձանագրության ստորագրության դեր։ Այստեղից պարզվում է ո՛չ միայն այն, որ Արտաշեսի օրոք Հայաստանում արդեն գոյություն է ունեցել «թագադիրի» բարձր պաշտոն, այլև այն, որ Արտաշես Ա-ի օրոք այդ պաշտոնը կրող անձնավորությունը մեծ դեր է խաղացել պետության մեջ, եղել է թագավորի մերձավորը։ Այսպիսով պատմական թագադիր

[63] А. Г. Периханян, Арамейская надпись из Зангезура, ՊԲՀ, 1965, № 4, էջ 108։

Նեկփառին և Խորենացու հիշատակած թագադիր Սմբատին մերձեցնում է իրար նրանց տիտղոսը և թագավորի նկատմամբ նրանց դիրքը։ Նրանց իրարից բաժանում է միայն անձնանունների տարբերությունը։ Կարծում ենք, որ թե՛ նմանության, թե՛ տարբերության պատճառը պետք է որոնել Խորենացու անմիջական աղբյուրում, եզրակացնելով, որ այնտեղ հիշատակված է եղել թագադիր պաշտոնյան, այն էլ որպես թագավորի մերձավոր, սակայն հիշատակված չի եղել այդ թագադիրի անունը[64]։ Խորենացին առել է փաստը և լրացրել պակասող անունը, վերցնելով այն Բագրատունիների ավանդություններից։ Ինչո՞ւ Բագրատունիների։ Որովհետև Խորենացուն հայտնի էր, որ թագադիրները Բագրատունի տոհմից են եղել[65]։

Սակայն այս եղել է կռվանի զարգացման միայն առաջին քայլը, հաջորդ քայլերով Խորենացին նորանոր դրվագների մեջ է ներմուծել Սմբատին, դրվագներ, որոնք մեծ մասամբ գոյություն են ունեցել Խորենացու աղբյուրներում, սակայն առանց Սմբատի։ Միաժամանակ չպետք է մոռանալ, որ, այնուամենայնիվ, այդ դրվագների շարքի մեջ կա այն մի դրվագը կամ այն մի քանի դրվագները, որի կամ որոնց մեջ էլ հենց հասել է Խորենացուն իր աղբյուրից անանուն թագադիրը։ Սակայն գտնել այդ դրվագը կամ դրվագները, զատել

64 Նման դեպքերը հաճախակի են հանդիպում. հիշեցնենք ընթերցողին, որպես նմուշ, այն հանգամանքը, որ Քսենոփոնի «Կյուրոպեդիայում» բազմիցս հանդես է գալիս «արմենների թագավորը»՝ առանց անվան հիշատակման, այն դեպքում, երբ նրա երկու որդիները՝ Տիգրանը և Սաբարիսը հիշատակված են հականե հանվանե։

65 Արձանագրության հրատարակիչը թագադիր Նեկփառի հոր՝ Ախշահրսարտի ’ḥštrsrt անվան երկրորդ բաղկացուցիչ մասը՝ սարտ, որ նշանակում է «միավորվող», տեսնում է նաև Բագրատունյաց տոհմի մի ներկայացուցչի՝ Աշոտ Սարթանի անվան մեջ (XI դար) (А. Г. Периханян, նշվ. աշխ., էջ 113), որպիսի հանգամանքը կարող է որոշ ենթադրությունների տեղիք տալ Բագրատունիների տոհմի ծագման ժամանակի խնդրի շուրջը։

դրանք մյուսներից, առայժմ կարելի է միայն խիստ ենթադրաբար։

Պետք է ասել, որ մյուս նախարարական տոհմերի ու նրանց ներկայացուցիչների՝ Արտաշեսի պատմությանը կցվելու պարագաները նույնանման բնույթ են կրում։ Յուրաքանչյուր դեպքում Խորենացին ունեցել է իրական մի որևէ կռվան (այլ բան է, որ այդ կռվանը մեր աչքում կարող է իրական չհանդիսանալ) այդ անելու, որն ընդունելով որպես ելակետ, այս կամ այն չափով զարգացրել է նրա տվյալները։ Ասվածը լրիվ վերաբերում է վերը մանրամասն քննարկված Մուրացյան տոհմի օրինակին, ինչպես և, ամենայն հավանականությամբ, նախարարական տոհմերի մյուս հիշատակություններին, թեև միշտ չէ, որ մենք ի վիճակի ենք հայտնաբերելու համապատասխան կռվանը։

5

Անցնելով հաջորդ, 54-րդ գլխի քննությանը, մենք միաժամանակ թևակոխում ենք մի նոր, ոչ պակաս կարևոր, քան նախորդն էր, խնդրի ասպարեզ՝ «ժամանակագրական համակարգի արտադրանքի» ասպարեզը։

Վերը շարադրվածից արդեն ակներև է (իսկ հետագայում էլ առավել ակներև կդառնա), որ Արտաշեսի պատմությունը Խորենացու մոտ ժամանակագրական խորթ միջավայրում է տեղադրված։ Վերաբերվելով իրականում մ. թ. ա. II դարի առաջին կեսին, այն ընկել է մ. թ. I դարի վերջերը—II դարի սկզբները։ Խորենացու շարադրանքում շարքով անցնում են հռոմեական կայսրներ Վեսպասիանոսը, Տիտոսը, Դոմիտիանոսը, Ներվան, Տրայանոսը և Հադրիանոսը, և ոչ միայն սոսկ անցնում են, այլև հարաբերությունների մեջ են մտնում նախ Երվանդի, ապա և Արտաշեսի հետ։ Այսպես, Խորենացին գրում է. «Բայց թիկունս առնելով Երուանդայ զՀռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպիանոսի և Տիտոսի, թողլով

ի նոսա զՄիջագետս»[66]։ Արտաշեսին վերաբերող հատվածում մի ամբողջ գլուխ կա, վերնագրված՝ «Պատերազմ ընդ զօրս Դոմետիանոսի ի Բասեան», որտեղ հիշատակված է նաև Դոմիտիանոսի հաջորդ Ներվան, իսկ հաջորդ գլուխը կոչվում է «Յաղագս Տրայիանոսի և նորին գործոց...» և այլն, իսկ այս գլխի վերջում հիշատակվում է Հադրիանոսը։ Այլ գլուխներում հիշատակված են մ. թ. I դարի վրաց թագավորներ Փարսմանը և Քարձամը (վրաց աղբյուրներում՝ Քարթամ)[67]։

Կասկածից վեր է, որ այս պարագաներում կամ պետք է համակերպվել սույն միջավայրի հետ և ընդունել, որ Խորենացու շարադրանքի մեջ հանդես եկող բազմաթիվ իրողությունների, անձերի ու երևույթների նմանությունը բուն Արտաշիսյան շրջանի երևույթներին սոսկ պատահականությունների մի շարան է, հետևաբար, ընդունել, որ Մ. Խորենացու այդ գլուխները մ. թ. I դարի երկրորդ կեսի և հաջորդ դարի սկզբի հայոց պատմության անհարազատ նկարագրություններ են, կամ տեսնել այդ պարագաներում, ինչպես ասվեց, «ժամանակագրական համակարգի արտադրանք», այսինքն Խորենացու մոտ հանդիպող այն երևույթը, երբ որևէ պատմական անցք կամ իրադարձություն սխալմամբ կամ թյուրիմացաբար ընկնելով մի այլ, իրեն խորթ, ժամանակագրական միջավայր, «օրինականացվում» է այնտեղ, «ակլիմատիզացիայի» է ենթարկվում, արհեստական կապերով կապվելով այդ ժամանակի բուն գործիչների և իրադարձությունների հետ։ Փաստերի ճնշման տակ մենք ընտրել ենք երկրորդ ուղին և այժմ մեր առջև խնդիր է ծագում բացատրել, թե ինչո՞ւ մեզ հետաքրքրող Արտաշեսի պատմությունն ընկել է Խորենացու մոտ հենց այս և ոչ մի այլ ժամանակագրական միջավայր։

Այդ հարցին պատասխանելու մի փորձ արդեն գոյություն ունի. նախ անդրադառնանք դրան։ Դեռևս Սեն-Մարտենը, այնուհետև նաև Գուտշմիդը, նույնացնում էին Խորենա-

---

66 Խորենացի, II, 38։

67 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 58։

ցու Երվանդին օսրոենյան (Ուռհայի, Եդեսիայի) թագավո-
րագն Արբանդեսի (᾿Αρβάνδης) հետ, որ ապրել է Տրայանոս
կայսեր օրոք, հիմք ընդունելով անունների նմանությունը և
Կասիոս Դիոնի այն հաղորդումը, թե սա հռոմեացիներին է
հանձնել Միջագետքը (նույնը Խորենացին ասում է Երվանդի
մասին)։ Հ. Մանանդյանը, որը, ինչպես գիտենք, Երվանդին
ճիշտ կերպով նույնացնում է Ստրաբոնի հիշատակած Օրոնտե-
սի հետ, միաժամանակ յուրովի հենվել է հիշյալ գիտնական-
ների կարծիքի վրա, եզրակացնելով, որ Խորենացին շփոթել
է Օրոնտես-Երվանդին «Եդեսիայի Աբգար է թագավորի որ-
դու, Արբանդեսի հետ», ուստի և տեղավորել է նրան (հետևա-
բար և կարող ենք ասել՝ նաև նրա հետ կապված Արտաշեսին)
այնտեղ, ուր նա այժմ կա[68]։

Ահա Հ. Մանանդյանի պատասխանը վերը առաջադրված
հարցին։ Այս պատասխանի ընդհանուր ուղղությունը միան-
գամայն ճիշտ լինելով, ճիշտ չէ սակայն որոշված այն կռվա-
նը, որը հենարան է ծառայել Խորենացու համար Երվանդ-Ար-
տաշեսի պատմությունը իր ժամանակագրական համակար-
գում տեղադրելու պահին։ Նախ և առաջ Խորենացու պատ-
մությունից ամենևին չի երևում, թե նա ճանաչել է վերոհիշ-
յալ արքայազնին։ Բայց ենթադրենք, թե նա իսկապես իմացել
է (Դիոնից կամ մի որևէ այլ աղբյուրից), որ ոմն օսրոենյան
արքայազն Արբանդես հանձնել է Միջագետքը Տրայանոս կայ-
սեր, և եկել սխալ եզրակացության, թե դա հենց իր Երվանդն
է (ինչպես ենթադրում է Հ. Մանանդյանը)։ Այդ դեպքում ին-
չո՞ւ պետք է Խորենացին կարեր այդ Երվանդ-Արբանդեսին
Տրայանոսից (որը, ինչպես տեսանք, նրան քաջ հայտնի էր)
և դարձներ Վեսպասիանոսի ու Տիտոսի ժամանակակից։ Իսկ
Խորենացու մոտ հենց այդպես է. Թյուրիմացության մեջ է Գր.
Խալաթյանցը, երբ պնդում է, թե Երվանդն ու Արբանդեսը ժա-
մանակակիցներ են[69]։

68 Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Ա, էջ 126։

69 Г. Халатянц, նշվ. աշխ., էջ 219։

Ահա մեզ հետաքրքրող շրջանի ժամանակագրությունը՝ ըստ Մ. Խորենացու[70]։

Աբգար թագավորի 2-րդ տարին, որն է և Հիսուս Քրիստոսի ծննդյան տարին՝ ըստ Խորենացու	մ. թ. 1 թվական
(Աբգարը ըստ Խորենացու թագավորել է 38 տարի)	Աբգարի թագավորության ընթացքում Խորենացին հիշատակում է Օգոստոս կայսեր մահը (14 թ.) և Տիբերիոսի կայսրությունը (14—37 թթ.)
Սանատրուկ թագավորի գահակալությունը՝	38 թվական
(ըստ Խորենացու թագավորել է 30 տարի)	Սանատրուկի օրոք հիշատակվում է Կլավդիոս կայսրը (41—54 թթ.)
Երվանդ թագավորի գահակալությունը՝	68 թվական
(ըստ Խորենացու թագավորել է 21 տարի)	Երվանդի օրոք հիշատակվում են Վեսպասիանոս (69—79 թթ.) և Տիտոս (79—81 թթ.) կայսրերը

70 Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 70։ Փակագծերում տրված են կայսրների կառավարման իրական տարեթվերը։

Արտաշես թագավորի գահակալությունը՝	89 թվական
(ըստ Խորենացու թագավորել է 41 տարի)	Արտաշեսի օրոք հիշատակվում են Դոմիտիանոս (81—96 թթ.), Ներվա (96—98 թթ.), Տրայանոս (98—117 թթ.), Հադրիանոս (117—138 թթ.) կայսրները
Արտաշեսի մահը՝	129 թվական

Խորենացու ժամանակագրական համակարգը քննելիս համոզվել ենք, որ մեր պատմահոր պատկերացումները հռոմեական կայսրների ժամանակագրության մասին շատ ճշգրիտ են. այստեղ ոչ մի շփոթ չկա։ Երվանդի ժամանակը, ինչպես ասվեց, համընկնում է Վեսպասիանոսի և Տիտոսի, մասամբ նաև հաջորդ Դոմիտիանոսի տարիներին, որը սակայն Խորենացու մոտ Երվանդի կապակցությամբ հանդես չի գալիս, այլ հիշատակված է Արտաշեսի օրոք, որի տարիներին է ընկնում այդ կայսեր կառավարման երկրորդ կեսը։ Արդ, եթե Խորենացին իսկապես շփոթած լիներ Երվանդին Տրայանոսի ժամանակակից Աբգանդեսի հետ, ապա նա Երվանդին կդներ Տրայանոսի դիմաց՝ մ. թ. II դարի սկզբներին, և այդ դեպքում ժամանակագրությունն այլ տեսք կստանար՝ Վեսպասիանոսի և Տիտոսի ժամանակակից կդառնար Սանատրուկը, իսկ Արտաշեսի թագավորությունը կհամընկներ Տիտոս Բ-ի (Անտոնինոս Օգոստոս՝ 138—161) և Լուկիոս Բերոսի (161—169) կառավարմանը, որոնց հետ, ըստ Խորենացու ժամանակագրության, այժմ համընկնում է Արտաշեսի որդիներ Տիրանի (130—150) և Տիգրանի (151—192) իշխանության ժամանակաշրջանը։

Քանի որ այդ չկա, ապա և չի կարելի Խորենացու կողմից Երվանդին Աբգանդեսի հետ շփոթելու ենթադրյալ հանգամանքը Երվանդի ժամանակագրական տեղադրման կռվան հա-

մարել։ Փնտրվող կռվանը մատնացույց է անում, և այն էլ շատ հստակ, ինքը Մովսես Խորենացին, ըստ որում այդ կռվանը, ինչպես և պետք էր սպասել, կապվում է Արտաշեսի, և ոչ Երվանդի հետ, որը Արտաշեսի համեմատությամբ երկրորդական կերպարանք է Խորենացու մոտ։

Իր երկրորդ գրքի 54-րդ գլուխը Խորենացին նվիրում է Դոմիտիանոսի զորքերի հետ պայքարի նկարագրությանը. գլխի վերնագիրն է «Պատերազմ ընդ զօրս Դոմետիանոսի ի Բասեան»։ Նկարագրելով պատերազմը՝ Խորենացին ավելացնում է. «Զայս կամելով երգել յառասպելսն՝ Դոմետ զումն ասեն եկեալ, որ է ինքն կայսր Դոմետիանոս. ոչ ինքն եկեալ այսր, այլ զհրաման նորա և զզօրս այլաբանաբար յանուն նորա կոչեն»։ Այս հատվածը մենք մի անգամ արդեն մեջ ենք բերել որպես Խորենացու կողմից առասպելի «այլաբանությունների» ճշգրտման օրինակ։ Առասպելում, այսինքն վիպասանքում, ինչպես պարզվում է Խորենացու ասածից, խոսք է եղել միայն այն մասին, թե եկավ ոմն Դոմետ։ Խորենացու խնդիրն է եղել մեկնաբանել այդ տեղեկությունը. նա համադրել է այս Դոմետին իրեն լավ հայտնի Դոմիտիանոս կայսեր հետ և նույնացրել նրանց։ Որոշ հետազոտողներ, հենվելով այն հանգամանքի վրա, որ Դոմիտիանոսի նման մի արշավանքի մասին այլ աղբյուրները լռում են, գտնում են, որ Խորենացին սխալվել է՝ Դոմետին նույնացնելով այդ կայսեր հետ, և որ իրականում նրա տակ թաքնված է Դոմիտիոս Կորբուլոնը[71], որը մ. թ. I դարի 50-ական թվականներին համառ պայքար է մղել Տրդատ Ա-ի դեմ և որի անունը կրող երկու լատիներեն արձանագրություն է գտնված Խարբերդում[72]։

Հետագայում, սակայն, Բաքվի մոտերքում Դոմիտիանոսի անունը պարունակող ռազմական մի արձանագրության գյու-

---

71 Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, Թիֆլիս, 1895 մասն Բ, էջ 242, Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 242, 324, Հ. Մանանդյան, Քննական տեսություն, Ա, էջ 353։

72 К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, էջ 212 և հաջ.։

տի կապակցությամբ կարծիք է հայտնվել, որ Խորենացու նկարագրածի նման մի արշավանք կարող էր տեղի ունեցած լինել Դոմիտիանոսի օրոք[73]։

Հարցի այս կամ այն լուծումը մեր տվյալ խնդրի համար կարևոր չէ, այլ կարևոր է այն փաստը, որ Խորենացին է առասպելի Դոմետին Դոմիտիանոսի հետ նույնացնողը։ Այդպես վարվելով՝ Խորենացին, բնականաբար, իր ժամանակագրական աղյուսակում Արտաշեսին, որը առասպելում Դոմետի ժամանակակիցն էր, պետք է դարձներ Դոմիտիանոսի ժամանակակից, և այդպես էլ արել է՝ դրա համեմատ դասավորելով նախորդող ու հաջորդող դեմքերին ու անցքերը, այնպես, ինչպես կա վերը տրված աղյուսակում։ Եթե Խորենացին ճանաչեր Դոմիտիոս Կորբուլոնին և իմանար նրա գործելու ժամանակը, իսկ Դոմետին էլ նույնացներ նրա հետ, ապա մենք ականատես կլինեինք նրա ժամանակագրության տվյալ հատվածի մի այլ տարբերակի։

Կարևորը և ուսանելին այստեղ այն է, որ Խորենացու թույլ տված ժամանակագրական տեղաշարժի (խոսքը Կորբուլոնի կամ Դոմիտիանոսի միջև երկընտրանքի սխալ կամ ճիշտ լուծման մասին չէ, այլ Արտաշեսի ողջ դրվագի տեղաշարժման) ակունքը, դրդապատճառը գտնվում է ո՛չ թե Արտաշեսի մասին իրական-պատմական տեղեկությունների մասամբ վերը ցուցադրված շարանում, այլ վիպասանքում, որը, ինչպես ասվեց, գերազանցորեն վերաբերում է Տրդատ Ա-ին։ Ուրեմն այդ սխալի սկզբնապատճառը հենց այն հանգամանքն է, որ Արտաշես Ա-ի մասին ստույգ տեղեկությունների վերոհիշյալ կոմպլեքսը Խորենացու գրչի տակ միացել-ձուլվել է Արտաշես անվան տակ հանդես եկող Տրդատ Ա-ի մասին վիպական բանավոր ավանդության և վերջինիս միջնորդությամբ եկել-տեղադրվել մ. թ. I դարի վերջերին—II դարի

73 Լ. Ս. Խաչիկյան, Դիտողություն Մ. Խորենացու Հայոց պատմության երկրորդ գրքի ԾԴ գլխի մասին, «Տեղեկագիր», 1948, № 11, տե՛ս նաև И. Г. Кянджунцян, К вопросу о восточной политике Рима, ՊԲՀ, 1955, № 3, էջ 134 և հաջ.։

սկզբներին։ Իհարկե, այստեղից դեռևս չի պարզվում խնդրի մյուս կողմը, այն, թե ինչու է Արտաշեսի պատմությունը պոկվել իր իսկական տեղից։ Բայց սրանում առեղծվածային ոչինչ չկա, և մենք ստորև կանդրադառնանք այդ հարցին ևս։

Արտաշեսի պատմությունը մեկ անգամ արդեն տեղադրելով խորթ ժամանակագրական միջավայրում, Խորենացին, որը ոչ մի բան անավարտ չէր թողնում, ստիպված է եղել այն հարազատացնել նոր միջավայրին՝ կապել ժամանակի իրական գործիչների՝ հռոմեական կայսրերի, պարթև թագավորների, վրաց իշխողների, ինչպես և նրանց ժամանակակից պատմական անցքերի հետ։ Այս կապերից մեկն էլ դրսևորվել է Դոմիտիանոսի միջադեպը նկարագրող գլխին անմիջապես հաջորդող 55-րդ գլխում, որը նվիրված է Տրայանոսի արևելյան արշավանքին։ Ի տարբերություն Դոմիտիանոսի վերոհիշյալ արշավանքի, որի պատմականության մասին կարծիքները բաժանվում են, Տրայանոսի արշավանքը, որը արտացոլված է պատմական մի շարք աղբյուրներում և, մասնավորապես, մանրամասն նկարագրված է Կասիոս Դիոնի մոտ, ժամանակի Առաջավոր Ասիայի և Հայաստանի կյանքում մի խոշոր իրադարձություն է եղել։ Տրայանոսը 114 թ. Ասորիքից շարժվել է դեպի Հայաստան. այստեղ Էլեգիայում նրան է ներկայացել հայոց թագավոր Պարթամասիրը (113—117), հույս ունենալով թագադրվել Տրայանոսից, ինչպես Տրդատ Ա-ը շուրջ կես դար առաջ թագադրվել էր Ներոնի կողմից։ Սակայն նրա հույսերը չարդարացան. Հայաստանը հայտարարվեց հռոմեական նահանգ (պրովինցիա)։ Տրայանոսը Հայաստանում կայազորներ տեղավորեց և արշավեց դեպի Միջագետք, որը ևս հռոմեական նահանգ հայտարարելով, վերադարձավ Ասորիք։ 115 թվականին նա վերսկսեց արշավանքը և հաղթական երթով հասավ մինչև Տիզբոն, այնուհետև մինչև Պարսից ծոցի ափերը։ Նա ծրագրում էր շարունակել արշավանքը և անցնել Հնդկաստան, բայց թիկունքում սկսված ապստամբությունները ստիպեցին վերադառնալ, նախապես պարթևական արքա պսակելով իր դրածոյին։ Հռոմի ճանապարհին,

Կիլիկիայում, Տրայանոսը հիվանդացավ և մահացավ 117 թվականին։

Ահա և Խորենացու համապատասխան հաղորդումը. «Զայսու ժամանակաւ թագաւորեալ լինի Հռոմայեցւոց Տրայիանոս, և... խաղայ յարևելս ի վերայ Պարսից։ Աստ անձապարեալ Արտաշէս մեծապէս ընծայիւք իջանէ ընդ առաջ նորա, զմեղանս յանձն առեալ, հանդերձ հարկօք անցելոց ամացն լինի առաջի նորա. և թողութիւն ի նմանէ գտեալ, դառնայ յաշխարհս Հայոց։ Եւ Տրայիանոսի անցեալ ի Պարսս, և զամենայն զկամս իւր կատարեալ՝ դառնայ ընդ Ասորիս»[74]։

Խորենացու պատմածը ընդհանուր գծերով նման է անտիկ աղբյուրների հաղորդումներին, երկու էական տարբերությամբ։ Այստեղ ասված չէ Հայաստանի՝ հռոմեական նահանգ հայտարարվելու մասին և, որ հենց մեզ հետաքրքրողն է, Պարթամասիր հայոց թագավորը փոխարինված է Արտաշեսով։ Ահա «ժամանակագրական համակարգի արտադրանքի» տիպական նմուշ։

6

Խորենացու երկրորդ գրքի հաջորդ, 56-րդ գլխում պատմվում է Արտաշեսի կանգնեցրած հողաբաժան սահմանաքարերի մասին։

Խորենացու այս հաղորդման կապակցությամբ Գր. Խալաթյանցը 1896 թվականին հրատարակած իր գրքում գրել է հետևյալը. «Արտաշեսի կողմից սահմանաքարերի հաստատման վերաբերյալ պետք է նշել, որ այն հիմնված է Սասանի որդի Արտաշիրի մասին Ագաթանգեղոսի պատմածի վրա։ Տրդատ Մեծի պատմիչը հաղորդում է, որ «Եւ զերկիրն Հայոց այնուհետև եկեալ արքային Պարսից յիւր անուն զտեղիսն անուանէր... Վիճս փոսացուցեալ՝ սահմանս հաստատէին, և տեղւոյն անուն եդեալ Դրունս Փոսից, առ տեղեաւն որում

[74] *Խորենացի, II, 55։*

Սոյզն կոչէին»։ Ագաթանգեղոսի այս հակիրճ ցուցումը Խորենացին հարմարեցրել է Արտաշեսին»[75]։ Գր. Խալաթյանցը, այսպիսով, մերժում է Խորենացու հաղորդման մեջ պատմական հավաստիության որևէ նշույլի գոյության հնարավորությունը։

1906 թ. Երվանդ Լալայանը Նոր Բայազետի շրջանի Ղուլալի գյուղում արձանագրություն կրող մի քար է գտնում, որը հրատարակում է 1931 թ., առանց փորձելու վերծանել արձանագրությունը։ 1932 թվականին Մարտունու շրջանի Վերին Ղարանլուղ գյուղում գտնվում է ևս մի նմանօրինակ քար։ Ս. Բարխուդարյանը ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ երկու քարերի արձանագրությունների սկզբի տողերը համընկնում են, և որ արձանագրությունները արամեատառ են. նա ենթադրում է, որ դրանք տապանաքարեր են։

Ա. Յա. Բորիսովին 1940 թ. հաջողվում է կարդալ արձանագրությունների առաջին երեք տողերը՝ «Արտաշես արքա որդի Զարեհի», որից պարզվում է, որ արձանագրությունները պատկանում են Արտաշես Ա-ին[76]։ Հ. Ա. Օրբելին 1941 թ. այդ հիման վրա ենթադրություն է անում, որ քարերը հենց Խորենացու հիշատակած սահմանաքարերն են։ 1956 թ. Ի. Մ. Դյակոնովը և Կ. Բ. Ստարկովան տալիս են արձանագրությունների վերջավորության ստույգ ընթերցումը, որտեղից պարզվում է, որ այնտեղ հիշատակված է «հողամաս» բառը[77]։ Հ. Օրբելու առաջ քաշած ենթադրությունը վերածվում է համոզմունքի։ Այսպիսով, Արտաշես Ա-ի սահմանաքարերի գյուտը և նրանց պարունակած արձանագրությունների ընթերցումը հաստատեցին Խորենացու հաղորդման հավաստիությունը, մանավանդ, երբ հետագայում Սևանի ափերին գտնվեցին

[75] Г. Халатянц, *նշվ. աշխ., էջ 278։*

[76] *Ա. Բորիսով, Հայոց թագավոր Արտաշեսի արձանագրությունները, «Սովետական Հայաստան» թերթ, 16 փետրվարի, 1941 թ., նույնի,* Надписи Артаксия (Арташеса), царя Армении, ВДИ, 1946, № 2.

[77] И. М. Дьяконов, К. Б. Старкова, Надписи Артаксия (Арташеса I), царя Армении, ВДИ, 1955, № 2.

սահմանաքարերի ևս երեք օրինակներ, ըստ որում դրանցից մեկը՝ միանգամայն անթերի վիճակում[78]։ Սակայն նրանք ցույց տվին և մի այլ բան, այն, որ սահմանաքարեր ստեղծող Արտաշես արքան Խորենացու մոտ սխալմամբ տեղադրված է մ. թ. I դարի վերջին-II դարի սկզբին, իր իսկական պատմական տեղից գրեթե երեք հարյուրամյակ ավելի ուշ։

Այստեղ մենք ուզում ենք քննարկել մի նոր հարց, որը բխում է Խորենացու տեքստի ուշադիր ընթերցումից։

Մենք որտեղի՞ց գիտենք, թե այս քարերի հաստատողը Արտաշես թագավորն է եղել, և որտեղի՞ց է իմացել այդ մասին Խորենացին։ Մենք գիտենք այդ քարերի վրա արված արձանագրություններից՝ 'RTHŠSY BR ZY ZRYTR—*«Արտախշասի՝ Զարեհրի[79] որդին»։ Իսկ Խորենացի՞ն։ Թույլ ենք տալիս մեզ կասկածելու, թե Խորենացին կամ նրա ժամանակակիցներն ի վիճակի էին կարդալու արդեն օգտագործումից դուրս եկած լեզվով և իրենցից հարյուրամյակներ առաջ, մ. թ. ա. II դարի սկզբներին, ժամանակի արամեական տառաձևերով արված արձանագրությունը։ Սակայն մի պահ ընդունենք, թե Խորենացին հմուտ էր արամեերեն լեզվին ու դպրությանը և կարդացել է արձանագրությունը։ Այդ դեպքում նա ինչ-որ ձևով պետք է նշեր, որ սահմանաքարերի վրա արձանագրություններ են եղել։ Բայց այդ նշումն իսկ չկա և այս հանգամանքը ստիպում է մեզ ավելի հեռուն գնացող եզրակացություններ հանել։*

Հայտնի է, թե ինչպիսի լարված ուշադրություն է ցուցաբերում Խորենացին վիմագիր արձանագրությունների նկատմամբ, թե՛ այն դեպքում, երբ դրանց բովանդակությունն

78 *Գ. Տիրացյան, Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, «Տեղեկագիր», 1957, № 10։*

79 *Զանգեզուրում վերջերս գտնված արձանագրության մեջ այդ անունը գրված է* ZRYHR *ձևով, որը համապատասխանում է անվան այդ ժամանակի հնչմանը։ Այսպիսով, պարզվեց, որ նախորդ արձանագրություններում հանդիպող* ZRYTR*-ը պատմական գրություն է։ Տես* А. Периханян, Арамейская надпись из Зангезура, *ՊԲՀ, 1965, № 4, էջ 109։*

իրեն մատչելի էր և թե՛ այն, երբ նա ի վիճակի չէր կարդալու դրանք։ Բերենք մի երկու օրինակ։ «Զայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնւոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ, և գրեալ ի նմա զյիշատակ իւր հելլենացի գրով»[80]։ Հունարեն արձանագրությունը միանգամայն մատչելի է եղել Խորենացուն[81]։ Ահա և մի ուրիշ օրինակ՝ Խորենացուն անմատչելի ուրարտական սեպագիր արձանագրությունների կապակցությամբ, որոնք նա, ինչպես հայտնի է, վերագրում է Շամիրամին. «Իսկ զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զմոմ հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ։ Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»[82]։

Վերջին նախադասության մեջ խոսքը, ինչպես և քննարկվող դեպքում է, սահմանաքարերի մասին է։ Համեմատենք այժմ բերված օրինակների հետ մեզ հետաքրքրող նկարագրությունը. «Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. և չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»[83]։ Այս է սահմանաքարերի բուն նկարագրությունը, որին Խորենացին ավելացնում է հետևյալ պատմությունը. «Ընդ որ նախանձեալ Արտաշրի որդւոյ Սասանայ՝ զնոյն նման հրամայէ առնել և ի Պարսից աշխարհին և յիւր անունն անուանել, զի մի՛ ևս յիշես-

80 *Խորենացի, II, 90։*

81 *Հմմտ. Հ. Բարթիկյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, ՊԲՀ, 1965, № 3, էջ 229 և հաջ.։*

82 *Խորենացի, I, 16։*

83 *Անդ, II, 56։*

ցի անունն Արտաշիսի»[84]։ Վերջին միտքը Խորենացին մի այլ կապակցությամբ կրկնում է հետևյալ կերպ. «Նա և զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ, զքարինս յերկրի կացուցանելով, նորոգեաց, և յիւր անունն փոխելով Արտաշիրական անուանեաց»[85]։ Զարմանքով համոզվում ենք, որ թեև ներկա դեպքում իրենք քարերն ավելի մանրամասն են նկարագրված, քան նախորդ օրինակներում, սակայն որևէ արձանագրության մասին, ի տարբերություն նրանցից, այստեղ բան չի ասված։ Արձանագրության մասին ցուցում որոնելը Արտաշիրի կապակցությամբ ասված «յիւր անունն անուանել» կամ «յիւր անունն փոխելով Արտաշիրական անուանեաց» բառերի մեջ ապարդյուն է, ինչպես կտեսնենք քիչ հետո, երբ կպարզվի այդ բառերի ակունքն ու ճշգրիտ նշանակությունը։ Իրականությունն այն է, որ Խորենացին այս սահմանաքարերի կապակցությամբ արձանագրություն չի հիշատակում։

Խորենացու նկարագրության մանրակրկիտ ընթերցումը թույլ է տալիս ևս մի դիտողություն անել, որը վրիպել է հետազոտողների աչքից։ Որոշակի տարբերություն կա այդ նկարագրության և քարերի միջև։ Մինչդեռ քարերը սալեր են, և ունեն շեշտված լայն երեսակողմ (որը և կրում է արձանագրությունը) ու եռակողմ և նեղ կողեր (վերջիններս լավագույն պահպանված օրինակի վրա երեսակողմից ավելի քան երկու անգամ նեղ են, մյուսներն ունեն մոտ 2:1-ից 3:2 հարաբերությունը)[86], Խորենացին խոսում է «չորեքկուսի (այսինքն՝ քառակուսի) ամբարտակների» մասին, որոնց չորս կողմն էլ հանդես են գալիս հավասար հիմունքներով։

Այս պարագաներում արդեն քիչ է ենթադրելը, թե Խորենացին չի կարդացել կամ չի կարողացել կարդալ վերոհիշյալ արձանագրությունը։ Մենք ի վիճակի չենք բացատրելու այդ փաստերը այլ կերպ, քան որ Խորենացին պարզապես ինքը

[84] Խորենացի, II, 56։
[85] Անդ, II, 77։
[86] Տե՛ս հաջորդ էջի 87 ծանոթությունը։



9։ Արտաշես Ա-ի սահմանաքարերը։



10. Արտաշես Ա-ի՝ Զանգեզուրում գտնված արամեերեն արձանագրությունը։

չի տեսել սահմանաքարերն ու նրանց վրայի արձանագրությունները և ծանոթ է եղել սոսկ նրանց թերի նկարագրությանը։

Այսպիսի եզրակացությունը միայն առաջին հայացքից է տարօրինակ թվում։ Բարեբախտաբար մենք լավ ծանոթ ենք այդ քարերին. դրանք բավական փոքր ու թեթև են[87]։ Մեզ հայտնի նմուշներից, իսկ դրանք արդեն հինգն են (չհաշված Զանգեզուրում գտնվածը), և ոչ մեկը չի գտնվել իր նախնական, հաստատված տեղում, in situ, այլ կամ պատահական տեղում, կամ էլ կողմնակի օգտագործման պայմաններում[88]։ Եվ այդ միանգամայն բնական է, որովհետև փոքր ծավալ ու քաշ ունենալու հետ մեկտեղ, դրանք ամրացված չեն եղել իրենց պատվանդաններին, այլ սոսկ դրված նրանց վրա։ Ճիշտ է, Արտաշեսին մեզնից բաժանում է ավելի քան երկու հազարամյակ, բայց Խորենացին էլ հեռացած է եղել նրանից շուրջ յոթ հարյուր տարի, միանգամայն բավարար ժամանակամիջոց, որպեսզի Արտաշեսի տնկած սահմանաքարերը խախտվեին իրենց տեղերից կամ օգտագործվեին այլևայլ նպատակներով։ Իհարկե այն ժամանակ էլ, թերևս և ավելի մեծ քանակությամբ, կարող էին այդ սահմանաքարերից հայտնաբերվել, ինչպես հիմա է լինում, բայց խնդիրն այն է,

87 Ահա այդ քարերի չափերը. Սևանի ափին գտնվածներից մեկի լայնությունն է 30 սմ, հաստությունը՝ 16—20 սմ, բարձրությունը՝ 42 սմ, մյուսինը համապատասխանաբար 23×21×42 սմ (կոտրված է) (К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 162), երրորդինը՝ 36×17×77 սմ (Գ. Տիրացյան, Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, «Տեղեկագիր», 1957, № 10, էջ 106, ծան. 7), չորրորդինը 31×20×67, հինգերորդինը՝ 30×19×32 (կոտրված է)։ Զանգեզուրում գտնված քարի չափերն են 28×20×58 (А. Г. Периханян, նշվ. աշխ., էջ 107)։

88 Սևանի արձանագրությունների մեկը Կամոյի շրջանի Զոլաղի գյուղի գյուղացիների հաղորդմամբ գտնվել է մարդկային ոսկորներով լի մի փոսում, մյուսը՝ պատի շարվածքի մեջ, այսպես և մնացածները. վերջին, Զանգեզուրում գտնված արձանագրությունը, հայտնաբերված է քարերի կույտի մեջ։ Տե՛ս նախորդ ծանոթության մեջ վկայակոչված աշխատությունները։

որ նման գյուտերը չէին կարող հիմք ծառայել Խորենացու առկա նկարագրության, որի եաև ենթադրվում է ամբողջ երկրով մեկ in situ, պատվանդանների վրա կանգնած սահմանաքարերի գոյությունը. իսկ սա Խորենացու ժամանակի համար բացառված է։ Իսկ ենթադրել, թե հաջորդ թագավորները շարունակել են նորանոր սահմանաքարեր հաստատել, մենք առայժմ ոչ մի հիմք չունենք, քանի որ բոլոր գտնված նմուշների մեջ ընթերցվում է միայն ու միայն Զարեհի որդի Արտաշեսի անունը։

Այստեղ մոտենում ենք Արտաշիրի մասին Խորենացու արած պատմությանը, բայց նախքան այն շոշափելը, հարց տանք, թե որտեղի՞ց է, այնուամենայնիվ, Խորենացին ստացել սահմանաքարերի նկարագրությունը ու իմացել Արտաշեսի հետ ունեցած նրանց առնչության մասին, եթե նա ո՛չ արձանագրություններն է կարդացել, ո՛չ իսկ տեսել է այդ քարերը։ Նկարագրության ձևը բոլորովին բացառում է ժողովրդական ավանդությունից այն քաղելու հանգամանքը, ուստի և այն պետք է վերագրվի նույն աղբյուրին, որից Խորենացին առել է և այլ, արդեն քննարկված և դեռ քննարկվելիք հավաստի տեղեկությունները Արտաշես Ա-ի և նրա գործունեության մասին։ Այդ աղբյուրը Խորենացին անվանում է Ողյումպ քուրմի գրած «մեհենական պատմություն»։

Ինչ վերաբերվում է Արտաշիրի հետ կապված դրվագին, ապա այն էական ոչ մի առնչություն չունի սահմանաքարերի մասին տեղեկությունների հետ և մոտիվների, թերևս և անունների (Արտաշես—Արտաշիր) նմանության հանգամանքով արհեստականորեն հյուսված է նրան։ Այս միանգամայն պարզ է դառնում, երբ դիմում ենք Արտաշիրի մասին տեղեկությունների հիմքին՝ Ագաթանգեղոսի համապատասխան հատվածին, որը, ինչպես հիշում ենք, մատնացույց է արել դեռևս Գր. Խալաթյանցը, սխալ կերպով ներկայացնելով որպես բուն սահմանաքարերի մասին Խորենացու տված տեղեկությունների աղբյուր[69]։

89 Տե՛ս վերը, էջ 184։

Պատմելով Արտաշիր Պապականի կողմից Հայաստանի նվաճման մասին, Ագաթանգեղոսը հաղորդում է. «Եւ զերկիրն Հայոց այնուհետև եկեալ արքային Պարսից յիւր անուն զտեղիսն անուանէր... Վիհս փոսացուցեալ՝ սահմանս հաստատէին»[90]։ Խորենացին պատմելով նույն անցքերի մասին և օգտվելով այդ հարցերում, իր իսկ խոստովանությամբ, Ագաթանգեղոսից, գրել է հետևյալը. «Եւ զերկիրս գրով ընդ հարկաւ իւրով արկանէ, և ամենևիմբ զիւր անունն հաստատէ։

Նա և զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ, զքարինս յերկրի կացուցանելով, նորոգեաց, և զիւր անունն փոխելով Արտաշիրական անուանեաց»[91]։

Այս համադրումից միանգամայն պարզ է, որ Խորենացին, հանդիպելով Ագաթանգեղոսի մոտ Արտաշիրին վերաբերվող այս հաղորդմանը, նմանություն է գտել սրա և Արտաշեսի սահմանաքարերի մասին իր ունեցած տեղեկությունների միջև ու միահյուսել դրանք իրար, ըստ որում այդ միահյուսված պատմությունը տեղադրել է իր «Պատմության» և՛ այն դրվագում, ուր խոսքը Արտաշիրի կողմից Հայաստանի նվաճման մասին է, և՛ այն դրվագում, ուր պատմվում է Արտաշեսի ու նրա սահմանաքարերի մասին։ Վերջին կետում նա նույնիսկ մի նոր երանգ է ավելացրել, նշելով, որ Արտաշեսը հրամայել է նույնպիսի սահմանաքարեր դնել նաև պարսից աշխարհում[92]։ Ագաթանգեղոսի «յիւր անուն զտեղիսն անուանէր» արտահայտությունը, որ ընկած է Խորենացու համապատասխան արտահայտության («յիւր անունն անուանել») հիմքում, իր հերթին ցույց է տալիս, որ վերջինս արձանագրություն փորագրելու հետ ոչ մի կապ չունի։

Եվ այսպես Արտաշիրի հետ կապված այս դրվագը ի վիճակի չէ մթագնելու Խորենացու բուն հաղորդման էությունը։

90 Ագաթանգեղոս, 36։

91 Խորենացի, II, 77։

92 Մի գուցե այս մասին Խորենացին ակնարկի է հանդիպել իր հիշատակած «պարսից մատյաններո՞ւմ»։

Այն հանգամանքը, որ հնարավորություն է ստեղծվում այս փաստը համարելու հին ու արժանահավատ գրավոր աղբյուրից ծագած, մեր հատուկ ուշադրությունն է հրավիրում նույն գլխում շարադրված մյուս տեղեկությունների վրա, որոնք՝ ամենասերտ կապերով առնչված լինելով վերոհիշյալ հաղորդման հետ և կարծես տրամաբանորեն խմբավորված լինելով նրա շուրջը, նույնպես ակնկալում են սերումը միևնույն աղբյուրից։

Անդրադառնանք այս գլխին ամբողջությամբ, նախապես բերելով բնագիրը, առանց Արտաշիրի հետ կապված դրվագի։ «Յետ ամենայն առաքինութեանց և գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից և ագարակաց որոշել. քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս։ Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, և պնակաձև փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. և չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ...

Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, յաղագս շինութեան երկրիս»[93]։

Այս հակիրճ նախադասությունները, բացառյալ սահմանաքարերի մասին ասվածից, առաջին հայացքից կարող են թվալ ընդհանուր խոսքեր, որոնք ամեն մի պատմական ժամանակաշրջանում կպատշաճեին ամեն մի երկրի բարեկարգմանը ամեն մի թագավորի կողմից։ Սակայն իրականում դրանք որոշակի-պատմական հսկայական լիցք ու բովանդակություն ունեն։

«...բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, և բնակեցուցանելով ի լերինս և ի հովիտս և ի դաշտս»։ *Խորենացու տվյալներից բացի, Արտաշեսի օրոք կատարված գերեվարությունների մասին ուղղակի տե-*

93 *Խորենացի, II, 56։*

ղեկություններ մենք չունենք, սակայն ունենք շատ պերճախոս փաստեր Տիգրան Բ-ի մասին։ Ինչպես հայտնում են անտիկ պատմիչները, նրա օրոք նվաճված երկրներից հարյուր հազարավոր մարդիկ են գաղթեցվել Հայաստան։ Միայն Կապադովկիայից, ըստ Ապպիանոսի, գերեվարվել է 300 հազար (30 բյուր) մարդ[94], իսկ ըստ Ստրաբոնի, Հայաստան է բերվել Փոքր Ասիայի հելլենիստական 12 քաղաքների բնակչությունը[95]։ Պլուտարքոսը հայտնում է, որ այստեղ են տեղափոխվել նաև կորդվացիների, ադիաբենցիների և ասորիների հոծ զանգվածներ[96]։ Անտիկ պատմիչների այս տվյալները լրացվում են Փավստոս Բուզանդի տված տեղեկություններով նույն Տիգրան Բ-ի կողմից հրեաների դեպի Հայաստան գաղթեցման մասին[97]։ Վերջիններս այնքան շատ են եղել, որ նրանց հետնորդների թիվը IV դարի Հայաստանի քաղաքներում համեստ հաշիվներով հասնում էր 100 հազարի[98]։ Որոշ տեղեկություններ կան, որ գերեվարությունները, թեև անհամեմատ ավելի փոքր մասշտաբներով, շարունակվել են և Տիգրան Բ-ից հետո, Արտավազդ Բ-ի ժամանակ։ Գերեվարությունները այսպիսով եղել են ստրկատիրական Հայաստանի, ինչպես ամեն մի ստրկատիրական երկրի, տնտեսական զարգացման կարևոր ու անհրաժեշտ գործոններից մեկը։

Արդ, Խորենացին հաղորդում է մեզ, որ այդ երևույթը տեղ է գտել Հայաստանում դեռևս Տիգրանից մեկ դար առաջ, Արտաշես Ա-ի օրոք, և ոչ միայն սոսկ հաղորդում է, այլև, ինչպես տեսանք նախորդ գլուխները քննարկելիս, որոշակի դեպքեր ու արշավանքներ է նկարագրում, կապված գերեվարությունների հետ, որոնցից ամենահետաքրքիրը դեպի Կասբից երկիրը կատարած արշավանքն է, որի ժամանակ մեծ թվով գերիներ են բերվում Հայաստան։ Այս արշավանքի

94 App., Mithr., *67։*
95 Strab., *XI, 14, 15։*
96 Plut., Luc., *26։*
97 ***Փավստոս, IV, 55։***
98 Г. Х. Саркисян, Тигранакерт, *էջ 54։*

պատմականությունը, ինչպես վերը նշվեց, հավաստում է նաև Ստրաբոնը։ Ընդհանրապես Ստրաբոնի հաղորդումը Արտաշեսի նվաճումների մասին, թեև ուղղակի տեղեկություններ չի պարունակում նրա կատարած գերեվարությունների վերաբերյալ, սակայն դրանց պատմական իրողություն լինելու անուղղակի հոյակապ հաստատումն է, որովհետև միանգամայն պարզ է, որ ուր կան վերելք ապրող ստրկատիրական երկրի ռազմական արշավանքներ, այնտեղ անխուսափելի են գերեվարությունները։

«Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, յաղագս շինութեան երկրիս»։ *Սկզբնապես, երկրի բնակչության համեմատական նոսրության պայմաններում, նույնիսկ երկրագործության համար միանգամայն պիտանի և հատուկ աշխատանք չպահանջող բոլոր հողերը չէին, որ մշակվում էին։ Այսպես, Քսենոփոնի կտրած-անցած Հայաստանում, մ. թ. ա. IV դարի սկզբին, գյուղերը, կամ ավելի ճիշտ՝ գյուղախմբերը միմյանցից բավական հեռու տարածության վրա էին գտնվում*[99]*։ Հարցն այն է, որ համայնքի կողմից հողի մշակման հնարավորությունները, անգամ ազատ ու պիտանի հողերի գոյության պայմաններում, չէին կարող անցնել որոշակի, համեմատաբար նեղ, սահմաններից, որովհետև այդ հնարավորությունները սահմանափակված էին համայնականների առկա աշխատավոր ձեռքերի քանակությամբ, որը խիստ դանդաղ, միայն բնական եղանակով էր աճում։*

Այլ բան է մասնատիրական տնտեսությունը, որի մեջ կիրառվող ստրկական ուժի աճը կախված էր միայն տիրոջ կարողության սահմաններից, այսինքն՝ ընդունակ էր հասնելու շատ մեծ չափերի։ Հելլենիստական ժամանակաշրջանում հողի մասնավոր սեփականության բուռն աճ է տեղի ունենում և մասնատիրական տնտեսությունների զարգացման համար ստեղծվում են շատ բարենպաստ պայմաններ։ Տնտեսական

[99] Xen., Anab., *IV, 4—5։*

ընդհանուր վերելքը (ներառյալ տարանցիկ ու ներքին առևտրի ընդլայնումը), որի մեջ ներգրավվել էր Հայաստանը, ստրկական ուժի բազմապատկման արտաքին, ինչպես և ներքին մեծ հնարավորությունները, որոնք ընձեռվում էին, մի կողմից բազմաթիվ նվաճողական պատերազմների ժամանակ կատարվող գերեվարություններով, մյուս կողմից՝ հասարակության սոցիալական շերտավորման ու բևեռացման ուժեղացմամբ, վերջապես նորանոր հողերի յուրացումը, մի բան, որ պետությունը խրախուսում ու օժանդակում էր,—բոլոր այս հանգամանքները խթանում էին Հայաստանի գյուղատնտեսության զարգացումը մասնավոր հողատիրության և ստրկատիրության ուղիներով։

Ահա այդ ժամանակներում է, որ պետք է ծագեր «դաստակերտ», այսինքն՝ «ձեռքով մշակված» հողի հասկացությունը (անկախ նրանից, թե այդ պարսկական ծագում ունեցող տերմինը երբ է մտել հայոց լեզվի մեջ), «երբ զինվորական ավագանին յուրացնում ու կենդանացնում էր ապարդյուն մնացած հողերը, որոնց վրա չէր տարածվում գյուղական համայնքների տիրապետման իրավունքը»[100]*։ Այդ պրոցեսը, որ համընդհանուր է մարդկության զարգացման որոշակի փուլերի համար, հատուկ է եղել և Հայաստանին։ Արտահամայնքային հողերի յուրացմանը մասնակցում էին ո՛չ միայն թագավորն ու իր շրջապատը, զինվորական ու վարչական ավագանին, քրմերը, այլև հենց գյուղական համայնքների ներսում ուռճացած առանձին համայնականները, որոնք համայնքի իրավասությունից դուրս գտնվող հողերի վրա հիմնում էին իրենց անձնական տնտեսությունները և կիրառում այնտեղ իրենցից կախման մեջ ընկած համայնակիցների և դրսից ձեռք բերված ստրուկների աշխատանքը։ Ահա այդ ճանապարհով հետզհետե յուրացվել են բոլոր պիտանի հողերը կամ նրանց գերակշռող մասը, և հենց այս ռեալ պատմական իրողության հա-*

[100] С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ, 1950, № 1, *էջ 75։*

կիրճ բնութագիրն են պարունակում Խորենացու մոտ պահպանված՝ վերը շեշտված խոսքերը։

«...**Հրամայէ զսահմանս գիւղից և ագարակաց որոշել**»։ *Հողի մասնավոր սեփականության զարգացումը մեծ վտանգ էր ներկայացնում համայնական հողատիրության համար։ Սկզբնապես, ինչպես ասվեց, մասնավոր հողատերերի բաժին էին դառնում խամ ու խոպան, գյուղական համայնքների չօգտագործած և նրանց սահմաններից դուրս գտնվող հողերը։ Այնուհետև, սակայն, հերթը պիտի հասներ նաև համայնական հողերին։ Հարուստ և ուժեղ հողատեր-ստրկատերերը այս կամ այն ձևով փորձում էին յուրացնել նաև այդ հողերի մի մասը։ Համայնքը չէր կարող հանդուրժել իր հողերի զավթումը, և ծավալված պայքարը ուղեկցված պիտի լինի սուր ընդհարումներով։*

Արտաշես Ա-ի անունը կրող մեզ հասած սահմանաքարերը ցույց են տալիս, որ այդ թագավորը ինչ-որ ռեֆորմների, բարեփոխությունների փորձ է արել այդ բնագավառում[101]։ Սահմանաքարերի արձանագրություններից հետևում է, որ դրանք դրված են հողը բաժանելու կապակցությամբ։

Սակայն ինչո՞ւմն էր ձեռնարկված ռեֆորմի էությունը, նպատակը, բնույթը։ Այդ մասին սահմանաքարերը ոչինչ չեն ասում։ Եվ ահա Մովսես Խորենացու հաղորդած մի հատիկ նախադասությունը հստակ լուսաբանություն է տալիս այդ ռեֆորմին. Արտաշեսը հրամայել է որոշել գյուղերի և ագարակների սահմանները, այսինքն սահմանազատել գյուղական հողերը ագարակային հողերից։ Հանրահայտ է, որ «գյուղը» գյուղական համայնքն է, իսկ ագարակը՝ մասնատիրական հողը, կալվածքը։ Ահա ռեֆորմը կայացել է համայնական և մասնատիրական հողերի հստակ սահմանազատման մեջ։ Ի՞նչ կարելի է ասել դրա սոցիալական էության մասին։ Անշուշտ այն ելնում էր առաջին հերթին նորելուկ հողատեր-

[101] *Հմմտ.* И. М. Дьяконов, К. Б. Старкова, *նշվ. աշխ., էջ 173 և հաջ.։*

ստրկատերերի խավի, այսինքն՝ թագավորին ծառայող ռազմա-վարչական ավագանու շահերից, քանի որ օրինականացնում էր տեղի ունեցած փոփոխությունները՝ այդ խավի ձեռք բերած նվաճումները։ Բայց միևնույն ժամանակ այն մասամբ արգելակում էր նրա ներկայացուցիչների ախորժակները և հետապնդում համայնքների դիրքերի եթե ոչ ամրապնդումը, գոնե պահպանումը։ Չպետք է մոռանալ, որ համայնքն էր հիմնական հարկային միավորը, և նա էր թագավորի հետևակ զորքի մեծ մասը և օժանդակ զորամասեր տրամադրողը։

Ելնելով վերը կատարված քննությունից, այժմ այս հաղորդումը ևս կարելի է համարել ո՛չ թե Խորենացու ճիշտ կռահում, այլ իրական վկայություն, որով հաղորդման արժեքը անչափ բարձրանում է։ Այսպիսով Խորենացու պատմության սույն գլխում մենք գտնում ենք Արտաշես Ա-ի հողային ռեֆորմների նախադրյալների, դրդապատճառների և իրականացման նկարագրությունը։

Հաջորդ երկու գլուխները, ուր խոսվում է Ամատունի և Առավենյան նախարարական տոհմերի Հայաստան գալու մասին, անմիջականորեն Արտաշեսին չեն վերաբերում, այլ ամբողջությամբ պատկանում են նախարարական տների ծագումնաբանությանը, որը Խորենացու պատմության մեջ առանձին բնագավառ է։ Բոլոր նման տեղեկությունները Խորենացու մոտ հիմնված են կամ համապատասխան նախարարական տների տոհմական ավանդությունների և կամ տոհմանունների ստուգաբանության վրա։ Թե ինչո՛ւ է Խորենացին այդ երկու տոհմերի գալուստը առնչել հենց Արտաշեսի ժամանակին, այդ մեզ համար պարզ չէ, սակայն չենք կասկածում, որ դրա համար նա ինչ-որ կռվան, ինչ-որ հենարան պետք է ունեցած լինի։ Այդպես են ստիպում մտածել նման դեպքերի այն օրինակները, որոնց համապատասխան կռվանները մեզ այս կամ այն ձևով հայտնի են դառնում (հմմտ. վերը քննված Բագրատունի Սմբատի օրինակը)։

Հաջորդ 59-րդ գլուխը նվիրված է Արտաշեսի այլևայլ բարեփոխությունների նկարագրմանը, որոնք են տոմարի և

օրացույցի կարգավորումը, երկրի ծովակների ու գետերի նավագնացության, ձկնորսության տարածումը, երկրագործության ծավալումը երկրի անմշակ վայրերը, արվեստների ու գիտությունների զարգացումը։ Իր բնույթով այս գլուխը առնչվում է 56-րդ գլխին (հողային ռեֆորմի մասին), և հավանական է, որ նրա նյութը ևս գալիս է լավորակ աղբյուրից ու հավաստի տեղեկություններ է պարունակում[102]*։ Սակայն առայժմ շատ շոշափելի հենարաններ չկան դրանց մասին ավելի հաստատուն եզրակացություններ հանելու համար։*

Սրանով ավարտվում է քննության առարկա հատվածը։ Հաջորդ գլուխը, թեև նույնպես Արտաշեսին է վերաբերում՝ նրա մահվան ու հուղարկավորության նկարագրությունն է, սակայն քաղված է, Խորենացուն լսելով, արդեն ոչ թե Ողյումպ քուրմի պատմությունից, այլ մի ուրիշ գրավոր աղբյուրից՝ Արիստոն Փեղղացու մատյանից. դրանով մենք չենք զբաղվի այստեղ, բավարարվենք միայն մի դիտողությամբ։ Գրավոր աղբյուրին վերագրվող այն հատվածը, թե «Եւ գրէ, եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք», հաջորդ, Արտավազդի գահակալմանը վերաբերվող գլխում կրկնվում է արդեն որպես ժողովրդական առասպելի դրվագ. «Զմանէ երգիչքն Գողթան առասպելաբանեն այսպէս. եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց»... և այլն, ըստ որում այս դրվագը սկիզբ է ծառայում վիպասանքի մի նոր, Արտաշեսի առասպելից տարբեր առասպելի, որի հերոսն է արդեն Արտավազդը, իսկ սյուժեն՝ մահամերձ հոր անեծքը և որդու կալանավորումը Մասիսի վիհերում[103]*։ Այնպես որ Խորենացու շարադրանքի առասպելական աղբյուրը ևս փոխվում է՝ սկսած Արտաշեսի մահվան դրվագից։*

---

102 *Հմմտ. Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն, Ա, էջ 130։*
103 *Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 354։*

7

Հասնելով Արտաշեսի մասին Խորենացու արած պատմության ավարտին այժմ պետք է վերադառնանք դեպի նրա սկիզբը, քանի որ քննությունը սկսեցինք այդ պատմության կեսերից, այն կետից, ուր պատմահայրը հիշատակում է Ողյումպ քուրմին ու նրա մեհենական պատմությունը որպես և՛ նախորդող և՛ հաջորդող շարադրանքի հիմնական սկզբնաղբյուր, ընդգծելով, սակայն, որ հաջորդող նյութը հաստատվում է նաև հայոց վիպասանների երգերով։

Քննարկվելիք հատվածի բովանդակությունն է Երվանդ թագավորի պայքարը Արտաշեսի դեմ, վերջինիս հաղթանակը և գահակալումը։ Ինչպես բազմիցս նշված է, դա նույն այն պատմական դրվագն է, որին ակնարկում է Ստրաբոնը իր հետևյալ խոսքերով. «(Հայաստանի) վերջին թագավորն էր Օրոնտեսը, յոթ պարսիկներից մեկի՝ Հյուդարնեսի շառավիղը։ Այնուհետև երկիրը երկու մասի բաժանվեց հռոմեացիների հակառակորդ Անտիոքոս Մեծի ստրատեգոսների՝ Արտաքսիասի և Զարիադրիսի կողմից։ Նախապես սրանք իշխում էին այդ թագավորի իշխանության ներքո, իսկ նրա պարտությունից հետո հարեցին հռոմեացիներին և թագավորներ հայտարարվելով ապավինեցին իրենց սեփական ուժերին»[104]*։*

Մատնացույց է արված, որ Խորենացին, թեև չի հիշատակում Ստրաբոնի մոտ ընդգծված որոշ հանգամանքներ, բայց մանրամասն նկարագրում է Երվանդի (Օրոնտեսի) և Արտաշեսի (Արտաքսիասի) միջև տեղի ունեցած պայքարի պարագաները[105]*։*

Կարծիք է հայտնվել նաև, որ Երվանդը Խորենացու մոտ երկփեղկված է հանդես գալիս։ Նրա մեջ մարմնացած է միա-

---

104 Strab., *XI, 14, 15։*
105 *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, էջ 27, նույնի, Քննական տեսություն, Ա, էջ 27, Գ. Տ ի ր ա ց յ ա ն, նշվ. աշխ., «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 15 և հաջ.։*

ժամանակ և՛ Արտաշեսի հակառակորդ Երվանդը, և՛ այն Երվանդը, որը թագավորեց Հայաստանում, երբ Ալեքսանդր Մակեդոնացին տապալեց պարսկական Աքեմենյան տերությունը[106]։ Հիշյալ կարծիքը, որի հետ համաձայնվել չենք կարող, հանգչում է Խորենացու ժամանակագրական այն ցուցման վրա, թե «Երուանդ ոմն... թագաւորէ յոթերորդ ամի Դարեհի վերջնոյ», որտեղ հիշատակված Դարեհ վերջինը նույնացվում է վերջին Աքեմենյան թագավոր Դարեհ Գ Կոդոմանոսի՝ Ալեքսանդր Մակեդոնացու հակառակորդի հետ։ Սույն ցուցման այսօրինակ օգտագործումը հաշվի չի առնում, որ այն ոչ թե առանձին, մեկուսացած փաստ է «Հայոց պատմության» մեջ, այլ կազմում է նրա կուռ ժամանակագրական համակարգի անբաժանելի օղակներից, նմանօրինակ բազմաթիվ փաստերից մեկը, և, որպես այդպիսին, կարող է դիտվել ու գնահատվել միմիայն ողջ համակարգի տվյալների հետ կապակցված վիճակում։ Որևէ մի ցուցում այդ համակարգից անջատելը, կտրելը նշանակում է փաստորեն անտեսել համակարգի գոյությունը, ուստի և չի կարող հանգեցնել ցանկալի նպատակին՝ պատմական իրականության բացահայտմանը։

Խորենացու հիշատակած Դարեհին Աքեմենյան Դարեհների հետ նույնացնելու հիմքեր կան անշուշտ. այդ խնդրին է նվիրված սույն աշխատության երկրորդ գլուխը, ուր ցույց է տրված, որ պարթև Արշակունիների արքայացանկում հանդես եկող թագավորների միջև Խորենացու մոտ հիշատակված են նաև մի քանի Աքեմենյանների, այդ թվում և Դարեհի անունը. ցույց են տրված նաև այդ երևույթի ակունքները։ Սակայն դա սոսկ նրանց անուններն են, որոնցով, վերը մանրամասն պարզաբանված մի շարք հանգամանքների շնորհիվ, փոխարինվել են պարթև Արշակունիների անունները, որով և այդ Աքեմենյանները Խորենացու մոտ ժամանակագրական առումով դարձել են պարթև Արշակունիներ։ Ուստի և դրանց հետ կապ-

106 Գ. Տ ի ր ա ց յ ա ն, Երվանդունիները Հայաստանում, «Տեղեկագիր», 1958, № 6, էջ 66 և հաջ.։

ված բոլոր ժամանակագրական ցուցումները (իսկ դրանք չեն սահմանափակվում վերը նշվածով, այլ ամբողջ մի շարք են կազմում), ոչ մի առնչություն չունեն Աքեմենյանների հետ և ամբողջությամբ կապված են պարթևական այն արքաներին, որոնք հանդես են գալիս Խորենացու մոտ Աքեմենյանների անունների տակ։

Անվիճելի է, այսպիսով, որ «Դարեհ վերջինի» տակ ժամանակագրական տեսակետից թաքնված է պարթև այն արքան, որն ըստ Խորենացու ապրել է մ. թ. I դարի երկրորդ կեսում և ժամանակակից է եղել հռոմեական կայսրեր Վեսպասիանոսին և Տիտոսին, որոնց Խորենացին, ինչպես արդեն նշվել է վերը, ժամանակակից է համարում հայոց Երվանդ թագավորին։

Այս օտար թագավորների՝ «Դարեհի», Վեսպասիանոսի և Տիտոսի հետ Երվանդ թագավորի՝ Խորենացու առաջարկած ժամանակագրական առնչությունը պատմականորեն գնահատելու երկու ուղի կա միայն (եթե հաշվի է առնվում ժամանակագրական համակարգի գոյությունը). մեկը՝ ընդունել Խորենացու ցուցումը որպես պատմական ճշմարտություն. այդ դեպքում կամ ա) պնդել, թե իսկապես հիշյալ օտար թագավորների օրոք, մ. թ. I դարի երկրորդ կեսում, իշխել է Երվանդ անունով հայոց թագավոր, մերժելով, այսպիսով, հունա-հռոմեական աղբյուրների տվյալները Տրդատ Ա Արշակունու գոյության մասին, կամ բ) ենթադրել, թե Խորենացու Երվանդի տակ թաքնված է այդ իսկ ժամանակներին իշխած մի թագավոր (այս ուղիով ընթացողներ եղել են). երկրորդը՝ ժխտել Խորենացու տվյալ ցուցման պատմականությունը ու այդ դեպքում համարել այն «ժամանակագրական համակարգի արտադրանք», հենվելով Երվանդի ու մ. թ. ա. III—II դարերի եզրին թագավորած Օրոնտեսի հարազատության վրա։ Այդպես են վարվում փաստորեն բոլոր նրանք, այդ թվում և մենք, ովքեր նույնացնում են այդ դեմքերին։ Այլ ճանապարհ չկա։

Սակայն, եթե նույնիսկ մի րոպե անտեսենք ժամանակագրական համակարգի խնդիրը և անենք անթույլատրելին՝ դիտենք քննության առարկա ցուցումը առանձին, մեկուսացած, ապա նրա մեջ պարունակվող տեղեկությունը չի կարող հիմք ծառայել այն Դարեհ Գ Կոդոմանոսին առնչելու համար։ Վերջինս, ինչպես հայտնի է, թագավորել է մ. թ. ա. 336—330 թթ. այսինքն 6, լավագույն դեպքում՝ 7 տարի, այնինչ Խորենացու մոտ ունենք 8-րդ տարին, իսկ մի քանի էջ անց՝ նույն Դարեհի 29-րդ տարին, որպես Երվանդի մահվան և Արտաշեսի գահակալման տարի[107]։ Հասկանալի է, որ սրանք Դարեհ Գ Կոդոմանոսին վերաբերվել չեն կարող։ Այն ենթադրությանը, թե մի գուցե Դարեհ Գ-ի անունով շարունակում էին հաշվել տարիները նաև նրա մահվանից հետո, կարելի է պատասխանել, որ բացի այլ դժվարություններից, որոնք անհնարին են դարձնում այդպիսի ենթադրությունը, վերջինս հնարավոր չէ թեկուզ այն պատճառով, որ Կոդոմանոսը վերջին Աքեմենյանն էր. նրանով վերջացավ դինաստիան և սկսվեց Ալեքսանդր Մակեդոնացու իշխանությունը։

Այսպիսով պարզ է, որ Խորենացու Երվանդը միմիայն Սարաբոնի հիշատակած վերջին Օրոնտեսն է։ Եթե կան նրա մեջ նախորդ Երվանդյաններից որևէ գծեր, ապա դրանք գտնվում են միայն ու միայն այն շինարարական գործունեության մեջ, որ Խորենացին վերագրում է նրան. սակայն դա այլ խնդիր է, որին դեռևս կանդրադառնանք։ Պետք է նշել ավելին։ Խորենացու մոտ ակներևաբար չկա Երվանդի առանձին, ինքնուրույն պատմություն։ Արտաշեսը առաջ է քաշվում Երվանդի հենց գահակալման պահից և վերջինս, ընդհուպ մինչև իր մահը, հանդես է գալիս միայն Արտաշեսի հետ ունեցած փոխհարաբերությունների կապակցությամբ։ Խորենացու մոտ եղածը ծայրեծայր Արտաշեսի պատմությունն է, որի մեջ պարբերաբար հանդես են գալիս նրա հետ առնչված անձնավորությունները և առաջին հերթին՝ Երվանդը։

107 Խորենացի, II, 47։

«Յետ մահուանն Սանատրկոյ արքայի,— պատմում է Խորենացին,— շփոթի իմն թագաւորութիւնն։ Քանզի Երուանդ ոմն, որդի կնոջ Արշակունւոյ, թագաւորէ յութերորդ ամի Դարեհի վերջնոյ։ Եվ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս։ Կին ոմն յազգէ Արշակունեաց, անձամբ հարստի և խոշորագեղ, վարար, զոր ոչ ոք դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանկունս յանկարգ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտավրոս։ Եւ ի զարգանալ մանկանցն՝ կոչեն անուանս Երուանդ և Երուազ։ Եւ ի չափ հասեալ Երուանդայ՝ լինի սրտեայ և անդամովք յաղթ։ Սա ի բազում իրս վերակացու առաջնորդութեամբ առաքեալ ի Սանատրկոյ, գտանի երևելի, մինչև ամենայն նախարարացն Հայոց առաջին լինել. և խոնարհութեամբ և առատաձեռնութեամբ զամենայն ոք յանդուցեալ յինքն յարեցոյց։ Եւ ի մեռանելն Սանատրկոյ՝ միաբանեալ թագաւորեցուցին զնա, առանց արանց յազգեն Բագրատունեաց լինել թագադիր։

Բայց ի թագաւորելն իւրում Երուանդ, կասկած ունելով յորդւոցն Սանատրկոյ՝ կոտորէ զամենեսեան... Բայց մի ոմն տղայ Արտաշէս անուն, զոր առեալ սոընտուի նորա՝ փախեաւ ի կողմանս Հերայ...»[108]։

Այս հատվածում հանդես եկող հայոց արքայացանկը հետևյալն է.

Սանատրուկ.

Երվանդ, բռնատիրող, Արշակունի միայն մոր կողմից.

Արտաշես, Սանատրուկի որդի, օրինական թագաժառանգ, հետագայում թագավոր։

Անանունի արքայացանկում (որը, ինչպես հիշում ենք, Մարաբասի արքայացանկի երկու տարբերակներից մեկն է) պատկերն այլ է։ Այստեղ հանդիպում ենք.

Արշակ.

Երվանդ, Արշակի որդի.

Արտաշես, Երվանդի եղբայր։

108 Խորենացի, II, 37։

Բայց քիչ հետո կա նաև.

Սանատրուկ.

Արտաշես, *Սանատրուկի որդի*[109]։

Ինչպես տեսնում ենք, Երվանդը Խորենացու մոտ Արշակ-Արտաշես միջավայրի փոխարեն հանդես է գալիս Սանատրուկ-Արտաշես միջավայրում։ Բայց այդ չէ էականը, ժամանակագրական շարժառիթներով կատարված նման փոփոխությունների մենք էլի ենք հանդիպել։ Կարևորն այն է, որ Երվանդը՝ Անանունի մոտ զտարյուն Արշակունի, Արշակի որդի, Արտաշեսի եղբայր[110], օրինական թագավոր, Խորենացու մոտ ներկայանում է որպես «Երուանդ ոմն, որդի կնոջ Արշակունւոյ»՝ Արշակունի միայն մոր կողմից, և այն էլ ծնված «յանկարգ խառնակութենէ», ուստի և ապօրինի թագավոր, բռնատիրող։

Այս տարբերությունների մեջ, անշուշտ, ուրվագծվում են այն տեղեկությունները, որոնք Խորենացին ստացել է Արտաշեսի մասին իր հիմնական աղբյուրից և որոնցով առաջնորդվելով, համապատասխան ուղղումներ է մտցրել Մարաբասի մատյանից ժառանգած արքայացանկի մեջ։

Տեսնենք թե ինչպես են պատկերանում այս հարցերը Ստրաբոնի մոտ և մեզ հասած վավերագրերի մեջ։ Վերը մեջբերված հատվածում Ստրաբոնը պարզորոշ հայտնում է, որ Երվանդը (Օրոնտեսը) իշխող դինաստիայի օրինական ներկայացուցիչն էր, ըստ որում՝ նրա վերջին ներկայացուցիչը։ Նրանից հետո գահն անցավ Արտաշեսին (Արտաքսիասին), որը նախապես Սելևկյանների կողմից կարգված կառավարիչ (ստրատեգոս) էր։ Երվանդ թագավորի օրինականությունը հաստատվում է նաև Կոմմագենե երկրում (Նեմրութ լեռ) հայտնաբերված արձանագրություններով. սրանց հիման վրա

109 «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 10—11։

110 Վրացական «Քարթլիս ցխովրեբա»-ում ևս Երվանդը (Իարվանդ) հիշատակված է որպես Արտաշեսի եղբայր, ուրեմն և այս փաստը Անանունի մոտ պատահական բնույթ չի կրում։ Տե՛ս Լ. Մ ե լ ի ք ս ե թ-բ ե կ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 155։

վերականգնվում է Երվանդների (Օրոնտիդների) մի ամբողջ շարք, որոնք նախապես իշխել են որպես Աքեմենյան սատրապներ, իսկ այնուհետև՝ որպես թագավորներ։ Ուրեմն հարցի այս կողմը կասկածներ չի հարուցում։ Մնում է Արտաշեսի խնդիրը։

Ինչպես մի շարք առիթներով ասվել է, Արտաշեսն իր արամեերեն արձանագրություններում ներկայանում է որպես «Զարեհի որդի, Երվանդական»։ Արդ, քանի որ, մյուս կողմից, Զարեհ անունը խորթ է ու անսովոր Երվանդյանների համար, որոնց արքայացանկը մեզ լավ հայտնի է Նեմրութ լեռան արձանագրություններից և, բացի այդ, Ստրաբոնի վկայությամբ Երվանդյաններից ուղիղ գծով, այսինքն հոր կողմից Արտաշեսի ծագելու հանգամանքը բացառվում է, ապա միակ գոհացուցիչ եզրակացությունը, մեզ թվում է, հետևյալն է։ Արտաշեսը, ճիշտ է, Երվանդյաններից է սերվում, ինչպես ինքն է պնդում, բայց սերվում է նրանցից ոչ թե ուղիղ գծով, այլ կողմնակի՝ մոր միջնորդությամբ։ Նրա մայրն է, որ պատկանել է իշխող Երվանդյան տոհմին, լինելով արքայադուստր, արքայաքույր և այլն, և ամուսնացած է եղել հայ մեծատոհմիկներից մեկին՝ Զարեհին։ Արտաշեսն, այսպիսով, օրինական թագաժառանգ չի եղել, և նրա գահակալումը դիտվել է որպես Երվանդյան դինաստիայի ընդհատում, ինչպես և այդ իրողությունն արտացոլված է Ստրաբոնի մոտ։

Համեմատելով այս իրավիճակը Խորենացու մոտ հանդես եկող պատկերի հետ, պարզ տեսնում ենք նրանց նմանություններն ու տարբերությունները։ Երկու դեպքում էլ Արտաշեսը և Երվանդը պատկանում են միևնույն իշխող տոհմին[111],

111 Իհարկե, խոսքը մի դեպքում Երվանդյանների, մյուսում՝ Արշակունիների մասին է, բայց մենք նախորդ գլխում արդեն ծանոթացել ենք Անանունի և Խորենացու մոտ Արշակունի խորագրով հանդես եկող արքայացանկերին և համոզվել, որ նրանց մեջ իրականում, բացի բուն Արշակունիներից, միավորված են և այլ դինաստիաների ներկայացուցիչները, մասնավորապես Երվանդյաններն ու Արտաշիսյանները, որով այդ ցանկերի «Արշակունի» հորջորջումն ստանում է պայմանական բնույթ։

ըստ որում նրանցից մեկը տոհմի օրինավոր ներկայացուցիչն է, ուստի օրինավոր թագավոր, իսկ մյուսը՝ կողմնակի առնչություն ունի տոհմին, և նրա գահակալումը դիտվում է որպես տոհմի տիրապետության խախտում։ Սակայն, եթե մի տեղում օրինական իշխողը Երվանդն է, ապա մյուս տեղում՝ Խորենացու մոտ՝ Արտաշեսը։

Ինչո՞վ բացատրել այս տարբերությունը։ Հաջորդ դրվագը՝ Արտաշեսի փախուստի նկարագրությունը, որոշ լույս է սփռում այս խնդրի վրա։ «Բայց ի թագաւորելն իւրում Երուանդ,— պատմում է Խորենացին,— կասկած ունելով յորդւոցն Սանատրկոյ՝ կոտորէ զամենեսեան... Բայց մի ոմն տղայ, Արտաշէս անուն, զոր առեալ սընտուի նորա՝ փախեաւ ի կողմանս Հերայ, ի հովուավանս Մաղխազանի, լուր առնելով դայեկի նորա Սմբատայ, որդւոյ Բիւրատայ Բագրատունւոյ... Արդ՝ իբրև լսէ Սմբատ... հանդերձ միով կնաւ իւրով և սակաւ արամբք գայ անցանէ ի խնդիր մանկանն Արտաշիսի։ Որում իրազգած եղեալ արքային Երուանդայ՝ հետայոյզս առաքէ. վասն որոյ բովանդակ ժամանակս ընդ երեսս լերանց և դաշտաց այլակերպեալ շրջելով հետի հանդերձ մանկամբն՝ անցանէ ի հովուավանս և յանդէորդս, մինչև պարապ գտեալ ժամ՝ անցանէ առ Դարեհ արքայ պարսից»[112]։ «Բայց ի զարգանալ մանկանն Արտաշիսի, և ի բազում արութիւնս քաջութեան ցուցանել դայեկին Սմբատայ՝ հաճեալ ընդ նա նախարարքն Արեաց, մաղթեն զթագաւորն տալ նմա պարգևս զինչ և խնդրեսցէ... Եւ յանձն առեալ արքային արքայից՝ տայ ի ձեռս Սմբատայ մասն ինչ ի զօրացն Ասորեստանի և զզօրս Ատրպատականի, զի տարեալ զԱրտաշէս հաստատեսցեն ի գահն հայրենի»[113]։ Ձեռնարկությունը, ինչպես հայտնի է, հաջողությամբ է պսակվում, Երվանդն ընկնում է պայքարում, իսկ Արտաշեսը նստում է հայրենի գահին[114]։

112 *Խորենացի, II, 37։*
113 *Անդ, II, 43։*
114 *Անդ II, 46—47։*

Արտաշեսի շուրջը ստեղծված այս ավանդության մեջ, ինչպես տեսնում ենք, ըստ Խորենացու սովորության, որին մենք արդեն բավականաչափ ծանոթ ենք, գլխավոր դերը նորից վերապահված է Սմբատին, որը բառի բուն իմաստով անելիք չի թողնում Արտաշեսին։ Որ սա իսկապես Սմբատի նկատմամբ Խորենացու տածած համակրանքի ծնունդն է, պարզվում է իսկույն ևեթ, երբ մտովի սահմանափակում ենք Սմբատի դերը այս պատմվածքում, որովհետև ստացվում է բնորոշ մի օրինակ բազմաթիվ այն ավանդությունների, որոնք հին աշխարհում հյուսվում էին պատմական խոշոր անձնավորությունների, դինաստիաների հիմնադիրների, խոշոր նվաճողների մանկական տարիների վերաբերյալ։ Ավանդությունների այս տարատեսակը նպատակ է ունեցել ցույց տալու, որ հերոսն իսկապես կոչված է եղել մեծ միսիայով, և որ այդ պատճառով նախախնամությունը հենց սկզբից, հերոսի մանկական տարիներից, հոգացել է նրա մասին, փրկել նրան վտանգներից, օգնել դժվարին կացության մեջ և ի վերջո հասցրել ցանկալի նպատակին։ Մեր դեպքում, ինչպես տեսանք, նախախնամության դերը զգալի չափով փոխանցվել է Սմբատ Բագրատունուն։ Համեմատության համար ստորև մեջբերվող պատմական ամենատարբեր միջավայրերից ու ժամանակաշրջաններից վերցված մի քանի օրինակները ավանդությունների ակնարկված տարատեսակի ավելի ցայտուն նմուշներ են, և ցույց են տալիս, թե մոտավորապես ինչ երանգավորում պիտի ունենար մեր ավանդությունն իր նախնական վիճակում[115]։

Ակկադյան Սարգոնը (մ. թ. ա. 2350—2295 թթ.) իր մասին պատմում է այսպես. «Ես Սարգոնն, հզոր արքան, Ակկադի արքան եմ... Հղիացել է մայրս, աստծուն նվիրաբերված մի կին, և ծածուկ աշխարհ բերել ինձ, դրել սավույտից գործած զամբյուղի մեջ, խուփը կնքել կուպրով և հանձնել գե-

115 *Ի դեպ, նման ավանդությունների թվին են պատկանում նաև Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Գ-ի մանկական տարիների մասին ավանդությունները (Ագաթանգեղոս, 34, 36)։*

տին։ Այնժամ ընդունել է ինձ գետը, բերել հասցրել Ակկի-ջրակրին։ Ակկի-ջրակիրը վերցրել է ինձ, դարձրել իր որդին ու դաստիարակել։ Նա կարգել է ինձ իր այգեպան։ Եվ երբ ես այգեպան էի, ընդունելի դարձա Իշտար դիցուհուն... և հասա թագավորական իշխանության»[116]։

Առավել ծավալուն և լրիվ է արտահայտվել մեզ հետաքրքրող «թափառական» սյուժեն Հռոմ քաղաքի ավանդական հիմնադիր Ռոմուլոսի շուրջը հյուսված պատմության մեջ։ Արքայազն Ամուլիոսը հոր մահվանից հետո հալածում է իր ավագ եղբորը՝ օրինական թագաժառանգին, և տիրանում գահին, եղբորորդուն սպանում է, իսկ եղբոր դստերը՝ վեստալուհի դարձնում։ Վերջինս հղիանում է, իր ասելով, ռազմի աստված Մարսից, սակայն բանտ է նետվում, իսկ նրա երկվորյակ որդիները՝ Ռոմուլոսը և Ռեմը մի տաշտակի մեջ դրվելով հանձնվում են գետին։ Սակայն նրանք փրկվում են և ապրում, սնվելով գայլի կաթով։ Թագավորի գլխավոր հովիվը գտնում է նրանց ու դաստիարակում։ Հասունանալով՝ սրանք ելնում են Ամուլիոսի դեմ, սպանում նրան, ապա Ռեմը ընկնում է եղբոր՝ Ռոմուլոսի ձեռքից, որը և թագավորում է[117]։

Կյուրոս Մեծի մասին պատմվել է հետևյալը[118]։ Մարական թագավոր Աստիագեսը երազ է տեսնում, որ իր դուստր Մանդանեի արգանդից խաղողի որթ է բուսնել ու պատել ողջ Ասիան։ Մոգերը բացատրում են, որ Կամբիսես պարսկի հետ ամուսնացած Մանդանեի որդին կդառնա թագավոր։ Այդ կանխելու համար Աստիագեսը հանձնարարում է իր մերձավոր Հարպագոսին՝ սպանել երեխային։ Հարպագոսը հանձն է առնում, բայց չցանկանալով մեղսակից դառնալ, Աստիագեսի անունից թագավորի հովվին է հրամայում կատարել այդ ոճիրը։ Վերջինիս կինը, Սպակո անունով (Հերոդոտը նշում է, որ այդ մարերեն նշանակում է «շուն»), հենց այդ ժամանակ մե-

[116] В. В Струве, Хрестоматия по древней истории, т. I, М., 1936, էջ 42։

[117] Liv., I, 3—7։

[118] Her., I, 107 և հաջ.։

ռած երեխա է բերում։ Հովիվը դիակը ցուցադրում է Հարպագոսին և թաղում, իսկ Կյուրոսին որդեգրում է։ Սա, մեծանալով, մանուկների հետ խաղալիս, աչքի է ընկնում իր բարձր հատկություններով և թագավոր ընտրվում։ Վիրավորանք հասցնելով խաղընկերներից մեկին, որ մեծատոհմիկի որդի էր, բերվում է Աստիագեսի մոտ, որը սրան ճանաչում է և չարաչար պատժում Հարպագոսին, ստիպելով նրան ուտել իր սեփական որդու միսը։ Կյուրոսին, սակայն, նա արձակում է, քանի որ մոգերը նրան հավատացնում են, թե քանի որ Կյուրոսը մանուկներից թագավոր է ընտրվել, երազն արդեն իրականացել է, և որ Աստիագեսին այլևս վտանգ չի սպառնում։ Կյուրոսը մեկնում է իր ծնողների մոտ։ Որոշ ժամանակ անց Հարպագոսը, վրեժխնդրությունից դրդված, խորհուրդ է տալիս Կյուրոսին ապստամբել և գրավել գահը, խոստանալով մարական զորքերի հետ անցնել նրա կողմը։ Կյուրոսը համաձայնվում է ու իրագործում այդ ծրագիրը։ Աստիագեսը գերի է ընկնում։

Մանուկ Արտաշեսին ևս, ինչպես տեսանք, մահ էր սպառնում նրա գոյությունից սարսափած թագավորի կողմից, նա ևս փրկվում է, ընկնում հովիվների միջավայրն և այլն... Չի կարելի չնկատել, սակայն, որ այս ավանդությանը Խորենացու երկի էջերում մենք հանդիպում ենք զգալի չափով տերևաթափ, աղքատացած վիճակում, զուրկ այն հյութեղությունից, որ յուրահատուկ է ժողովրդից առած Խորենացու այլ դրվագներին, որքան էլ նա ձևափոխի ու մեկնաբանի դրանք։ Եվ սա պատահական չէ. ակներևաբար այս ավանդությունը նա գրի է առել ոչ թե ժողովրդից, այլ Արտաշեսի պատմությունը շարադրող իր գրավոր աղբյուրից, իսկ թե քանի հարյուրամյակ ավելի առաջ է այն գրի առվել առաջին անգամ, այդ շատ դժվար է ասել։

Չի՞ հակասում, սակայն, այս եզրակացությունը Երվանդի ծննդյան պատմության կապակցությամբ Խորենացու ասած այն խոսքերին, թե «Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս...», որից կարծես կարելի էր հետևցնել, թե Խորենացին

հենվում է անմիջապես ժողովրդական բանահյուսության վրա[119]։ Խորենացու կողմից իր աղբյուրների բնութագրման տերմինաբանությունն ուսումնասիրելիս Մ. Աբեղյանը մանրակրկիտ անդրադարձել է նաև «զրույց» տերմինին, հետազոտելով Խորենացու մոտ հանդես եկող դրա բոլոր երանգները։ Նա եկել է այն եզրակացության, որ «զրույց»-ը, առանց լրացուցիչ բացատրության, Խորենացու մոտ միշտ նշանակում է գրավոր աղբյուր, իսկ բանավոր աղբյուր նշանակելիս միշտ կից ունենում է այդ հանգամանքը հատկապես շեշտող բառ կամ արտահայտություն[120]։ Այսպիսով, «զրույց» տերմինի

119 Գր. Խալաթյանցը (նշվ. աշխ., էջ 212 և հաջ.) այդպես էլ հասկանում է և պնդում, թե Խորենացին, ջանալով այդ խոսքով համոզել, որ ժողովրդական բանահյուսությունից է օգտվում, իրականում հերյուրել է Երվանդի ծննդյան պատմությունը Պասիփայեի և Մինոտավրոսի՝ Փիլոն Երբայեցու մոտ հիշատակված առասպելի հիմքի վրա։ Այո, Խորենացին օգտագործել է այդ հանրահայտ առասպելը (քաղելով այն, անշուշտ, որևէ հունական մատյանից, թեկուզ և հենց Փիլոնից), բայց սոսկ որպես համեմատություն իր նախօրոք ունեցած դրվագի հետ։ Որ նման մի դրվագ, անկախ Պասիփայեի առասպելից, կարող էր հանդես գալ այնպիսի մի ավանդության մեջ, ինչպիսին է Երվանդ-Արտաշեսինը, այդ պարզ երևում է նույնանման դրվագների առկայությունից վերը մեջբերված այդ տիպի ուրիշ ավանդությունների մեջ։

120 «Զրույց» տերմինի կոնտեքստների մի մասը, ինչպես, օրինակ, «զրուցաց մատեանք» (Ա. գ.), «հրամայէ (Նինոս) զբազում մատեանս և զզրոյցս առաջնոցն... այրել» (Ա. ժդ.), «զրոյցս մատենից» (Ա. գ.), «իսկ զմնացեալսն ի զրուցացս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (Բ. հգ), և մի շարք ուրիշները հանգեցնում են Մ. Աբեղյանին այն եզրակացության, «թե այս բոլոր դեպքերում «զրոյց» գրավոր պատմություն է նշանակում, պարզ է»։ «Նույն իմաստը,— շարունակում է Մ. Աբեղյանը,— պահում է «զրոյց» բառը նաև բարդությունների մեջ»։ Ի հաստատումն այս մտքի նա մեջ է բերում «զրուցաբանութիւն», «զրուցաբան», «զրուցակարգութիւն», «զրուցատրութիւն» բառերի կոնտեքստները։ «Այսպես, «զրոյց» բառը,—եզրակացնում է Մ. Աբեղյանը,— մենակ առած, նշանակում է ընդհանրապես պատմվածք, պատմություն, իսկ Խորենացու մոտ հատկապես գրված պատմություն»։ Այնուհետև անցնելով կոնտեքստների այն մասին, որոնց մեջ «զրույց»-ը ունի բանավոր պատմության իմաստ, Աբեղյանը ցույց է տալիս, որ նման դեպքերում «Խորենացին միշտ անգիր, հին, վաղնջուց, նախ-

օգտագործման այս դեպքի կապակցությամբ ոչ մի հիմք չկա կասկածելու, թե խոսքն այստեղ գրավոր աղբյուրի մասին չէ, մի հանգամանք, որ հատուկ նշում է Մ. Աբեղյանը[121]։

Այսպես թե այնպես մի բան պարզ է, որ Արտաշեսի շուրջը ժամանակին մի ավանդություն է ստեղծվել, որի մեջ՝ նրա «թափառական» սյուժեին միահյուսված՝ տեղ է գտել Երվանդի և Արտաշեսի պատմական հակամարտության միտումնավոր լուսաբանումը։ Միտումի հակաերվանդյան և թերարտաշեսյան բնույթը հաշվի առնելով, ամենից ավելի դյուրին է այդ լուսաբանման հեղինակ համարել Արտաշիսյան դինաստիան, տեսնել նրա մեջ, թերևս, դինաստիայի պաշտոնական տեսակետի արտացոլումը՝ իր առաջացման, ծագման կապակցությամբ, տեսակետ, որով Արտաշեսը վերածվել է նախորդ հայոց թագավորների օրինական ժառանգի, բռնատիրող հայտարարված Երվանդի կողմից ապօրինի զավթված իշխանության վերականգնողի։ Թե այս ավանդությունը ե՛րբ է ստացել իր վերջնական ձևավորումը և ե՛րբ է բանավոր ոլորտից անցել գրավորին (որից և հասել է Խորենացուն), այդ, ինչպես նշեցինք, դժվար է ստույգ ասել, սակայն դա կարող է տեղի ունեցած լինել բավականաչափ վաղ, հաշվի առնելով, որ ավանդության մեջ արծարծված տեսակետի հիմքը դրել է հենց ինքը՝ Արտաշեսը, իրեն առանց վերապահությունների «Երվանդական» հայտարարելով[122]։

նական, բառերով կամ «յաւանդութենէ հասեալ», «որդի ի հօրէ առնելով յիշատակ», «զրուցեն պառաւունք» շրջաբերություններով որոշում է ժողովրդական զրույցը գրավոր զրույցից» (Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 16 և հաջ.)։

121 Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 20։ Ի դեպ, այս պնդումը չի նշանակում ամենևին, թե Խորենացու օրոք Երվանդ անունով թագավորի մասին գոյություն չի ունեցել նաև բանավոր ավանդություն։ Տե՛ս ստորև, էջ 217։

122 Այս կապակցությամբ պատշաճ է նշել, որ մինչև այժմ հայտնի չէ, թե ինչպես են անվանել իրենց Արտաշիսյանները. «Արտաշիսյան» անվանումը տրված է նրանց արդի պատմագիտության մեջ։ Մենք ամենևին բացառված չենք համարում, որ նրանք իրենց «Երվանդական» անվանած լի-

Քննարկված դրվագի մնացած տվյալներից առանձնապես կարևոր ու հետաքրքրական է Երվանդի Երվազ եղբոր մասին հաղորդումը։ Հետագայում Խորենացին Երվազին հիշատակում է ևս երկու անգամ՝ նախ, նրա Բագարանի սրբատեղիի քրմապետ նշանակվելու, ապա՝ սրբատեղիի ավարառման ու նրա սպանության կապակցությամբ։

Երվազին որպես պատմական դեմք ընդունելը մի շարք հանգամանքներով է թելադրվում։ Սկսենք թեկուզ նրանից, որ Երվազը հանդես է գալիս սերտ կապված Երվանդի նման մի իրական-պատմական դեմքի հետ։ Այս հանգամանքը իր պատշաճ պատվանդանն է գտնում Երվանդ և Երվազ անձնանունների վերլուծման մեջ, որը վերջերս անց է կացրել Ա. Փերիխանյանը՝ ցույց տալով, որ իրանական ծագում ունեցող այդ երկու անուններն էլ նախապարթևական շրջանում հայոց մեջ են թափանցել միևնույն ոլորտից, այն է՝ միջին մարական բարբառից, ըստ որում՝ միաժամանակ, որ երևում է նրանց կրած նույնանման հնչյունաբանական փոփոխություններից[123]։

նեն։ Այդ է ակնարկում Արտաշես Ա-ի կողմից նշված տոհմանվան կիրառումը՝ իր անձի նկատմամբ։ Սակայն նրա հաջորդներից և ոչ մեկից, ցավոք սրտի, մենք արձանագրություններ չունենք առայժմ, նույնիսկ Տիգրան Բ-ից, իսկ պահպանված բազմաթիվ դրամների վրա չկա և չի կարող լինել այս կամ այն թագավորի լրիվ տիտղոսաշարը, ուստի և հարցն առայժմ բաց է մնում։ Սակայն այն, իհարկե, կլուծվի ժամանակի ընթացքում, քանի որ համապատասխան արձանագրություններ անպայմանորեն կհայտնաբերվեն՝ մանավանդ կգտնվեն հելլենիստական շրջանի Հայաստանի քաղաքների պեղումների ժամանակ, որոնց հնագիտական ուսումնասիրությունը դեռ նոր-նոր է սկսվում։ Արտաշեսի հաջորդների կողմից «Երվանդական» տոհմանվան կիրառման արդյո՞ք մի փաստ չէ այն, որ Մ. Խորենացու Տիգրան Ա-ը, որը ներկայացված լինելով որպես Կյուրոսի ժամանակակից, իրականում մարմնավորում է գլխավորապես Տիգրան Բ-ի գծերը (տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 473), կոչվում է Տիգրան Երվանդյան։

123 А. Периханян, նշվ. աշխ., էջ 121։ Ելնելով Սևանի արձանագրությունների Երվանդ անվան RWND ձևով հաղորդումից, հեղինակը գտնում է, որ այն ծագում է իրանական ոչ թե Arvant ձևից, ինչպես կարծում էին, այլ միջին մարական բարբառի *Rayavant—ձևից, իսկ նույն բառի *Rayavāza անվանաձևից ծագում է հայկական «Երվազ»-ը (վրացերենում՝ Ռևազ)։ Այս երկու անունների պրոթետիկ e-երը դիտվում են այս դեպքում ոչ թե որպես փոխառական երևույթներ, այլ որպես արդեն հայկական հողի վրա տեղի ունեցած հավելումներ։ Է. Բ. Աղայանը (Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում, «Տեղեկագիր», 1958, № 5, էջ 70 և հաջ.), ընդհակառակը դիտում է փոխառված պրոթետիկ ձայնավորի կորուստը RWND ձևում, որպես հայոց լեզվի բարբառների օրինաչափությունների արտահայտություն։

Շեշտված իրական-պատմական բնույթ ունի նաև Երվազին վերագրված դերը։ Հայտնի է Ստրաբոնի հաղորդումը Կապադովկիայի գլխավոր սրբավայր Կոմանա տաճարային քաղաքի մասին, որտեղ պաշտվում էր Էնիո-Մա աստվածությունը։ «Քուրմը,— պատմում է Ստրաբոնը,— տաճարի ղեկավարն է և տաճարային ստրուկների տերը. այնտեղ կատարած իմ այցելության ժամանակ նրանցից կային 6000-ից ավելի՝ տղամարդիկ և կանայք։ Տաճարին է պատկանում նաև մի մեծ հողամաս, որի եկամուտներից օգտվում է քուրմը։ Իր նշանակությամբ նա Կապադովկիայում, թագավորից հետո, երկրորդ դեմքն է։ Սովորաբար քրմերը պատկանել են նույն տոհմին, ինչ որ և թագավորները»[124]։

Այստեղ ամեն ինչ հիշեցնում է Հայաստանի գլխավոր սրբավայր հանդիսացած տաճարային քաղաք Բագարանը՝ իր «ծառայ»-ներով (որոնց հետագայում գերեվարեց Սմբատը) և իր քրմապետով, որ թագավորի եղբայրն էր։ Ճիշտ է, Ստրաբոնի հաղորդումը վերաբերում է շուրջ երկու հարյուրամյակ ավելի ուշ ժամանակաշրջանի, սակայն նման սրբատեղիների կառուցվածքն ու ստատուսը արտակարգ պահպանողական էին, և բացի այդ Ստրաբոնն ինքն է շեշտում իր հիշատակած հաստատության հնամենի լինելու հանգամանքը։

124 Strab., XII, 2, 3։ Տե՛ս Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները, էջ 21։ Հ. Մանանդյանը Երվազի ու նրա՝ քրմապետի պաշտոնի կապակցությամբ վկայակոչում է նաև Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկը, ուր հիշատակված է «արմավիրցիների թագավոր Միթրասը», վերջինիս Հ. Մանանդյանը նույնացնում է Երվազի հետ (նշվ. աշխ., էջ 19)։

8

Երվանդ-Արտաշես հակամարտության հաջորդ դրվագը Հայաստան վերադարձած Արտաշեսի պայքարն է Երվանդի դեմ և նրա հաղթանակը։ Սակայն նախքան դրան անցնելը կանգ առնենք Երվանդի շինարարական գործունեությանը նվիրված այն գլուխների վրա[125], որոնցով Խորենացու մոտ ընդմիջված է դեպքերի զարգացումը։ Այդ գլուխներում մանրամասն նկարագրված է, թե ինչպես Երվանդը հիմնադրեց իր նոր մայրաքաղաք Երվանդաշատը, կառուցեց «կուռքերի քաղաք» Բագարանը, տնկեց «Ծննդոց» կոչված անտառը և վերջապես ստեղծեց իր զարմանահրաշ դաստակերտ Երվանդակերտը։

Որչափո՞վ են այս կառույցներն իսկապես պատմականորեն առնչվում վերջին այն Երվանդյանին, որը հանդես է գալիս Խորենացու և Ստրաբոնի մոտ, կամ, ավելի սահմանափակ ձևով դնելով հարցը՝ արդյո՞ք այս գործունեության նկարագրությունը ևս գալիս է Խորենացու օգտագործած այն գրավոր աղբյուրից, որի մեջ պարունակվել է նոր քննարկված ավանդությունը։ Կասկածը հարուցվում է այն պատճառով, որ նման լայնածավալ շինարարական գործունեությունը ակներևաբար հակասության մեջ է Երվանդի այն կերպարի հետ, որ հանդես է գալիս հիշյալ ավանդության մեջ։ Բացի այդ Խորենացու նկարագրությունները ինքնըստինքյան չեն պարունակում այնպիսի մանրամասներ, որոնք պարտադրեին մեզ դրանց ակունքները որոնելու անպայման հին գրավոր աղբյուրներում։

Վերցնենք Երվանդաշատի հիմնադրման նկարագրությունը։ Պետք է մտաբերել, որ Երվանդաշատ քաղաքը, ըստ Փավստոս Բուզանդի հաղորդման, ծաղկուն ու մեծ քաղաք է եղել դեռևս IV դարի կեսերին և ավերվել է պարսից Շապուհ Բ Թագավորի կողմից[126]։ Յուրաքանչյուր քաղաք և նույնիսկ

125 Խորենացի, II, 39—42։

126 Փավստոս, IV, 55։

գյուղ, սովորաբար ունենում է իր ծագման, հիմնադրման ավանդությունը, որի մեջ հաճախ կարևոր դեր է խաղում նրա անվան ստուգաբանությունը, մանավանդ, եթե անունը դյուրաստուգաբանելի է։ Այդպիսի մի ավանդություն ունեցած պիտի լինի նաև Երվանդաշատը և կասկածից վեր է, որ դրանում իր տեղը պիտի ունենար քաղաքանվան մեջ հավերժացած Երվանդը։ Բացի այդ, քաղաքն ինքը, կամ նրա ավերակները, եթե այն չէր վերածնվել (իսկ այդպես կարծելու հիմքեր կան)[127], միանգամայն մատչելի էին Խորենացուն։ Երվանդաշատի ավերակներն այսօր էլ գոյություն ունեն և իրենց արտաքին տեսքով իսկ չափազանց խոստումնալից են հնագիտական պեղումների առումով[128]։ Ահա, քաղաքի տեսքը և նրա ծագման, հիմնադրման առասպելը կամ սրա փշրանքները, որոնց՝ Խորենացու ժամանակներին հասնելու հնարավորությունը կասկածից դուրս է, միանգամայն բավարար հիմք են ներկայացնում Խորենացու երկի էջերում մեզ հասած նկարագրության համար։

Նմանօրինակ է, թեև ոչ նույնը, Երվանդակերտի նկարագրությունը։ Այս բնակավայրը, ըստ Խորենացու, Արտաշեսը վերանվանել է Մարմետ, որը հետագայում Տրդատը նվիրել է Կամսարականներին։ Մարմետը, որպես Կամսարականների ոստան, ավելի ուշ շրջանում, VII դարում հիշատակում է Անանիա Շիրակացին[129]։ Ուրեմն Խորենացին իր ապրած ժամանակ լիուլի հնարավորություն է ունեցել այն տեսնելու կատարելապես շեն վիճակում։ Խորենացու նկարագրության ուշադիր ընթերցողը անպայման կնկատի, որ այն, չնայած իր չափազանցության հասնող վառ գույներին ու համեմատություններին, քերականորեն և տրամաբանորեն ներկա վիճակի

127 Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 134։

128 Տե՛ս Բ. Ն. Առաքելյան, Որտե՞ղ են գտնվել Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքները, ՊԲՀ, 1965, № 3, էջ 92։

129 Անանիայի Շիրակացւոյ համարողի յաղագս հարցման և լուծման, է. հարցումն (Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 228)։

է վերաբերում։ Եվ Խորենացին չի թաքցնում այդ։ Պարզապես նա համոզված է եղել, որ իր տեսած Մարմետը կառուցվել է դեռ Երվանդի օրոք՝ մ. թ. I դարում։ Այդ երևում է թեկուզ հետևյալ նախադասությունից. «Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստ զհայեցուածն ունի. և արդարև բերդի և թագաւորական դաստակերտն»։ Այստեղ «պատմական» բնույթ են կրում միայն «թագավորանիստ», «թագավորական» բառերը, որոնց ներկայությունը, սակայն, միանգամայն հասկանալի է։ «Զայս ամենայն զգործեցեալսն Երուանդայ,— եզրափակում է Խորենացին,— պարգևէ մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց...»։ Բնորոշ է, որ խոսքն այստեղ հատկապես Երվանդի «գործեցելոցն» պարգևման մասին է և ոչ սոսկ տեղանքի. ասել է թե Կամսարականները օգտվում են Երվանդի շինարարության արդյունքներից։

Խորենացին հաղորդում է, որ Մարմետը նախապես Երվանդակերտ է կոչվել։ Այս տեղեկությունը կարող էր հասնել նրան տարբեր ուղիներով. համենայն դեպս, մեր կարծիքով, ոչ մի հիմք չկա չհավատալու նրան, ինչպես անում է Գր. Խալաթյանցը[130]։ «Երվանդակերտ» տեղանունը «հորինելու» համար Խորենացին կարող էր ունենալ միայն մի դրդապատճառ, այն է «Երվանդ» անունը պարունակող տեղանունների պակասը, որը կարող էր նրան խանգարել, ասենք, իր ցանկացածի պես նկարագրելու Երվանդի շինարարական գործունեությունը։ Իրականում, սակայն, տեսնում ենք հակառակը, այսինքն, որ Խորենացին նման տեղանունների ո՛չ թե պակաս է զգացել, այլ դրանցից ունեցել է իր ձեռքի տակ ավելի, քան նրան անհրաժեշտ էր Երվանդի կատարած շինարարությունը բնութագրելու համար։ Դրա ապացույցն է նրա կողմից այդօրինակ ևս մի տեղանվան՝ Երվանդավանի օգտագործման եղանակը՝ մի քանի գլուխ անց։

130 Г. Халатянц, նշվ. աշխ., էջ 223։

Խորենացին պատմում է, որ Արտաշեսը՝ հաղթելով ճակատամարտում Երվանդի զորքերին, «անուանեաց... զտեղի ճակատուն՝ Երուանդավան, որ կոչի մինչև ցայսօր ժամանակի. այս ինքն եթէ յայսմ տեղւոջ վանեաց զԵրուանդ»[131]։ Հաղորդումը ոչ մի կասկած չի թողնում, թե Երվանդավանը մինչև Խորենացու ապրած ժամանակը հարատևած մի տեղանուն է (նույնիսկ Գր. Խալաթյանցը ի վիճակի չէ պնդելու, թե այն հորինել է Խորենացին)։ Սակայն նույնչափ ակնհայտ է և այդ տեղանվանը Խորենացու տված ստուգաբանության արհեստական բնույթը, որն, ըստ երևույթին, հանգեցրել է Խորենացուն նաև նրա ուղղագրության փոփոխմանը՝ Երուանդավան, փոխանակ Երուանդաւանի, ինչպես կպահանջեր Տիգրանաւանի, Վարդգեսաւանի, Արշակաւանի և տասնյակ այլ «աւան»-ների օրինակով[132]։ Խորենացին պարզապես օգտագործել է նշված ձևով ստուգաբանման ենթարկվող այդ անունը ի հարստացումն Երվանդի և Արտաշեսի բախման դրվագի նկարագրության։ Սակայն «Երվանդավանի» իսկական տեղն է շինարարությանը նվիրված հատվածում՝ Երվանդաշատի և Երվանդակերտի կողքին։

Հաշվի առնելով, որ բոլոր այս դեպքերում Խորենացու հաղորդածի ետև, որպես սկզբնաղբյուրներ, կանգնած են տեղանունները կամ տեղերի հետ կապված ավանդություններն ու հիշողությունները[133], կամ տեղերի արտաքին տեսքը՝

131 Խորենացի, II, 46։

132 Տե՛ս Г. Халатянц, նշվ. աշխ., էջ 231 և հաջ., նաև H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, „Indogermanische Forschungen“, Bd. XVI, Strassburg, 1904, էջ 426. Տե՛ս նաև Г. Х. Саркисян, Тигранакерт, էջ 41, ծան. 45։

133 Խորենացու օրոք Երվանդ անունով թագավորի մասին բանավոր ավանդությունների գոյությունը կասկածից վեր է։ Դրանք չէին կարող բացակայել, քանի դեռ պահպանվում էին «Երվանդ» անունը պարունակող տեղանունները, որոնք ժողովրդի հիշողության մեջ վառ էին պահում այդ անունը և դրդապատճառ հանդիսանում նրա՝ ժողովրդական բանահյուսության մեջ հոլովվելուն։ Ինքը Խորենացին մեզ այդ բանավոր ավանդություններից որոշ փշուրներ է հասցնում, կցելով դրանցից մեկը (II, 42) մեր քննության

Խորենացու օրոք, և կամ երբեք միասին, առայժմ հիմք չկա վերագրելու, հետևելով Խորենացուն, այդ բնակավայրերի հիմնադրումը կամ կառուցումը կոնկրետ պատմական Երվանդներից հատկապես որևէ մեկին, լինի դա Խորենացու ներկայացրած վերջին Երվանդը, կամ նախորդ Երվանդներից մեկը, թեև նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը այդ շինարարությանը միանգամայն հնարավոր է։ Հիշյալ տեղանունները առայժմ, մինչև նոր նյութերի հանդես գալը, մեր կարծիքով, պետք է դիտել միայն որպես ընդհանրապես Երվանդյան դինաստիայի շինարարական գործունեության վկաների, առանց առնչելու այս կամ այն որոշակի թագավորին։

Մյուս երկուսը՝ Բագարանը և Ծննդոց անտառը՝ իրենց անվանումների մեջ չեն կրում «Երվանդ» անունը, ուստի և մեզ անհայտ են մնում այն հիմունքները, որոնք դրդել են Խորենացուն դրանք ևս վերագրելու Երվանդ թագավորին։ Ինքը՝ Խորենացին այդ հիմունքների մասին ոչինչ չի ասում։ Սակայն պետք չէ կասկածել, որ դրանք, այդ հիմունքները, ինչպես նման դեպքերում միշտ լինում է Խորենացու մոտ, ինչ-

տարկա Երվանդին («Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար վիմացն։ Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել, և կամ դիւականս ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ զորս կամի»), իսկ մյուսը՝ կապված Վարդգես Մանուկի հետ՝ Երվանդ Սակավակյացին (II, 65)։ Մի այլ փշուր էլ պահպանվել է հավանաբար Մեսրոպ Մաշտոցի գրչին պատկանող «Հայցման» մեջ, ուր խոսվում է Երվանդի (Երուանդի)՝ Արտավազդի նման «ի գետս և ի մառանս» փակված լինելու մասին (Լ. Խաչիկյան, Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք, «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 326), ևս մեկը՝ «Քարթլիս ցխովրեբա»-ում. «(Երվանդը)... բնակեցրեց Ծունդայում գազանաբարո մարդիկ՝ դևերին ազգակից և կոչեց Ծունդան նոր անունով՝ Քաջատուն, որ թարգմանաբար նշանակում է «Դևերի տուն» (Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները, Ա., էջ 155)։

որ ձևով գոյություն են ունեցել, որ Խորենացին անպայման կռվան է ունեցել Բագարանի ու Ծննդոց անտառի հիմնադրման պատմությունները Երվանդաշատի և Երվանդակերտի պատմությունների շարքը դասելու համար։

Հաջորդ դրվագը, ինչպես ասվեց, Արտաշեսի և Երվանդի զինված բախումն է։ Խորենացու մոտ այն բավական մանրամասն է նկարագրված։ Արտաշեսը շուրջ քսան տարի ապրում է պարթևաց թագավորի արքունիքում։ Պարթևը նրան տրամադրում է «մասն ինչ ի զօրացն Ասորեստանի և զզօրս Ատրպատականի, զի տարեալ զԱրտաշէս հաստատեսցեն ի գահն հայրենի»[134]։ Իմանալով այդ լուրն Ուտիքում, Երվանդը շտապ անցնում է իր մայրաքաղաքը և սկսում տենդագին պատրաստվել՝ դիմագրավելու համար սպառնացող վտանգին. ժողովում է իր զորքերը, կոչում դաշնակիցներին։ Գալիս է «Նա և Արգամ, տանուտէր ազգին Մուրացեան, որ ի ծննդոցն Աժդահակայ, ամբոխ հետևակաւ»[135]։ Երբ Արտաշեսը Ուտիքի կողմից մտնում է Հայաստան, նախարարներն սկսում են լքել Երվանդին և անցնել նրա կողմը[136]։ Անցնելով Սևանի ափերով՝ Արտաշեսը շտապում է դեպի Երվանդի ճամբարը, որ գտնվում է Երվանդաշատից մոտ 300 ասպարեզ (=շուրջ 50 կմ) դեպի հյուսիս, Ախուրյան գետի ափին։ Նրան մտահոգում էր միայն Արգամի ներկայությունը Երվանդի բանակում։ Արտաշեսը Արգամին առաջարկում է անցնել իր կողմը։ Երբ ճակատամարտը սկսվում է, Արգամն իր զորքով մի կողմ է քաշվում։ Արյունահեղ ճակատամարտում Երվանդը պարտություն է կրում և փախչում դեպի իր քաղաքը՝ կայանից-կայան փոխելով ձիերը։ Արտաշեսը գիշերում է Երվանդի վրանում և հաջորդ օրը, հրամայելով թաղել սպանվածներին, սլանում է Երվանդի հետևից, անվանելով իր օթևանի վայրը Մարաց մարգ, իսկ ճակատամարտի տեղը՝ Երվանդավան, որի մասին վերը խոսվեց։ Երբ նա հասնում է Երվանդի դաստակերտ Եր-

134 Խորենացի, II, 43։

135 Անդ, II, 44։

136 Անդ, II, 45։

վանդակերտի մոտակայքը, ապա հրամայում է զորքին աղաղակել «մար ամատ», որ թարգմանի Մարս եկն, յիշեցուցանելով զթշնամանսն, զոր յղէր Երուանդ առ թագաւորն Պարսից և առ Սմբատ, Մար զնա կոչելով»[137]։ Այդ պատճառով ահա դաստակերտն անվանվում է Մարմետ, որովհետև Արտաշեսը ցանկանում է վերացնել Երվանդի անունը։

Այստեղից Արտաշեսը մտնում է Երվանդաշատին, որն արդեն նախօրոք պաշարել էր Սմբատը և գրոհով վերցնում է այն. «Իսկ մի ոմն ի զինուորացն մտեալ եհար վաղերբ զգլուխն Երուանդայ, և ցրուեաց զուղեղն ի յատակս տանն... Բայց Արտաշիսի յիշեալ, թե խառնուած Արշակունւոյ է Երուանդ՝ հրամայէ զդի նորա թաղել մահարձանօք»[138]։

Հաջորդ երկու գլուխներում նկարագրված է, թե ինչպես Արտաշեսը պարգևատրեց իր երախտավորներին, մանավանդ Արգամին, տալով նրան «գահն երկրորդական», որը նա ուներ Երվանդի օրոք, և բազմաթիվ այլ պարգևներ ու պատիվներ[139], և թե ինչպես սպանվեց Երվանդի եղբայր քրմապետ Երվազն ու ավարառման ենթարկվեց Բագարանը։ Սրանից հետո գալիս է արդեն բազմիցս հիշատակված Ողյումպ քրմի «մեհենական պատմության» վկայակոչումը, որպես շարադրված պատմության աղբյուրի[140]։

Արտաշեսի պատմության մնացած դրվագների ուսումնասիրման արդյունքների լույսի ներքո մենք հիմք չունենք թերահավատ վերաբերմունք ցուցաբերելու այս դրվագին, այ-

137 Դեռևս նախորդ գլուխներից մեկում (II, 38) Արտաշեսի փախուստի և պարթևների մոտ պատսպարվելու նկարագրությունից հետո, Խորենացին ներկայացնում է Երվանդի նամակները, գրած պարթևների թագավորին («Արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր սնուցանես զՄարըդ Արտաշէս հակառակ ինձ և իմոյ թագաւորութեանս, լսելով բանից Սմբատայ յեղուզակի, որ սուտ, թէ որդի է Արտաշէս Սանատրկոյ... Նա չէ որդի Սանատրկոյ, այլ ընդ-խառս գտեալ Սմբատայ զմար ոմն տղայ՝ բաչաղի») և Սմբատին («...խաբեալ ի սանուցէդ՝ սնուցանես զորդի Մարից հակառակ ինձ»)։

138 Խ ո ր ե ն ա ց ի, II, 46։

139 Անդ, II, 47։

140 Անդ, II, 48։

սինքն կասկածելու, թե նրա հիմքում ընկած չէ նույն այն գրավոր աղբյուրը, որը բազմաթիվ այլ դեպքերում զարմանալի հարազատություն է ցուցաբերում ուրիշ հավաստի աղբյուրներից բխող տվյալներին։ Մանավանդ, որ ինքը՝ Արտաշես-Երվանդ բախումը նշված է նաև, ինչպես հիշում ենք, Ստրաբոնի վերը մեջբերված հաղորդման մեջ։ Պայքարի մանրամասների մեջ, մեր կարծիքով, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Արգամի մասին ավանդը։ Հաշվի առնելով Արգամի կապակցությամբ վերը կատարած քննության արդյունքները՝ այժմ, թվում է, կարելի է հայ ժողովրդի պատմության այդ հին ու մշուշապատ դրվագներում զանազանել ևս մի պատմական կերպարանք, որը խոշոր դեր է խաղացել ժամանակի քաղաքական իրադարձությունների մեջ։ Դա հայ մեծատոհմիկ Արգամն է, Երվանդի կարևորագույն գործակիցներից մեկը, միգուցե և, ինչպես հասել է մեզ Մովսես Խորենացու մոտ՝ թագավորից հետո երկրորդ անձնավորությունը պետության մեջ։ Արգամ անունը եզակի է. այլ հիշատակություն մենք չունենք[141], ուստի և հակված ենք կարծելու, թե, հնարավոր է, այդ անունը Խորենացուն է հասել որոշ չափով աղավաղված վիճակում, իսկ նախապես դա եղել է Արշամ (Aršāma, ᾿Αρσάμης), իրանական շատ հայտնի անուն, ընդունված նաև հայոց մեջ, այդ թվում, ի դեպ, Երվանդյան տոհմում։

Ահա այդ Արգամը (կամ Արշամը), տեսնելով քաղաքական ասպարեզի վրա մի նոր ու փայլուն դեմք, որպիսին էր արքայական իշխանության հավակնորդ ստրատեգոս Արտաշեսը, կապել է իր բախտը նրա հետ և օժանդակել նրան հաստատվելու գահին։ Արտաշեսի թագավորության սկզբնական շրջանում նա շարունակել է մեծ դեր խաղալ արքունիքում, սակայն հետագայում պալատական բանսարկությունների զոհ է դարձել։ Հասկանալի է, որ այդ իրական Արգամին հարի

141 F. Justi, էջ 22, Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 271։

չկա կապելու ոչ Մուրացյան նախարարական տոհմի, ոչ էլ մարերի (կամ Աժդահակի զարմերի, վիշապազունների) հետ։

Չափազանց ուշագրավ է, պատմականության առումով, նաև Երվանդի մահվան նկարագրությունը և, նամանավանդ, այն հաղորդումը, որ Արտաշեսը պատշաճ կերպով թաղեց Երվանդին, «յիշեալ, թէ խառնուած Արշակունեաց է Երուանդ»[142]։

142 Այսուհանդերձ համոզիչ չի թվում Հ. Մանանդյանի կատարած փորձը («Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ», Երևան, 1946, էջ 26 և հաջ.) Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկում (ըստ Կ. Վ. Տրևերի հրատարակության՝ № 7) տեսնելու այս նկարագրության հաստատումը։ Այստեղ խոսքը ոմն Նումենիոսի մասին է (որը հիշատակված է նաև արմավիրյան № 6 արձանագրության մեջ որպես ինչ-որ տեղից ժամանած «հելլեն Նումենիոս»), որը մահվան լուր է հայտնում «եղբայրասեր» մականունը կրող ոմն կնոջ, հավանաբար՝ թագուհու։ Այդ լուրը «չէ պարունակում ոչ մի անփառունակ բան» (ըստ Հ. Մանանդյանի թարգմանության), քանի որ այն անձնավորությունը, որին վերաբերում է լուրը, «շունչը փչել է զենքը ձեռքին», ըստ որում «նորագահանիստ Հայաստան երկրին տիրապետել են» թշնամիները (վերջին բառը Հ. Մանանդյանի հավելումն է). այնուհետև հիշատակվում է «զինվորներ» բառը։

Հ. Մանանդյանը գտնում է, որ «եղբայրասեր» մականվամբ կինը Երվանդ թագավորի քույրն է, իսկ սպանվածը՝ ինքը Երվանդը։ Սակայն այս, բավականաչափ վատ պահպանված, արձանագրության տվյալները չափազանց անորոշ են, որպեսզի այդչափ որոշակի լուսաբանության հնարավորություն տան։ Այս է պատճառը, որ արձանագրության նույն այդ արտահայտությունները հիմք են ծառայել նաև միանգամայն ուրիշ ենթադրությունների։ Այսպես, Հ. Մանանդյանից առաջ Ա. Ի. Բոլտունովան (Греческие надписи Армавира, «Известия АрмФАН СССР», 1942, № 1—2, էջ 52 և հաջ.) առաջարկել է «Եղբայրասերի» մեջ տեսնել Արտաշես Ա-ի օրոք Հայաստան արշաված Սելևկյան Անտիոքոս Դ-ի կնոջը, իսկ սպանվածի մեջ՝ իրեն Անտիոքոսին։ Կ. Վ. Տրևերը, արդեն Մանանդյանի տեսակետի հրապարակումից հետո («Очерки по истории культуры древней Армении», էջ 146), խուսափելով «Եղբայրասերի» անձնավորությունը կոնկրետացնելուց, կարծիք է հայտնել, որ սպանվածը Արտաշես Ա-ն է։ Մեզ թվում է, որ Արմավիրի վերոհիշյալ արձանագրության բովանդակության խնդիրը դեռևս լուծված չէ, և բերված իրերամերժ ենթադրությունները սոսկ այն աստիճաններն են, որոնք հենարան կծառայեն այս արձանագրության ապագա մեկնաբանին։

Կարելի՞ է, սակայն, Խորենացու մոտ նկարագրված այս ամբողջ դրվագը ծայրեծայր միևնույն աղբյուրից քաղված համարել, և չկա՞ն արդյոք այստեղ այլ աղբյուրների օգտագործման նկատելի հետքեր։ Անշուշտ կան։ Գր. Խալաթյանցը նշում է, որ որոշ արտահայտություններ այստեղ վերցված են Կեղծ-Կալիսթենեսի «Աղեքսանդրի վարքից», մասնավորապես Ալեքսանդր Մակեդոնացու և Դարեհ Գ-ի ճակատամարտի նկարագրությունից։ Բերենք նրա համադրություններից մի երկուսը. «Իսկ Երուանդ... հեծեալ ի նոր ձիս հանգոյց ի հանգուցէ փախչէր» (Խոր.), Դարեհը «...ձի կալեալ բազում և նոր հանգոց ի հանգոցէ փախչէր» (Կեղծ-Կալիսթենես)։ «Եւ Մարաց զօրացն անցեալ ի կողմն երուանդական գնդին, նսեմաւ ի վերայ դիականցն բանակէին։ Իսկ Արտաշիսի հասեալ ի յԵրուանդայ շրջապատեալ առագաստն,... էջ, և ի խորանի նորա բնակեցաւ զայն գիշեր» (Խոր.), «Եւ Մակեդոնացիքն հասեալ ի կողմն պարսից բանակէին. և մէջ գիշեր եղեալ ի վերայ դիականցն օթագանէին։ Եւ Աղեքսանդր հասեալ ի վրանն Դարեհի էջ և նմա մտեալ բնակեաց» (Կեղծ-Կալիսթենես)[143]։

Այս օրինակները, որոնք չեն կարող երևակայության արդյունք համարվել, իրոք ցույց են տալիս Խորենացու կողմից այս հատվածում Կեղծ-Կալիսթենեսի օգտագործման փաստը։ Սակայն դա ամենևին չի արդարացնում Գր. Խալաթյանցի ենթադրությունը, թե իբր Խորենացու շարադրանքը Կեղծ-Կալիսթենեսից է կախված։ Մի այլ հար և նման ու էլի Կեղծ-Կալիսթենեսին վերաբերող օրինակի կապակցությամբ մենք ժամանակին մանրամասն ցույց ենք տվել, որ նման փոխառությունները Խորենացու մոտ ամենևին չեն վերաբերում նրա պատմածի էությանը, որ դրանք սոսկ «ոճական հագուստ» են նրա նկարագրությունների համար[144], և ներկա դեպքն էլ ծայրեծայր հաստատում է այդ թեզը։ Նմանօրինակ դեպքերը

143 Г. Халатянц, նշվ. աշխ., էջ 213, էջ 56—57։

144 Գ. Սարգսյան, Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 36 և հաջ.։

վկայում են միմիայն այն մասին, որ Խորենացու հիմնական աղբյուրը այդ դեպքերում կամ շատ լակոնիկ, չոր ու ցամաք է եղել, և կամ նրա ոճը Խորենացին բավարար չափով ճոխ չի համարել՝ հաղորդվող իրադարձության կարևորությանը համեմատած։

Որ տվյալ դեպքում վիճակն այդպիսին է եղել, ցույց է տալիս նաև մի այլ հանգամանք՝ Խորենացու կողմից այստեղ մի ուրիշ օժանդակ աղբյուրի՝ հատուկ անունների (տոհմանունների, տեղանունների, անձնանունների) ստուգաբանության լայն կիրառումը։ Պետք է, սակայն, իսկույն նշել, որ այս օժանդակ աղբյուրը Խորենացու աչքում կտրուկ կերպով տարբերվում էր այնպիսի միջոցից, ինչպիսին է նոր հիշատակված «ոճական հագուստը»։ Խորենացին իրավացիորեն գնահատում էր անունների ստուգաբանությունը որպես իրական պատմական աղբյուր, այս առումով ոչնչով չտարբերվելով այսօրվա հետազոտողներից, որոնք լայնորեն օգտվում են ստուգաբանությունից։ Որ Խորենացին իսկապես այդպես էր գնահատում ստուգաբանական մեթոդը, երևում է այն հանգամանքից, որ սրանից հանած եզրակացությունները նա հաճախ դարձնում է շատ պատասխանատու և կարևոր պնդումների ու նկարագրությունների հիմք, մի բան, որ նա երբեք չի անում «ոճական հագուստ» հանդիսացող նյութի նկատմամբ։ Այլ խնդիր է, որ Խորենացու տված ստուգաբանությունները ճնշող մեծամասնությամբ «ժողովրդական» ստուգաբանությունների թվին են պատկանում, այսինքն առաջնորդվում են տվյալ անվան սոսկ արտաքին ձևով, չեն բացահայտում նրա իսկական էությունը, ուստի և նրանց վրա հենված եզրակացությունները մեծ մասամբ չեն բացահայտում պատմական իրականությունը։

Սակայն դրանց զանգվածային ուսումնասիրությունն առանձին խնդիր է, որին մենք մտադիր ենք ձեռնարկել ապագայում։ Այստեղ պետք է բավարարվենք այն մի քանի օրինակների քննությամբ, որոնք հանդիպում են մեզ հետաքրքրող հատվածում։

Արդեն մանրամասն խոսվել է, թե ինչ կարևոր ու պատասխանատու հետևություններ է հանգեցրել Խորենացուն Մուրացեան> մարք> Աժդահակի զարմք> վիշապազունք ստուգաբանական շարքը, որը բացահայտել է Մ. Աբեղյանը։ Նույն կարգի ստուգաբանություններին է պատկանում նաև «Դիմաքսեան» նախարարական տոհմանվան ստուգաբանությունը, որը Խորենացին առաջ է քաշում Երվանդի ու Արտաշեսի ճակատամարտի դրվագում։ Նա պատմում է, որ տավրացիք Երվանդին խոստացել էին կռվի պահին սպանել Արտաշեսին. «Որոց դիպեալ ի հետի ընդ մէջ անցանէ Գիսակ որդի սննտուին Արտաշիսի, և սատակեալ զնոսա, ուր և կէս դիմաց նորա ի վայր բերեալ սուսերաւ, զյաղթութիւն ստացեալ՝ մեռանի ի վերայ այսպիսեաց»[145]։ Այս նկարագրությունը հիմնրված է «Դիմաքսեան» տոհմանվան ստուգաբանության վրա, որը տալիս է Խորենացին հաջորդ գլխում՝ ասելով. «Եւ զՆերսէս զորդի որդւոյ իւրոյ սընտուին Գիսակայ, ազգ զնա սերելով՝ անուն կոչէ զնահատակութեանց հօրն—Դիմաքսեան. քանզի, որպէս ասացաքն՝ զկէս դիմացն սուսերաւ ի վայր բերին ի վերայ Արտաշիսի»[146]։

Այս ստուգաբանության երկվորյակն է «Կամսարական» տոհմանվան ստուգաբանությունը, որը Խորենացին, այս անգամ պարսկերեն լեզվի օգնությամբ, տալիս է երկրորդ գրքի 87-րդ գլխում, բխեցնելով «Կամսար» անունը «կամ սար»՝ «կես, պակաս գլուխ» բառերից. «Այս Կամսար... հարկանի յումեմնէ սակրբ զգլուխն. և վերացուցեալ մասն ինչ յոսկերէ սկաւառակին, բժշկեալ ի դեղոց, պակաս զոլով բոլորութիւն գագաթանն՝ անուանեցաւ Կամսար այնր աղագաւ»։ Ստուգաբանման եղանակի նույնությունը, անշուշտ, վկայում է Խորենացու մոտ այս բնագավառում ևս որոշակի համակարգի առկայության մասին՝ իր սկզբունքներով ու օրինաչափություններով, որոնք անպայման ի հայտ կգան հատուկ ուսումնասիրման դեպքում։

---

145 Խորենացի, II, 46։

146 Անդ, II, 47։

Նախարարական տոհմանունների ստուգաբանության կողքին Խորենացին մեծ տեղ է տալիս նաև տեղանունների ստուգաբանությանը։ Ողջ «Պատմությամբ» մեկ ցրված դրանց օրինակները բազմաթիվ են, սակայն մենք հարկ չունենք անդրադառնալու դրանց, որովհետև քննության առարկա հատվածը տալիս է բավարար ցայտուն օրինակներ։ Դրանցից մեկը՝ «Երվանդավան» տեղանունն, արդեն քննարկվել է վերը Երվանդի շինարարական գործունեության խնդրի կապակցությամբ։ Մենք տեսանք, որ այդ տեղանունը, որն ըստ Խորենացու իսկ ցուցման, գոյություն է ունեցել մինչև իր ժամանակները, Խորենացին ստուգաբանում է ոչ թե որպես Երուանդ-աւան, որը և բնական կլիներ, հաշվի առնելով բազմաթիվ զուգահեռները, այլ Երուանդայ-վան՝ «վանել» բայից, որտեղից և պատմական բնույթի հետևություններ է անում։

Սրա կողքին Խորենացին տալիս է և «Մարաց մարգ» տեղանվան ստուգաբանությունը, որպես «մարերի (մեդացիների) մարգ»։ Տեղանունը, ըստ Խորենացու, ծագել է մարական զորքի գլուխ կանգնած Արտաշեսի Հայաստան մտնելու և այդ տեղում ճակատելու կապակցությամբ։ Գր. Խալաթյանցը վկայակոչում է XIII դարին պատկանող երեք արձանագրություններ[147], որոնց մեջ տեղ է գտել այդ տեղանունը, մի դեպքում Խորենացու իսկ հիշատակած ձևով, այսինքն՝ «Մարաց մարգ», իսկ մյուս երկու դեպքերում՝ «Մարանց մարգ» ձևով, որն արդեն միանգամայն այլ ստուգաբանություն է պահանջում, այն է՝ «մայրերի մարգ» և ցույց տալիս, որ մարերի հետ այս տեղանունը հազիվ թե կապ ունենա։

«Մար» բառի օգնությամբ է ստուգաբանում Խորենացին նաև Մարմետ տեղանունը, որը, ինչպես արդեն ասվել է, հիշատակում է նաև Անանիա Շիրակացին՝ VII դարում։ Խորենացին դիմել է պարսկերեն լեզվի օգնությանը՝ իմաստավորելով Մարմետը որպես «մար ամատ», «որ թարգմանի մարս եկն», այսինքն «մարը եկավ»։ Ա. Փերիխանյանը նշել է, որ դա ակ-

147 Г. Халатянц, նշվ. աշխ., էջ 233։

ներևաբար, մի կողմից՝ հայկական mar «մեդացի», մյուս կողմից՝ միջին պարսկերեն āmat «եկավ» բառերի արհեստական խառնուրդն է[148]։ Ստուգաբանության արհեստականությունը աչքի է զարնում նաև մի ուրիշ, նորից Արտաշեսի պատմության մեջ հիշատակված դեպքի՝ Ամատունի տոհմանվանը Խորենացու տված բացատրության հետ համեմատելիս։ Այստեղ ևս կիրառված է նույն āmat «եկավ» բառը, որի օգնությամբ տոհմանունն իմաստավորված է որպես «եկք»՝ «եկյալներ» և սրանից էլ նրանց եկվոր լինելու մասին պատմական հետևություններ են արված[149]։

Իսկ ի՞նչ պատմական հետևություններ են արված Մարմետ տեղանվան ստուգաբանությունից։ Սրա ստուգաբանությունն է, մեր կարծիքով, որ («Մարաց մարգ» տեղանվան ստուգաբանության օժանդակությամբ) Խորենացուն դրդել է ներմուծել Երվանդի և Արտաշեսի պատմության մեջ «մար» բառի հետ կապված միջադեպերի ողջ շղթան. Երվանդի կողմից Արտաշեսի չարամտորեն մար հորջորջվելը, մարաց զորքերի առկայությունը Արտաշեսի դրոշի ներքո, այս բոլորը տրամաբանական զարգացումն են երևում «մարը եկավ» դրույթի, որն իր հերթին հանգչում է «Մարմետ»-ի հնչյունական կազմի վրա։

Ունենալով այսպիսի շոշափելի (Խորենացու պրակտիկայի համար շատ բնորոշ) մի հենարան, ինչպիսին է անվան ստուգաբանությունը, կարծում ենք այլևս ավելորդ է «մարական» այդ շղթայի առկայության բացատրման համար ուրիշ հիմք որոնել, ենթադրել, ասենք, թե մի գուցե Արտաշեսն իսկապես մարական ծագում է ունեցել[150]։

148 А. Периханян, նշվ. աշխ., էջ 109, ծան. 6։

149 Խորենացի, II, 57։ Ն. Ադոնցը «Ամատունի» տոհմանունը **ստուգաբանում է անտիկ հեղինակների** Ματιάνη || Μαντιήνη = mada || manda **«մար» ցեղանվան միջոցով** (A-mat-uni)։ Н. Адонц, **նշվ. աշխ., էջ 118, 119, ծան. 1։**

150 Այդպիսի հետևություն են անում Խորենացու մոտ «մար» ցեղանվան՝ Արտաշեսի կապակցությամբ օգտագործումից Գ. Տիրացյանը (նշվ. աշխ., էջ

Իսկ որչափո՞վ են ազդել թվարկված տեղանունների խորենացիական ստուգաբանությունները Արտաշեսի երթուղու բնութագրման վրա։ Մենք տեսանք, որ այդ երթուղու վերջին հատվածը՝ Երվանդավանից մինչև Երվանդաշատ՝ Երվանդակերտ-Մարմետի վրայով, պայմանավորված էր այդ տեղանունների ստուգաբանությամբ։ Հարց է ծագում, արդյո՞ք այդ երթուղու Ատրպատական-Մարաստանի կողմից ծայր առնելը ևս «մար» տերմինի ստուգաբանության հետևանք չէ, և չի՞ բացակայել այն, արդյոք, Խորենացու հիմնական աղբյուրում։ Մենք այդ հանգամանքն ամենևին բացառված չենք համարում, հաշվի առնելով, որ Ստրաբոնի համապատասխան ու մեզ համար առայժմ դեռ վերջնական չափանիշ ծառայող հաղորդումները ոչ մի նման եզրակացության հիմք չեն տալիս։

Այսպիսով, մենք ավարտեցինք Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանդես եկող Արտաշեսի պատմության քննությունը։ Այսու գալիս ենք այն եզրակացության, որ քննարկված հատվածը չափազանց բարդ բաղադրական կազմ ունի, որ այն շարադրված է, բացի հիմնական աղբյուրից, նաև մի շարք օժանդակ աղբյուրներից բխող նյութի օգնությամբ և պատմական ժամանակագրական որոշակի կոնցեպցիայի լույսի ներքո։ Մենք փորձեցինք վեր հանել այդ աղբյուրների ու կոնցեպցիայի ազդեցությունն՝ ըստ առանձին դրվագների, այժմ անհրաժեշտ է որոշ ընդհանրացում անել։

9

Անտիկ պատմագրության և մեզ հասած վավերական նյութերի տվյալները ցույց են տալիս, որ ի դեմս Արտաշեսի,

15 և հաջ.) և Ա. Փերիխանյանը (նշվ. աշխ., էջ 109 և հաջ.), վերջինս նաև հենվելով հայերենում պարունակվող իրանական բառապաշարի մի կարևոր մասի՝ միջին մարերեն բարբառից փոխառություն լինելու փաստի վրա։ Այդ փաստը, որ համոզիչ կերպով ապացուցել է Ա. Փերիխանյանը նշված և ուրիշ հոդվածներում (տե՛ս նաև նրա Armeno-iranica I հոդվածը՝ «Տեղեկագիր», 1965, № 11), մեր կարծիքով, սակայն, կոնկրետ հիմք չի տալիս Արտաշեսի ծագման մասին արված հետևության համար։

հայ ժողովուրդն առաջադրել է խոշորագույն պետական ու ռազմական գործչի, որը մեծ ներդրում ունի հայ պետականության զարգացման պատմության մեջ։ Նրա մանկական տարիների մասին պատմությունը պատկանում է ավանդությունների այն տարատեսակին, որը սովորաբար ստեղծվել է խոշորագույն գործիչների, հիմնադիրների շուրջ, ներկայացնելով նրանց որպես ընտրյալների, որոնք աշխարհ են եկել որոշակի միսիայով։ Այս հանգամանքը վկայում է, որ Արտաշեսը նույնպես հնում ընկալվել է որպես այդպիսիներից մեկը և այդ ձևով էլ ներկայացված է եղել Խորենացու գրավոր աղբյուրում։ Սակայն Խորենացու հետագա շարադրանքը, մինչև Արտաշեսի մահը, այդ առումով անսպասելի աղքատ է. այստեղ չենք գտնում առանձնապես փայլուն գործեր և մանավանդ գրեթե չկան ո՛չ նվաճումներ, ո՛չ էլ նորամուծություններ, այսինքն այն, ինչով Արտաշեսը պիտի փայլեր և ինչը հետագայում պիտի դիտվեր որպես նրա պատմական միսիայի կարևորագույն մասը։ Ո՞րն է դրա պատճառը։ Պատճառը Խորենացու որոշակի պատմական-ժամանակագրական կոնցեպցիան է, որը ոչ միայն դրվագներ ու փաստեր է ավելացրել Արտաշեսի պատմության վրա որպես «ժամանակագրական համակարգի արտադրանք», որի մասին խոսվեց, այլև շատ բան խլել է այդ պատմության նախնական պատկերից։ Ըստ Խորենացու պատմական կոնցեպցիայի, որ նա ժառանգել է Մարաբասի մատյանից ծագող արքայացանկերի հետ միասին, Արտաշեսը Արշակունի է, հայ Արշակունիների դինաստիայի հիմնադիր Վաղարշակի հետնորդ։ Վերջինս, ինչպես հայտնի է, Խորենացու մոտ ներկայանում է որպես մեծ ռեֆորմատոր, որն այնքան նորամուծություններ է արել, այնքան բարեփոխումներ մտցրել, կարգավորել պետության գործերը բոլոր տեսակետներից այնպես, որ հաջորդներին, այդպես և Արտաշեսին, այդ առումով ոչինչ կամ գրեթե ոչինչ չի մնացել անելու։

Խորենացին այդ պատճառով խիստ կաշկանդված է եղել Արտաշեսի պետական գործունեությունը նկարագրելիս, բայց

և այնպես, ըստ երևույթին փաստերի ճնշման տակ, ցույց է տվել նորամուծությունների երկրորդ ալիքը՝ Վաղարշակից հետո, ներածելով դրանց նկարագրությունը հետևյալ հետաքրքրական նախադասությամբ. «Զի թէպէտ և այլն ամենայն, զոր յիշատակեցաք յառաջագոյն ճառիցն, կարգք և սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան ի Վաղարշակայ և յայլոց առաջնոց թագաւորացն՝ այլ ի մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին... և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք»[151]։

Խորենացին կաշկանդված է եղել իր կոնցեպցիայով նաև Արտաշեսի ռազմական գործունեությունը նկարագրելիս։ Արտաշեսը նրա մոտ իշխում է շատ ուշ շրջանում, այնպիսի ժամանակ, երբ Մեծ Հայք պետությունը տերիտորիալ առումով վաղուց արդեն կազմավորված էր։ Մինչդեռ պատմական Արտաշեսը ապրել է կազմավորման նախնական շրջանում և նրա գործունեության նպատակն է եղել հայոց պետության սահմանները հասցնել Հայկական լեռնաշխարհի եզրերին։ Այդ է պատճառը, որ այն, ինչ Ստրաբոնի մոտ հանդես է գալիս որպես նվաճում, միավորում, պետության սահմանների ընդլայնում, Խորենացու մոտ վերածվում է հայոց պետության ծայրամասերում ծագած ապստամբությունների ճնշման՝ Արտաշեսի կողմից։ Այդպես է Կասբից երկրի նկատմամբ, այդպես է և հյուսիսային հողերի նկատմամբ. իսկ հարավային շրջաններում ապստամբություն էլ չկա. այստեղ սոսկ նոր կառավարիչ է նշանակվում։ Ավելին. Խորենացու մոտ Արտաշեսը, ապրելով հռոմեական կայսրության հզորության ժամանակ, Տրայանոսի օրոք, հանդես է գալիս նվաստացած վիճակում, որպես Տրայանոսին հարկատու ու նրանից ներումն հայցող՝ չվճարված հարկի համար։ Այս դրվագը, ճշմարտացի լինելով իր ժամանակի համար (անգամ ոչ բավարար չափով ճշմարտացի, քանի որ Տրայանոսի օրոք Հայաստանը ժամանակա-

151 Խորենացի, II, 59։

վորապես դարձավ նույնիսկ հռոմեական նահանգ, կորցնելով իր անկախությունը), աղճատում է Սելևկյան Անտիոքոս Դ Էպիփանեսի դեմ հաղթական պայքար մղած Արտաշեսի կերպարանքը։

Սակայն նույնիսկ այս պարագաներում, Խորենացու շարադրանքում պահպանվել են այնպիսի մանրամասնություններ, որոնք ուրվագծում են նախնական պատկերը։ Ահա Կասբից երկրից գերեվարվում են հսկայական թվով մարդիկ, ոչ միայն ռազմագերիներ, այլև պարզապես բնակչություն. սա հակասում է այն հայտարարությանը, թե խոսքը սոսկ ապստամբության ճնշման մասին է։ Գերեվարվում է նաև երկրի թագավորը. այս փաստը նույնպես կարելի է դիտել որպես ցուցանիշ, որ խոսքը ապստամբության մասին չէ։ Շատ կարևոր է Խորենացու այն հաղորդումը, որտեղ վկայություն կա Արտաշեսի կարևորագույն միջոցառումներից մեկի մասին, այն, որ նա «բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս»։ Արդ, այդ «բազում ազգերի» ներածման մասին եզրակացությունը չի հիմնավորվում կոնկրետ դեպքերի Խորենացու շարադրանքով, որովհետև վերջինիս մեջ (բացի Կասբից երկրից կատարված գերեվարությունից, որը հաշվից էլ դուրս է, քանի որ խոսքը ապստամբության մասին լինելով, այդ գերեվարությունը չի կարելի համարել «եկամուտ ազգի» ներածում) Խորենացին հիշատակում է միայն ալանների երկրից գերեվարված բնակչության մասին։ Հավանաբար, ուրեմն, աղբյուրում խոսք է եղել նոր հողերի միացման ու նրանց բնակչության գերեվարման մասին։ Իհարկե այսպիսի դատողություններով մենք ի վիճակի չենք վերականգնելու Խորենացու աղբյուրի նախնական պատկերն ամբողջությամբ, կորած մանրամասները կորած են, սակայն այն մոտովի պատկերացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել և այս հանգամանքները։

Անհրաժեշտ է նաև հնարավորին չափ հստակ պատկերացնել, թե Խորենացու պատմածի մեջ ինչն է ծագում նրա օժանդակ աղբյուրներից։ Վերջիններից կարևորագույնը, անշուշտ,

ժողովրդական բանահյուսությունից եկող շիթն է՝ հիմնականում վիպասանքի Արտաշիսյան ցիկլը։ Մի քանի գլուխներ գրեթե ամբողջությամբ Խորենացու մոտ շարադրված են այդտեղից քաղած նյութի հիման վրա։ Այդ աղբյուրի «գործողության սահմանները» Արտաշեսի պատմության մեջ շատ որոշակի են գծագրվում. նրանցից լրիվ դուրս է Երվանդ—Արտաշես հակամարտությունը, ինչպես և Արտաշեսի ներքին ու արտաքին գործունեության շատ դրվագներ, որոնք այդ առումով մանրամասն բնութագրվել են մեր նախորդ շարադրանքում։ Վիպասանքի այս ցիկլը, որի պատմական հիմքը գլխավորապես կապված է Տրդատ Ա Արշակունի (մ. թ. 66—շուրջ 85 թթ.) թագավորի հետ, Խորենացու կողմից Արտաշեսի պատմության մեջ ներգրավվել է շնորհիվ նրա (վիպասանքի) ունեցած Արտաշես և Արտավազդ անունների։

Որպես երկրորդ օժանդակ աղբյուր, պետք է նշել նախարարական տների մասին պահպանված հինավուրց ավանդությունները, որոնք Խորենացին հմտորեն օգտագործել է իր ամբողջ «Պատմության» մեջ (սա առանձին խնդիր է, որը կարոտ է հատուկ ուսումնասիրության)։ Մեզ հետաքրքրող հատվածում ևս օգտագործված են դրանցից մի քանիսը, բայց գերակշռող դերը հատկացված է Բագրատունիների շուրջ գոյություն ունեցած ավանդություններին, առաջ է մղված Սմբատի գունազարդված կերպարանքը։ Բագրատունիների հանդեպ իր տածած մեծ համակրանքին (որով լի են «Հայոց պատմության» բոլոր դրվագները) Խորենացին հնարավորություն է ունեցել հագուրդ տալու այս անգամ շնորհիվ «թագադիր» բարձրաստիճան պաշտոնյայի այն հիշատակման, որը (ինչպես ակնարկում է Զանգեզուրի նորագյուտ արձանագրությունը) պիտի լիներ Խորենացու հիմնական աղբյուրի մեջ։

Խորենացուն օժանդակ աղբյուր է ծառայել նաև իր աչքով տեսածը, բնակավայրերը, ավերակները և այլն, որոնց մեջ նա՝ պատմաբանի երևակայությամբ, կարողացել է վերականգնել անցյալի պատկերները։ Դրանք ներգրավվել են Արտաշեսի պատմության մեջ շնորհիվ նրանց շուրջ գոյություն

ունեցած համապատասխան ավանդությունների, կամ նրանց անվանումների մեջ գոյություն ունեցող Երվանդ, Արտաշես, մար և այլ մասնիկների, և կամ հիմնական աղբյուրում համապատասխան հիշատակումների։

Էական դեր է կատարել Խորենացու շարադրանքի հարըստացման գործում, ինչպես համոզվեցինք, նաև անձնանունների, տոհմանունների և տեղանունների ստուգաբանությունը, որից Խորենացին հաճախ պատմական բնույթի հետևություններ է արել։

Վերջապես, որոշ դեպքերում Խորենացին դիմել է նաև շարադրվող թեմայի էությանը չառնչվող, բայց համապատասխան նկարագրություններ (ճակատամարտերի, պաշարումների և այլն) ունեցող մատենագրական երկերի՝ սոսկ որպես ոճական դարձվածքների, դիպուկ արտահայտությունների շտեմարանի։

Անշուշտ Խորենացին օգտագործած կլինի և այլ աղբյուրներ (ինչպես, օրինակ, Գահնամակը), որոնք, թերևս, կարելի է ի հայտ բերել ավելի մանրամասն քննությամբ, սակայն տվյալ դեպքում դրա կարիքը չկա։

Ահա ուրեմն, երբ վերանում ենք այս աղբյուրների ընձեռած տվյալներից, ինչպես և Խորենացու պատմա-ժամանակագրական կոնցեպցիայի ազդեցության հետևանքներից, Խորենացու շարադրանքի մեջ գծագրվում է Արտաշես թագավորի մի վերջավորված պատմություն, որն ընդգրկում է նրա մանկական տարիների, գահակալման, ներքին ու արտաքին, այդ թվում և ռազմական, գործունեության ամբողջական պատկերը։ Այս պատկերն այնքան նմանություն ու հարազատություն, շատ դեպքերում էլ նույնություն է ցուցաբերում Արտաշես Ա-ի մասին Խորենացուց անկախ մեզ հասած այլ հավաստի աղբյուրների, մանավանդ դրանցից ամենահավաստիների՝ Ստրաբոնի «Աշխարհագրության» և Արտաշեսի արամեական արձանագրությունների տվյալներին, որ տարակույս չի մնում, թե այդ պատմությունն իսկապես պատմական Արտաշես Ա-ին է վերաբերում, և գրված լինելով շատ վաղ շրջանում՝

ամենայն հավանականությամբ մեր թվականությունից առաջ, դարերի միջով հասել է Խորենացուն։

Հունա-հռոմեական պատմագրության հինգ ներկայացուցիչների երկերում տեղեկություններ են պահպանվել Արտաշես Ա-ի մասին։ Դրանք են. Պոլիբիոս, Դիոդոր, Ստրաբոն, Ապպիանոս, Հիերոնիմոս։ Սրանցից յուրաքանչյուրի հաղորդածների մեջ այնպիսի գծեր կան, որոնք չկան մյուսների մոտ։ Հետևաբար դրանցից դուրս գոյություն են ունեցել նաև այլ երկեր, որոնք տեղեկություններ են պարունակել Արտաշեսի մասին և աղբյուր ծառայել թվարկված հեղինակներին։ Անշուշտ այդպիսի մի պատմական երկ է ակնարկում Ստրաբոնը, երբ ավարտելով հայերի ծագման մասին իր խոսքը, **շարունակում է.** Ὁ μὲν δὴ παλαιὸς λόγος οὗτος, ὁ δὲ τούτου νεώτερος καὶ κατὰ Πέρσας εἰς τὸ ἐφεξῆς μέχρι εἰς ἡμᾶς ὡς ἐν κεφαλαίῳ πρέποι ἂν μέχρι τοσούτου λεχθείς **«Այս է հին ավանդությունը** (պատմությունը, բառացիորեն՝ բանը), իսկ դրա նորագույն (շարունակությունը) սկսած պարսիկներից հաջորդաբար մինչև մեր օրերը, պատշաճ է պատմել գլխավոր գծերով մինչև այժմ»[152]։ Այնուհետև Ստրաբոնը կես էջի վրա տալիս է Հայաստանի պատմությունը Աքեմենյանների շրջանից մինչև մ. թ. ա. I դարի վերջը։ «Գլխավոր գծերով» (ἐν κεφαλαίῳ) արտահայտությունը ցույց է տալիս, որ Ստրաբոնը ձեռքի տակ ունեցել է առավել ընդարձակ մի աղբյուր, որից էլ հնարավոր է եղել ընտրել ցանկացածը։ Եվ իսկապես, նույն գրքի մի այլ բաժնում նա առնելով իր պատմածից մի դրվագ՝ Արտաշեսի և Զարեհի նվաճումների դրվագը[153], տալիս է այն առավել հանգամանորեն, ներածելով ἱστοροῦσι «պատմում են» բառերով[154]։

Թե ի՛նչ են ներկայացրել իրենցից Ստրաբոնի աղբյուրները կամ աղբյուրը և ո՛վ է եղել նրանց հեղինակը, դժվար է ասել։ Մեզ հայտնի է, որ գոյություն է ունեցել Տիգրան Բ-ի

152 Strab., XI, 14, 15։

153 Դրան մենք անդրադարձել ենք վերը. տե՛ս էջ 167։

154 Strab., XI, 14, 5։

պատմությունը՝ գրված հույն հռետոր ու քաղաքական գործիչ Մետրոդորոս Սկեպսիացու կողմից։ Այս Մետրոդորոսը կրել է «Հռոմեատյաց» մականունը[155], և նախապես ծառայելով Միհրդատին, այնուհետև եղել է Տիգրանի արքունիքում[156]։ Ապոլոնիոս Հռոդոսացու միջնորդությամբ մեզ հասել է **Մետրոդորոսի գրած պատմության հետևյալ դրույթը.** Μετρόδωρος ἐν πρώτῳ τῶν περὶ Τιγράνην τὸν Θερμώδοντα Ἀράξην φησὶ λέγεσθαι **«Ասում են, որ Մետրոդորոսը Տիգրանի** մասին (պատմության) առաջին գրքում Թերմոդոն (գետը) անվանում է Արաքս»[157]։ Դժբախտաբար այս պատմության մասին ուրիշ բան հայտնի չէ, քանի որ Մետրոդորոսը մահացել է մ. թ. ա. 71 կամ ամենաուշը 69 թվականին[158], հետևաբար նրա պատմությունը պետք է ընդգրկեր Տիգրանի թագավորության միայն առաջին քսանհինգ տարիները, այսինքն նրա աշխարհակալ տերության ստեղծման շրջանը։ Թերևս հույն պատմաբանը գրել է որպես ներածություն նաև դինաստիայի սկզբնավորման, այսինքն Արտաշեսի պատմությունը, բայց սա միայն ենթադրություն է։

Հանրահայտ է Պլուտարքոսի այն հաղորդումը, թե հայոց թագավոր Արտավազդ Բ-ը, Տիգրան Բ-ի որդին, գրել է «ողբերգություններ, ճառեր ու պատմական երկեր, որոնց մի մասը պահպանվել է»[159]։ Հասկանալի է, որ Արտավազդի պատմական երկերը նվիրված պիտի լինեին իր ժողովրդի և իր դինաստիայի պատմությանը։ Սակայն դրանք ևս, հասնելով մինչև Պլուտարքոսի ժամանակը, այնուհետև անհետացել են։

Մեր նպատակն էր սրանով ո՛չ թե մատնացույց անել Խորենացուն հասած պատմության կոնկրետ ակունքները, այլ միայն համոզվել, որ Հայաստանում մ. թ. ա. I դարում Արտաշեսի մասին մի պատմական երկ գրվելու համար բոլոր

155 Plin., Nat. hist., XXXIV, 16, 2։

156 Strab., XIII, 1, 55, Plut., Luc., 22։

157 Schol. Apoll. Rh., IV, 133—Fragmenta historicorum graecorum, III, էջ 204։

158 Հ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը, Երևան, 1940, էջ 110։

159 Plut., Crass., 33։

պայմանները գոյություն են ունեցել։ Ահա այդ երկն է, որից սնվել է, մի կողմից՝ հունա-հռոմեական պատմագրությունը, մյուս կողմից՝ հայկականը։

Սակայն, եթե այդպես մշուշապատ են Արտաշեսի պատմության ակունքները, ապա միանգամայն շոշափելի է, ինչպես տեսանք, վերջիններիս արգասիքը՝ Խորենացու անմիջական աղբյուրը՝ Ողյումպ քրմի մեհենական պատմությունը։ Այն արդեն դառնում է նախաքրիստոնեական շրջանի հայ պատմագրության փաստ, և որպես այդպիսին իր պատշաճ տեղը պիտի գրավի հայ գրականության պատմության մեջ։

* * *

Դատելով Մ. Խորենացու տվյալներից, հելլենիստական շրջանի Հայաստանի պատմագրությունն ստացել է նաև մեհենական կերպարանք, մշակվել տաճարներում, քրմության միջավայրում։ Հանրահայտ է այն հսկայական դերը, որ խաղացել են տաճարները և նրանց շուրջը համախմբված քրմությունը Հին Արևելքի երկրների տնտեսական-հասարակական և մանավանդ հոգևոր կյանքում։ Նրանք եղել են մշակույթի, մասնավորապես գիտության, գրի ու գրականության կենտրոններ։ Բաբելական տաճարներում մաթեմատիկան և աստղաբաշխությունը իրենց աննախընթաց վերելքն են ապրել, որի արդյունքները հելլենիստական շրջանում անցել են հույներին ու այլ ժողովուրդների, և մտել համամարդկային քաղաքակրթության գանձարանը[160]։ Հայտնի են և այդ տաճարներում կազմված բաբելական սեպագիր ժամանակագրությունները, որոնք, դարեդար գրանցվելով, կարևորագույն վավերական տեղեկություններ են պահպանել մ. թ. ա. I հազարամյակի Առաջավոր Ասիայի պատմության մասին[161]։ Բաբելոն քաղաքի Մարդուկ

160 В. Т а р н, Эллинистическая цивилизация, М., 1949, էջ 266 և հաջ.։

161 S. S m i t h, Babylonian Historical Texts, L., 1924; D. J. W i s e m a n, Chronicles of the Chaldean Kings (626—556 B. C.) in the British Museum, L., 1956.

աստծու տաճարի քուրմ Բերոսոսը, որ ապրել է մ. թ. ա. IV դարի երկրորդ կեսում—III դարի սկզբներում, սեպագիր աղբյուրների հիման վրա հունարեն լեզվով կազմել է իր երկրի պատմությունը, որը տարածվել էր հելլենիստական աշխարհով մեկ[162]։ Նույնպիսի գործ է կատարել Եգիպտոսում Բերոսոսի ժամանակակից, Հելիոպոլիս քաղաքի տաճարի քուրմ Մանեթոնը[163]։ Երկուսն էլ, ի դեպ, ծանոթ են Խորենացուն[164]։

Ստրաբոնը, պատմելով իր ժամանակվա փոքրասիական երկրների՝ Կապադովկիայի, Պոնտոսի բազմաթիվ տաճարների ու տաճարային քաղաքների մասին, հիշատակում է և Հայաստանի տաճարները. «...հայերը,—գրում է նա,— արտակարգ եռանդով են պաշտում Անահիտին, որին տաճարներ են կառուցված բազմաթիվ տեղերում և, մանավանդ, Եկեղիքում»[165]։ Հայտնի է, որ դիցուհու անունով գավառը կոչվել է Անահտական, այդ փաստը նշում են թե՛ անտիկ և թե՛ հայ պատմիչները։ Վերջիններիս մոտ Անահիտի տաճարից բացի, տեղեկություններ են պահպանվել նաև մի շարք այլ, անշուշտ նախահելլենիստական ծագում ունեցող, տաճարների մասին, որոնք նվիրված էին Արամազդ, Վահագն, Տիր, Նանե, Միհր և այլ աստվածների։ Դրանցից և ոչ մեկը առայժմ պեղված չէ, ուստի և դժբախտաբար այդ բոլորի մասին մենք պատկերացում ունենք այն չափով միայն, ինչ չափով թույլ են տալիս քրիստոնեական մաղի միջով հազիվհազ անցած հատ ու կենտ տեղեկությունները։ Մինչդեռ այդ տաճարները պետք է ապրած լինեին լիարյուն կյանքով, քրմությունն իր դերը պիտի խաղացած լիներ երկրի քաղաքական, հասարակական ու մշակու-

162 P. S c h n a b e l, Berossos und die babylonisch-hellenistische Literatur, Lpz.-Berl., 1923, տես նաև И. М. Д ь я к о н о в, История Мидии, М.—Л., 1956, էջ 35 և հաջ.։

163 А. Б. Р а н о в и ч, Эллинизм и его историческая роль, М., 1950, էջ 35, 323։

164 Խ ո ր ե ն ա ց ի, I, 4, II, 13։

165 S t r a b., XI, 14, 16։

թային կյանքում, դեր, որը հետո ժառանգեց քրիստոնյա հոգևորականությունը։ Վերջինիս նշանակությամբ էլ կարելի է մոտավոր պատկերացում կազմել տաճարների ու քրմության իր ժամանակ կատարած դերի մասին։

Թանձր վարագույրի եզրերը, ինչպես ասվեց, տեղ-տեղ բացվում են՝ ցուցադրելով առանձին դրվագներ. բերենք դրանցից մի նմուշ։ Ահա Խոսրով Մեծը վերադառնում է հաղթական արշավից. «Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յեօթն բագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կռոց դիցն պաշտաման։ Սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ պալարակապ մետաքսիւքն և ոսկովք պսակօք և արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանդերձս պայծառս և ի զարդս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր։ Նա և հինգերորդ ևս հանէր յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր»[166]։

Եղած սուղ տվյալների մանրակրկիտ հետազոտությունը ի վիճակի է և նոր դրվագներ հայտնաբերելու. այսպես Մ. Խորենացու համապատասխան տվյալները, վիմագրական և դրամագիտական նյութերի օժանդակությամբ, պատկերում են հին Հայաստանի կյանքում տեղ գտած մի նոր երևույթ՝ թագավորի անձի և թագավորական նախնիների պաշտամունքը հայ հեթանոսական սրբատեղիներում։ Սրա հետ էր կապված, ինչպես տեսանք մեր աշխատության երկրորդ գլխում, մեհենական դիվաններում այնպիսի նյութերի կուտակումը, որոնք ի վերջո նպաստ հանդիսացան հայ պատմագրությանը։

Եվ ահա Խորենացին այդ նույն ոլորտն է հրավիրում մեզ նաև բուն պատմագրության մշակման կապակցությամբ, այ-

166 Ագաթանգեղոս, 22։

սինքն տալիս է այն կռվանը, որի վրա հենվելով՝ հնարավոր է դառնում եզրակացնել, թե հայկական տաճարներում, այլ երկրների տաճարների նման, իր տեղն ուներ ժամանակագրությունը, պատմագրությունը։

Մեհենական պատմությունների ստեղծումը Խորենացին հատկապես կապում է Արամազդ աստծու՝ Դարանաղյաց գավառի Անիում գտնվող տաճարի հետ, որտեղ, ինչպես տեսանք, կատարվում էր նաև արքայական նախնիների պաշտամունքը։ Այդ տաճարը ժամանակին, ըստ երևույթին, նշանակալից չափով հելլենականացման է ենթարկվել և հետագայում էլ մասամբ պահպանել այդ երանգը, որի մասին են վկայում Ագաթանգեղոսի հաղորդումն այդտեղ պաշտվող Արամազդի՝ Զևսի հետ նույնացման մասին, և առավել որոշակի Խորենացու հաղորդումը՝ Օլիմպիական Զևսի հետ նույնացման մասին։ Այդ է վկայում նաև մեհենական պատմության հեղինակ քրմի՝ Ողիւմպ անունը, որը հունական Ὀλύμπιος-Օլիմպիոս անվան հայերեն տառադարձությունն է։ Ի՞նչ կարող է տալ այս հանգամանքը մեհենական պատմության լեզվական պատկանելությունը որոշելու գործում[167]։

167 Այս խնդրին արդեն անդրադարձել ենք վերը (էջ 130), սակայն առանց էական արդյունքների։ Կարևոր է մեջ բերել այս կապակցությամբ Խորենացու հաղորդումներից մեկը, կապված ասորի գրող Բարդածանի և նորից՝ մեհենական պատմության հետ։ Բարդածանը, ասում է Խորենացին «... եմուտ... յամուրն յԱնի, և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագաւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իւրեաւն, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի. որ և ապա անտի յեղաւ ի յոյն բան» (II, 66)։ Այստեղ հիշատակված Անին և Ողյումպ քրմի կապակցությամբ անվանված Հանին նույն վայրն է, ինչպես և այստեղի «մեհենական պատմությունը» և Ողյումպի «մեհենական պատմությունը» նույնն են, ուստի և վերջինիս լեզվի մասին հայտնած տեղեկությունները լրիվ վերաբերում են և նրան։ Ահա, ուրեմն, Բարդածանը, ըստ Խորենացու, թարգմանել է մեհենական պատմությունը ասորերեն, որտեղից էլ այն թարգմանվել է հունարեն, և այս լեզվով էլ, պետք է եզրակացնել, հասել է Խորենացուն։ Ուրեմն ո՞րն է եղել բնագրի լեզուն, եթե այն հունարենը և ասորերենը չէ։ Հայերե՞նը։ Խորենացու տվյալներից տրամաբանորեն այդ է հետևում։ Սակայն

Անիի տաճարի գոյության տարբեր ժամանակաշրջանների մասին տեղեկություններ են պահպանել Փավստոսն ու Ագաթանգեղոսը։ Վերը մեջ բերված հատվածներից մեկում Փավստոսը հաղորդում է, որ պարսիկները, առնելով Անին IV դարի կեսերին, քարուքանդ արին հայոց թագավորների այնտեղ գտնվող շիրիմները, սակայն ի վիճակի չեղան բանալու Սանատրուկ թագավորի հսկայական քարերից կառուցված դամբարանը[168]։ Սա նշանակում է, որ Անին, որպես սրբատեղի և արքաների հանգստարան գոյություն է ունեցել արդեն մ. թ. I դարի վերջերին և II դարի սկզբներին, երբ ապրել է Սանատրուկ հայոց թագավորը։ Հաջորդ տեղեկությունը ստանում ենք Ագաթանգեղոսից, որը ի թիվս Հայաստանի հեթանոսական տաճարների հիշատակում է և Անին, նրա մեջ եղած «բագինն Զեւս դիցն Արամազդայ», որը հիմնահատակ ավերում է Տրդատ Գ-ը[169]։ Սակայն այս հաղորդումը բառացի հասկանալ մեզ թույլ չի տալիս Փավստոսի մի այլ վկայությունը, ըստ որի Անիում է թաղվել նաև Տրդատ Գ-ի որդին ու հաջորդակիցը՝ Խոսրով Կոտակը (330—339). «...փոխեալ լինէր քաջ արանցն աշխարհաշէնն Խոսրով, թագաւորն Հայոց Մեծաց... և տարան իւր նախնիսն յԱնին յեկեղեցագաւառն Դարանաղեաց»[170]։ Սա նշանակում է, որ հեթանոսական շրջա-

հարցն այդքան հեշտ չի լուծվում։ Դատելով Խորենացու հաղորդած հատուկ անուններից, նրանց՝ հայերենին ըստ ամենայնի հարազատ անվանաձևերից, ավելի հավանական է, որ նրա անմիջական աղբյուրը հայերեն լեզվով է եղել։ Մյուս կողմից, տաճարային ոլորտը, մանավանդ մ. թ. ա. I դարերից սկսած, բավականաչափ հունականացած է եղել։ Մետրոդորոսն ու Արտավազդն էլ իրենց պատմությունները հունարեն են գրել։ Հունարենի օգտին է խոսում նաև Ողյումպ անունը։ Ըստ այսմ, ուրեմն, թարգմանության ուղղությունը, կարծես թե, հունարենից հայերեն է եղել նախքան Խորենացուն հասնելը, որը հակասում է Խորենացու տվյալներին։ Մի խոսքով, լեզվի խնդիրը դեռևս բաց է մնում մինչև նոր նյութերի հանդես գալը։

168 Փ ա վ ս տ ո ս, IV, 24։

169 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, 785։

170 Փ ա վ ս տ ո ս, III, 11։

նում թագավորների հանգստարան ծառայած Անին շարունակել է գործել նույն նպատակներով նաև քրիստոնեության շրջանում, և, հետևաբար, Տրդատի օրոք լուրջ չի վթարվել կամ, համենայն դեպս, լրիվ չի ավերվել[171]։

Ահա Անիի տաճարի դիվանում, որի թեկուզ մասնակի հարատևման համար հնարավորություններ, ինչպես տեսնում ենք, եղել են, հենց կարող էին պահպանվել այլևայլ նյութեր՝ վավերագրեր ու մատյաններ, որոնց թվին են պատկանել արքայացանկերը և մեհենական պատմությունը։

171 Չի ավերվել ևս, ինչպես հայտնի է, Գառնիի հեթանոսական տաճարը։ Ագաթանգեղոսի այդ հաղորդումները կարոտ են որոշ վերապահության։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԱՍԻՆ

Հռոմի դեմ մղած պայքարում պարտված Սելևկյան Անտիոքոս Գ-ին, որի օրոք Հայաստանն անջատվեց Սելևկյաններից, հաջորդել է Սելևկոս Դ-ը (մ. թ. ա. 187—175 թթ.)։ Պետությունը ճգնաժամից դուրս բերելու համար սա ոչ մի քայլ չարեց և գերադասում էր ընդհանրապես պատերազմներ չմղել, քան մղելով՝ պարտության վտանգի ենթարկվել։ Այդ ժամանակամիջոցում Մեծ Հայքը դարձավ խոշոր և ուժեղ պետություն, ծավալվելով դեպի Հայկական բարձրավանդակի ծայրամասերը։

Մ. թ. ա. 175 թ. Սելևկոս Դ-ին հաջորդեց Անտիոքոս Դ Էպիփանեսը, եռանդուն և ընդունակ մի գործիչ, որը վերջ տվեց նախորդ շրջանի թուլամորթ քաղաքականությանը և, արտաքնապես բարեկամական հարաբերություններ պահպանելով Հռոմի հետ, բռնեց տերության նախկին հզորության վերականգնման ուղին։ Սկզբում նրա ուշադրությունը ուղղված էր Եգիպտոսի կողմը։ Երկու արշավանքների ընթացքում (171 և 168 թթ.) նրան հաջողվեց ընկճել Պտղոմյաններին. նա պաշարեց Ալեքսանդրիան։ Սակայն խիստ անհանգստացած հռոմեացիները, առանց ուժ գործ դնելու, միայն սպառնալիքով, ստիպեցին նրան ազատել Եգիպտոսը։ Անտիոքոս Դ-ի գործունեության ասպարեզ մնաց միայն Արևելքը։ Եվ ահա տեղի է ունենում Սելևկյան դեռևս հզոր տերության ռազմական բախումը արդեն բավականաչափ ուժեր կուտակած Մեծ Հայքի պետության հետ։

Այդ բախման պատկերը վերարտադրելիս արդի պատմագիտությունը հենվում է Դիոդորոս Սիկիլիացու և Ապպիանոսի հաղորդումների վրա։ «Հայաստանի թագավոր Արտաքսիասը,— գրում է Դիոդորոսը,— ապստամբելով Անտիոքոսից (Անտիոքոս Գ—Գ. Ս.), իր անունով քաղաք հիմնեց և ժողովեց հզոր արանց. իսկ Անտիոքոսը (Անտիոքոս Դ—Գ. Ս.)... արշավեց նրա վրա և հաղթելով ստիպեց հնազանդվել»[1]։ Թե որոշակի ի՞նչ իմաստ է

[1] Diod., *XXXI, 17a*։

դրել Դիոդորոսը «ստիպեց հնազանդվել» ἠνάγκασε ποιεῖν τὸ προσταττόμενον, *բառերի մեջ՝ պարզ չէ. այստեղ լռության մատնված ինչ-որ մանրամասների հոտ է գալիս։ Այդ տպավորությունն ուժեղանում է Ապպիանոսի հակասական հաղորդումներից. մի դեպքում նա գրում է Անտիոքոս Դ-ի մասին, թե «արշավեց նա նաև հայոց թագավոր Արտաքսիասի դեմ. սրան հաղթելուց փոքր անց նա մահացավ»[2], իսկ մի այլ տեղ՝ «Անտիոքոսը թագավորեց ոչ լրիվ 12 տարի, այդ ժամանակամիջոցում նա գերի վերցրեց հայոց թագավոր Արտաքսիասին և արշավանքի ելավ վեցերորդ Պտղոմեոսի դեմ»[3]։ Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, չի պարզվում, թե արդյոք Արտաշեսը գերի՞ է ընկել Անտիոքոս Դ-ին, թե՞ ոչ։*

Հայագիտության մեջ, որքան մեզ հայտնի է, չեն օգտագործվել Արտաշեսի մասին պահպանված երկու այլ հաղորդում, որոնք պարզություն են մտցնում Արտաշեսի և Անտիոքոս Դ-ի պայքարի պատմության խնդրում։ Այդ հաղորդումները պահպանվել են քրիստոնեական եկեղեցու ամենակարկառուն հայրերից մեկի՝ հանրահռչակ Հիերոնիմոսի (335—420) մոտ։ Հիերոնիմոսը իր ժամանակվա խոշորագույն մտավորականներից մեկն էր և թողել է բազմաթիվ գործեր աստվածաբանական, պատմական, քերականական, թարգմանական և այլ բնույթի, որոնց թվում հռչակավոր Vulgata-*ն՝ Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունը, ինչպես և Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» համառոտագրած լատիներեն թարգմանությունը։*

Իր մեկնական երկերից մեկում Հիերոնիմոսը վերլուծության է ենթարկում հայտնի հույն փիլիսոփա և պատմաբան Պորփյուրի (234—շուրջ 305 թթ.) ստեղծագործություններից մեկը, որտեղ հեղինակը քննարկում է Դանիելի մարգարեությունը, նպատակ ունենալով ցույց տալ, թե դա ոչ այլ ինչ է, քան vaticinia ex eventu, *«անցյալի վրա հիմնված մարգարեություն»։ Պորփյուրը գրել է նաև «Քրոնիկոն», որից մեծապես օգտվել է Եվսեբիոս Կեսարացին մակեդոնյան, հռոմեական թագավորների և Պտղոմյանների ժամանակագրության խնդիրներում։ Հենց այս Պորփյուրն է հիշատակված, անշուշտ, նաև Մովսես Խորենացու մոտ, որպես պարթևների պատմությունը շարադրած հեղինակ[4]։ Հիերոնիմոսը նշում է, որ Պորփյուրը Դանիելի գրքի իր մեկնությունները գրելիս օգտվել է լայնածավալ պատմական գրականությունից, մասնավորապես Պոլիբիոսից, Պոսեյդոնիոսից, Դիոդորոսից, Հովսեփոսից, Պոմպեոս Տրոգոսից և շատ ուրիշ պատմիչներից[5]։*

[2] App., Syr., *45*։

[3] *Անդ, 66*։

[4] *Խորենացի, II, 69*։

[5] Patrologiae cursus complectus. Tomus XXV, S. Hieronymi, tomus V, Parisiis, 1845, *էջ 621 և հաջ.*։

Հիերոնիմոսը մի առ մի մեջ է բերում Պորփյուրի կողմից առաջարկված՝ Դանիելի գրքի հատվածների մեկնությունները և խիստ քննադատության ենթարկում դրանք[6]*։ Դանիելի գրքի մեզ հետաքրքրող հատվածը հետևյալն է.* Considerabam cornua, et ecce cornu aliud parvulum ortum est de medio eorum, et tria de cornibus primis et vulsa sunt a facie ejus. Et ecce oculi quasi oculi hominis erant in cornu isto, et os loquens ingentia. *«Պշուցեալ հայէի ընդ եղջեւրսն նորա, և ահա այլ եղջեւր փոքրիկ ելանէր ի մէջ նոցա. և երեք եղջեւրք յառաջնոցն ի բաց խլէին յերեսաց նորա, և ահա աչք իբրև զաչս մարդոյ յեղջերին յայնմիկ...»*[7]*։*

Հիերոնիմոսը գրում է. Frustra Porphyrius cornu parvulum, quod post decem cornua ortum est, Epiphanen Antiochum suspicatur, et de decem cornibus tria evulsa cornua, sextum Ptolemaeum cognomento Philopatorem, septimum Ptolemaeum Evergetem, et Artaxiam regem Armeniae... Contra Artaxiam vero dimicasse quidem Antiochum novimus: sed illum in regno pristino permansisse. *«Անհիմն կերպով Պորփյուրը փոքրիկ եղջյուրի տակ, որը բուսնել է տաս եղջյուրներից հետո, ենթադրում է Անտիոքոս Եպիփանեսին, և տասը եղջյուրներից երեք պոկվածների մեջ (տեսնում) վեցերորդ Պտղոմեոսին՝ Փիլոպատոր մականվամբ, յոթերորդ Պտղոմեոսին՝ Էվերգետես մականվամբ և Հայաստանի թագավոր Արտաքսիասին... Թեև գիտենք, որ Անտիոքոսն իսկապես մարտնչել է Արտաքսիասի դեմ, բայց և (հայտնի է), որ վերջինս պահպանեց իր նախկին իշխանությունը»։*

Այս հաղորդման հատուկ հետաքրքրությունը կայանում է նրանում, որ այն պատահական մի հիշատակություն չէ, այլ շեշտը հենց նրա վրա է, թե Արտաշեսը պահպանել է իր նախկին իշխանությունը: Սրանով ոչ միայն մերժվում է Ապպիանոսի ասածը Արտաշեսի գերի ընկնելու մասին, այլև կասկածի է ենթարկվում նրա մյուս հաղորդումը, ինչպես և Դիոդորոսի՝ սրան հարող տեղեկությունը Անտիոքոսի տարած հաղթանակի մասին։ Հիերոնիմոսի հաղորդման բուն իմաստն այն է, թե Անտիոքոսի արշավանքը ապարդյուն էր։

Ոչ պակաս հետաքրքրական է նաև Հիերոնիմոսի մյուս հաղորդումը[8]*, որտեղ նա արդեն մեջ է բերում (թերևս՝ բառացի) Պորփյուրի խոսքերը, **Դանիելի գրքի հետևյալ հատվածի կապակցությամբ.*** Et fama turbabit eum ab Oriente et ab Aquilone. Et veniet in multitudine magna, ut conterat et interficiat plurimos. Et figet tabernaculum suum in Apedno: inter duo maria super montem inclytum et sanctum, et veniet usque ad summitatem ejus, et nemo auxiliabitur ei. ***«Եւ պայ համբաւք և տագնապք ճեպեսցեն զնա յարևելից, և ի հիւսիսոյ եկեսցէ զօրութեամբ բազմաւ ապականել զբազումս*** (interficiat plurimos — ***«կոտորել զբազումս»)։ Եւ հարցէ զխորան իւր յԵփադնոն*** (Apedno) ***ի մէջ ծովուցն*** (inter duo maria — ***«երկու ծովերի միջև») ի լեառն Սաբային սուրբ, և եկեսցէ մինչև ի կողմն մի նորա. և ոչ ոք իցէ որ փրկիցէ զնա»***[9]***։***

6 S. Hieronymi, *էջ 667։*

7 *Դան., է, 8։*

8 S. Hieronymi, *էջ 722։*

Հիերոնիմոսը գրում է. Et in hoc loco Porphyrius tale nescio quid de Antiocho somniat: pugnans, inquit, contra Aegyptios, et Libyas Aethiopiasque pertransiens, audiet sibi ab Aquilone et ab Oriente praelia concitari, unde et regrediens capiet Aradios resistentes, et omnem in littore Phoenicis vastabit provinciam. Confestimque perget ad Artaxiam regem Armeniae, qui de Orientis partibus movebitur, et interfectis plurimis de ejus exercitu, ponet tabernaculum suum in loco Apendo, qui inter duo latissima situs est flumina, Tigrem et Euphratem. ***«Եվ ահա այս տեղում Պորփյուրը*** *այսօրինակ անիմանալի բաներ է զառանցում Անտիոքոսի մասին. մաքառելով,— ասում է,— եգիպտացիների դեմ և կտրելով անցնելով Լիբիան և Եթովպիան, կլսի, որ իրեն հյուսիսից և արևելքից մարտեր են հորդորում, և դառնալով այնտեղից կնվաճի ընդդիմացող արադցիներին և կավերի Փյունիկիայի ծովափի ամբողջ նահանգը։ Եվ անմիջապես կշարունակի արշավանքը Հայաստանի թագավոր Արտաքսիասի դեմ, որը շարժված կլինի արևելյան կողմերից, և կոտորելով նրա մարդկանցից շատերին, կհաստատի իր վրանը Ապեդնոն կոչված վայրում, որը գտնվում է երկու լայնահուն գետերի՝ Տիգրիսի և Եփրատի միջև»։*

Հիերոնիմոսը շարունակության մեջ սուր քննադատության է ենթարկում Պորփյուրի այս մեկնությունը, բերելով իր փաստարկները (ինչպես և առաջին դեպքում), որոնք, սակայն, այստեղ մեզ չեն հետաքրքրում, քանի որ Արտաշեսը նրանց մեջ արդեն չի հիշատակվում։

Ինչպես հիշում ենք, Պորփյուրի նպատակն է եղել ցույց տալ, որ Դանիելի մարգարեությունները ծայրեծայր հիմնված են պատմական, և այն էլ անձնապես Անտիոքոս Եպիփանեսին վերաբերող դեպքերի վրա, ուստի և նա Հիերոնիմոսի միջոցով մեզ հասած այս հատվածում ջանում է այդ պատմական փաստերը միահյուսել Դանիելի մարգարեության վերը մեջ բերված հատվածին։ Այստեղից էլ գալիս է շարադրանքի յուրօրինակ ձևը՝ ապառնի ժամանակի կիրառմամբ, որը չպետք է խանգարի մեզ հասկանալու գործի էությունը։

9 ***Դան., ԺԱ, 44—45։***

Պորփյուրի երկից մեջ բերված այս հատվածից մենք մի նոր բան ենք իմանում, այն է, թե ռազմական գործողությունները սկսողը եղել է ոչ թե Անտիոքոսը, այլ ինքը՝ Արտաշեսը, որը «շարժվել է (Պորփյուրի մոտ՝ վերը բացատրված պատճառով՝ «կշարժվի», movebitur) արևելյան կողմից»:

Հիերոնիմոսի առաջին և երկրորդ (Պորփյուրից մեջբերված հատվածի մեջ գտնվող) այս տեղեկությունների հիման վրա ստացվում է Արտաշեսի և Անտիոքոսի միջև տեղի ունեցած ռազմական բախման մասին միանգամայն այլ պատկերացում, քան այն, որ կազմվել էր Դիոդորոսի և Ապպիանոսի տեղեկությունների հիման վրա: Պարզվում է, որ պատերազմի առիթը Արտաշեսն է տվել, և Անտիոքոս Դ-ի պատասխան արշավանքը ապարդյուն է անցել. Արտաշեսը, թեև մեծ կորուստների գնով, ետ է մղել սելևկյան զորքերը:

Երբ մենք շրջանառության մեջ դրված այս նյութերից պատկերացում ենք կազմում Անտիոքոս Դ Էպիփանեսի և Արտաշես Ա-ի միջև տեղի ունեցած պատերազմի որոշ կողմերի մասին, ապա տեսնում ենք, որ առաջ էլ մեր աչքի առջև եղած հաղորդումներում կարելի էր գտնել դրանց հետքը: Խոսքը Ստրաբոնի այն հանրահայտ հատվածի մասին է, ուր նկարագրված են Արտաշեսի (և Զարեհի) նվաճումները, հատկապես վերջին ցուցման մասին, թե Արտաշեսն ընդլայնեց իր պետությունը՝ նվաճելով նաև «ասորինե**րից Տմորիքը»** (Σύρων δε Ταμωρῖτιν)[10]: Σύρων-ի **տակ հասկանալ այլ քան, քան Սելևկյանները, մենք չենք կարող, որովհետև** Συρία **«Ասորիք»** Սելևկյանների պետության ամենասովորական և ընդունված հորջորջումն է եղել ողջ հելլենիստական շրջանում: Եվ եթե փորձենք բացառել Սելևկյաններին, ապա միանգամայն անհասկանալի կմնա, թե ում մասին է խոսում տվյալ դեպքում Ստրաբոնը:

Այսպիսով Ստրաբոնի ցուցման հիման վրա կարելի է պնդել, որ Արտաշեսն իր զորքով ներխուժել է Տմորիք և միացրել այն իր պետությանը, իսկ Պորփյուրն իր հերթին հաստատում է, որ Արտաշեսը շարժվել է արևելյան կողմերից: Մեծ երևակայություն պետք չէ այս երկու ցուցումները միավորելու և միևնույն իրադարձությանը վերագրելու համար: Անտիոքոսի արշավանքը Հայաստանի դեմ տեղի է ունեցել ի պատասխան Արտաշեսի կողմից Տմորիքի միացման: Հիերոնիմոսի մյուս հաղորդումը Անտիոքոսի արշավանքի ապարդյուն լինելու մասին իր հաստատումն է գտնում այն փաստի մեջ, որ Տմորիքը այդ պատերազմից հետո էլ մնաց Մեծ Հայքի կազմում:

Հիերոնիմոսի (և Պորփյուրի) քննարկված հաղորդումների այս կոնկրետ արդյունքից բացի, դրանք մի նոր վկայություն են Արտաշես Ա-ի

10 Strab., XI, 14, 5: Տե՛ս և վերը, էջ 167:

հելլենիստական աշխարհի խոշորագույն գործիչների թվին պատկանելու և նրա՝ նույնիսկ մ. թ. IV դարի անտիկ գրականության մեջ հայտնի անձնավորություն լինելու մասին:

* * *

Այստեղ անշուշտ ծագում է Հիերոնիմոսի տվյալների ստուգության աստիճանի խնդիրը, մանավանդ Խորենացու կապակցությամբ դրված նմանօրինակ հարցի խորքի վրա: Ինչպես և Խորենացու դեպքում է, այս հարցի պատասխանը լրիվ կախված է պատմագրական այն ուղիներից, որոնք կապում են Հիերոնիմոսին հելլենիստական շրջանի հետ: Ի տարբերություն Խորենացուց, սակայն, որի կապակցությամբ այս խնդրում անհրաժեշտ է լինում բարդ պրպտումներ անել, Հիերոնիմոսի խնդիրը պարզ լուծում ունի, թեև այդ հեղինակը, ապրելով IV դարում և V դարի սկզբին, գրեթե նույնքան հեռացած է նկարագրվող շրջանից, որքան Խորենացին:

Բանը նրանումն է, որ Հիերոնիմոսը հունա-հռոմեական պատմագրության ներկայացուցիչ է, այդ պատմագրության անընդմեջ շղթայի օղակներից մեկը: Այդպիսին է և Պորփյուրը, որը նրանից մեկ դար առաջ է ապրել: Սրանց, որպես պատմագիրների, ծննդյան ու գործունեության ոլորտն է հունա-հռոմեական լայնածավալ գրականությունը, որից նրանք սնվել են և որը նրանք սնել են: Այդ մասին ուղղակի ասված է Հիերոնիմոսի մոտ (տե՛ս վերը): Ուստի և հիմք չկա նրանց տվյալները ստորադասել, ասենք, Ապպիանոսի տվյալներին, այն բանի համար միայն, որ վերջինս ապրել է նրանցից մեկ-երկու հարյուրամյակ առաջ՝ մ. թ. II դարում: Դրանք բոլորն էլ նույն համակարգի ներկայացուցիչներն են:

Եվ այդ համակարգը իր դրոշմն է դնում նրանց հաղորդածի վրա: Հիերոնիմոսի, Պորփյուրի, Ապպիանոսի, Դիոդորի հաղորդումների մեջ եղած տարբերությունները վկայում են, որ Արտաշես Ա-ի գործունեությունը շոշափող ուրիշ գրվածքներ էլ են եղել: Սակայն այդ տարբերությունները չեն անցնում երանգների (թեև որոշ դեպքերում էական երանգների) աստիճանից, և նրանցով մոտավորապես շրջագծվում են հունա-հռոմեական գրականության շահագրգռության սահմանները՝ մեզ հետաքրքրող թեմայով:

Այդ սահմանները, ինչպես գիտենք, որպես կանոն որոշվում ու պայմանավորվում են այս կամ այն իրադարձության կամ գործչի, տվյալ դեպքում՝ Արտաշես Ա-ի ու նրա գործունեության՝ հունա-հռոմեական աշխարհի հետ ունեցած շփման չափով:

Խորենացու հաղորդած տեղեկությունները միանգամայն այլ են: Նրանք դուրս են հորդում այդ շրջանակից, ընդգրկում անհամեմատ ավելի լայն ասպարեզ և հանդես բերում պատմագրության միանգամայն այլ ճյուղի՝ նախամեսրոպյան շրջանում հայկական հողի վրա զարգացած պատմագրության անկրկնելի դեմքը:

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբգար (հայոց թագավոր) — 84, 85, 125, 131, 135, 179
Աբգար Է (Եդեսիայի թագավոր) — 141, 178
Աբյուդենոս — 111
Ագաթանգեղոս — 7, 37—39, 41, 43, 44, 62, 67—69, 86, 95, 96, 112, 130, 132, 134, 184, 185, 190, 191, 210, 239—241
Ագաթանգեղոս («Կեղծ») — 85, 86, 104—113, 129, 134, 135
Ագաթիաս — 91
Ադիաբենե — 98
Ադիյաման — 33
Աթենաս — 35, 36, 38
Աթենք — 24, 25
Աժդահակ — 51—54, 56, 145, 147, 153, 156, 157, 161, 219, 222, 225
Աժի-Դահակա — 54
Ալեքսանդր Բազմավեպ — 111
Ալեքսանդր Մակեդոնացի — 8, 24, 25, 31, 71, 93, 105, 108, 110, 126, 201, 223
Ալեքսանդր, որդի Մամայայի — 97
Ալեքսանդրիա — 242
Ալկի — 170
Ախշանրսարտ — 174
Ախուրյան — 36, 219
Ակիլիսենե (Եկեղիք) — 167
Ակկադ — 207
Ակկի — 208
Աղձք — 63
Աղսարթան — 175
Ամատունիներ — 197, 227
Ամմիանոս Մարկելինոս — 67, 120
Ամոն — 24
Ամուլիոս — 208
Անահիտ — 37, 43, 67, 68, 237
Անանիա Շիրակացի — 215, 226
Անգեղ բերդ — 62, 64
Անգեղ-տուն — 62, 63
Անահտական — 237
Անանուն — 63, 64, 82, 83, 85—87, 92, 93, 96, 97, 99, 101, 106—111, 113, 114, 116, 123, 124, 128, 129, 132—135, 203—205
...անես — 31
Անի (Դարանաղյաց) տե՛ս և Հանի — 35, 36, 62—64, 130, 139—141, 148, 162
Անտիգոնոս — 24
Անտիոք — 40, 50, 56, 70
Անտիոքոս (Սելևկոս Ա-ի հայրը) — 70
Անտիոքոս Ա Սոտեր — 26, 31, 43, 59
Անտիոքոս Բ Թեոս — 31, 43, 49
Անտիոքոս Գ Մեծ — 27, 43, 75, 119, 124, 167, 199, 242
Անտիոքոս (Անտիոքոս Գ-ի որդին) — 43
Անտիոքոս Դ Էպիփանես — 26, 40, 75, 222, 231, 242—246
Անտիոքոս Ջ — 26
Անտիոքոս Ը — 31
Անտիոքոս ԺԲ — 26
Անտիոքոս Հիերաքս — 124
Անտիոքոս Ա Կոմմագենացի — 28, 30—33, 39, 44, 49, 61, 66, 72, 73
Անտիպատրոս — 167
Անույշ — 52, 147, 148
Աշկ — 92—94
Աշկանի — 92
Աշնաշ — 84, 116
Աշտիշատ — 35, 55
Ապամա — 27
Ապամեյա — 50
Ապարան — 19
Ապեղոն (Եփաղոն) — 245
Ապպիանոս — 5, 50, 64, 80, 164, 193, 234, 242—244, 246, 247
Ապոլլոն — 26, 29, 35—37, 39, 41—43, 69, 153, 154
Ապոլլոն Դափնեական — 43
Ապոլլոնիոս Հռոդոսցի — 235
Առաջավոր Ասիա — 34, 71, 183, 236
Առավենյաններ — 197
Ասիա — 35, 40, 208
Ասորեստան — 16, 170, 206, 219
Ասորիք — 50, 74, 98, 184, 246
Աստիագես — 53, 208, 209
Աստղիկ — 37
Աստվածաշունչ — 13, 86, 117, 119, 138, 243
Ասուերոս — 138
Ատալյաններ — 27, 61, 73
Ատրպատական — 206, 219, 228
Արա — 105, 110
Արագած — 63
Արածանի — 65
Արամազդ — 37, 39, 40, 67, 68, 162, 237, 239
Արաքս — 52, 235
Արբանդես — 141, 178, 180
Արգամ — 147, 153, 157, 158, 160—162, 219, 221
Արգավան — 147, 149, 150, 153, 156, 157, 160, 161
Արգիշտի Ա — 171
Արգիշտիխինիլի — 41
Արիարաթ Ե — 27
Արիստոն Փեղղացի — 198
Արծրունիներ — 174
Արմավիր — 7, 17, 35—37, 40, 41, 45, 154, 213, 222
Արշակ (տոհմանուն) — 114, 122, 132
Արշակ (դինաստիայի հիմնադիր) — 59, 83, 87, 94, 105, 114
Արշակ (պարթևաց թագավոր) — 34, 84
Արշակ, որդի Դարեհի (պարթևաց թագավոր) — 84
Արշակ փոքր (հայոց թագավոր) — 64, 84, 105, 109—111, 122
Արշակ, որդի Վաղարշակի (հայոց թագավոր) — 35, 46, 74, 84, 110, 111
Արշակ, որդի Արշավիրի (հայոց թագավոր) — 84, 203
Արշակ Բ — 68
Արշական — 84, 114
Արշակավան — 217
Արշակունիներ (տոհմ) — 7, 59, 68, 72, 110, 111, 113, 117, 125, 127

Արշակունիներ (պարթև) — 37, 59, 60, 62, 71, 72, 89, 90, 93, 94, 96—98, 100, 101, 115, 120—124, 128, 132, 201
Արշակունիներ (հայ) — 34, 36, 62, 63—65, 70, 80, 81, 86, 109, 122—124, 128, 203—205, 220, 222, 229
Արշամ (անուն) — 124—126
Արշամ (Ծոփքի թագավոր) — 124
Արշամ (Արզամ) — 221
Արշամ, որդի Արտաշեսի (հայոց թագավոր) — 36, 45, 46, 74, 84, 85
Արշամաշատ — 118, 124
Արշանակ — 84, 115, 116
Արշավիր (անուն) — 121, 122, 138
Արշավիր (պարսից թագավոր) — 117
Արշավիր (Աքեմենյան թագավոր) —118
Արշավիր (պարթևաց թագավոր) — 84, 94, 115, 117
Արշավիր (հայոց թագավոր) — 84, 124, 126
Արշեզ (Արշեն) —84, 94, 116, 121, 122, 138
Արոանդես — 30
Արոանդես սատրապ —30, 31
Արոանդես թագավոր — 31
Արսինոյե — 26
Արսես — 116, 138
Արսամեյա — 33
Արսամեյա (Նիմֆայոս գետի վրա) —32, 33
Արսամես —31, 33
Արտաբան Բ — 60, 61, 120
Արտաբանական —60
Արտազնես (Վահազն) —43, 55
Արտախշասի (Արտաշես Ա) —186
Արտաշան —168, 169
Արտաշես (անուն) — 81, 82, 94, 115, 116, 121—123, 126, 138
Արտաշես Ա — 16, 17, 19, 40, 69—73, 80, 115, 121, 123, 126, 128, 139, 141, 152, 155, 163—166, 168, 172, 174, 182, 185, 189, 193, 194, 196, 197, 204, 205, 211, 222, 228, 231, 233—235, 242—247
Արտաշես Բ —123, 152
Արտաշես Գ Զենոն — 123, 152
Արտաշես, որդի Արշակի (հայոց թագավոր) — 35, 46, 84, 111
Արտաշես, որդի Սանատրուկի (հայոց թագավոր) — 13, 46, 73, 85, 142—153, 155, 157, 158, 161—163, 165, 166, 170, 171, 173, 176—178, 180—184, 186, 188, 190, 192, 196—200, 202, 203, 206, 207, 209, 210, 214, 215, 217, 219—223, 225, 226, 228, 229, 232, 233, 236, 237
Արտաշես, որդի Արշակի (պարթևաց թագավոր) — 83
Արտաշես, որդի Արշավիրի (պարթևաց թագավոր) — 84
Արտաշես (Արտաշիր), որդի Արշակի (պարթևաց թագավոր) — 84
Արտաշիսյաններ — 59, 63, 64, 72, 80— 82, 123—125, 128, 139, 140, 205, 211
Արտաշիր Ա —37, 47, 68, 69, 87, 88, 93—95, 97, 99, 131, 184, 187, 188, 191, 192
Արտաշիր (Արտաշես) — վերջին հայ Արշակունի — 123
Արտաշիրական — 188, 191
Արտասուրա — 30

Արտավազդ (անուն) — 84, 123, 126
Արտավազդ, որդի Արտաշեսի —82, 85, 147—150, 162—166, 168—170, 198, 232
Արտավազդ Ա —164
Արտավազդ Բ — 57, 76, 84, 193, 235, 240
Արտավազդ (հայոց թագավոր) — 123
Արտավազդ (առասպելի) — 57, 218,
Արտավան Ե — 84, 87, 92, 94, 95, 99, 121, 131
Արտավան (հայոց թագավոր) — 84, 123, 124, 126,
Արտաքսատա (Արտաշատ) — 167
Արտաքսիաս (Արտաշես Ա) — 167, 199, 204, 242—245
Արտաքսերքսես Ա — 31, 115
Արտաքսերքսես Բ Մնեմոն — 30, 31, 71, 115, 116, 118, 126
Արտաքսերքսես Գ Օքոս —115
Արտաշատ — 7, 37, 44, 45, 47, 56, 144, 146, 148, 150, 153—156, 167, 168
Արտեմիս —35—37, 39, 41, 43, 153, 154
Արրիանոս — 71
Արուանդ — 218
Արև — 35, 37, 39, 43
Աֆրիկանոս — 46
Աֆրոդիտե — 26, 35—37, 228
Աֆրոդիտե-Արսինոյե —26
Աքեմենյաններ — 31, 59, 71, 72, 100, 115, 116, 119, 121, 122, 127, 128, 130, 132, 138, 201, 234

Բաբելոն — 236
Բագայառինջ — 36
Բագարան — 36, 37, 40, 45, 129, 212—214, 218—220
Բագարատ — 35
Բագավան — 37
Բագրատունիներ —35, 36, 45, 74— 76, 171, 173—175, 203, 232
Բալաշ (Վաղարշ Ե) — 92, 94, 95
Բասեն — 177, 181
Բասոռոպեդա (Պարսպատունիք) — 167
Բարդածան — 20, 239
Բարսումա (Բարծումա) — 87—89
Բաքու —181
Բել — 105, 110
Բերիտ (Բեյրութ) — 50
Բերոսոս — 111, 237
Բերենիկե — 25
Բիզան — 92, 94
Բյութանիա — 27, 73
Բյուրասպի Աժդահակ — 87
Բյուրատ — 206
Բուզանդ՝ տե՛ս Փավստոս Բուզանդ

Գաննամակ — 158—161, 233
Գառնի — 6, 18, 19, 58, 59, 62, 121, 130, 241
Գիսակ — 225
Գյառգյառ — 32
Գոզարենե (Գուզարք) — 167, 170
Գողթն — 55, 145, 149, 198
Գոտարզ Ա — 61
Գոտարզ Բ — 120
Գոտարզական — 60, 61
Գրիգոր Բար-Հեբրեոս —96
Գրիգոր Լուսավորիչ —134, 207
Գուզարք (Գոզարենե) — 167, 170

Դանիել — 75, 243—245

Դանիշվար — 91
Դարա — 122
Դարանաղի — 62, 63, 239, 240
Դարեհ (անուն) — 94, 119, 121, 138
Դարեհ, որդի Արշավիրի — 117
Դարեհ Ա Վշտասպյան — 30, 31, 71, 118—120, 122, 127, 128
Դարեհ Բ — 31, 119
Դարեհ Գ Կոդոմանոս — 119, 201, 202, 223
Դարեհ (պարթևաց թագավոր) — 84, 201—203, 206
Դարիալան — 169
Դեմետրիոս Պոլիորկետես — 24, 25
Դեմետրիոս Բ Սելևկյան — 31
Դերջան (Դերքսենե) — 167
Դիմաքսյաններ — 225
Դիոդորոս Սիկիլիացի — 5, 234, 242—244, 246, 247
Դիոն Կասսիոս — 5, 80, 178, 183
Դիոնիսիոս Թել-Մահրացի — 97
Դիոնիսոս — 26, 27
Դիոս (Զևս) — 35
Դիոս (Զևս) Ողիմպիական — 36
Դիպինոս — 35
Դոդոնայի գուշակավայր — 41
Դոմետ — 149, 150, 181, 182
Դոմիտիանոս (Դոմետիանոս) — 149, 150, 176, 177, 180—183
Դոմիտիոս Կորբուլոն — 181, 182, 184
Դուրա-Եվրոպոս — 42, 43

Եգիպտոս — 23, 24, 33, 342
Եդեսիա — 141, 178
Եդեսյան ժամանակագրություն — 98
Եզնիկ — 86
Եթովպիա — 245

Ելլադա — 35
Եկեղիք (Ակիլիսենե) — 167
Եհովա — 75
Եղիշե — 7
Ենանոս — 36
Եսթեր — 118
Երասխ — 153
Երիզա — 36
Երվազ — 144, 173, 203, 213, 220
Երվանդ (անուն) — 81, 125, 126, 215
Երվանդ Սակավակյաց — 218
Երվանդ, Արշակունի կնոջ որդի — 36, 46, 72, 73, 82, 85, 140—142, 144, 150—153, 161, 172, 173, 176, 178—181, 199—204, 210, 212, 214, 216, 217, 219—222, 225—227, 232, 233
Երվանդ, որդի Արշակի — 84, 203
Երվանդ՝ տե՛ս և Օրոնտես — 128, 204, 206, 211
Երվանդական — 70, 205, 211, 212
Երվանդակերտ — 214—217, 219, 220, 228
Երվանդաշատ — 7, 86, 141, 154, 155, 173, 214, 215, 217, 219, 220, 228
Երվանդավան — 216, 217, 219, 226, 228
Երվանդյաններ — 28, 31, 44, 71, 72, 82, 116, 125, 126, 128, 139, 140, 161, 202, 205, 218, 221
Երուսաղեմ — 75
Եվսեբիոս Կեսարացի — 20, 86, 97, 100—102, 111, 116, 118, 138, 243
Եփաղոն (Ապեղոն) — 245
Եփրատ — 28, 34, 245

Զանգեզուր — 17, 174, 189
Զարեհ (Զարեհր), Արտաշես Ա-ի հայրը — 70, 163, 164, 185, 186, 190, 205
Զարեհ (Զարիադրիս), Ծոփքի թագավոր — 167, 199, 234, 246
Զարեհ, որդի Արտաշեսի — 148, 162—164, 168, 169, 172
Զարեհավան — 70
Զարիշատ — 70
Զորանամակ — 158, 159
Զրադաշտ — 87, 93
Զևս — 24, 26, 37, 39, 42, 43, 239
Զևս-Արամազդ (Օրոմազդես) — 29, 43, 62, 63, 240
Զևս-Նիկատոր — 26
Զևս Օլիմպիական — 26, 39, 40, 75, 239

Էլեգիա — 183
Էնիո-Մա — 213
Էլիոս-Տիրիդատես — 58
Էրեբունի — 171
Էրոս — 26

Թաբարի — 92
Թադեոս առաքյալ — 65
Թերմոդոն — 335
Թիլ — 36
Թռեղք — 169, 170
Թրայետաոնա — 54
Թովմա Արծրունի — 174

Ժարվանդ (Երվանդ) — 204
Ժեշու Սյունակյաց — 97
Իշտար — 208
Իսիդոր Խառակսացի — 60
Իսիս — 26
Իրան — 90, 95, 96, 131

Լաբուբնա — 86, 125

Լադիկե — 27, 30
Լադիկեյա — 50
Լիբիա — 245
Լիսիմաքոս — 24
Լուկիոս Բերոս — 180
Լուսին — 35, 37, 39, 43

Խաղտի — 171
Խարբերդ — 184
Խորոնքուտ — 20, 87, 88
Խոսրով (անուն) — 126
Խոսրով (պարթևաց թագավոր) — 98, 99
Խոսրով, որդի Վաղարշի (հայոց թագավոր) — 37, 85, 238
Խոսրով Կոտակ — 63, 240
Խոսրով Ա (պարսից թագավոր) — 91
Խոսրովիդուխտ — 187
Խորենացի՝ տե՛ս Մովսես Խորենացի
Խորխորյան տարեգրություն — 171
Խորձենե (Կղարջք) — 167
Խվատայ նամակ — 91—93

Ծննդոց անտառ — 214, 218, 219
Ծոփք — 118, 123—126, 128, 167
Ծունդա — 218
Ծուպանի (Ծոփք) — 171

Կամբիսես, Կյուրոս Մեծի հայրը — 208
Կամբիսես, Աքեմենյան թագավոր — 138
Կամսար — 225
Կամսարականներ — 215, 216, 225
Կապադովկիա — 27, 73, 193, 213, 237
Կասպից երկիր (Կասպիանե) — 161, 166, 167, 170, 172, 230, 231

Կարին (Կարենիտիս) —167
Կարկա դե բետ Սելոխ քաղաքի ժամանակագրություն —98
Կարճամակ —95
Կեղծ Կալիսթենես —223
Կիսրա —92
Կիաքսարես —53
Կիլիկիա —74, 184
Կլավդիոս —179
Կլեոպատրա (Սելևկյան թագուհի) —49
Կլեոպատրա Բ (Պտղոմյան թագուհի) —26
Կյուրոս Մեծ —15, 46, 51, 53, 138, 208, 209, 212
Կղարջք (Խորձենե) —167
Կոմանա —213
Կոմմագենե —28, 32, 34, 43, 44, 55, 65, 69, 73, 125, 126, 129, 204, 215, 216, 225
Կոմմագենե դիցուհի —30
Կորդրիք —170
Կորյուն —86
Կունդ Արամազդ —40
Կուր (Կյուրոս) գետ —167

Հաբել —98
Հադրիանոս —98, 176, 177, 180
Հազկերտ Գ —91
Հակոբ Եդեսիացի —96
Համզա Իսպահանեցի —92
Հայաստան, Հայք, Մեծ Հայք — 6—8, 13, 16—18, 21, 28, 30, 34, 35, 37, 39, 40, 42—44, 47, 51, 53, 58, 59, 63, 64, 66—69, 71—74, 76, 79—81, 95, 105, 109, 119, 122, 125—127, 130, 131, 139, 155, 156, 158, 166, 167, 169, 172, 183, 184, 191—195, 199, 200, 212—214, 219, 222, 226, 230, 231, 235—238, 240, 242, 244—246
Հանի (Անի Դարանաղյաց) —142, 144, 152, 239
Հայկ —105, 110
Հայկական լեռնաշխարհ —230, 242
Հայկյաններ —63, 132
Հարպագոս —208, 209
Հելիոպոլիս —237
Հելիոս —27, 39, 58, 59, 62
Հեր —203, 206
Հերակլես —24, 26, 30, 35—37, 43, 55, 56
Հերմես —26
Հեփեստոս —35, 36, 38, 44
Հիերոնիմոս —234, 243—247
Հիսուս Քրիստոս —179
Հիպոլիտես —46
Հյուդարնես (Վիդարնա) —31, 71, 199
Հնդկաստան —183
Հովհաննես Եփեսոսցի —96
Հովսեփոս Փլաբիոս —5, 20, 243
Հողոգունե —30
Հռոմ —5, 183, 208, 242
Հրահատ Ա —60
Հրահատ Բ —60
Հրահատ Դ —60, 65, 114
Հուլիանոս Ուրացող —67, 87, 88
Հունաստան —24, 41, 74
Հուստինոս —48—50, 100, 164
Հուրմուզ —92, 94

Ղազար Փարպեցի —7

Մաժան —148, 162, 163
Մաժաք —40
Մաղխազան —206
Մամիկոնյաններ —113
Մանդանե —208

Մանեթոն —237
Մանիս —52, 54, 147, 149, 198
Մասուդի —92
Մարաբա Մծուրնացի, Մծուրնացի, Մար Աբաս Կատինա —46, 82, 83, 86, 89, 101, 103—113, 133, 135, 165, 203, 204, 229, 230
Մարակերտ —148
Մարանց (Մարաց) մարզ —219, 226, 227
Մարաստան —48, 51, 52, 228
Մարդուկ —236
Մարկոս Ավրելիոս —101
Մարմետ —215, 216, 220, 226—228
Մարս —208
Մարսյակ —105
Մեշինա-Զրխա —98
Մեծամոր —153
Մեսրոպ Մաշտոց —218
Մետրոդորոս Սկեպսիացի —234, 240
Միթրաս (թագավոր) —213
Միթրադատես —31
Միթրադատես Կալլինիկոս —30, 31, 33, 73
Միհր (Միթրա) —37, 43, 44, 57, 237
Միհրդատ Բ —50, 61, 164
Միհրդատ Եվպատոր —27, 56, 235
Միհրդատական —60
Միլետ —49
Միջագետք —48, 104, 105, 177, 178, 183
Մինոտավրոս —203, 210
Միքայել Ասորի —96, 97
Մծուրն (Մծուրք) —65
Մհեր —57, 65
Մովսես Խորենացի, Խորենացի — 7—22, 34, 37—48, 51—55, 62—65, 68—70, 72—76, 79—81, 83, 85—89, 92, 93, 95—97, 99, 101, 102, 110—114, 116, 117, 120, 127, 129, 131, 133, 137, 140—166, 169—176, 177—182, 183—190, 193, 196—218, 221, 223—240, 243, 247
Մցխեթ —168
Մուսա —60
Մուրացյաններ, Մարացյաններ, Մուրացաններ —147, 148, 153, 157—161, 176, 219, 222, 225

Նանե —37, 237
Նարսի —92, 94
Նեկփառ —174, 175
Նեմրութ լեռ (Վանա լճի ափին) — 28
Նեմրութ լեռ (Կոմմագենեում) — 28, 29, 32, 33, 42—44, 65, 107, 125, 128, 129, 204, 205
Ներսես —225
Ներվա —176, 177, 180
Նիզար —92, 94
Նիկոմեդես Բ —27
Նինոս —210
Նիսա —60—62
Նոր Դիոնիսոս —27
Նումենիոս —222

Շամբատ —34
Շամիրամ —105, 110, 187
Շապուհ Ա —68
Շապուհ Բ —76, 87, 88, 155, 214
Շավասպ —119
Շավարշ —119

Ողյումպ քուրմ —20, 46, 68, 139, 142, 144, 146, 152, 166, 190, 198, 220, 236, 239, 240

Որմիզդ-Արտաշիր — 69

Պապաք (Փափագ) — 87, 95
Պասիփայե — 203, 210
Պաղեփատոս — 87
Պապ — 66—68, 85, 106, 135
Պարթամասիր — 183, 184
Պարթևաստան — 61
Պարխար (Պարիադրես) — 167
Պարսկաստան — 76, 109, 155, 184, 187
Պարսպատունիք (Բասորոպեդա) — 167
Պարույր — 16
Պերգամոն — 27
Պերոզ (անուն) — 120
Պերոզ (պարթևաց թագավոր) — 84, 94, 102
Պերոզ (պարսից թագավոր) — 88
Պիերյան Սելևկիա — 26, 42
Պլինիոս Ավագ — 5
Պլուտարքոս — 5, 80, 193, 235
Պոլիբիոս — 5, 80, 115, 234, 243
Պոմպեոս — 50
Պոմպեոս Տրոգոս — 48, 100, 243
Պոնտոս — 27, 73, 237
Պոսեյդոն — 26
Պոսեյդոնիոս — 243
Պորփյուր — 87, 243—247
Պրոկոպիոս Կեսարացի — 103, 108, 109, 111, 122, 133
Պտղոմեոս Ա — 25, 26
Պտղոմեոս Բ — 25, 26
Պտղոմեոս Զ — 243, 244
Պտղոմեոս Է — 244
Պտղոմյաններ — 6, 25, 26, 28, 42, 56, 73, 100, 242, 243

Ջավախք — 169, 170
Ջուղարգ Ա — 92
Ջուղարգ Բ — 92

Ռաստսոհում, տե՛ս և Բարսումա — 87
Ռեմ — 208
Ռոմուլոս — 208
Ռոստոմ Սագնիկ — 87
Ռևազ — 213

Սաբարիս — 175
Սաբուր — 92, 94
Սամես — 31
Սամոսատ — 33, 44
Սանատրուկ — 62, 63, 65, 84, 85, 103, 104, 105, 125, 179, 180, 203, 204, 206, 220, 240
Սասանյաններ — 59, 88, 90, 91, 95, 97, 120
Սարգոն — 207
Սաթինիկ — 145, 147, 149, 150, 153, 163, 173
Սեբեոս — 7, 82, 86, 134
Սելենե-Լուսին — 39
Սելևկյաններ — 6, 25, 26, 28, 31, 40, 42, 44, 49, 50, 56, 69—71, 73, 75, 100, 101, 105, 110, 129, 139, 204, 242, 246
Սելևկոս Ա Նիկատոր — 24, 26, 31, 42, 43, 59, 70
Սելևկոս Բ Կալլինիկոս — 43
Սելևկոս Գ Սոտեր — 43
Սելևկոս Դ — 242
Սեպտուագինտա — 117
Սմբատ — 148, 149, 162, 168—175, 197, 206, 207, 213, 220, 232
Սոֆենե (Ծոփք) — 167
Սպակո — 208
Ստեփանոս Տարոնեցի — 116
Ստրաբոն — 5, 17, 31, 40, 70, 80, 81, 115, 140, 141, 156, 164, 167, 168, 170—172, 178, 193, 194, 202, 204, 205, 213, 214, 221, 228, 230, 233, 234, 237, 246
Սևան — 141, 185, 189, 212, 219

Վահագն — 35, 37, 54, 55—57, 59, 67, 68, 237
Վահագն-Հերակլես — 55, 56
Վահուան — 92
Վահունիներ — 35
Վաղարշ (անուն) — 120, 126
Վաղարշ Բ (պարթևաց թագավոր) — 98, 99
Վաղարշ Գ (պարթևաց թագավոր) — 98, 99, 101
Վաղարշ Դ (պարթևաց թագավոր) — 98
Վաղարշ Ե (պարթևաց թագավոր) — 84, 94, 95, 102, 131
Վաղարշ Ա (հայոց թագավոր) — 126
Վաղարշ Բ (հայոց թագավոր) — 126
Վաղարշ, հայր Խոսրովի (հայոց թագավոր) — 85
Վաղարշակ որդի Պերոզի (պարթևաց թագավոր) — 84
Վաղարշակ (հայոց թագավոր) — 34, 37, 46, 64, 74, 84, 111, 112, 122, 162, 229, 230
Վաղեգեսոս (Վաղարշ Գ պարթև) — 102
Վանա լիճ — 28
Վարդգես մանուկ — 218
Վարդգեսավան — 217
Վարշա — 116
Վեսպասիանոս — 72, 176, 178—180, 201
Վերին Ղարանլուղ — 185
Վիշապազունք — 145, 147, 157, 161, 222, 225

Վշտասպ (Հյուստասպես) — 30, 120
Վրաստան — 55
Վրույր — 148, 162, 163

Տակիտոս — 580
Տամորիտիս (Տմորիք) — 167, 170
Տարոն — 35
Տիբերիոս — 179
Տիգբոն — 183
Տիգրիս — 245
Տիմարքոս — 49
Տիգրան (անուն) — 81, 82, 123, 126
Տիգրան Երվանդյան — 15, 51—55, 156, 175, 212
Տիգրան Ա — 164
Տիգրան Բ — 15, 35, 39, 40, 46, 48—52, 55—57, 59, 63, 64, 69, 74, 76, 81, 84, 139, 155, 164, 193, 212, 234, 235
Տիգրան (Տիրան) որդի Արտաշեսի — 164, 169
Տիգրան որդի Արտաշեսի — 85, 165, 180
Տիգրանակերտ — 19, 52, 53, 64, 66—69, 156
Տիգրանավան — 217
Տիգրանուհի — 52
Տիր — 37, 43, 237
Տիրան (անուն) — 44, 123
Տիրան (Տիգրան) որդի Արտաշեսի — 84, 85, 126, 162—165, 168, 180
Տիրիթ — 44
Տիտոս — 72, 176, 178—180, 201
Տիտոս Բ (Անտոնինոս Օգոստոս) — 80
Տմորիք (Տամորիտիս) — 167, 170, 171, 172, 246

Տրայանոս —98, 99, 141, 176—178, 180, 183, 184, 230
Տրդատ (անուն) —44
Տրդատ Ա —58, 59, 63, 65, 134, 150, 152, 181—183, 201, 232
Տրդատ Գ —37, 38, 62, 63, 67, 69, 104, 106, 112, 135, 184, 187, 207, 215, 216, 240, 241
Տրիտա —54

Ցել —169

Փառսման —177
Փավնիտիս —167
Փավստոս Բուզանդ —7, 44, 55, 62, 63, 66—68, 86, 155, 193, 214, 240
Փիլեմոն —87
Փիլիպոս Արաբ —97
Փիրմիլիանոս —47
Փիլոն Եբրայեցի —210
Փիրուզան (Փիրուզ) —92, 94, 120
Փյունիկիա —50, 74, 245
Փոքր Ասիա —193
Փոքր Հայք —167, 168

Քաչատուն —218
Քարթլի —168, 169
Քարթլիս ցխովրեբա —164, 168, 204, 218
Քարձամ (Քարթամ) —168, 177,
Քսենոփոն —30, 53, 175, 194
Քսերքսես (անուն) —117, 119, 124, 138
Քսերքսես Ա (Աքեմենյան թագավոր) —31, 118, 124
Քսերքսես (Ծոփքի թագավոր) —119, 123, 124

Օգոստոս —66, 72, 100, 179
Օդոմանտիս —167
Օրոնտաս (Արոանդես) սատրապ —30
Օրոնտես (Երվանդ) —140, 178, 199, 201, 202, 204
Օրոնտյաններ (Երվանդյաններ) —28, 31

Ֆիրդուսի —90, 91, 95
Ֆրիապատիական —60
Ֆրիապատիոս —60, 61

Ուռհա (Եդեսիա) —125, 178
Ուտիք —219

6-1967

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ներածություն 5
Գլուխ առաջին — Թագավորների ու նրանց նախնիների պաշտամունքը Հին Հայաստանում 23
Գլուխ երկրորդ — Խորենացու արքայացանկերը, նրանց ծագումը 79
Գլուխ երրորդ — Ողյումպ քուրմ, գրող մեհենական պատմության 139
Հավելված — Նոր մատենագրական նյութեր Արտաշես Ա-ի մասին 242
Հատուկ անունների ցանկ 248

ԳԱԳԻԿ ԽՈՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ГАГИК ХОРЕНОВИЧ САРКИСЯН

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1967
6-1967

Պատ. խմբագիր Բ. Լ. ՉՈՒԳԱՍԶՅԱՆ
Հրատ. խմբագիր Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ
Կազմը Կ. Հ. ՅՈՒԹՈՒՋՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Լ. Ս. ՍԱՐԱՖՅԱՆ

ՎՖ 04788, ԽՀԽ 1032, հրատ. 2721, պատվեր 297, տպաքանակ 3000

Հանձնված է արտադրության 12/VII 1966 թ.։
Ստորագրված է տպագրության 23/XII 1966 թ.։ Թուղթ № 1,
$84 \times 108^{1}/_{16}$, տպագրական 16,25 մամ., պայմ. 13,32 մամ.,
հրատ. 11,47 մամուլ։ Գինը 92 կոպ.։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան,
Երևան, Բարեկամության, 24։

ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է կարդալ
39	3 ն.	Maja	Maĭa
42	2 ն.	Πρὸγονοι	Πρόγονοι
63	5 վ.	Արարատի	Արագածի
156	9 վ.	գտնում նույն Արտաշատի հիմնադրման մասին Ստրաբոնի	Չափազանց կարևոր է, որ այդ ակնարկը իր հաստատումն է
156	10 վ.	Չափազանց կարևոր է, որ այդ ակնարկը իր հաստատումն է	գտնում նույն Արտաշատի հիմնադրման մասին Ստրաբոնի